

ԱՆՈՒՇԱԿԱՆ ԶԱԶԱՐՅԱՆ

**ՇԻՐԿԱՆԶԱԴԵԻ
ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍԱԿԱՆ
ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԻՑ
(1914 - 1919 թթ.)**





**НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМ. М. АБЕГЯНА**

АНУШАВАН ЗАКАРЯН

**ИЗ ПУБЛИЦИСТИЧЕСКОГО
НАСЛЕДИЯ ШИРВАНЗАДЕ
(1914 – 1919 гг.)**

ЕРЕВАН - 2006

929:891.381 Հիպոթեզային ✓

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱՔԵՂՅԱՆԻ ԱՆՎ. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՆՈՒՇԱԿԱՆ ԶԱԲԱՐՅԱՆ

ՇԻՐԿԱՆՋԱԴԵԻ
ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆՆԻՑ
(1914 – 1919 թթ.)

A II
91243



ԵՐԵՎԱՆ - 2006

ՀՏԴ 891.981.0:941(479.25)

ԳՄԴ 83.3Հ+63.3(2Հ)

Ձ 431

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է
ՀՀ ԳԱԱ Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

Ձաքարյան Անուշավան

Ձ 431 *Շիրվանզադեի հրապարակախոսական ժառանգությունից
(1914-1919 թթ.). – Երևան. հեղինակային հրատարակություն,
2006. – 233 էջ:*

Հայ մեծ վիպասան Ալ. Շիրվանզադեի անցյալ դարի 10-ական թվականների հրապարակախոսական ժառանգությունն առ այսօր գրեթե անծանոթ է մեր հանրությանը: Ժամանակի մամուլի էջերում սփռված այդ հոդվածները, որոնք արժարժում են ազգային կյանքի բազմաթիվ ու բազմապիսի հարցեր, գրապատմական հետաքրքրություն ներկայացնելուց զատ, ունեն և արդիական որոշակի հնչեղություն:

Գիրքը նախատեսված է գրականագետների, պատմաբանների, քաղաքագետների, նաև ընթերցող լայն շրջանների համար:

ԳՄԴ 83.3Հ+63.3(2Հ)





ԵՐԿՈՒ ԽՈՍԲ

Ալեքսանդր Շիրվանզադեն (1858–1935) գրական-ստեղծագործական բեղմնավոր աշխատանքին զուգընթաց մշտապես եղել է հասարակական կյանքի բովում, իր հողվածներով արծագանքել և արծարծել է ազգային – համամարդկային հնչեղություն ունեցող հարցեր:

Վստահորեն կարելի է ասել, որ ընթերցող, ինչու չէ՞ նաև գիտական հանրությանն առ այսօր գրեթե անծանոթ է անցյալ դարի 10-ական թվականների, մասնավորապես 1914–1919 թթ. Շիրվանզադեի կյանքի ու գործունեության կարևոր մի բնագավառի՝ գրողի հրապարակախոսական ժառանգությունը: Ժամանակի մամուլի էջերում սփռված այդ հողվածները, գրապատմական հետաքրքրություն մերկայացնելուց զատ, ունեն և արդիական որոշակի հնչեղություն: Դրանցում լուսաբանված ազգային կյանքի բազմաթիվ ու բազմապիսի հարցեր հրատապ են մեր օրերում ևս: 1918 թ. հողվածներից մեկում գրողն անկեղծորեն խոստովանել է. «Ես հրապարակախոս չեմ և երբեք էլ հավակնություն չեմ ունեցել հրապարակախոս դառնալու: ... Բայց այն օրից, երբ սկսել եմ իմ լրագրական հողվածների շարքը, ակամա ճաշակում եմ հրապարակախոսի դրությունը: Չի կարելի ասել, որ այդ դրությունը նախանձելիներից է: Ժամանակ ու մեծ համբերություն է հարկավոր հրապարակախոսին կամ լրագրողին լսելու այն անթիվ դիմումները, որոնցով ռմբակոծում են նրան ամեն կողմից: ... Ուրախալի է, իհարկե, որ մամուլի ծայրը ծանաչվում է ու հարգվում: Ուրախալի է, որ հասարակությունը դիմում է նրա բարոյական աջակցությանը: Սակայն կա մի հանգամանք, որ պետք է չմոռանալ դիմողները, այն է, ... որ հրապարակախոսը չունի բարոյական իրավունք ուրիշների անհատական վեժերի մեջ միջնորդի կամ դատավորի դեր կատարելու: Մամուլը պարտավոր է քննել, քննադատել միայն այն, ինչ որ ունի այս կամ այն աստիճանի հասարակական նշանակություն»*:

«Հասարակական նշանակության» ահա հենց այդ սկզբունքով էլ հետևողականորեն առաջնորդվել է Շիրվանզադեն 1914–1919 թթ. մինչև

* «Մշակ», 29. VIII. 1918:

արտասահման մեկնելը գրած հարյուրավոր հոդվածներով: Նշանավոր վիպասանի հրապարակախոսական հոդվածները, ինչպես ասվեց, սփռված են ժամանակի մամուլի էջերում, մասնավորապես դրանք տպագրվել են Թիֆլիսում հրատարակվող «Մշակ», «Ժողովրդի ծայն» և «Кавказское слово» թերթերում: Այդ գործերից միայն մի քանիսն են զետեղվել գրողի երկերի ժողովածուներում, մնացյալների (այն էլ ոչ բոլորի) մասին սեղմ տեղեկություններ՝ վերնագիրը, մեկ-երկու տողով բովանդակությունը, հրատարակությունը, դրա տարեթիվն ու ամիս-ամսաթիվը, համարը, էջը կարելի է գտնել 1959 թ. հրատարակված «Ալեքսանդր Շիրվանզադե (1858-1958): Բիբլիոգրաֆիա» գրքույկում: Թեև դրա առաջաբանում նշված է, որ այն ունի «որոշ անկատարություններ» (էջ 23), սակայն ամզամ հպանցիկ ծանոթությունը ցույց է տալիս, որ մատենագիտական այս տեղեկատուում հաճախակի են կոպիտ սխալները (տե՛ս սույն գրքի «Ծանոթագրություններ» -ում):

Ինչևէ. աշխատանքում նպատակ ենք դրել հանել մոռացության քողը Շիրվանզադեի հրապարակախոսական ժառանգության վրայից, ներկայացնել-վերլուծել հայ ժողովրդի կյանքի ողբերգական տարիներին նրա գրած հոդվածները, դրանք դնել գիտական շրջանառության մեջ՝ լրացնելով գրողի կյանքի և ստեղծագործության առկա բաց էջերը:

Հավելենք, գրքում անդրադարձել ենք նաև 1915 թ. Շիրվանզադեի գրած «Պատերազմի վայրերում» ակնարկ - հուշագրությանը, որտեղ ևս արծարծված են մեր ժողովրդի համար կենսական կարևորության հարցեր:

Հոդվածները հրապարակում ենք ժամանակագրական կարգով՝ 1914-ի ապրիլից 1919-ի ապրիլ հաջորդականությամբ, յուրաքանչյուրի վերջում նշելով սկզբնաղբյուրը:

Գ Լ ՈՒ Խ Ի

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՎԻՃԱԿԻ ԱՐՏԱՑՈՒՄԸ

ՇԻՐՎԱՆՁԱԴԵԻ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ

1913-ից 1914 թթ. վերահաս Առաջին համաշխարհային պատերազմն օդի մեջ էր, որի որոշակի նշանները գտնում ենք մամուլի էջերում, մասնավորապես «Մշակում» տպագրված Վ. Տերյանի ու Շիրվանզադեի հոդվածներում: Վերջինիս՝ 1914 թ. ապրիլի 3-ին հրապարակած հոդվածը կրում է «*Ամենակարևորը*» վերնագիրը: Վերնագիր, որ «հասարակական նշանակության» հետ *նշանաբանն է* հաջորդ հոդվածների:

Բնորոշ է, որ այդ հոդվածում, հիշատակելով բարեգործական որոշակի հաջողություններ, Շիրվանզադեն օրվա հրատապ հարց է համարում *թատրոնի* գոյությունը, որ «վաղուց է սպասում իր հերթին»՝ որպես ազգային քաղաքակրթության ապացույց. «Ազգային թատրոն – ահա ամենակարևորը և ամենահերթականը»: Դրա համար նախ անհրաժեշտ է ունենալ թատրոնի շենք, և գրողը դիմում է բարեգործներին՝ համապատասխան հիմնավորումով: Իրավամբ, պատերազմի շենին ազգային միավորման հասարակական հրամայական պահանջ էր թատրոնի անհրաժեշտությունը, որի գոյությունն էլ պատմականորեն ստանձնեց XX դարի սկզբներից տասնամյակներ շարունակ նախ Թիֆլիսի, Բաքվի, Հյուսիսային Կովկասի հայաշատ վայրերի հայությունը, ապա այն վերջնականապես հիմնավորվեց Երևանում՝ դառնալով պետական հոգածության առարկա:

Նույնպիսի կարևոր նպատակ էր հետապնդում Շիրվանզադեն նաև հաջորդ՝ արդեն պատերազմական օրերին գրած «*Նա արդեն հաղթվել է*» հոդվածով: Օրերի հարցերի հարցը գերմանական զորքերի մուտքն էր Փարիզ, և, ցասունով արձանագրելով իրողությունը, գրողն առանձին հատվածով ընդգծում է. «Լրագիրները հաղորդեցին, որ ֆրանսիական խոհեն կառավարությունը կարգադրել է նշանավոր Լուվրի գեղարվեստա-

կան անգլուգական իրերը փակել պողպատաշեն նկուղներում «համենայն դեպս» («Մշակ», 30.VIII.1914):

Մայրաքաղաք չունեցող հայությունը լուվրանման ոչինչ չուներ, և վստահաբար «համենայն դեպս»-ը վերաբերում էր նշանավոր տոհմերի և քիչ թե շատ ունևոր մտավորականների ունեցած – չունեցածի ապահովությանը:

Սեպտեմբերի սկզբից հոկտեմբերի 4-ին տպագրված հոդվածներում հիմնականում նույն առանցքի շուրջը պտտվող հարցապնդումներ են՝ ծայր առած «Մշակի» սեպտեմբերի 3-ի համարում տպագրված «*Այլ կերպ վտանգավոր է*» հոդվածով: Այն արծագանք էր ժամանակի նշանավոր տոհմերից մեկի ներկայացուցչի հոդվածի: Շիրվանգաղեն գրում է. «Կարդացի “Baky” լրագրի խմբագիր պ. Քրիստափոր Վերմիշյանի հոդվածը, որ առաջարկում է ռուսահայ ժողովրդին ներկա հսկա պատմական վայրկյանին թողնել ամեն անջատական դատողություն և արտահայտվել ինչպես մի ամբողջական մարմին, ինչպես որոշ բարոյական տարր պարզ ընդգծված համակրանք ու հակակրանքով, որոշ աշխարհայացքով և, վերջապես, որոշ պահանջներով»: Իրավացի առաջարկ, որին և, բնականաբար, հաջորդում է արծագանք–պատասխանը, այսպիսի բացատրությամբ. «Բոլորովին ճիշտ է պ. Վերմիշյանի միտքը, թե ռուսահայ ժողովուրդը՝ լինելով Մեծ Ռուսաստանի մի անբաժան մասը, ... մի որոշ ամբողջություն է: Անխզելի կապված լինելով ռուս ազգի հետ քաղաքականորեն և բարոյապես, այնուամենայնիվ ունի իր որոշ դիրքը՝ ոչ իբրև քաղաքական առանձին մարմին ..., այլ իբրև բարոյական մի ամբողջություն, ինչպես լեհացիները»: Եվ ապա. «... պատմական ռոպեում ... պետք է մոռացվեն ներքին խռովությունները, կուսակցական երկպառակությունները ... և իրապարակ դուրս բերվեն ամբողջության համակրանքը, վշտերը և սպասումները»:

Հայտնի է, որ մինչև պատերազմը լեհերի քաղաքական կողմնորոշմանն էին հետևում հայ հասարակական որոշ, այդ թվում մտավորական շրջաններ, նաև Վ. Տերյանը, Կոմիտասը: Բայց իրավիճակը, երբ արդեն պատերազմական էր, գրողի *պարտավորական առաջարկները*, բնականաբար, դառնում են ավելի ու ավելի կտրուկ և հրատապ: Ճիշտ և ճիշտ «Մշակի» սեպտեմբերի 14-ի համարում տպագրված «*Պետք է տալ ավելի*» վերնագիրը կրող հոդվածի ոգով: Ըստ որի՝ «Պետք է լինել շիտակ և անկեղծ. այն, ինչ որ այժմ արել են հայերը նյութապես, համեմատաբար քիչ է, մինչև անգամ շատ քիչ: Ինչո՞ւ չասել՝ ռուսահայ ազգաբնակչությունը

ունևոր է: ... նյութական ապահովության կողմից նա առաջին տեղն է բռնում Կովկասի ազգաբնակչությունների մեջ: Դա մի փաստ է, որ միայն կեղծ համեստությունը և մտավոր երկյուղը կարող են հերքել:

Արդ, մի ազգաբնակչություն, որ ամենից ունևոր է, բարեգործության մեջ ամենից առատաձեռնը պիտի լինի: ... Դեռ մինչև այսօր ոչ մի կովկասյան ազգաբնակչություն չի բարեգործությամբ ... չէ կարողացել հավասարվել հայ ազգաբնակչությանը» և այլն, և այլն:

Համանման տրամաբանական հիմնավորումները բնորոշ են և սեպտեմբերին գրած հաջորդ հոդվածներին՝ ամենուրեք ողողված «առատաձեռնության սքանչելի օրինակների» լիասիրտ կոչերով: Մինչև որ հերթը հասնում է «նորակոչերին»՝ ռազմաճակատ մեկնող հայ զինվորներին՝ «...համաշխարհային արհավիրքի ժամանակ ... քաղաքացիական պարտքը կատարելու» հանձնարարականով և մաղթանքներով. «— Բարի ճանապարհ, ազնիվ և աներկյուղ հոգիներ ... որ գնում եք մեր մեծ հայրենիքի պատիվը պաշտպանելու համար, և՛ ձեզ, որ գնում եք մեր բազմաչարչար մայրենի ժողովրդին սպասվող վտանգներից փրկելու համար» («Բարի ճանապարհ». — «Մշակ», 28.IX.1914): Միաժամանակ պահանջում է նյութական աջակցություն և բարոյական խրախուսանք՝ առաջմ «գերմանական մարդաջինջ» պատերազմի դեմ մարտերում:

«Մշակի» հոկտեմբերի 4-ի էջերում հրապարակած «Դա մի ախտ է» հոդվածով արդեն ծայր է առնում մտավորականությանն առնչվող մի վեճ, որը տարբեր հարցերի շուրջը տևականորեն շարունակվում է ներառյալ 1919-ի ապրիլյան «ՌՎ պետք է վերաշինեն» վերջին հոդվածը: «Դա մեր կյանքի ամենազագրելի ախտերից մեկն է, որի դեմ անհրաժեշտ է մաքառել» տողով վերջավորվող այդ «ախտը» գրողը համարում է հայ ժողովրդի միջից արտադրվող «մի բաղադրություն, որ քանի գնում այնքան ավելի մեծանում է, հետևաբար և՛ ... վնասակար դառնում»: Ըստ այդմ, արդար զայրույթով ծառանում է այն «ղատարկ» սնափառների դեմ, ովքեր արժանապատվությունը կորցրած ուրանում են սեփական ազգությունը, օտարներին համոզելու համար՝ «թե իրանք մի տեսակ երջանիկ բացառություն են կազմում այն փոքրիկ ազգի մեջ, որ մեծերից այնքան ստոր է իր բարոյական և մտավոր կացությամբ»: Արդարև, ազգային չհաղթահարված հիվանդություն...

«Մշակի» 1915-ի օգոստոսի 8-ի, սեպտեմբերի 23-ի, 26-ի և «Кавказское слово» թերթի հոկտեմբերի 15-ի համարներում տպագրված՝

«Ես չեմ զարմանում», «Սնանկ քաղաքականություն», «Ակամա երկտող» և «Судите, но не осуждайте (Письмо в редакцию <“Кавказского слова”>)»¹ հոդվածները դարձյալ բնութիւն վիճաբանական են՝ հիմնականում մտավորականության շրջաններում եղեռնի իրողություններին վերաբերող կամ արծագանքող թեր ու դեմ հարցադրումներով ու պատասխաններով: Այսպես, առաջին հոդվածում ծաղկվում է «ոսկետերին» երկրպագող մտավորականը, հաջորդում մերժվում և սնանկ է համարվում այն անձանց քաղաքականությունը, ովքեր աշխատում են «քողարկել կամ նսեմացնել» թուրքահայ ժողովրդի բնաջինջ լինելն ու Հայաստանի ամայացումը, վերջին երկու հոդվածներն էլ վիճաբանության կարգով շոշափում են հայ-վրացական և հայ-թուրքական հարաբերություններ:

«Մշակի» 1916-ի մայիսի 6-ի, հունիսի 19-ի և օգոստոսի 3-ի, 23-ի և 28-ի համարներում տպագրված հոդվածները՝ դարձյալ վիճաբանական լինելով հանդերձ, առանձնանում են կենսական հարցապնդումներով ու հիմնավորումներով: «Ինչո՞ւ միայն մենք» վերնագրով հոդվածում գրողն արծարծում է «ազգային համերաշխության» սահմաններում բարոյական հաստատումն ունենալու կարևորությունը: «Ժամանակ է հասկացնելու», «Ե՞րբ պիտի լինի վերջ» հոդվածներով՝ «Մամուլ, գրականություն և թատրոն – ահա այն երեք ամենաառաջնակարգ գործերը, առանց որոնց մի ազգ չի կարող ազգ համարվել» նշանաբանով, ներկայացնում է երեքի էլ անմխիթար վիճակը: Ուստի, Պեշիկբաշլյան–Աղամյան և ուրիշներ վկայակոչելով՝ դարձյալ կարևորում է հատկապես օգնությունը թատրոնին ու թատերական գործիչներին: «Օրինակ վերցրեք» վերնագրով հոդվածում էլ կոչ է անում հետևել վրաց բարեգործներին և Վրաց գեղեցիկ արվեստների ընկերության գործունեությանը, ինչ խոսք, «հարևան ազգի քաղաքակրթության ջերմ բարեկամի» ջերմ ցանկություններով:

Ներկայացվող հոդվածների շարքում քանակով վերջին տեղում է 1917 թվականը. ընդամենը երեքը. «Պատվի խնդիր է», «Դեռ սպասեմք» և «Իմ առաջին ծանոթությունը» վերնագրերով՝ տպագրված «Մշակի»

¹ Այս հոդվածը հայ ընթերցողին ծանոթ է թարգմանաբար՝ «Դատեցե՛ք, բայց մի՛ դատապարտե՛ք (Նանակ խմբագրությանը)» վերնագրով (տե՛ս Ա. Ը. Ժ. Վ. Գ. Ե. Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1961, էջ 556-558): Հոդվածի վերջին մեր ժողովրդի պատմության համար կարևոր պարբերությունը տպագրվել է աղճատված (տե՛ս «Ծանոթագրություններ» -ի մեջ՝ 2-րդ կետում):

փետրվարի 16-ի, հունիսի 3-ի և դեկտեմբերի 19-ի համարներում: Առաջինը ծավալով մեծ է, ըստ ամենայնի հետաքրքիր, մասնավորապես բելգիականի հետ՝ հայոց մշակույթի համեմատությամբ ու գնահատությամբ, այլև այսպիսի հայտով. «Այո, միայն այն ազգերն են արժանի պատկառանքի և հարգանքի, որոնք ունեն բարոյական հարստություն և ընդունակ են ունենալու»: Եվ, սակայն, հայկականը «չգիտենք ... պաշտպանել» և ներկայացնել աշխարհին: Ու թվարկում է «օտարների հիացմանը» արժանացած ճարտարապետություն, հարուստ երաժշտություն, և հանդիմանաճնդվ հավելում. «...մենք չկարողացանք մի հայր Կոմիտաս պահել մեր մեջ և թույլ տվեցինք մեր հակագեղարվեստ հոգևորականությանը զրեթե դուրս վռնդել նրան էջմիածնի պատերից»: Ապա «միջնադարյան շքեղ բանաստեղծություն»՝ դարձյալ հավելումով. «...հարկավոր էր մի օտարազգի Բրյուսով, որպեսզի լսեինք նրա մասին և հետո մորից մոռանայինք»: Եվ հետևում է առ այսօր հարատևող իրողությունը. «Մեր լավագույն արվեստագետները, երաժիշտները, նկարիչները, արձանագործները փախել են ու փախչում են օտար երկիրներ, իրանց հայրենիքում գնահատում չգտնելով»:

Սա Շիրվանզադեի լավագույն հոգվածներից է՝ այդ օրերին տեղին, բայց էական վերապահությամբ, քանի որ առաջին և վերջին հաշվով այդ «լավագույն արվեստագետների» ջանքերով էր մահ, որ վերածնվեց Հայաստանը՝ Երևան մայրաքաղաքով: (Երբ, ի դեպ, Շիրվանզադեն արտասահմանում էր):

Սյուն հոգվածը կարճառոտ է՝ «Դեռ սպասենք» վերնագրով, և հեղափոխության լոզունգների փաստացի վերաքննություն է՝ առաջին իսկ տողերից սկսած. «Ազատություն կոչված բանն երկսայրի մի սուր է, որի գործածումն այնքան էլ դյուրին չէ ... Ազատությունը գռեհիկ ամբոխի ձեռքում նույնն է, ինչ որ սուր դանակը երեխայի ձեռքում»: Եվ նույն ոգով շարունակվող բոլոր հանգույցներով հեղափոխության հանդեպ վերաբերմունքը, մտածումները, սպասումները բացահայտորեն տագնապալի են՝ նման հիմունքներով ու մտահոգությամբ. «Ստրկության մեջ ծնված և բռնության ներքո ու խավարի մեջ դարերով սնված մի ժողովուրդ չի կարող մի օրվա մեջ ջնջել իր մեջ ստրկության ոգին և դառնալ ազատության արժանավոր դրոշակակիր»: Այնուհետև. «... սեփական ազատությունը սիրողը պարտավոր է հարգել և ուրիշների ազատությունը: ... ազատությունը նախքան անհատական բարիք լինելը հանրային սեփականություն է, ... ազատությունը համայնական հարստություն է, այնպես՝ ինչպես օդը, ջուրը, երկինքը, արեգակն ու լուսինը»: Ապա. «Ջարմանալի չէ, որ այժմյան

կազմավորված և քառասյին Ռուսիայում կատարվում են այդքան բռնություններ մարդկային անձնավորության և սեփականության դեմ ... Մի ժողովուրդ, որ դարեր շարունակ կրելով բռնակալության լուծն այնքան է ընտելացել այդ լծին, որքան գրաստն իր բեռանը, չի կարող մի օրվա մեջ կախարդական գավազանի մի հարվածով հոգեպես ազատվել բռնության կապանքներից:

Ասում եմ՝ հոգեպես, վասնզի մարմնավոր ազատությունը դեռ լիակատար ազատություն չէ և հոգու ստրկությունն ավելի դժվարահաղթ է, քան մարմնավոր ստրկությունը: Եվ վերջապես. «Այն ազատությունը, որ այժմ ձեռք է բերել ռուս ժողովուրդը, սոսկ մարմնավոր է: ... նրա հոգին տակավին հեծում է նրա տակ և դեռ երկար ... պիտի հեծե, մինչև որ նրա ճնշված ու կաշկանդված ասիական միտքը պարզվի և պայծառանա ...» և այլն:

Ազատության պայծառատես հնչեղությամբ դողանք, առայժմ վերապահություններով և միայն Ռուսիայի համար: Իսկ սեփական ժողովրդի՞... «Դեռ սպասենք» և շարունակում ենք սպասել...

Մամուլի էջերում 1918 թ. փետրվարի 1-ից նոյեմբերի 10 տարեթվով հրապարակված հոդվածներն իրական-պատմական, կենսական-առօրեական հրատապ ամենատարբեր հարցերի նվիրված նյութեր են բազմապիսի մտահոգություններով: «*Բավական է*» և «*Կամ գործ, կամ լռություն*» վերնագրերով հոդվածներում դատափետվում են հոռետեսությունը, լալկանությունն ու երկչոտությունը, ի մասնավորի զինվորի, և հասարակական բոլոր խավերին ուղղված՝ «... չկա ավելի էժանագին հայրենասիրություն, քան ողբը» պատվիրանով: «*Մի զազրելի փաստ*», «*Մի հանցանք*» և «*Միթե՞ զարշելի չէ*» հոդվածների նշանակետը իրավաբան-փաստաբաններն են ու բժիշկները՝ համընդհանուր անհանդուրժելի «սակարկումներով», ի մասնավորի նաև գաղթականների հետ հարաբերություններում: Ապա հետևում են հարձակումները Ազգային խորհրդի վրա («*Մի զազրելի փաստ*»), քանզի 1918-ի փետրվարյան ահեղ օրերին Ազգային խորհրդում 20-ից «միայն մի երիտասարդ փաստաբան է գտնվում, որ փարատում է ամոթալի լռությունը: Միայն մեկն է հայտնում պատրաստակամություն իր բարոյական պարտքը կատարելու», ասել է մեկնելու ռազմաճակատ. միակը, «որը չի պատկանում գիշերները մինչև լույս թուղթ խաղացող հայ համալսարանականների շարքին»:

Քննադատական հոդվածները շարունակվում են՝ «*Մի հանցանք*», և նյութը Ազգային խորհրդի «ամօրինակ դանդաղությունն է»: «Մի՞թե

գարշելի չէ» և երևույթը՝ «գռեհիկ խանութպանների» ներկայությունն ու «չարչիությունն է» Ազգային խորհրդում: «*Չարզենք հին ճշմարտությունը*» այն է, թե՛ «Ազգային խորհրդի ընտրությունները չխուսափեցին կուսակցական ոգուց», ասել է՝ անհամաձայնություններից: Եվ 1918 թ. փետրվար-մարտյան ահեղից ահեղ միջոցին միմյանց հաջորդող՝ «*Գեթ այժմ*», «*Ամենախիստ քննություն*», «*Չէ՞ որ վիրավորական է*», «*Յուսով եմ*», «*Չայ զինվորներին*», «*Չեռացեք ասպարեզից, եթե չեք հավատում*», «*Մեր ճակատագիրը մեր ձեռքումն է*» խոսուև վերնագրերով հոդվածների շարք: «Պատերազմը ազգերի կյանքի և մահվան խնդիրն է լուծում».
«Բավական է, որքան դիլետանտիզմն ու փառամոլությունը թշվառացրին մեզ, թող չքանան նրանք ասպարեզից»: Ապա. «*Ձեզ եմ դիմում, հայ զինվորներ: Ձեզ, որ այժմ հայ ազգի միակ հույսն ու միակ հավատքն եք*»: Եվ ամենակարևորը, հրատապը. «*Լսեցեք. մենք հայերս ոչ ոքի պատերազմ չենք հայտարարել և ոչ ոքի հետ չենք ուզում կռվել*»: Դրա կողքին էլ. «*Երանի թուրքիան անկեղծորեն ասեր մեզ. «Եկեք խնայեք իրարու արյունը, հաշտվենք և բարեկամանանք*»: Երանի նա այդ ասեր և իր ասածն երաշխավորեր հաստատ գրավականով»: Եվ, որպես կանոն, նման կոչերին ուղեկցում է լավատեսությունը՝ «*փոքրոգության*» դեմ: Մեկ էլ հուսավառվում է՝ «*Մեր ճակատագիրը մեր ձեռքումն է*». «*Աշխարհի բոլոր վայրերից, ուր կան մի բուռն հայեր, անվերջ գալիս են կամավորների խմբեր զինված և անզեն*»: Մեծ մասամբ անզեն ... և հետևում է հուսախաբությունը: Սրանք արդեն էրզրումի անկմանն ուղեկցող կոչեր ու տրամադրություններ էին, երբ թուրքական զորաբանակը շարժվում էր դեպի Կարս ... Կարսի անկումից հետո ծայր առած հուսալքությունը գնալով խորանում է ժողովրդի բոլոր շերտերում, և, սակայն, հավատարիմ գրողի իր կոչմանը Շիրվանզադեն շարունակում է լավատեսական ամենժամյա – ամենօրյա հորդորը. չկորցնենք «*հավատն ու հույսը: Դառնանք նրանց թևն ու թիկունքը, ոգևորենք նրանց ոչ խոսքերով, այլ գործով: Վարակվենք նրանց ոգով և միանանք նրանց՝ հոգով ու մտքով*»: Այսինքն՝ ռազմի ճակատում կռվողներին, մինչև որ ոգեկոչումները պսակվում են Սարդարապատի հերոսական ճակատամարտով...

Բայց խաղաղություն չունեի հայ ժողովուրդը. իրար են հաջորդում ծանր կորուստներ: 1918-ի հուլիսի 6-ին թիֆլիսյան իր բնակարանում անհայտ ոճրագործների ձեռքով սպանվում է «Մշակի» խմբագիր, Չայ ժողովրդական կուսակցության առաջնորդ Յամբարձում Առաքելյանը: Առեղծվածային է արդյո՞ք. նույն հուլիսի 6-ի օրը Մոսկվայում ծանր

վիրավորվում և շուտով վախճանվում է էսեռական կուսակցության առաջնորդներից Պռոշ Պռոշյանը: Մեծ հեղինակություն վայելող համառուսական քաղաքական գործիչ, որ արժանանում է Վ. Ի. Լենինի առանձնակի ցավակցությամբ: Արդյո՞ք գործող նույն մեքենայություններով չիրագործվեց և Բաքվի 26 կոմիսարների հաշվեհարդարը...

Հասարակական լիարժեք գործիչ էր Հ. Առաքելյանը, ըստ այդմ հետաքրքիր է նրա հիշատակին «Պսակի փոխարեն» վերնագրով Շիրվանզադեի հոդվածը՝ հակասական դիտարկումների նման համադրումով: Հոդվածն սկսում է այսպիսի բնութագրերով. «Միշտ բարեհամբույր, միշտ կարեկցող, միշտ պատրաստ ... մերձավորներին ծառայելու՝ և հեռավորներին օգնելու:

Քաղաքակիրթ էր նա և սիրալիր գրեթե բուն եվրոպացու չափ, մոռացկոտ էր իր նյութական շահերի վերաբերմամբ, հիշաչար և վրիժառու հասարակական շահերի համար:

...Սիրում էր վիճաբանել թեև կուսակցական ոգով, բայց միշտ գաղափարական հողի վրա: Համառու կամակոր չէր իր կարծիքների մեջ, որովհետև կարճամիտներն են միայն իրանց համարում անսխալական», զգում էր սխալը և այլն: Ապա. «Այսպես եմ ես ճանաչել Համբարձում Առաքելյանին, իբրև անհատի, ընկերական և մասնավոր կյանքում: ... իմ ու նրա մեջ եղած ընդհարումների ամենակատաղի միջոցներին իսկ չեմ զգացել դեպի նա ատելություն»: Իսկ այսքան դրականից հետո միանգամից բացասական հատկությունների այսպիսի ալիք. «Տարբեր էր նա մի փոքր իբրև գրչի մարդ: Ճշմարտասեր էր նա անսահման, բայց վերին աստիճանի սուբյեկտիվ, արդարամիտ, բայց ինքնամոռացության չափ ծայրահեղ, միշտ գաղափարական, բայց և միշտ անհավասարակշիռ: Նրա հասարակական ատելությունը դեպի հասարակական ախտավորները չափ չուներ: Նրա թույլն անսպառ էր, երբ հարկավոր էր խայթել: ... Անհաշտ էր իբրև մարտնչող, դաժան որպես դատավոր:

Այս տեսակետից Համբարձում Առաքելյանը Գրիգոր Արծրունու իսկական աշակերտն էր և միակ հաջորդը, նրա չափ կրակոտ, նրա չափ տաղանդավոր»:

Հայտնի է, որ 1913-ին և հետո «Մշակի» էջերում հոդվածներ է տպագրել նաև Վ. Տերյանը. հետաքրքիր է, ինչպիսի՞ կարծիք կունենար նա Առաքելյանի անձի և գործունեության մասին... Հ. Առաքելյանից հետո «Մշակի» խմբագիր է մնում Լևոն Քալանթարը, որ հայտնի է իր թատերագիտական հոդվածներով, մինչև որ կարճ ժամանակից ժողովրդական կուսակցության առաջնորդ ու «Մշակի» խմբագիր է

դառնում Տիգրան Չախումյանը:

Չետաքցիր է. մինչդեռ մարտից հուլիս միջոցին «Մշակում» Շիրվանզադեի տպագրած հոդվածները սակավաթիվ են, հուլիսի 14-ի համարում տպագրած «Պսակի փոխարեն»-ից հետո դրանք անհամեմատ հաճախակի են դառնում:

...Երևանում արդեն ձևավորվել էր իշխանությունը՝ դաշնակցական և ժողովրդական կուսակցություններից, և, ահա,՝ «Մշակի» 1918 թ. հուլիսի 20-ի համարում հետևում է գրողի «*Երևանն ինքը պետք է հոգա*» հոդված-կարգախոսը՝ քննադատական նման շեշտադրումներով, որ Ազգային խորհուրդը շատ է դանդաղել Երևան փոխադրվելը, որ՝ «ես մեկն եմ եղել նրանցից, որոնք Ազգային խորհուրդը պաշտպանել են զանազան հարծակրումներից: Բայց ես պաշտպանել եմ այն զաղտնի հույսով, որ, վերջապես, մի օր նա ինքը կգա իր կազմի ականհայտ թուլությունը և կաշխատի հետզհետե ամրացնել իրան կողմնակի ուժերով»: Դրա կողքին էլ ավելացնում է. «Ազգային խորհուրդը իր այժմյան կազմով մինչև ոսկորների ուղեղը վարակված է իշխելու փափագով: ... դրանով նա գործում է մի այնպիսի հանցանք, որի համար նա մեծ պատասխանատվության է ենթարկվելու հայ ազգի ապագա պատմության մեջ»:

Ոգին նույնն է և հաջորդ՝ «*խնայենք մեր արժանապատվությունը*» հոդվածում, ահա՝ այսպիսի հորդորով. «...մի՞թե բավական չէ որքան ինքներս մեզ ապտակեցինք: Մի՞թե բավական չէ ... շարունակ կուրծք ծծելով, ... մեր թշվառության իսկական պատճառներն իրարու վրա շարտեցինք»: (Չաճախ էլ դա վերագրվում էր ժողովրդին: Երբեմն անխնա...):

Առավել խիստ ու անողոք է «*Լռեցե՛ք, բորենիներ*» հոդվածը՝ հասցեագրված նմաններին. «Անցեք Երևանյան հրապարակով, Գոլովինսկի պրոսպեկտով, մտեք այդ բազմաթիվ խանութները, որ մեծ մասամբ հայերին են պատկանում, մտեք այդ կեղտոտ ու կեղեքիչ կաֆեներն ու կլուբները, ամենուրեք կհանդիպեք այդ մարդկանց: Դրանք մեր նորագույն տիպերն են»: Եվ այդ ուղնուծուծով *արդիական* տիպերին էլ վերաբերում է արգահատանքը. «— Լռեցե՛ք, բորենիներ, եթե հայ ազգն ունի բարոյական արատներ, ամենամեծ արատը դուք ինքներդ եք», — եզրահանգում է Շիրվանզադե հրապարակախոսը:

, Քաղաքական ավելի համընդհանուր հարցերում սովորաբար նկատվում է որոշակի համերաշխություն վրացական թե՛ կուսակցական-մտավորական կողմնորոշումների հետ և՛ թե մամուլի: Այդուամենայնիվ, հատկանշական է. «Մշակի» 1918 թ. հուլիսի 28-ի համարում տպագրված

«*Դիմենք նրա միջամտությանը*» վերնագրով հոդվածում միանգամայն հակառակն է: Այստեղ արդեն, քննականորեն անդրադառնալով կայսրության քաղաքական իրավիճակին, խառնակության պատճառ է համարում դիլետանտությունը՝ այսպիսի հիմնավորումով. «... համայն Ռուսիան իր բոլոր մասերով ու ազգություններով գտնվում է դիլետանտների ձեռքում, և մենք այսօր տեսնում ենք, թե ինչեր արին նրանք և ինչեր են անում»: Այա և մտաբերում է. «Ես հիշում եմ, ռուսական հեղափոխությունից մի քանի ամիս առաջ հայտնի լեհական գործիչ արքեպիսկոպոս բարոն Ռոոբի ինձ ասած խոսքերը, թե «Ռուսիայում հեղափոխություն կլինի. այս անկասկած է, բայց թե այդ հեղափոխությունը կկործանե նրան, այդ էլ անկասկած է»:

— Ինչո՞ւ, — հարցրի ես:

— Որովհետև Ռուսիան չունի քաղաքականապես ընդունակ և պատրաստի ոչ մի ժողովրդական ուժ: Այս տեսակետից ապիկար են նրա բոլոր կուսակցությունները հավասար: Մոնարխիային կփոխարինե անարխիան, և դա կլինի Ռուսիայի վերջը իբրև մեծ պետություն»:

Ռուստի, նկատի ունենալով, որ Անդրկովկաս ժամանած գերմանացիների օգնությանը մասնավորապես վրացիները հապաղում են դիմել, գրում է. «Գալով վրացիներին, այս երկու ամսվա փորձը տակավին չի արտադրել նրանց ընդունակություններն ընդգծող մի որևէ խոշոր փաստ: *Ընդհակառակը կան մի շարք փաստեր, որ չափազանց կասկածելի են դարձնում նրանց վարչական ծիրքերը*» և այլն (ընդգծումը մերն է. — ԱՄ. Ջ.): Ըստ այդմ, գրողը պահանջում է խոստովանել «հրապարակորեն ... ապիկարությունը», քանի որ «բնավ անոթալի չէ աշակերտելը», և կարգախոսն էլ սա է. «... ո՞վ կարող է մեզ համար ավելի լավ ուսուցիչ լինել, քան Եվրոպան: Բախտավորապես, այստեղ է նրա հզոր ներկայացուցիչներից մեկը՝ գերմանացին: Թողնենք մեր ամբարտավանությունը և դիմենք նրա օգնությանը»: Հիմա էլ, ահա, այդպես է կարծում առաջներում ռուսամետ գրողը, քանի որ Անդրկովկասում վիճակը գնալով վատթարանում էր...

Շիրվանզադեի տարակարծություններն այդ տեսակետից, իրոք, ուշագրավ են: Իրականում և հետադարձ հայացքով՝ այդ միջոցին Թիֆլիսում և ամենուր Անդրկովկասում՝ այդ թվում հայերի շրջանում, օր առ օր համալրվում էին բոլշևիկների շարքերը: Արդյունքում շուտով վրա է հասնում Բաքվի 26 կոմիսարների եղերական գնդակահարությունը, ու տարատեսակ խլրտումներով մեծապես փոխվում է իրավիճակը ռազմաճակատում...

91243
Հուլիսի 31-ից օգոստոսի 14-ը «Մշակում» հրապարակված «Մեր բոլոր ուժերով», «Նախ մեր ռիսերին թշնամին», «Պիտի արհամարիվեն», «Մեր վամպիրները» տազնապալի հողվածների ընդհանրական առանցքն արդեն ներքին բարոյական խնդիրներ են՝ քարկոծվում են ազահությունը, գոեհկությունը: «Սոսկալի է գոեհկությունն ու զագրելի: Ագահ է նա, դաժան, արյունարբու».: «Այս բանն ամենափայլուն կերպով ապացուցեց ռուսական հեղափոխությունը».: «Դուք այդ տեսնում եք և զգում ամեն օր խանութներում, արհեստանոցներում... Իսկ թե ինչեր են կատարվում գավառներում ու գյուղերում, այս արդեն աննկարագրելի է», – գրում է Շիրվանգաղեն՝ վկայակոչելով Հովհ. Թումանյանին. «— Ես չեմ կարող նկարագրել այն հրեշտությունները, որ տեսա իմ աչքերով հայ ժողովրդի մեջ, – ասաց նորերս Հովհաննես Թումանյանը իր մի զեկուցման միջոցին»:

Եվ ահա, այդ հողվածների կողքին՝ թերթի օգոստոսի 4-ի համարում գտնում ենք ըստ ամենայնի հիշարժան «Հարգենք միմյանց իրավունքները» հողվածը: «Երեկ լրագիրներում կարդացի, որ Երևանում որոշված է Հայոց Ազգային Խորհրդի կազմի մեջ ընդունել պատգամավորներ մուսուլմաններից, ռուսներից և եզիդիներից: Այլ խոսքով, ճանաչվում ու հարգվում է... փոքրամասնությունների իրավունքը՝ մասնակցելու երկրի կառավարության մեջ», – գրում է Շիրվանգաղեն: Հետևում են ըստ արժանվույն գնահատականներ. «Եթե կամենաք, դա մի տեսակ ապացույց է հայ ազգի որոշ քաղաքակրթության, առաջին վկայականը նրա մտավոր ու բարոյական համեմատական հասունության: ... Ռուսիայի ներկա քայքայման գլխավոր պատճառներից մեկն եղավ նրա գոռոզությունն ու ամբարտավանությունը, որոնց ամենառելիք արտահայտությունն էր օտար ազգերին ու ազգություններին տմարդի կերպով հալածելը».: «Հալածանքը մարդկության վայրենական դարերի գարշելի ժառանգություններից մեկն է»: Իսկ վերջում էլ՝ ամենակարևորը. «Ես ավելի քան համոզված եմ, որ հայկական հանրապետության որոշումը միակը չի լինի Անդրկովկասի սահմաններում: Համոզված եմ, որ մյուս երկու հանրապետություններն էլ շուտով կճանաչեն և կհարգեն իրանց սահմաններում գտնվող փոքրամասնությունների իրավունքները: Առանց այդ ոչ մեկը երեք պետություններից չի կարող լինել հանգիստ ու ապահով: Առանց այդ նրանց գոյությունը սկզբից ևեթ կհանդիպի վտանգավոր անախորժությունների: Համենայն դեպս քաղաքակրթ մարդկության կողմից մենք չենք ճանաչվի որպես անկախության արժանի և քաղաքակրթության ընդունակ ժողովուրդներ: ...

Հարգենք միմյանց իրավունքները»:

Իր ժամանակին նույնքան հնչեղ ու մեր օրերում էլ այժմեակն է և «Պարտավոր է տալ» վերնագրով հոդվածը (օգոստոսի 6). առաջին տողից վերջինը՝ ժողովրդի ունևորը հայ գրողին (նույնն է, թե մշակութային գործչին) «պարտավոր է տալ» նշանաբանով ու ցավով շարադրված էջերը. այլապես՝ «...միանգամայն վիրավորական է մեր ազգի բարոյական վարկի համար: Այո, ոչ գրողի, այլ ազգի, վասնզի յուրաքանչյուր ազգի քաղաքակրթության աստիճանը որոշվում է իր մտավոր հարստության գնահատության չափով»: Էապես Ազգային խորհրդին հարուցած պարտավորեցնող դիմում՝ «Միլիոններ հարկավոր չեն դրա համար: Հայ գրողների թիվը երեք տասնյակի էլ չի հասնում: Եվ եթե լավ խախալենք, կեսն էլ չի մնա: Վերջապես, պահանջը ժամանակավոր է և միանվագ:

Ազգային խորհուրդը պարտավոր է տալ այդ միանվագ նպաստը Հայ գրողների ընկերությանը, և ընկերությունը պարտավոր է առանց հետաձգելու դիմել նրան»:

Ժամանակի ընթացքում անչափ կարևոր այս հարցը ողջ սրությամբ ծառանում է նաև Հայ գրողների ընկերության առջև, և, ահա, 1919 թ. հունիսի 15-ին ընկերության նախագահ Դովի. Թումանյանը դիմում է Հայաստանի Հանրապետության նախարարապետ Ալ. Խատիսյանին. «Արդ՝ մի կողմից ավելի նեղ վիճակ, քան էսօրվան վիճակն է՝ չի կարող լինել հայ գրական մարդու համար, մյուս կողմից՝ մենք արդեն ունենք մեր կառավարությունը, որի համար հայ կուլտուրայի պաշտպանությունը առաջնակարգ հոգսերից պիտի լինի: ... խնդրում եմ ընթացք տալ մեր խնդրին և մի գումար հատկացնել Հայ գրողների ընկերությանը՝ էս նեղ օրերին օգնության հասնելու մեր գրողներին, գիտնականներին ու հրապարակախոսներին»²: Եվ, ահա, շուտով՝ հուլիսի 7-ին, Հայաստանի Հանրապետության խորհրդարանը համապատասխան օրենք է ընունում, որի «ա» կետում գրված է. «Բանալ հանրային կրթության և արվեստի մինիստրությանը հարյուր հազար (100.000 ռ.) ռուբլու վարկ՝ հայ գրողներին, գիտնականներին և հրապարակախոսներին Հայ գրողների կովկասյան ընկերության միջոցով օգնություն հասցնելու»³ համար:

... Իրավիճակը գնալով դառնում է հուսահատական, և հարկ է

² Դ Ո Վ Ի. Թ Ո Ւ Մ Ա Ն Յ Ա Ն. Երկերի լիակատար ժողովածու տաս հատորով. հ. տասներորդ. Նամակներ. 1905–1922. Երևան, 1999, էջ 329:

³ Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 199, ց. 1, գ. 57, թ. 132: Բնագիր: Չեռագիր: Հմմտ.՝ Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918 – 1920 թթ.), Երևան, 1998, էջ 127:

զգացվում հիմա էլ պայքարել՝ «Հուսահատությունը մի թույն է, որ կենսունակության արմատն է սղոցում» նշանաբանով՝ ազգային կյանքի բոլոր ոլորտներում և առաջին հերթին կառավարական օղակում. «Այն մարդիկ, որ չեն հավատում գործին և իրանց գործունեությանը, այժմ իսկ պետք է հրաժարվեն գործելուց: Այսպես է պահանջում անկեղծ սերը դեպի ազգը: Այսպես է պահանջում ազնվությունը: Իսկ եթե չեն կամենա հեռանալ, նրանց հուսահատությունն ու հոռետեսությունը պետք է չեզոքացնել»: Ահա, այսպես, «*Պետք է չեզոքացնել*», որը և հաշտարար վերնագիրն է այս հոդվածի՝ տպագրված «Մշակի» օգոստոսի 16-ի համարում: Ըստ այդմ, ենթադրվում է հասարակական արատների և, առաջին հերթին, ազահության մերկացումներ:

Հայրենիքի և ժողովրդի ճակատագրական դաժան օրերին «չեզոքացնելը» այլևս չի բավարարում գրողին, և նա դիմում է անեղ մերկացումների՝ այս անգամ էլ մտավորական կոչվածների: Միմյանց հաջորդած «*Օրվա հերոսը*», «*Այս է ցավալին*», «*Այս է պատճառը*» հոդվածներով՝ շարունակվում-լրացվում-դատափետվում են հասարակական արատները. «Պատերազմից առաջ նա փաստաբան էր: Իհարկե, կարող էր լինել և՛ իմծեներ, և՛ բժիշկ, և՛ ճարտարապետ, մինևույնն է: Բայց թող այս անգամ լինի իրավաբան: ...Երիտասարդ էր, սիրում էր շքեղ ապրել և կանանց հրապուրել ...»: Բայց ահա՛, «Երբ պատերազմ հայտարարվեց, և նա ենթարկվեց զորակոչի, սարսափեց: ... ուրեմն նա պիտի գնա կռվի դաշտը նահատակվելու՞: ... ոչինչ, կռվել կարող են գյուղացիներն ու բանվորները, իսկ նա ուսում ունի»: Գնալով հումորը վերաճում է երգիծական մերկացման. «Մեր հերոսը նույնպես կամեցավ ազատությունից օգտվել»: Ի՞նչ անել. «Վերադառնալ փաստաբանական արհեստին»: Յեշտ է ասել. «Ազատությունը դատարանական գործերի թիվը պակսեցրել էր մինչև միմիում, ... գողերն ու մարդասպաններն ազատություն էին ստացել իրանց արհեստն այսուհետև աներկյուղ և անպատիժ շարունակելու»: Եվ հերոսը վճռում է «պարապել սպեկուլյացիայով»: Թժմանքով ձեռք է բերում միջնորդի պաշտոն, ապա «պարապում է ծխախոտի սպեկուլյացիայով»: Յերոսի «նախկին բարակ վիզն արդեն բավական հաստացել է, գունատ դեմքը գիրացել ու կարմրել: Այլևս չի հայիոյում վաճառականներին ու միլիոնատերերին և խաղում է բակարա ու մակաո:

Բայց և այնպես խանութպաններին չի սիրում և ասում է. — Խիղճ չունեն»:

Երգիծական այս ակնարկի «մոտիվը»՝ զորացող ուժով և նույնքան

ցավալի շեշտադրումով շարունակվում է և հիշատակված «Այս է ցավալին» հոդվածում՝ ավելի ընդհանրական առումով, կտրուկ հարցադրումով ու պատասխանով, ցավով շաղախված տողերով: Այն է՝ «...կա մի սրբություն, որ չպիտի վարակվեր ժամանակի ախտով: Նա պիտի զրահ հագներ պաշտպանելու համար իր հոգու մաքրությունը և ուղեղի առողջությունը:

Դա այն փոքրիկ քաղաքակրթությունն է, որ ձեռք ենք բերել վերջին հարյուր տարվա ընթացքում սիզիֆյան աշխատանքով, – գրում է Շիրվանզադեն: – Խոսքս հայ ինտելիգենցիայի մասին է:

Մի՞թե հայ ծնողները նրա համար են գրավ դնում իրանց հոգին և ուսում տալիս զավակներին, որ վերադառնալով հայրենիք աշակերտեն ու հետևեն չարչիներին, վաշխառուներին ու գողերին: Այլևս ո՞ր է տարբերությունը ... Երբ փափախն ու տրեխներն են զրկում, գողանում, կողոպտում, ասում ենք՝ դա տգիտությունն է: Բայց ի՞նչ անուն տանք այն համալսարանականին, որ խղճի ամենայն հանգստությամբ, իր դիպլոմն է չպրտում աղբակույտի մեջ: Ի՞նչ անուն տանք նրան, երբ մանավանդ իր ձեռներով կորզում է որբերից նրանց մի կտոր հացը»: Բարոյական առաջնահերթ կարգախոս՝ արժանացած, ինչպես տեսնում ենք, գրողի առանձնակի շեշտադրմանն ու հիմնավորմանը:

Եվ, այսպես, հեղափոխության-հակահեղափոխության խառնարանում խորացող հոգևոր-բարոյական ցավալի ու ամոթալի արատներ ու դրանց շարքում ամենաողբերգականն ու ամենազագրելին՝ «Առաջմ լռում են» վերնագրով հոդվածում (տպագրվել է օգոստոսի 29-ին՝ «Մշակի» էջերում) արժարժվողը: Եվ դա վերաբերում է Թիֆլիս հասած որբերին. «Առանձնապես մռայլ գույներով են նկարագրում պատմողները որբանոցների վիճակը: Հաղորդում են թշվառ որբերի կացությունից փաստեր, որ ընդունակ են զգալու մարդու արյունը սառեցնել երակների մեջ, դեպքեր, որ անհավատալի են թվում ... այս արկածալի ժամանակներում:

Թույլ տվեք ինձ խնայել ձեր ներվերի հանգստությունը և չնկարագրել և ոչ մեկն այդ դեպքերից: ... Բավական է ասել, որ ամենագոռեհիկ մարդիկ անասուններին անգամ այնպես չեն վերաբերվում, ինչպես վերաբերվում են որբերին Թիֆլիսում:

Թույլ տվեք նաև առժամանակ հրապարակ չնետել անպարտաճանաչ կամ հանցավոր հաստատությունների ու անհատների անունները: ... Իսկ առաջմ լռում են»: Այդպես ցավով ակնարկում և «լռում է» նաև Լեոն իր նամակներում... Եվ այսպես կրկնվում է հայ որբերի բախտի անիվը ինչպես եղերական այդ սև օրերին, այնպես էլ մեր օրերում՝ երկրաշարժից

որբացած երեխաներինը...

Հետաքրքիր է, օգոստոսի վերջին օրերից «Մշակի» էջերում տպագրվող հոդվածներում նկատվում է լավատեսական ինչ-որ երանգ՝ սկսած լայնորեն հայտնի «Մի անեկդոտ»-ից և «Իմ տպավորությունը» հոդվածից: Տպավորությունը Հայ ժողովրդական կուսակցության ներկայացուցչական ժողովի նիստերից են, հիմնականում դրական որոշակի այսպիսի ծաղկաքաղով. «Ազնիվ կամ անազնիվ, կեղծ կամ անկեղծ կարող է լինել կուսակցականը, այլ ոչ կուսակցությունը: Եվ նրանք, որոնք անհատների սխալները կամ արատները վերագրում են իրանց հակառակ կուսակցությանը, բարոյապես դատապարտելի են:

Ես այս ասում եմ առանձնապես հայ կուսակցությունների վերաբերմամբ, որոնք իրարու հետ բանակռվելիս հաճախ դիմում են ծայրահեղությունների:

Համբերողամտությունը քաղաքակրթության բարիքներից մեկն է: Գոեհկությունն է միայն, որ հակառակորդի գոյությունը ջնջում է, բոլոր մարդկային արժանավորությունները և մտավոր ու բարոյական կարողությունները միայն ու միմիայն իրան սեփականացնելով: Եվ նման նկատումներ, դասեր ու խորհուրդներ ... այդ շարքում ամենակարևորը. «Դաշնակցությունը զորեղ է հենց իր երիտասարդ անունների բազմությամբ:

Պետք է հուսալ, որ հայ երիտասարդությունը կլրացնե Հայ ժողովրդական կուսակցության այդ խոշոր թերին: Ցանկալի է միայն, որ գորավարները եռանդով աշխատեն զորք կազմելու»:

Կուսակցություն կոչվածի և կուսակցականների հարաբերությունների, առանձին կուսակցականի համար ուսանելի պարտավորություններ ու դասեր, որպիսիք պետք է որ հաշվի առնեն մեր օրերի բազմաքանակ կուսակցություններն ու հատկապես դրանց ղեկավարները:

«Կփափազեի» վերնագրով հոդվածում արդեն հասցեագրված Պոլիս մեկնած հայ պատգամավորներին, ի մասնավորի մեղադրում է Ալ. Խատիսյանին՝ թուրք թղթակցին տված «ինտերվյուում» տեղ գտած սխալների համար (այնպիսի սխալների համար, ի դեպ, որպիսիք կարող էին վերաբերել նաև Շիրվանզադեի մախորդ որոշ հոդվածներին):

«Հիմարություն» վերնագրով կարճառոտ հոդվածը՝ տպագրված «Մշակի» 1918-ի սեպտեմբերի 5-ի համարում, կարելի է ասել, մթնոլորտով՝ «ուտող, խմող, զվարճացող» եռուզեռով զարմանալիորեն նման է մեր օրերի Երևանին... Բառացի հայ ժողովրդի մերօրյա մտահոգությունների ցավալի պատկեր է ներկայացված «Մի վերք ևս»

հողվածում (սեպտեմբերի 15), որի վերջին ամփոփիչ հատվածը, թերևս, կարելի է վերաքաղել ամբողջովին. «Հյուսիսային Կովկասի և Ղրիմի մանր-մունր սպեկուլյանտները ոչնչություններ են իսկական վաճառքների համեմատությամբ: Բայց նրանք ինձ զայրացնում են ու վշտացնում մի տեսակետից: Եթե մի օր, Տերը մի՛ արասցե, պայթե գռեհիկ ռուս ազգաբնակչության կատաղի բնագոյը, որ մենք հրեական ջարդերից արդեն գիտենք ինչ է, ո՞վ է լինելու տուժողը: Կարծում եք իսկական մեղավորը: Ո՛չ: Ասում են՝ նավը խորտակվելիս ամենից առաջ ազատվում են մկները, որ տարիներ շարունակ կրծոտել են նավը: Ոչ մի ազգի մեջ այս առածն այնքան չի իրականանում, որքան հայերի մեջ: Մեր մկների ոտները չափազանց ճարպիկ և արագաշարժ են փախչելու: Ապացույցներ ձեզ՝ Կարսի, Ալեքսանդրապոլի, Ախալքալաքի փախուստներն այդ մկների: Ապացույց ձեզ փախուստներից ամենախայտառակը – Թիֆլիսինը:

Կփախչեն Հյուսիսային Կովկասի ու Ղրիմի սահմաններից ևս մեր ազգի անունն ու վարկը կրծոտողները, դրանց փոխարեն կտուժե տեղական անմեղ հայ ազգաբնակչությունը... որ մի ամբողջ դար վայելել է բարեսիրտ ռուս ժողովրդի հյուրընկալությունը, հարգելով ու սիրվելով նրանից»:

Ստահոգությունները շարունակվում են և «Ինտելիգենցիա» վերնագրով հողվածում («Մշակ», 21.IX.1918), որպիսիք հազիվ թե հնանան, այնքան որ ճշգրիտ են գրողի մտածումներն ու սահմանումները: Ուրեմն դարձյալ մեջբերենք հենց այս կարգի էական հատվածներ, որպիսիք գրողի խոստովանությամբ՝ խոսք են «ահագին մեծամասնության մասին». «Կարելի է կարծել, որ նա խստապահանջ է, որովհետև ունի իրավունք այդպես լինելու: ... Նա, որ սովոր է միշտ բարբառել հանուն եվրոպական քաղաքակրթության, նույնքան տգետ է այդ քաղաքակրթության վերաբերմամբ, որքան խստապահանջ իր ազգի վերաբերմամբ: Արհամարհելով, օրինակ, հայ գիրքը, նա անտեղյակ է և օտար գրքերին: Հիետաքրքրվելով իր ազգի կյանքով, նա չի հետաքրքրվում և ուրիշ ազգերի կյանքով: Նա մի անպտղաբեր ծառ է, որ ինչ հողի վրա ևս տնկվել՝ մնալու էր անպտղաբեր: Նա ստում ու կեղծում է՝ իր ազգային անպտղաբերությունը բացատրելով կոսմոպոլիտիզմով: Նա չգիտի, որ ինքը կոսմոպոլիտիզմը մի անպտղաբեր ծառ է» (ընդգծումը մերն է. – ԱՆ. Զ.): Իսկ ամենավերջում էլ հաստատում է իր կարծիքը. «Ավելի արդարացի և ճշգրիտ կլիներ ինտելիգենտ անունը տալ միայն այն անձանց, որոնց զբաղմունքը մտավոր է»: Ասել է՝ բիզնեսը չէ՞ ...

Սպեկուլյացիան չէ՞...

Խառնակ ժամանակներում լինում են և հակասական-անսպասելի ու անսովոր տեսակետներ, որպիսիք և դժբախտաբար, թե բարեբախտաբար շատ են պատահում Շիրվանզադեի հոդվածներում: Այդպիսին է և «Մշակի» սեպտեմբերի 28-ի համարում տեղ գտած «*Ամոթալի չէ*» հոդվածը: Դժվար է, իրոք, ենթադրել նման սառը դատողությամբ շարադրված տողեր. «Ինձ թվում է, որ ժամանակ է, վերջապես, ջնջել այդ հոգեբանական տրագիկոմեդիան (խոսքը Թուրքիայի հետ հարաբերությունների մասին է. – *ԱՄ. Ջ.*): Թվում է, որ ժամանակ է հրաժարվել երկու իրարու տրամագծորեն հակառակ տրամադրություններից, թե՛ ուղղություններից, ինչպես կամենաք: Չպիտի ոչ երկչուտաբար հուսահատվել և ոչ մանավանդ տղայաբար սպառնալ: Չպիտի ոչ ողբալ և ոչ ռազմական փող փչել»: Եվ ապա. «Մի՛ մոռանաք, որ մեր պատգամավորությունը Կ. Պոլիս գնացել է հենց մեր պարտությունը խոստովանելու և զիջումներ խնդրելու համար»... Ապա և նույն ոգով. «Մեր փրկությունն այժմ հաշտության մեջ է: Մենք ոչ միայն կռվելու, այլև վիճելու ու սակարկելու անգամ ուժ ու կարողություն չունենք: ... պետք է լինենք չափավոր ու զիջող, որպես պարտվածներ: Կրկնում են, դա ամոթալի չէ»:

Ահա, այսպես, օրը օրին փոխակերպվող տրամադրություններ ու մտայնություններ ...

... Առ այսօր հայ ժողովրդի առջև ծառացած կենսական հարցերի շուրջ մտորումները, վիճաբանությունները շարունակվում են տևականորեն. նույն հարցի շուրջը սովորաբար մի քանի օր, և հետո միայն պարզվում է արդյունքը, ինչպես, ասենք, «*Նախ վերացրեք*» հոդվածով («Մշակ», 3.X.1918): Մի շատ ուշագրավ հոդված, որ բացորոշ վկայում է օտարի մեղսակցություն հայ-թուրքական, ինչպես և հայ-ադրբեջանական հարաբերություններում: Միանգամայն որոշակի գրողի հետևյալ հուշարկումով: «Երկու ամիս առաջ հայ-թուրքական կոտորածներից, – գրում է Շիրվանզադեն, – որ սկսվեցին Բաքվում, ես գտնվում էի այդ քաղաքում, այն է 1904 թվականի նոյեմբերին: Մի բոլորովին պատահական աղբյուրից ես տեղեկացա, որ շուտով պետք է տեղի ունենան մասսայական ընդհարումներ հայերի ու թուրքերի միջև: Այս մասին ես բարոյական պարտք համարեցի նախազգուշացնել տեղական հայ ինտելիգենցիային: ... Իմ նախազգուշացումն արժանացավ մի այնպիսի երեխայական ընդունելության, որ ես բարվոք համարեցի... ընդհատել խոսակցությունը: ... Դիմեցի թուրք ինտելիգենցիայի ներկայացուցիչ-

ներին... հայտնի գործիչներ Ալի Մարդան բեգ Թոփչիբաշևին և Ահմեդ բեգ Աղաևին: Թուրք ինտելիգենցիան ավելի լուրջ և ավելի ուշադիր վերաբերվեց ... Երկար ջանքերից հետո ինձ աջողվեց կազմել հայ-թուրքական ինտելիգենցիաների խորհրդակցություն: ... Երբ Աղաևն և ես առանց տատանումների մեր մատը դրեցինք վերքի վրա, մարդիկ սթափվեցին: ... Մի քանի օր անցած ես ստիպված էի հեռանալ Բաքվից ... այն տխուր տպավորության տակ, որ չկա փոխադարձ վստահություն Բաքվի հայ և թուրք ինտելիգենցիաների միջև ...

Այդպես էլ եղավ: Երկու ամիս չանցած սկսվեցին Բաքվում հայ-թուրքական կոտորածները, որ ... տարածվեցին ամենուրեք:

Ես անցյալի այս տխուր փաստն առաջ բերեցի կրկնելու համար, որ նույն փոխադարձ անվստահությունը կա այսօր հայ ու թուրք ինտելիգենցիաների միջև»⁴: Եվ սա նշանակում է՝ մեղսակից են օտար ուժեր և պետք է միշտ զգաստ լինել:

Մեր օրերի համար նույնպես կարևորից կարևոր դասերով հոդված, քանի որ՝ եթե Շիրվանզադեի՝ ու Աղաևի ջանքերը 1904-ին չեն հաջողվել՝ գուցե թե հաջողվեին Սումգայիթի ու Բաքվի դեպքերի ժամանակ...

Որոշակի դասեր է պարունակում նաև «Անհրաժեշտ է» վերնագրով հոդվածը՝ Ազգային խորհրդի ֆինանսական հաշվետվության պահանջ՝ իրավացի պատճառաբանությամբ, այն է. «Անձամբ ճանաչելով Ազգային խորհրդի բոլոր անդամներին, ես նույնիսկ նրանց սոսկ անունները համարում եմ արդարացուցիչ դոկումենտներ: Սակայն կա մեջտեղ մի խստապահանջ և դաժան դատավոր, որ կոչվում է հասարակություն» («Մշակ», 12.X.1918): Այս դեպքում ևս շեշտադրվում է զգաստություն կոչվածը՝ հանրության կարծիքը հաշվարկելու առումով:

«Պետք է ետ կանչել» հոդվածով («Մշակ», 13.X.1918) շարունակվում է «Նախ վերացրեք»-ում արծարծված հարցի անհաջողության ավարտը. «Մեր դիպլոմատիական պատգամավորության ավելի քան երեք ամսվա ներկայությունը Կ. Պոլսում ոչ մի արդյունք չունեցավ ... ինչո՞ւ է այդ բազմանդամ պատգամավորությունը նստել այնտեղ, ի՞նչ է անում և ի՞նչ է մտածում ...»: Հոդվածի միջնամասում էլ Շիրվանզադեն վկայում է, թե՝ «Դեռ մի տասն օր սրանից առաջ Թիֆլիսում գտնվող գերմանական միսիայի անդամ պ. Ցուգմայերը տեղական լրագիրների ներկայացուցիչ-

⁴ Այս իրադարձությունների մասին, ի դեպ, Շիրվանզադեն հետաքրքիր մանրամասներ է հաղորդում «Կյանքի բովից»-ի «Աղետի նախօրյակին» և «Աղետի օրերին» հատվածներում (տե՛ս Ալ. Շիրվանզադե. Երկեր հինգ հատորով. հ. 5, Երևան, 1988, էջ 200–220):

ներին կասկած հայտնեց, թե հազիվ թե կայանա կոնֆերենցիան, քանի որ *Կովկասին վերաբերյալ խնդիրները լուծվում են ինքնըստինքյան հենց Կովկասում*» (ընդգծումը մերն է. – ԱՄ. Ջ.): Ինքնըստինքյան սա էլ նշանակում է, որ սեպտեմբերի 20-ին Բաքվի 26 կոմիսարների գնդակահարությունից հետո գերմանացի դիվանագետն արդեն գիտեր, որ Կովկասում գործում են այլ մեքենայություններ, և հայությունը տանուլ է տալիս Արևելահայաստանում ևս: Կարելի է մտածել, որ Շիրվանզադեն նույնպես կռահում էր դա, և կողմնորոշումն այժմ Ռուսաստանն էր, ինչպես հետևում է հոդվածի եզրակացությունից. «Օտարների շենքերը մաշելը դարձել է ... ազգային ավանդություն: ... չենք մտածում, թե ո՛ւմ շենքն ենք մաշում և ինչո՛ւ: Բավական է, որ մեկն ասե. «Պետք է ... ուղարկել պատգամավորություն» ... Եվ պատգամավոր գնացողների համար իրանց միսիան նախ և առաջ մի տեսակ զվարճություն է, ապա միայն գործ...», – գրում է նա՝ վերջում երկդիմի ակնարկ ուղղելով արտաքին գործերի մինիստր Ալ. Խատիսյանի հասցեին՝ «Նա այնքան հարուստ չէ, որ ունենա իրավունք ավելորդ և անօգուտ ծախքեր անելու»:

Կողք կողքի բերելով «Նախ վերացրեք» և «Ձեզ եք ապտակում» հոդվածները (հոկտեմբերի 3 և 16 ամսաթվերով)՝ ստացվում է այն տպավորությունը, որ Շիրվանզադեն գուշակել էր և 1918-ի հայ-ադրբեջանական կոտորածները: Այդ դեպքերին վերաբերող «Ձեզ եք ապտակում» հոդվածի դառնությունը պարզապես սահման չունի՝ առաջին տողից վերջինը և ուղղված է ահա այսպիսի հայերի դեմ. «Էյ, կլուքների ու փողոցների ագռավներ, լռելո՞ւ եք, վերջապես, թե՞ չէ: Միթե՞ չգիտեք, որ ինքնաստորացումն ևս ունի չափ ու սահման: Միթե՞ չգիտեք, որ մարդկային համբերությունն էլ անսպառ չէ: ... Փոխանակ ձեր մարդկային տարրական պարտականությունը կատարելու, աղետյալներին օգնության ձեռք մեկնելու, դարձյալ նրա՞նց եք մեղադրում.

— Մեղավոր են իրանք հայերը, ուրիշ ոչ ոք, – կրկնում եք դուք անամոթաբար, առանց խղճի խայթոցի:

Եվ ձեզ լսում են ձեզ մմաններն ու հավատում: ...

Դուք շատ լավ գիտեք, թե մեր բոլոր աղետները, որոնց թվում և Բաքվինը, որտեղից են առաջացել և ով է նրանց հեղինակը: Բայց ձեր անձնական շահերի համար ձեռնադրում եք թշվառության մեղքը թշվառացյալների վրա ձգել: Դրանով դուք ուզում եք շոյել իսկական հանցավորներին՝ պահպանելու համար ձեր տները, ձեր կալվածները, ձեր անձնական ապահովությունը: ...

Բայց դուք սխալվում եք ձեր հաշիվների մեջ: ... Բաքվի սոսկալի

աղետի պատկերը դեռ լուսաբանված չէ: ... Բայց մի բան պարզ է և այդ բանն է, որ դուք գիտակցաբար մոռանում եք: Այն, որ տներում մորթոտված երեխաներն ու ծծկերները չէին կարող ունենալ քաղաքական որևէ հանցանք: Եվ ահա դուք, անաստվածներ, մեղադրելով հայերին, չգիտե՞ք, որ մեղադրում եք և այդ անմեղներին»:

Դժբախտաբար, տարաբնույթ այդպիսի մտածումներ, գաղափարներ է դավանել և արտահայտել Շիրվանզադեն ևս. այդ մասին իր տեղում...

Այս ամենից հետո, 1918 թ. նոյեմբերի 10-ին Վրաստանի կառավարությունը Թիֆլիսում հրավիրում է կոնֆերանս՝ անդրկովկասյան երեք հանրապետությունների և Զյուսիսային Կովկասի լեռնականների ներկայացուցիչներից: Կոնֆերանսի օրը տպագրված *«Այսօրվա կոնֆերանսը»* վերնագրով հոդվածի հաղորդած տվյալներից հետևում է, որ քննարկվող ամենակարևոր հարցը՝ «երեք պետությունների փոխադարձ հարաբերությունն է, որից և գլխավորապես կախված է, — արձանագրում է Շիրվանզադեն, — մեր երկրի մերձավոր և հեռավոր ապագան և երեք պետությունների գոյությունը»: Ըստ այդմ, գրողը ցավով արձանագրում է. «Ես չգիտեմ՝ ինչ հրահանգով են ներկայանալու հայկական կառավարության պատգամավորներն այդ կոնֆերանսին: Գիտեմ միայն, որ, ինչ էլ որ լինի այդ հրահանգը, հայ պատգամավորները խորապես վշտացած հոգով և չարաչար վիրավորված զգացումներով են գնալու այնտեղ: Նրանք չեն կարող մոռանալ և չպիտի մոռանան ոչ Ադրբեջանի բարբարոսությունները Բաքվում և ոչ Վրաստանի կառավարության ոչ մարդասիրական վերաբերմունքը դեպի հայ զաղթականությունը Վրաստանի սահմաններում»: Եվ ապա՝ «Հայ պատգամավորները կկեղծեն ու կստեն, եթե չասեն ամենայն պարզությամբ, որ հայ ազգը իր հարևաններից վիրավորված է մինչև իր հոգու հատակը: ... հայ ժողովուրդը այն ժամանակ միայն կարող է հավատալ իր հարևաններին և անկեղծ բարեկամության ձեռք մեկնել նրանց, երբ ստանա հաստատ գրավական, որ այսուհետև նրան չեն վշտացնի ու չեն վիրավորի, ինչպես ... այժմ»: Իսկ ամենավերջում էլ. «Մի նյութ կա, որի մասին հայ պատգամավորները չպիտի համաձայնվեն, որ որևէ խոսակցություն կամ վիճաբանություն լինի կոնֆերանսում: Դա «Հայկական խնդիրն» է, մեր քառասունամյա տառապանքների արդյունքը և հարյուր հազարավոր զոհերի արնագինը: ... Հայկական խնդիրը միջազգային է»:

Իսկ «միջազգային»-ը ... նա էլ իր հարցերով զբաղված՝ սատար չկանգնեց հայ ժողովրդին. մարդկությունը խիղճը կորցրել էր... մնացել էին Նանսենի և Լեփսիուսի մեծ խիղճը:

1919-ի մարտի 15-ի և ապրիլի 1-ի համարներում հրապարակված *«Երկուսից մեկը»* և *«Ո՞վ պետք է վերաշինե»* հոդվածներն արդեն արձագանք են Հայաստանի ներքին կյանքի: Առաջինում, անդրադառ-

նալով Հայաստանի կառավարության «Հաց տվեք հայ ժողովրդին...» պահանջին, և դա համարելով «հոգեկան ապիկարություն», Շիրվանզադեն արձանագրում է. «Մոտ մի տարի է, որ Հայաստանի կառավարությունը աղաղակում է «հաց, հաց», և մինչև այժմ նա ոչինչ կամ գրեթե ոչինչ չի կարողացել անել, և այժմ *հայ ժողովրդի պարենավորման գործն ամբողջովին ամերիկացիների ու անգլիացիների ձեռքումն է: Եվ գոհություն Աստծու, որ այդպես է, վասնզի նրանք և միմիայն նրանք կարող են այդ գործը կատարել, ու կատարում են*» (ընդգծումը մերն է. – ԱՆ. Չ.): Իրոք, կատարում են, և հայությունը երախտագիտությամբ պետք է հիշի... Արձանագրում է և անմիջապես շարունակում՝ դիմելով յուրայիններին. «Կեղծիքը պարզ է: «Հաց ու հաց» աղերսալի երգն ուրիշ ոչինչ է, եթե ոչ պատրվակ մյուս բոլոր ազգային պարտականություններից հրաժարվելու»:

Ուրեմն և մի շարք հարցադրումներ կատարելով՝ պահանջում է կրճատել «ամեն շաբաթ մի-մի ճամփորդություն կամ պատգամավորություն» ստեղծելը և զբաղվել երկրի վերաշինության անհետաձգելի հարցերով:

Անկախություն և ազատություն ստացած, բայց ամայի ու ավերակ երկիրը ինչպե՞ս պետք է ոտքի կանգնի. մեր օրերում ևս կենսական կարևորության այս հիմնահարցի պատասխանը Շիրվանզադեն տալիս է «Ո՛վ պետք է վերաշինե՛ք» հոդվածում: Հանգամանորեն ներկայացնելով ու բացատրելով իրավիճակը՝ նա գրում է. «Մի երկիր կարող է ծաղկել միայն այն ժամանակ, երբ նրա ազգաբնակչությունն ունի նախ և առաջ ֆիզիկական առողջություն: Դրանից են կախված նրա հոգեկան ուժը, բարոյական եռանդը և աշխատելու ընդունակությունը:

Թուրքահայ փախստական ժողովուրդը ներկայումս միանգամայն հյուծված, քայքայված մի տարր է՝ զուրկ ֆիզիկական և բարոյական կարողությունից: Դա մի փաստ է, որ միաբերան հաստատում են բոլոր բժիշկները: ...

Հարկավոր է ավելի առողջ, ավելի եռանդուն և տնտեսական ու բարոյական աշխատանքի ավելի ընդունակ և ավելի պատրաստի մի ուժ...»: Եվ կանխատեսելով՝ գտնում է. «Այդ ուժը կարող է լինել միայն քաղաքակիրթ երկրներում ապաստան գտած հայ գաղթականությունը, որի քանակությունը հասնում է մի քանի հարյուր հազարների: Այդ տարրն է, որի վերադարձը կարող է ապահովել Հայաստանի վերաշինությունը: Այդ տարրն է, որ կարող է երկիրը վերաշինել իր եռանդով և, որ գլխավորն է, քաղաքակիրթ երկրներում ձեռք բերած տնտեսական միջոցներով, իր արհեստներով, արվեստներով, իր գյուղատնտեսական, առևտրական և արդյունաբերական գիտություններով և հմտությամբ: Առանց այդ տարրի ցնորք է երևակայել Հայաստանը վերաշինված»:

Գրողի կանխատեսումը ճշգրիտ էր: Միահամուռ պատրաստակամությամբ ճանաչված մեծություներից՝ ամեն մասնագիտության տեր երախտավոր մտավորականության՝ աննկուն, անանձնական նվիրվածությամբ, ջանք և ուժերով էլ վերաշինվեց, հառնեց Հայաստանը. «մայրագյուղ» Երևանն էլ դարձավ համայն հայության շենչող մայրաքաղաք: Իսկ Շիրվանգաղեն, ինչպես հայտնի է, 1919-ի օգոստոսի վերջին մեկնեց արտասահման և հայրենիք վերադարձավ 1926-ի մարտին...

* * *

Հրապարակախոս Շիրվանգաղեի ներկայացված - վերլուծված հոդվածները հայ ժողովրդի 1914–1919 թթ. պատմական ծանր ժամանակների ամենօրյա արձագանքներ են: Անգամ իսկ վիճաբանական բնույթով՝ պատմական փաստացի վավերագրեր. կենդանի, խոսուն հայելի ժողովրդին վիճակված կացության, հասարակական շերտերի վարք ու բարքի, փոքր ու մեծ արատների, Ազգային խորհրդի ու կառավարության, հարևան երկրների հետ իրավական – ոչ իրավական հարաբերությունների, կուսակցական բախումների, մշակութային-մտավորական ամենատարբեր մտահոգությունների և այլնի մասին: Բոլորն էլ ծառայելու ինչպես հայ ժողովրդի այդ ժամանակաշրջանի պատմության նորովի լուսաբանությանը, այնպես էլ ուսանելի այժմեական դասերով ու խորհուրդներով՝ պատմաբանների, զրականագետների, մանկավարժների, հրապարակախոս-լրագրողների, կուսակցությունների և, առհասարակ, մշակութային-հումանիտար ասպարեզների գործիչների համար:

«ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԱՅՐԵՐՈՒՄ»
ԱՎՆԱՐԿ - ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հակառակ 1918 թ. գրած հոդվածներից մեկում տեղ գտած՝ նախորդ էջերում վկայվածի, թե՛ «Ես հրապարակախոս չեմ և երբեք էլ հավակնություն չեմ ունեցել հրապարակախոս դառնալու», կամա, թե ականա Շիրվան-զադեն հրապարակախոս է քննականորեն արդեն ներկայացված - վերլուծված հոդվածներով, նաև՝ «Պատերազմի վայրերում» շուրջ 80 էջ ծավալով ակնարկ-հուշագրությամբ: Ոչ միայն գրականագետի, այլև պատմաբան-քաղաքագետի, ազգագրագետ-ժողովրդագետի լրջմիտ ուշադրությանն արժանի կարևոր էջեր, որոնք գալիս են օգնելու, լրացնելով պարզաբանելու հայ ժողովրդի ճակատագրի բախտորոշ հանգամանքներ: Հանգամանքներ՝ վերաբերող Առաջին համաշխարհային պատերազմին՝ որոշակի Կովկասյան ռազմաճակատի իրադարձություններին, որի յուրատեսակ մասնակիցն է եղել Շիրվանզադեն:

1914 թ. նոյեմբերի 15-ից դեկտեմբերի 12-ը Շիրվանզադեն Հոլի. Թունանյանի, Մեսրոպ և Խորեն եպիսկոպոսների, Ներսիսյան դպրոցի վերատեսուչ Հովսեփ Խունունցի, Թիֆլիսի Վերայի գերեզմանատան քահանա Նիկողայոս Բավոյանի և իրավաբան Սմբատ Խաչատրյանցի հետ մեկնում է պատերազմի դաշտ՝ հայ զինվորներին «այցելելու և մխիթարելու» համար: Ճամփորդության մասին կա երկու աղբյուր: Մեկը՝ Թունանյանի ծոցատետրն է, որտեղ կատարված են նշումներ, գրառումներ այդ ուղևորության մասին: Մյուսը՝ Շիրվանզադեի «Պատերազմի վայրերում» ակնարկ-հուշագրությունն է: Գրելով 1915-ի մարտին՝ տպագրել է նույն թվականի աշնանը «պատերազմից վնասվածներին» օգնելու նպատակով Թիֆլիսում հրատարակված «Զիթենի» գրական ժողովածուի մեջ: Նախքան ակնարկ-հուշագրության հրապարակումը, դրա մի քանի հատվածներ 1914 թ. նոյեմբեր-դեկտեմբերին տպագրվել

¹ Տե՛ս «Հորիզոն», 16.XI. 1914: Նաև՝ “Кавказское слово”, 16.XII.1914:

են «Кавказское слово» թերթում իբրև ճամփորդող սեփական թղթակցի նոթեր²։ Վերջիններս «Պատերազմի վայրերում» նյութի սկզբնական մասի տարբերակներն են։ Թումանյանի ծոցատետրի գրառումներից մեկը վերաբերում է ռուսական հիշյալ թերթում տպագրվող Շիրվանզադեի այդ նոթերին։ «Հայկական հարցի մասին ինչ որ գրում է, “Кавказское слово”-ն կրճատում է կարևոր կետերը և հանում։ Խմբագիրը հեռագրում է, – շարունակում է Թումանյանը, – “Все нам интересно, кроме дружинников” և խմբերի մասին չի ուզում տպագրել։ Իսկ Շիրվանի հետ Դոլուխանովը ապսպրում է, թե խմբերի մասին մի գրեք, որովհետև վնաս կբերի հայկական հարցին, գրգռում է ռուսներին»³։

«Պատերազմի վայրերում» ակնարկ-հուշագրությանը ծանոթանալիս ականա մտաբերում ես ռուս հրապարակախոս, լրագրող Անտուան Բերեզովսկի - Օլգինսկու (կեղծանունը՝ Ս. Օլգենին) «Ամհետացող Հայաստան» վերնագրով ակնարկները, որ նա գրել է 1913 թ. փետրվար-մայիս ամիսներին՝ Արևմտյան Հայաստանից⁴։ Ի դեպ, և Շիրվանզադեի, և Ս. Օլգենինի ճամփորդական ուղին համարյա եղել է նույնը։

... Սկսեմք Շիրվանզադեի ակնարկի առաջին իսկ տողից։ «1914 թվականի նոյեմբերի կեսն էր, երբ Թիֆլիսից դուրս եկանք։ Մեր փոքրիկ ճամփորդությունը գծել էինք այսպես, — գրում է նա. — գնալ Էջմիածին և Իգդիրի վրայով անցնել Բայազեդի շրջանը, այդտեղից Ալաշկերտի հովիտը, հետո Բասեն և Դելի-Բաբայի ու Խորասանի վրայով գնալ Ջիվին։ ... գծելով մի աղեղնաձև ուղի, այցելել բոլոր այն վայրերը, որոնց գրավել էին ռուսական զորքերը, և տեսնել պատերազմի բեմը։

... Գնում էինք թեև սիրով, բայց հոգեպես ճնշված։ ... կարող է պատահել, որ ջուրը նետվի մի դատ, որի համար արյունաքան է եղել գրեթե ամբողջ հայությունը։ Գանգատներն ու դժգոհությունները եկել էին այնպիսի անձանցից, որոնց *ստիպված էինք* հավատալ»⁵։

Եվ մտահոգ գրողը շարունակում է. «Իսկ չար լուրը հետևյալն էր. թե

² «Кавказское слово», 25.XI.1914; 27.XI.1914; 13.XII.1914; 17.XII.1914; 20.XII.1914.

³ *Լ. Կ ա ր ա պ ե տ յ ա ն*. Հովհաննես Թումանյանի հասարակական գործունեությունը (Դրվագներ), Երևան, 1992, էջ 115։ Ուղևորության, մասնավորապես Թումանյանի գրառումների մասին մանրամասն տե՛ս էջ 113-135։

⁴ Տե՛ս *Ա. Հ ա ք ա ր յ ա ն*. Ուսու հրապարակախոս Ս. Օլգենինը Հայաստանի և Հայկական հարցի մասին. — «Պատմա-բանասիրական հանդես», 1989, № 4, էջ 66-84։

⁵ *Ա. Շիրվանզադե*. Երկեր հինգ հատորով, հ. 5, էջ 457։ Ի դեպ, «Ձիթենի» ժողովածուում ակնարկ-հուշագրության վերնագիրը եղել է «Պատերազմի վայրերից», հետագայում հրապարակվել է՝ «Պատերազմի վայրերում»։ Մեր օգտագործած այս հրատարակության մեջ էլ ակնարկի վերնագիրը «Պատերազմի վայրում» է։



Շիրվանզադեն, հորեն եպիսկոպոս Մուրադբեկյանը, Թումանյանը, Նիկողայոս Բավոյանը, Հովսեփի հումունցը ռազմաճակատ մեկնելուց առաջ (1914 թ., նոյեմբեր) :



Հովի. Թումանյանը Մեսրոպ Եպիսկոպոս Տեր-Մովսիսյանի հետ:

ռուսական բանակի մեջ գտնվող հայ շարքային զինվորները, իրենց ... թեթև վնաս տալով, ձևանում են վիրավոր՝ կռվի դաշտից անամոթաբար փախչելու համար, թե սահմանագլխի հայ գյուղերը նրանց պատուսպարում են, թե հայերն առհասարակ զողանում են, թալանում և այլն և այլն»⁶:

Բայց, հայտնի է, զորավար Անդրանիկի և Նազարբեկյանի հրամանատարությամբ զինյալ ուժերը կռվով ռուսական զորքերից առաջ էին շահել ճակատամարտեր և հասել Վան ...

Խումբը Էջմիածնից Իգդիր՝ «36 վերստ» տիղմոտ-ճահճոտ անհրապույր ճանապարհն անցնելով յոթ ժամում՝ իջևանում է մի վաճառականի տրամադրած բնակարանում: «Իգդիր կոչված ճահիճի» «բոլոր «հյուրանոցները» և մասնավոր բնակարանները վարձված են օֆիցերներից»: Այցելող մի քանի մտավորականներ հաղորդում են «շատ հետաքրքրական նորություններ ռուս բանակի հաղթական շարժման և մերձավոր թուրքահայերի կացության մասին»: Խմբին ընդունում է գեներալ Օգանովսկին, որի աշխատասիրության մասին «ստորադրյալները խոսում էին հիացմամբ». գեներալը աջակցում-կարգադրում է թիկնապահ Շահխաթունուն խմբին ուղեկցել «մինչև Արծափ՝ տասը կազակների հետ»: Հենց այդտեղ էլ բացատրում է, թե՝ «պատերազմի դաշտում առաջնության դափնին պատկանում է, իհարկե, կանոնավոր զորքին և առանձնապես հետևակ զորքին: ... կան գիտություն, կարգապահություն ... թնդանոթներ, գնդացիներ և այլն: Դրանցով է, որ մենք պետք է հաղթենք մեր թշնամուն». իսկ կամավորները. «Նրանք ևս ունեն իրենց դերը, որ, իհարկե, նույնպես կարևոր է: ... գլխավորապես երկրի հետազոտությունը և թշնամու դիրքերի որոշումը: Այս տեսակետից ահա ես գնահատում եմ հայ կամավորական խմբերի մասնակցությունը ... Ես առանձնապես գնահատում եմ Անդրանիկին իբրև ամենից ավելի փորձառու խմբապետի»⁷: Գրողն ավելացնում է նաև, որ «խոսակցության ամբողջ ժամանակ ներկա էր և զորաբանակի շտաբի գլխավոր գեներալ Լ.-ն: Նա ոչինչ չասաց և մնաց լուռ մինչև վերջը: Միայն նրա սառը դեմքն արտահայտում էր ինչ-որ տարակուսանք, որ համենայն դեպս խրախուսիչ չէր մեզ համար և մեզ ևս տարակուսանքի մեջ էր զգում ... Ինձ համար պարզ է, որ այդ մարդը մտքում արհամարհում է մեր կամավորական խմբերը»:

Ակամա, տարակուսանք է առաջանում՝ մտածելու համար, թե ռուսա-

⁶ Նույն տեղում, էջ 458:

⁷ Նույն տեղում, էջ 459:

կան զորքերի նահանջի դեպքում արդյո՞ք դա չի համարվի կամավորականների մեղքով: Բայց չէ՞ որ պատերազմը հայտարարել է Ռուսաստանը և ոչ թե հայ կամավորականները: Ուրեմն ինչո՞ւ է գեներալը սրտնեղում:

... Շահխաթունու և կազակների ուղեկցությամբ երկու օր հետո՝ նոյեմբերի 19-ին, խուճբը շարունակում է ճանապարհը: Մեկնելու րոպեներին Շահխաթունին հայտնում է, թե «գեներալը անթել հեռագրով լուր է ստացել, որ Անդրանիկի հարյուրակներից մեկն երկարատև ճակատամարտից հետո կարողացել է փառավորապես գրավել Ղոթուր ամունով ինչ-որ կարևոր դիրք թուրք-պարսկական սահմանում, սպանել ու վիրավորել է մոտ հարյուր թուրք ու քրդեր և վերցրել է 200-ից ավելի գերիներ»:

Այդուհանդերձ, տարակուսանքը չի փարատվում, և ճանապարհորդությունը շարունակվում է նույն տիպի տպավորություններով՝ «քոստ ձիեր», անվերջանալի տիղմ, այնքան որ «ճանապարհ ընկանք կազակների համբերությունը սպառելուց հետո», և այսպիսի եզրակացությամբ. «Կարծեմ մեր թափորը պիտի բավական կոմիկական լիներ Ավետիս Ահարոնյանցի ծննդավայրի համար»: Եվ այդ «կոմիկականը» գրողի գրչով ուղեկցում է խմբին ամբողջ ճանապարհին: Նոսր տիղմը փոխվում է թանձրի՝ տաժանակիր դարձնելով ուղտերի, ձիերի քայլերը. «Կարծես ապաբախտ արարածները բողբոջում էին աստծու դեմ, որ այնքան դաժան է եղել իրանց վերաբերմամբ»: «Հայ կամավորի» սխալմունքով շեղվելով ճանապարհից՝ ընկնում են ճահիճների մեջ. «Օրգովի այն պատմական ճահիճների, ուր, ըստ ավանդության, հին ժամանակներում կարավաններ և զորքեր են կործանվել»⁸: Աճում է գրողի դժգոհությունը, և կամա, թե ականա մտածում ես, հենց սկզբից ինչո՞ւ չի հետ դառնում և շարունակում է այդ դաժան ճանապարհը՝ իմանալով հանդերձ տեղանքի բնույթը:

Գնալով վիճակը ծանրանում է անելանելիության չափ: «Մենք արդեն ցրվել էինք զանազան կողմեր: Կազակները չքացել էին, – շարունակում է Շիրվանզադեն, – մնում էր Շահխաթունին: Հետևից լսեցի Հովհաննես Թումանյանի ձայնը:

— Հագիվ թե այս ձիերը կարողանան մեզ դուրս բերել այստեղից, – ասում էր նա:

Նայեցի հետ: Նա արդեն իր ձիու հետ երկու անգամ ընկել էր ու վեր կացել: Այժմ կանգնած էր ցեխաթաթախ երիվարի քով մի ձեռով բռնած նրա սանձը, մյուսով իր կրկնակոշիկները: Հետո զգացի, թե նա որքան

⁸ Նույն տեղում, էջ 463:

խելոք է վարվել այդ թանկագին ոտնամաններն այնպիսի խնամքով պահելով: Ես իմ կրկնակոշիկներից մեկը թողեցի ճահճի մեջ և հետո շատ ու շատ տուժեցի, երբ ստիպված էի քայլել սառույցների վրա»⁹:

Հետաքրքիր է, նույնպիսի «կոմիկական» վիճակով նկարագրելով Ներսիսյան դպրոցի տեսուչին, կրկին վերադառնում է թումանյանին՝ գրելով. «Պարզ էր, որ մեր դրությունը և՛ ծիծաղելի էր, և՛ տրագիկական: Բայց ես վրդովված էի մինչև հոգուս խորքը մեզ առաջնորդող կամավորի և մանավանդ երկու եպիսկոպոսների ֆանֆարոնությունից: Կարծես հենց մեր գլուխներին էր վիճակված նրանց դալլաքությունը՝ փորձելու:

Հետ մայեցի և ի՞նչ տեսնեմ: Հովհաննես թումանյանը կախարդական գավազանի հարվածով ճահճի միջից դուրս է կանչել մի նոր նժույզ և վրեն փառավորապես նստել ու մյուս ձիու սանձը բռնել:

Նախանձս շարժվեց:

— Այդ ձին ո՞րտեղից գտար, Հովհաննես, — հարցրի ես զարմացած և վրդովմունքս մոռանալով:

— Ի՞նչ ձի:

— Ա՛յ, որի վրա նստած ես:

— Տակիս ձի չկա, կողքիս է:

Տարօրինակ իյուզիա: Դուրս եկավ, որ մեր բանաստեղծը բարձրացել է երկու պինդ ցեխակույտերի վրա, որպեսզի ավելի չապականի Սամսոն Զարությունյանի միջնադարյան մուշտակը:

Մեզ մնում էր մի կերպ քայլել ոտքով: Բայց որ կողմը — չգիտեինք:

Մեզ հետ միասին ճահիճ էր ընկել ուղտերի մի ամբողջ կարավան: Եվ դա մեր դրությունն ավելի դժվարացնում էր, վասնզի մթության մեջ դժվար չէր ընկնել ուղտերի ոտքերի տակ ...»¹⁰:

Թե ինչո՞վ են մեղավոր այդպես ցեխակույտերով շարունակվող բնական տեղանքը և Հովհ. թումանյանը, հասկանալի չէ: Դժվար է տեղնուտեղը պարզել, թե ի՞նչ բովանդակություն է թաքնված թումանյանին վերաբերող հատվածների այդ երկդիմի տողերի տակ՝ «տարօրինակ իյուզիա» և «երկու պինդ ցեխակույտեր» համադրումով: Մանավանդ որ անմիջապես հավաքվում է կազակների մեծ թիվ՝ առանց մեկի. քոսոտ ձիերին էլ, չգիտես որտեղից, փոխարինում են քրդական ձիեր՝ այսպիսի ունակություններով. «Քրդական ձիերը մի առանձին ընդունակություն ունեն քայլելու սառցապատ տեղերում: Իմ փոքրիկ ձին սառած քար-

⁹ Նույն տեղում, էջ 464:

¹⁰ Նույն տեղում, էջ 464-465:

քարոտն անցնում էր կատարյալ մարդկային զգուշությամբ, ինձ տանելով մերթ դեպի աջ, մերթ դեպի ձախ և երբեմն ճանապարհից շեղվելով»:

Հավանական է, որ խոսքը քրդերի քաղաքական կողմնորոշման և պահվածքի մասին է, երևի թե հայերի համեմատությամբ, մաև ծի խնամելու ունակությամբ:

Նույնպիսի փորձություններով՝ գումարված սառնամանիքը, խումբը հասնում է Օրգով: Դարձյալ քամահրանքով հիշատակվող՝ չգիտես ինչու, այսպիսին. «Հասանք Օրգով: Գյուղ է, թե ինչ — չգիտեմ, բայց վերջին ռուս կայարանն է: Այնուհետև սկսում է Զինգիլի բարձրավանդակը և ապա՝ Թուրքիան»:

Վտանգավոր փորձություններով, վերջապես, խումբը գտնում է քիչ, թե շատ տանելի հանգրվան, քանի որ «Ռուս օֆիցերները մեզ ընդունեցին այնքան սիրալիր, որքան թույլ էր տալիս իրանց վիճակը: Չարմացան, որ մենք ճահիճների միջից դուրս ենք եկել առանց կորստի:

— Եթե մի փոքր էլ առաջ շարժվեիք, — ասաց մեկը նրանցից, — պիտի հանդիպեիք ստորճահճային ճեղքերի, ուր և անշուշտ կգտնեիք ձեր հավիտենական օթևանը»¹¹:

Այսպես, մաքուր սենյակներում՝ վառարաններով, «սքանչելի՝ հեղուկ» թեյով ցրվում — ազատվում են «մռայլ տրամադրությունից», և վերջապես քնում «անդորր քնով, կանխավ հաճույքով ճաշակելով Հովհաննես Թումանյանի անեկդոտները Լոռվա կյանքից»:

Ամեն դեպքում «ռուս օֆիցերների» հաճելի ընդունելությունից հետո էլ հակասական տպավորությունները, կարծես, սկիզբ ու վերջ չունեն, և «անդորր» գիշերելուն հետևում է գրողի դժգոհությունը՝ հիմա էլ բեռնապահների դանդաղկոտությունից, որ ներկայացվում է որպես ազգային ահա այսպիսի անտանելի բնավորություն. ուրեմն դանդաղկոտ են՝ «Ինչո՞ւ, որովհետև հայեր են: Մի՞թե հինգ անգամ պատվիրածդ նրանք կարող են մի անգամ կատարել: ... նորից վերցնեն և նորից հետ դնեն, միշտ նրթմթթալով, միշտ տրտնջալով: Հազար բարկացիր, հազար գոռա—սպառնացիր: Ոչինչ չի ազդիլ: Զ՞ե որ ազդելու համար ներվեր են հարկավոր»:

Եվ հանկարծ ամբողջ ճանապարհին «տրտնջացող» Շիրվանգադեն էլ՝ զորանոցից դուրս գալով «նենգավոր» ճահիճներից հետո հիանում է Օրգովից տեսանելի բնությամբ. «Օրգովի սառած կրճքից դեպի վեր՝ ծյունապատ լեռներ, դեպի վար՝ գույնզգույն դաշտերը, մութ ձորերը և

¹¹ Նույն տեղում, էջ 466:

ավելի հեռավոր սարերը: ... նույնիսկ այն նենգավոր և կեղտոտ ճահիճները ... հեռվից թվում են կախարդական գորգեր՝ սփռված լայնատարած դաշտերի վրա:

Միայն գոռոզ Արարատն է, որ թանձր ամպերով սքողված չի կամենում ցույց տալ իր կերպարանքը: Գուցե նա զբաղված է իր մռայլ խոհերով: Չէ՞ որ նա է բաժան–բաժան եղած ազգի ապաբախտ սինվուլը. մի ազգի, որի ապագան նույնպես թանձր ամպերի մեջ է: Եվ այժմ ավելի թանձր, քան երբևէ ...

Բայց Արագածը: Նա կարծես հոգ չունի: Նա ոտքից մինչև գլուխ պարզել է իր ձմեռային գեղեցկությունը պայծառ արեգակի տակ: Եվ ես նրան ավելի եմ սիրում, քան մռայլ Արարատը: Աստված իմ, ի՞նչ կախարդական գույներ են սփռված նրա վառ լուսավորված բարձունքներից, նրա հպարտ կրծքի, նրա լայնածավալ փեշերի վրա»¹² և այլն: Պարզ չէ, Արագած էր սիրում, թե Արարատ... և ո՞րն է Արարատի մեղքը, որ գտնվում է սահմանագլխին ու մռայլ է...

Մի կարճատև վայելում, և գլուխ է բարձրացնում ազգային նոր տիաճություն: Հուզված հայտնվում է Շահխաթունին՝ մատնացույց անելով զենք ստացած «թուրքահայերից» «անպիտան» մեկին, որ հրացանը ուսին՝ «Իգդիրից Բայազեդ ծուկ է տանում վաճառելու»: Կարիք է զգացվում հանգստացնել արտիստին, ասելով, թե «ոչ մի ժողովուրդ զերծ չի զազրելի տականքից». այդուհանդերձ, «Փաստն ինքնըստինքյան աննշան էր, բայց իմաստը շատ անմխիթարական»: Այսպես շարունակվում է ճանապարհը դեպի Բայազեդ՝ Չինգիլյան բարձրաբերձ զառիվերով, նորից ուղտերի ուղեկցությամբ և «համր» քայլերով: Ոչինչ. «Ռուս զինվորն արդեն ընտելացել է ուղտի դանդաղությանը և հրացանն ուսին համբերությամբ, անձայն ուղեկցում է նրան որպես վաղեմի բարեկամ: Մի քիչ կոմիկական, բայց սրտաշարժ պատկեր ...»¹³:

Այս դեպքում «կոմիկական», բայց և «սրտաշարժ» ... Եվ արդեն լեռան ստորոտում «մի տափարակ», որով թուրքիան բաժանվում է Ռուսաստանից: Վերջապես սկսում է «արցունքների երկիրը»՝ տխուր տրամադրություններով ու խորհրդածություններով. «Ոչ մեկը չի ուզում խանգարել» մյուսին և «ի՞նչ հարկավոր են բանալ խոսքեր, քանի որ զգացմունքներն են խոսում, քանի որ հասկանում են իրարու»: Մանավանդ սկսում է բուք. «Ասում են, որ այդտեղ բուք ու բորանը հավիտենական են, շնորհիվ

¹² Նույն տեղում, էջ 467:

¹³ Նույն տեղում, էջ 468:

անհրապույր Արարատի մերձավորությամբ: Երբեմն քամին այնքան սաստիկ է լինում. որ իբր թե ձիավորներ է գցում»:

Դարձյալ անասելի տհաճություն Արարատից, հիմա էլ թիկունքից, ու սաստիկ քամուց և շարունակվում են բնության «հանցանքները»...

Հենց այստեղ՝ ճանապարհից դուրս լեռան լանջին էլ առաջին անգամ ընդհարվել են ռուսներն ու թուրքերը, որին մասնակից «օֆիցերների» պատմածով՝ Շահխաթունին, «նորատի զինվորականի ոգևորությամբ», վերապատմում է գրողին:

Հետաքրքիր է՝ մաս առ մաս իր գրառումները Շիրվանզադեն վերջավորում է խմբի անդամներից մեկի «կոմիկական» նկարագրով: Այստեղ մեկը ժամանակին իր հիասքանչ ծայրով հռչակված տեր-Նիկոլն է՝ իր «պարարտությամբ», որն անընդհատ ձիու մեջքից սահում է՝ «ծանրությամբ», կազակները բարձրացնում են, բայց՝ «տեսեք ինչպես է սլանում ծյունապատ բարձրավանդակով վեր: Նրա ֆերաջեի թևերը սավառնում են օդի մեջ բազեների պես և լայն փեշերը ծածանվում սև դրոշակների նման»:

Նկատենք, որ «Պատերազմի վայրերում» վերնագրով այս գրառումներում հաճախ են հանդիպում այլախոսական այսպիսի պատկերներ, ինչպես քաղվածը, որն այս դեպքում կոչված է խորհրդանշելու V մասի և հետագա ողբերգական իրողություններ:

Իսկ V դրվագը Օրգովից 32 վերստ հեռու Արծափի մասին է, որտեղ էլ հասնում են «մութը չընկած»: Տպավորությունը հեռվից նպաստավոր է, իրականում ծառեր չկան, երեխաները կիսամերկ են, աթարի հոտը սարսափելի ... «Հյուրընկալությունն այնքան ջերմ էր, որ մինչև անգամ մի տեսակ նեղված են զգում ինձ: Արծափի՞ ենք արդյոք այդ պատվին: Աստված գիտե ինչ բարիք են սպասում մեր անակնկալ այցելությունից այդ ապաբախտ մարդիկ, որ ահա մեկ-մեկ ներս են մտնում անվստահ քայլերով ու խմբվում դռների առջև: Եվ մի՞թե նրանք չեն հիասթափվել մեր գնալուց հետո»¹⁴, – տարակուսանքով գրում է գրողը՝ կրկին վերադառնալով տեր-Նիկոլին՝ նորից կիսակոմիկական դերով՝ կամավորականների և տանտերերի միջոցով սնունդ կազմակերպելու համար, նաև լրացնելով, թե՝ «Այստեղ առաջին անգամ զգում են տեր-Նիկոլի ահագին արժեքը ճամփորդության համար և այնուհետև սկսում են նրան սիրել»: Դրանով, սակայն, տեր-Նիկոլը չի պրծնում. այդ նույն մասի վերջում երևում է արդեն լիիրավ որովայնամոլությամբ. «Գյուղացիները, զգալով,

¹⁴ Նույն տեղում, էջ 473:

որ մեզ հանգստություն է հարկավոր, ցրվում են: Մնում են մեր տպավորությունները: Մենք ամենքս էլ առաջին անգամն ենք Հայաստան մտնում: Հաղորդում ենք իրարու, թե ինչ զգացինք սահմանագլխում: Մեր տրամադրությունը լուրջ է և տխուր: Հանկարծ մութ անկյունից վայրկենական թախծալի լռության մեջ լսվում է տեր-Նիկոլի ծայնը.

— Սահմանագլխում քուֆթա կերանք:

Դա է նրա տպավորությունն է: Արդարև, հիշում եմ, որ մեր ընկերներից մեկը մեզ հյուրասիրեց իր հետ բերած երևանյան քուֆթայով»¹⁵:

Բացասական կուտակվածների կողքին, «դրական» անակնկալ էր հետևյալը. նախորդ էջերում եղած տվյալներով 120 տուն ունեցող Արծափը հարուստ էր վարելահողով. գյուղացին ուներ 70-80, անգամ 100 դեսյատին վարելահող, որին «Կովկասի հայ գյուղացին երազել միայն կարող էր», — գրում է Շիրվանզադեն՝ արծանագրելով նաև, որ գյուղացիներին «Նախ կողոպտել են թուրք ասկերները, տերության քողարկված հրամանով, ապա ռուսներից հալածվող քրդերը: Կոտորածից ազատվելու համար երիտասարդ անգեն տղամարդիկ փախել են լեռները ... Քրդերը ծերերին ու երեխաներին չեն կոտորել և ոչ էլ, բարեբախտաբար, կանանց բռնաբարել:

Վերջապես, եկել են կազակները, և Արծափը նրանց առջև բաց է արել իր շտեմարանները և մնացորդը տվել նրանց: Այժմ ոչինչ չի մնացել, ո՛չ ցորեն, ո՛չ գարի ու դարման և ո՛չ էլ մանավանդ վառելիք: Այժմ հայերը կազակներին առաջնորդում են քրդական գյուղերը, որ ճանապարհից դուրս են, և ցույց են տալիս նրանց լի ամբարները: Հերթը նրանցն է»¹⁶:

Տեղում գրի առնված տվյալներ են սրանք, որ պետք է որ հետաքրքրեն ոչ միայն պատմաբան-ազգագրագետ-ժողովրդագետներին, այլև քաղաքագետ-դիվանագետներին: Դա վերաբերում է նաև գրողի հաջորդ գրառումներին: Այսպես, գյուղի տների կոտորները կցված են իրար ոչ միայն դրսից, այլև իրար հետ անցքերի միջոցով՝ ներսից. «— Վտանգի ատեն գիրար զգուշացնելու համար», — ինչպես պատասխանել են գյուղացիները: Հաջորդ՝ Արծափից ճանապարհիվելու օրն արդեն հիշարժան է նրանով, որ թեև մինչև վերջին իրը՝ խաչ-խաչվառ և այլն, այրված-թալանված եկեղեցում, այնուամենայնիվ, կատարվում է մաղթանք:

Առավել հետաքրքիր է ինքնապաշտպանության նպատակով գյուղի ծայրում խմբված 10-15 զինված կամավորականների մասին Շիրվանզա-

¹⁵ Նույն տեղում, էջ 476:

¹⁶ Նույն տեղում, էջ 474:

դեփ նկատումներն ու դիտարկումները: Ահա այսպիսիք. «...ռուս զինվորական իշխանությունն» է զինել նրանց, որոնք ոտքով ուղեկցում են խմբին «մի քանի վերստ»։ «Թուրքահայը պաշտպանում է ռուսահային. չէ՞ որ դա պարծենալու երևույթ է: Ուրախ են նամանավանդ, որ ընկերակցել են կազակներին: Սակայն, ինչո՞ւ թաքցնեն ճշմարտությունը, նրանք ինձ վրա թողնում են ավելի հազվագյուտ խաղալիքի արժանացած երեխաների, քան կռվի ընդունակ զինվորների տպավորություն: Նրանք չգիտեն անգամ ինչպես պահել այդ խաղալիքը, որ չլինի ծիծաղելի ...»¹⁷: Հասկանալի է, խոսքը, նորից կրկնակոխ հետևելով, վերաբերում է կամավորներին...

Դեպի Բայազեդ տանող ճանապարհին Շիրվանզադեն ցանկանում է որոշ հարցեր պարզել կազակ օֆիցերի հետ, որն էլ «հաճույքով» պատմում է իր մասնակցած կռիվներից: Պարզվում է, որ եթե թուրքերը սարսափում են իրենց «հուռռայից», իրենց վրա էլ «բավական ազդում է» նրանց «ալլահ-ալլահը» (պատմում է «կազակ օֆիցերը ռուսին հատուկ պարզությամբ և համեստությամբ»)։ Թուրքերը սովորաբար թաքնվում են ժայռերում և այնտեղից գնդակներ արձակում, «Սրամարտից սարսափում են ինչպես կայծակից: Այնինչ՝ մեր արվեստը հենց այդ է: Եվ, գիտե՞ք, սրամարտն ավելի ձեռնառու է»: Եվ «ինչպե՞ս»-ին՝ օֆիցերը պատասխանում է. «— Իհարկե: *Աստված գիտե քանի գնդակ պիտի փչացնես մի գլուխ ծակելու համար, մինչդեռ մերոնց թրի ամեն մի հարվածը մի կյանք է խլում: Չարկիր որքան կարող ես. իսկ երբ թուրդ բթացավ, նորից կտես, հա՛, հա՛, հա՛:*

— Քանիսի՞ն կլինեք սպանած դուք անձամբ:

— Աստված գիտե, մի՞թե կարելի է հաշվել կռվի տաք ժամանակ:

— Ոմանք հաշվում են:

— Գուցե այն ժամանակ, երբ թշնամին փոքրաթիվ է, տասը-քսան, ոչ ավելի: Իսկ ուրիշ ժամանակ ինչպե՞ս իմանաս ո՞րը սպանվեց, ո՞րը վիրավորվեց: Պատահում է, որ տեսնում ես մեկն ընկավ, կարծում ես բանը պրծավ: Բայց մեկ էլ տեսար ոտքի կանգնեց ու հարձակվեց: Այդ ժամանակ քրդի սև աչքերը լցվում են արյունով, և նա նմանվում է կատաղի գայլի: ...

— Իհարկե, առայժմ նրանք այս կողմերում համարյա թե բացառապես մեզ հետ գործ ունին: Պարզ է, որ պիտի կատաղեն ...»¹⁸ (ընդգծումները մերն են. — ԱՆ. Չ.):

Տեղն է հիշել. խմբի անցած այդ ճանապարհով (փոքր-ինչ շեղվածքով) 1915-ի սեպտեմբերից դեկտեմբերին հասակակից կամավորական ընկերների հետ անցել է Ե. Չարենցը: «Պանթեական առասպել (Հիշո-

¹⁷ Նույն տեղում, էջ 477:

¹⁸ Նույն տեղում, էջ 478:

դուք յուններ պատերազմի դաշտից)» վերնագրով (և «Միհրան Սարգսյան, Ստեփան Ղազարյան և Աշոտ Միլիոնյան նահատակ ընկերներին, որ ընկան Սուլդուզի դաշտում 1915 թվի դեկտեմբերի 25-ին» նվիրումով) պոեմի 7-րդ գլխում պատկերված է անվարժ նահատակների ահեղ սպիմամարտի (քանի որ, ինչպես ասվեց, սպիմամարտը ձեռնառու է, գնդակը չեն փչացնում) ողբերգական դրվագը: Թե որքան դաժան է եղել սպիմամարտը և որքան ցնցող կամավորականների զոհաբերվելը, կարելի է պատկերացնել բանաստեղծի հետևյալ տողերով.

*... Մենք դաշտում էինք: Չյունոտ լեռներից
Չարձակվում էին նրանք — բյուրավոր,
Մերթ ետ նահանջում մեր գոռ գրոհից,
Մերթ առաջ անցնում ունակներով նոր —
Ու փախչում էին, ու գալիս նորից:*

Եվ ապա.

*Մենք գրկում էինք ու չանկռում իրար,
Սպինի զարկով գլորում գետին ...*

*Եվ ընկնում էին անգի՜ն ընկերներ:
Եվ վերջին անգամ մեզ էին կանչում¹⁹:*

...Եվ այսպիսի հաստատուն եզրակացություն.

*Եվ՝ ժանրաբեռնված քարավաններով՝
Ղառնում էր մեկը ճամփաներից ետ:
Ի՜նչ էր հավաքել. ինչո՞ւ, ո՞ւմ գնով —
Սուր էր մեզ համար, անմիտ, անհեթեթ:
Բարեկամ էր նա ... բայց մե՛ր արյունով
«Բարեկամ» դարձած մի գիշեր մեզ հետ...²⁰*

Բնական է. եթե ապրած կյանքով ու տարիքով ռեալիստ Շիրվանգադեմ՝ «օֆիցերի» պատմածով խոստովանում է, որ լսածով ինքը կորցրել է մարդկային-ապամարդկային չափումները, ապա բանաստեղծ ծնված, արյունալի-անողոք իրողություններ ճաշակած Չարենցի հոգեվիճակը պետք է որ շղարշվեր միստիկայով և արտահայտվեր

¹⁹Ե. Չ ա ր ե ն ց. Երկերի ժողովածու 4 հատորով, հ.1, Երևան, 1986, էջ 312, 314:

²⁰ Նույն տեղում, էջ 303:

տարիներ տևած «միստիկ» մարդերգությամբ: Բնորոշ է. Շիրվանզադեի դեպքում էլ ճանապարհորդության ընթացքով նկատվում է երկնտության անսքող խորացում, որ առայժմ դրսևորվում է դեպի Բայազեդ ճանապարհին և հետո:

Ազգային պատվախնդրության այդ ծանր մտածումներով էլ, հասկանալի է, Րաֆֆու և «խենթի» հետ միասին, կոնցացող գիշակերների ուղեկցությամբ ու ձիերի դիակների վրայով՝ իրիկնամուտին՝ «Հեռավոր բարձունքների վրա, հսկայական ժայռերի մեջ նշմարվեց պատմական Բայազեդը պարզ, մանիշակագույն մշուշով ծածկված»: Իսկ քաղաքի մատույցներում արդեն դիմավորում են խմբին՝ տեղի քահանայի գլխավորությամբ, և ծայր է առնում հարցերի տարափը: Բնապատկերը՝ նույն ժայռոտ՝ բարձր ու սուր գագաթներն են. գրողի աչքով՝ գագաթներ, որոնք կարծես «երկնքի սիրտն են ուզում ծակել նիզակների պես»: Քաղաքի վրա՝ նույնպիսի պատկերավոր ընկալումով, իշխում են երկու հնածև բերդեր՝ մեկը քաղաքի ծայրում, մյուսը՝ քաղաքից դուրս, ժայռերի կրծքում: Այնպես որ ականատես Շիրվանզադեն արձանագրում է. «Մարդ զարմանում է, թե ինչպես են գրավել այդ անառիկ բերդանոցը: Թվում է, որ նա մի քանի թնդանոթներով և մի գունդով կարող էր դիմանալ մի ամբողջ բանակի տարիներ շարունակ: Բայց այդպես չէ. *թուրք զորքը թողել է նրան ու փախել առանց մի գնդակ արծակելու*» (ընդգծումը մերն է. – ԱՆ. Ջ.)²¹:

Ջարմանալի է չէ՞, չեն գրավել. թուրքերը պարզապես հեռացել են...

* * *

... ճամփորդներին ձիավոր խմբով դիմավորած բայազեդցիները «ահագին» բազմությամբ ծուռումուռ փողոցներով ժողովվում են եկեղեցու առաջ. «Եկեղեցի»: Ո՛չ, դա մի ահագին քարե մթերանոց է խարխուլ պատերով, կիսավեր առաստաղով, այնքան խոնավ, որ իսկույն ոսկորներս ցնցվում են»²²: Մեսրոպ եպիսկոպոսը «համառոտ» աղոթում է մխիթարական խոսքերով: Հաջորդ օրը՝ վաղ առավոտյան, հանդիսավոր մաղթանք է կատարվում: Ներկա են լինում բազմաթիվ զինվորներ, զինվորականներ, գեներալ-նահանգապետն իր օգնականի հետ: Խոսում է Խորեն եպիսկոպոսը: Խոսք են ասում և Սմբատ Խաչատրյանցն ու

²¹ Ա. Շիրվանզադե. Երկեր, հ. 5, էջ 481:

²² Նույն տեղում:

Հովհաննես Թումանյանը: Ինչ մնում է անձամբ Շիրվանզադեին՝ «ես լուռ ունկնդիր էի և վճռել էի լռել մինչև վերջը, գերադասելով դիտողի և ուսումնասիրողի դերը քարոզողի և խրատողի դերից: Եվ ի՞նչ պետք է ասել այդ հոգեսպառ և արյունաքամ ժողովրդին: ...

Լավ կլիներ, եթե նույնիսկ ոչ ոք չխոսեր և թույլ տրվեր այդ խեղճ ժողովրդին ավելի երկար ժամանակ լսելու տեր-Նիկոլի հուզիչ երգեցողությունը: Ա՛հ, նրա մաքուր տենորի յուրաքանչյուր հնչյունը թափանցում է այդ ողորմելի տառապյալների հոգին և արտասուք կորզում նրանց ցամաքած աչքերից: Եվ ինչպես հիացած են օտարազգի զինվորներն ու զինվորականները, որպիսի՝ երկյուղածությամբ են լսում արևելյան եկեղեցու հոգեմաշ մեղեդին, որ այնքան սագում է այդ մռայլ արյունաշաղախ պատերին»²³:

Ինչ խոսք. տեր- Նիկոլի «հուզիչ երգեցողությունը» անհրաժեշտ էր ինչպես «օտարազգի» զինվորների ու զինվորականների, այնպես էլ «ողորմելի տառապյալների համար: Բայց ինչու՞ անհրաժեշտություն չէր Հովհ. Թումանյանի՝ «քարոզողի և խրատողի» խոսքը. և վերջինիս կողմը նետած հերթական քարը, մեղմ ասած, իհարկե, դարձյալ տեղին չէր, մանավանդ որ նույն հատվածում դրան էլ հաջորդում է ավելի քան անտեղի մյուսը: Ձայրացած, որ չի հաջողվել կատարել իրենց ուղեկցող «օֆիցերներին» «շնորհակալության մի նշան» մատուցելու առաջարկը՝ խոր մտատանջությամբ գրողը խորհում է. «Մարդկային կենցաղավարության մեջ կան փոքրիկ ուշադրություններ, որոնց համագումարը կոչվում է էտիկա: Նա է, որ ազգերի փոխադարձ հարաբերությունների մեջ ծնում է համակրանք կամ հակակրանք: Թվում է ինձ, որ մեր ազգի բարոյական վարկին ամենամեծ հարված տվողը մեր հոգու չորությունն է: Խելքն ու բանականությունը չեն միայն, որ ժողովրդին ժողովուրդների մեջ դարձնում է հանդուրժելի, այլև զգացումը: ... Հաճախ մի փոքրիկ անփութություն կամ անուշադրություն հղացնում է ատելություն և, ընդհակառակը, անհատների կողմից օտարներին տրված մի գեղեցիկ ժեստ երբեմն գրավում է նրանց հարգանքն ու համակրանքը դեպի ամբողջ ազգը ...»²⁴:

Ասվածը Շիրվանզադեի գեղարվեստական մտածողության, այլև կողմնորոշումների տեսակետից ուշագրավ դատողություն է, որին էլ հաջորդում է խմբին իր տանը հյուրընկալած մի «բարեհամբույր, շատ հյուրասեր» թուրք փաստաբանի առաքինությունների վերհանումը՝

²³ Նույն տեղում, էջ 484:

²⁴ Նույն տեղում, էջ 486:

սուլթանների երկրին հաջորդած կրթալուսավորչական բարոյական հաջողություններով. ծերունի տանտիրոջ մի որդին ուսանում է ժնկում, իսկ արծակուղղներին տուն վերադառնալով՝ «Ճաշի և ընթրիքի ժամանակ ամենայն հնազանդությամբ դեն է գցում եվրոպական կոշիկները, ծալապատիկ նստում է մինդարի վրա և այնպես ուտում»։ Այնուհետև. «Եկան մի քանի պատկառելի թուրքեր՝ իրենց բարեկամական զգացմունքներն արտահայտելու։ Նրանցից մեկը խելացի և համակրելի դեմքով մի ծերունի էր, չալմայով։

— Իսմայիլ էֆենդի Նալմանդ Ջադե, — ներկայացրեց նրան փաստաբանը հարգանքով, — հայտնի կալվածատեր և միաժամանակ տեղական դատարանի անդամ։

Հայտնվեց, որ էֆենդին եղել է ինքնապաշտպանության կոմիտեի անդամ և օգնել է հայերին ու շատերին ազատել կործանումից։ Այժմ նա ինքը Բայազետում մնացած թուրքերի հետ գտնվում է հայերի պաշտպանության ներքո։ Նա խոսեց ժողովուրդների համերաշխության մասին և խոսեց խելացի, տրամաբանորեն, հենվելով կյանքի տված երևույթների ու փաստերի վրա ... »։ Եվ գրողը դարձյալ անմիջապես շարունակում է. «Ներս մտավ մի դյուրագրգիռ հայ և սկսեց կատաղի բողոքել ճակատագրի հարվածների դեմ։ ...

— Մեզի թալնեցին թուրք ասկերներ, անկե հետև քուրդեր։ Մենք այժմ ալ կթալնվենք, հուսալով, որ ռուսը գալեն ետև պիտի հանգիստ ըլլանք։ ... պիտի գաղթենք ...

Մենք աշխատեցինք վրդովված հային բացատրել, ... բայց սա մի քանի անգամ կրկնեց «պիտի գաղթենք»։ Վերջապես համբերությունս հատավ, և ես հարցրի.

— Ու՞ր պիտի գաղթեք ...

Նա չկարողացավ հարցիս պատասխանել ...

— Այո՛, ու՞ր պիտի գաղթենք, տեղ չկա, — հաստատեցին իմ խոսքը ներկա եղող թուրքահայերը։

Վրդովված հայը զգաց, որ իր բողոքը ոչ միայն անգոր է, այլև ոչ քաղաքագիտական։ Նա ասաց.

— Ջանըմ, կազակ ինչ կուզե թող ընե մեզի, միայն թե մեր երկրեն չերթա։ Մենք գոհ կըլլանք գա՛րու հացով ալ ...»²⁵։

Ամեն դեպքում խրախուսելի — տեղին հայ-թուրք համերաշխություն, միմյանց սատարելու միանգամայն ընդունելի գաղափար, և, սակայն,

²⁵ Նույն տեղում, էջ 487։

ինչո՞ւ ամենուրեք անհամար հակադրություն՝ թե կազակների, թե քրդերի, թե թուրքերի առնչությամբ: Ստացվում է, որ, այսպես ասած, հեչ տեղից, հենց այնպես հայերն ուզում են գաղթել ... Չլինի թե՞ Յովի. Թումանյանն էլ էր դեմ համերաշխության կամ երազում էր, որ գաղթեն Կովկաս ու Ռուսաստան ... Եվ, առհասարակ, հարց է առաջանում՝ ինչո՞ւ է մշտապես նվաստացվում սեփական ժողովուրդը՝ ամենատարբեր առիթներով:

* * *

Զերթական IX դրվագը Բայազեդից Դիադին ուղևորությունն է: Բանն այն է, որ ճամփորդության համար դժվարությունները շատացել են. նախ, որ ձիերի պայտերը մաշվել են՝ սառույցների վրա երկյուղալի են: Բայց, բարեբախտաբար, պարզվում է կազակները պայտել են («այդ թշվառ երկրում ոչ պայտար կա, ոչ երկաթ»), գեներալ–նահանգապետն էլ ավելացրել է կազակների թիվը՝ հասցրել 25-ի. արդեն ճանապարհները շատ վտանգավոր են: Ուրեմն, ըստ հարկի նետվում է հաջորդ քարը. «Լսելով այդ, Յովհաննես Թումանյանը իր բազմաթիվ կապոցների միջից դուրս բերեց մի մեծ արկղ և քարշ արավ կողքին: Ասաց, որ այդ արկղի մեջ ամփոփված է աշխարհի ամենասոսկալի գեները: Ես վախեցա»: Խուճուճեց էլ հանում է «սև ռևոլվեր»՝ համոզվելով, «որ փամփուլտները չեն ընկել»: «Ես սարսափեցի, – շարունակում է Շիրվանզադեն: – ...Թուլամորթը միայն ես էի իմ ընկերների մեջ», մինչդեռ մյուսները՝ «Դարծյալ հայկական կրիան չի դուրս գալիս բնից» սովորությամբ «գբաղված են թեյ ըմպելով և գրուցաբանությամբ»: Սառցապատ գառիվայրը, թեև վտանգավոր է, «Բայց տեսեք ինչպես համեստ ռուսը, ծիուց իջած, անտրտուն քայլում է ծյունի վրա հետ ու առաջ, ցրտից ոտքերն ամուր զարկելով գետնին...»: Վերջապես ինքը օգտվում է առիթից և «ի մշան շնորհակալության» կազակներին է տալիս «մի քանի տուփ ծխախոտ, և նրանք անվերջ շնորհակալ են: Ես ևս շնորհակալ եմ իմ ընկերներից, որ այսօրվանից իմ տրամադրության տակ են դրել ահագին կապոց ծխախոտները: Ես գիտեմ ինչպես բաժանել այդ թանկագին նվերը»²⁶: Մեծ չափով, ինչ խոսք, «համեստ» ռուսներին... Եվ քանի որ վերջապես այդ շա՛տ կարևոր նվերի հարցը լուծվել է, հանգիստ կարելի է անցնել բնությանը. այն է, թե «հորիզոնի վրա նկարված են

²⁶ Նույն տեղում, էջ 488:

Չինգիլի բարձունքները», «Արարատն արդեն մնացել է մեր հետևում, և մենք նրան չպիտի տեսնենք ամբողջ շաբաթներ»: Խուժքն էլ՝ «բուն Քուրդիստանումն» է, որ թողնում է «ամայության տպավորություն»։ քրդերը քաշվել են, թաքնվել լեռներում և կամ մեկ – մեկ կրակում են ռուս պահակների վրա կամ կողոպտում ... Ինչպես տեսնում ենք, վայրերին դառնալիս ավելի շատ հոլովվում է Քուրդիստանը, քան՝ Թուրքիան...

Հանկարծ կիրճերից հայտնվում են երեք ձիավոր. լսվում է առնական ձայն՝ «Ողջույն ձեզ»։ պարզվում է Դարալագյազի քահանա, կամավորական տեր-Գրիգորն է՝ որդու և կամավորականի հետ. տղան հիվանդացել է, տանում է Իգդիր բուժելու. «վշտացած էր, որ ստիպված է կռվի դաշտը թողնել, թեև ժամանակավոր»²⁷:

Սա գրողի առաջին դրական խոսքն է կամավորականների հասցեին, որին անմիջապես հաջորդում է Դիադինի ճակատամարտում մի ամիս առաջ կռված ռուս օֆիցերի պատմությունը, որ «սպասում է «Գեորգյան շքանշանի»։ Մի երկար պատմություն՝ անթիվ դիակներով. «Համիդիականներ էին, մեծ թվով, չգիտեմ քանի հազար: Սկզբում իրենք հարձակվեցին: ... Ստիպեցինք ընդունել ճակատամարտը: ... Դիմադրեցին բավական ժամանակ: Բայց կոտորվեցին...», իսկ դիակները հավաքող չկա ... և այլն: Եվ դրա համար էլ օֆիցերը արժանացել է շքանշանի:

Այդպես պատմությունը «վայելելով» էլ բարձրանում և իջնում են գաղիվայրից ու հասնում Դիադին՝ «մի մեծ գյուղ քրդաբնակ, տեղավորված մի փոքրիկ լեռան ստորոտում, ուր և գտնվում են հայտնի հանքային ջրերը»: Ապա. «Մեզ դիմավորեց տեղական կոմենդանտն իր կազակներով և առաջնորդեց դեպի մի խղճուկ տնակ...

— Ես իմ բնակարանից կուղարկեմ զորգեր, — ասաց նա, — մնացյալը կհոգա գյուղի ստարշինան: Նա հայ էր»²⁸: «Ստարշինան, որի անունն էր Միհրան Մանուկյան կամ, ինչպես ինքն ասաց, Մանուկով, ազդարարեց... թե տունն իրեն է պատկանում և պատրաստ է մեր տրամադրության տակ թողնել որքան ժամանակ կամենանք»: Եվ հենց նա էլ հաստատում է ռուս օֆիցերի պատմածը՝ «տեսածն ու լսածը»։ «Նրա ասելով Դիադինի միջով անցել է 6000 մարդուց բաղկացած մի թուրքական զորաբանակ: Ասկերները հայերին ոչ մի վնաս չեն տվել. ընդհակառակը, ռուս զորքը գալուց հետո իրենք հայերն են կողոպտել քրդերին, նույնիսկ այն քրդերին, որոնք թուրքերի ժամանակ իրենց օգնել էին: Եվ այսպիսով,

²⁷ Նույն տեղում, էջ 490:

²⁸ Նույն տեղում, էջ 492:

Դիադինի 14 տուն հայերը «ազգային վրեժ» են առել 400 տուն քրդերից (ընդգծումը մերն է. – ԱՄ. Ջ.): Կողոպտել են և կողոպտուղ իրենց մեջ բաժանելու ժամանակ կռվել: Երբեմն կռիվը արյունահեղության է հասել: Այնպես, օրինակ՝ ոմն Մինասյանց սպանել է իր հորեղբոր որդուն նրա բաժնին տիրանալու համար:

— Ինչո՞վ են պարապում այստեղ հայերը, – հարցրեց մեզնից չգիտեմ ով:

— Արհեստավորներ են:

Իր մասին Մանուկովը պատմեց, որ մի ժամանակ եղել է ունևոր վաճառական և առևտուր է ունեցել Կովկասի հետ:

— Շատ անգամ զացեր են Թիֆլիս ու Երևան, – ասաց նա հառաչելով:

– Ծովյանով եղբայր կճանչնա՞ք: Բանքա մը ունեին:

— Կճանչնանք:

— Անոնց քով երեսուներեք հազար ռուբլի դրամ ունեի:

— Հետո՞:

— Չդարձուցին:

— Կորա՞վ:

— Կորա՞վ:

Հետո ինձ ուրիշ տեղացիներ ասացին, որ այդ կորուստը խեղճ մարդու վրա այնքան է ազդել, որ նա փորձել է անձնասպան լինել, բայց անհաջող: Գնդակը կոկորդով անցնելով, դուրս է եկել վզից, և դրանից մի փոքր վնասվել է մարդու ուղեղը»²⁹, – չգիտես ինչու, ասես, հայեր այսպանելու – ծանակելու հանձնառությամբ այդ տողերով է վերջավորում գրողը նաև իր «Պատերազմի վայրերում» վերնագիրը կրող ակնարկ-հուշագրության հերթական X դրվագը: Իսկապես ասած. հուշագիր Շիրվանզադեն այնպիսի մանրամասներով է արծանագրում այդ ամենը, որ զարմանում ես...

XI դրվագն արդեն սկսում է Ալաշկերտի հովտի նկարագրությամբ և դարձյալ նույնպիսի տպավորությամբ. ստիպված ենք քաղել. քայլում են Եփրատի ափերով, և «Այդ գետն է միայն, որ մի թեթև կենդանություն է տալիս գրեթե ամառի տափաստանին. մռայլ ոչ միայն ծնեռը, այլև, երևի, և տարվա բոլոր եղանակներին, որովհետև ո՞ր երկիրը կարող է համարվել զվարթ՝ առանց բուսականության: Չկա մի կտոր անտառ, չկան թփեր անգամ, հազվագյուտ են հատ-հատ ծառերն իսկ գյուղերում»³⁰:

²⁹ Նույն տեղում, էջ 493-494:

³⁰ Նույն տեղում, էջ 494:

Չշարունակենք, անցնենք հաջորդ այսպանմանը. «Ոմանք մեզմից կամեցան այցելել սուրբ Հովհաննու վանքը... Ասում են, որ այդ վանքում մի ժամանակ կաթողիկոսներ են օծվել: Հետաքրքրական ինձ համար այդ չէր, այլ ճարտարապետությունը: Դժբախտաբար, այն էլ մի բանի նման չէր: Եթե չափը որևէ արժեք ունի, կասեն, որ հազիվ թե նրա մեծությունն ունենա մեր վանքերից որևէ մեկը...

Երբ ներս մտանք, աղավմիների մի երամ թռավ մեր գլխի վրայով և թառեց վիթխարի, բայց անձև գմբեթի տակ: Սալահատակը, պատերը, նույնիսկ սեղանը ծածկված էին նրանց կղկղանքով: ... Ահագին քարեր դուրս էին ցցվել պատերի միջից պառավի ատամների պես և սպառնում էին ընկնել:

Գավիթը լիքն էր զինվորներով: Նրանց ապուր էին բաժանում:

Տեր-Նիկոլը չդիմացավ շարժական կաթսաներից բարձրացող շոգու հրապույրին և ինձ էլ հրապուրեց: Փորձեցի տաք ապուրը ճաշակել, չկարողացա. ինչ-որ անժանոթ բաներ էին լողում նրա մեջ, թեև տեր-Նիկոլը համոզում էր ինձ, թե լոբի է ...»: Եվ ծանակվող տեր-Նիկոլի կողքին հանդես է գալիս մի Բաղդ՝ այսպիսի վարք ու նկարագրով. «Փողոցում մեզ ընդունեց անժպիտ դեմքով, չալ մորուքով մի կարճահասակ մարդ, մռայլ և սև ինչպես Հուդա ուրբաթը»: Այլևայլ եղկելիությունների կողքին նաև այս մեկը՝ «Բաղդն ձեռքով ծածկեց իր բերանը և գլուխը ծռեց մի կողմ: Այդպես էր անում այդ մարդը, երբ ծիծաղի նման մի բան հանդգնում էր շարժել նրա դեմքի անշարժ մկանուները»: Եվ ապա. «— Ի՞նչ նուս-նուս մարդ է, տո՛, — ասաց քթի տակ տեր-Նիկոլը և, Բաղդոյի թևից բռնելով, քաշեց տարավ նրան դուրս:

Հասկացա ինչու համար:

Ներս մտան երկու ռուս օֆիցերներ, որոնցից մեկը ձեռքում բռնել էր մի մորթած և փետրած հավ: Ուրեմն և ամեն ինչ փոխվում է՝ ծավալվելով այսպիսի ուղղությամբ. «Երկուսն էլ երիտասարդ էին, երկուսն էլ կենսախիճ, զվարճախոս, միևնույն ժամանակ շատ լրջամիտ և մտավորապես զարգացած: Հաճելի էր լսել նրանց դատողությունները ներկա պատերազմի լուսավոր և խավար կողմերի մասին»: Ուստի անմիջապես շարունակում է. «— Չպիտի հավատալ շատ բաների, որ գրում են լրագիրները գոնե այս երկրի պատերազմի մասին, — ասաց, ի միջի այլոց, կոմենդանտի օգնականը: — Նորերս մեր ձեռքն ընկան “Русское слово” լրագրի մի քանի համարները: ... Այդ մարդիկ չգիտեն, որ որքան ևս փառաբանեն մեզ, սուտը միշտ ատելի է մեզ համար: Նրանք Թուրքիան ներկայացնում են ինչպես ձիարշավի դաշտ, իսկ մեզ՝

ջիգիթներ: «Մեր հաղթական բանակն անխափան արշավում է» և այլն: Այո՛, արշավում ենք, բայց ինչպե՞ս: Մեր զինվորները Չինգիշի բարձունքներում արտիլերիան անց են կացրել իրենց ուսերի վրա բառիս բուն նշանակությամբ և տասնուչորս վերստ տարածությունը, գիշեր-ցերեկ աշխատելով, հազիվ կարողացել են անցնել տասնուերեք օրում: Նույն տանջանքները նրանք կրում են և տափարակների վրա: Երկիրը ծածկված է անթիվ առուներով: Երբ թնդանոթակիր սայլերը խրվում են նրանց մեջ, երբեմն մի ամբողջ շաբաթ ենք կորցնում նրանց դուրս բերելու համար: Իսկ մեր կյանքը, մեր կացարաննե՞րը, իսկ թանկությունը: Երևակայացեք, մի բուռն հինգ կոպեկանոց մախորկան գնում ենք երկու ռուբլով: Հեշտ է նստել տաք կաթինետներում և թուրքիան գրավել կարմիր մատիտով՝ քարտեզի վրա: Ո՛չ, պարոններ՝, մեզ համար ճշմարտության դառնությունն ավելի հաճելի է, քան ռեկլամը...

Ընթրիքը, որ տեր-Նիկոլի շնորհիվ դարձել էր կատարելապես Լուկուլլոսի սեղան, վերջացավ զվարճաբանությամբ և անեկդոտներով»³¹:

Ինչպես տեսնում ենք, կարելի է կարծել, թե այդ ռուս օֆիցերներին ուրիշներն են բերել թուրքիա կռվելու և հիմա վերջիններիս պատճառով ունեն այդքան տաժանակիր դժվարություններ և, ըստ այդմ էլ, երեսով են տալիս ... Շիրվանզադեի շարադրանքով ականա ստացվում է նման տպավորություն: Եվ այսպես շարունակ, ասես, հագենալ չկա՝ մի կողմից գովաբանությունից, մյուսից՝ այպանելուց:

... Այնուհետև խումբն անցնում է գյուղից գյուղ և, վերջապես, Ղազը Քեռյում հյուրընկալվում են Հակոբ աղա Տեր-Ստեփանյանի «երջանիկ» ընտանիքում. մարդիկ զվարթ են, սենյակները գորգերով են, երեխաները ցնցոտիներով չեն: Խոսքի մեջ եպիսկոպոս Խորենն ասում է, թե «— Դարեր եք համբերել, համբերեցեք մի փոքր էլ և կտեսնեք ձեր ազատությունը... », երևի թե սխալ առոգանությամբ և «— Հավատում ենք, բայց...», — տիրում է «տարակուսանքը»:

Հաջորդ Ձիրա գյուղում արդեն կես հայ — կես քրդեր են ... Այստեղ ևս խոսք է ասում եպիսկոպոսը. և ինչ. եկել են և քրդեր. «Դեմքերի կես արհամարհական և կես նախանձոտ արտահայտությունից արդեն երևում է, որ գազանային բնազդները զսպված են ժամանակավորապես: Բավական է, որ ռուս զինվորը հեռանա, և նրանք պիտի բռնկվեն ավելի կատաղի, քան մինչև այժմ...»³²:

³¹ Նույն տեղում, էջ 498:

³² Նույն տեղում, էջ 499-500:

Սրան էլ գումարվում է մի հայ աղջկա առևանգման պատմությունը, որի հարազատները զենք են խնդրում ինքնապաշտպանության համար:

Երինջա գյուղում էլ մտնում են մի կիսաքանդ եկեղեցի... Խմբից Սմբատ Խաչատրյանցն ասում է. «— Հայ ժողովուրդ, ես խոնարհվում եմ քո առաջ»... Բնականաբար, նորից է հաջորդում Շիրվանզադեի արձագանքը. ահա, այսպիսի. «Դա միակ խոսքն էր, որ պիտի արտասանվեր այդ կիսամերկ ամբոխի հասցեին, և արտասանվեց ամենայն անկեղծությամբ:

Երբ եկեղեցուց դուրս էինք գալիս, տեսա մի պատկեր ... Խարխուլ դռների առջև, ձեռները կրծքի վրա դրած կանգնած էր տեր-Յովհաննեսը, չգիտեմ որ գյուղի քահանան ... Մարդը վիշտ ուներ, թուրք զինվորները նոր էին սպանել նրա միակ որդուն»...³³

Ղարա-Քիլիսա կենտրոնական մեծ ավանում արդեն զորաբաժնի շտաբն էր. առաջին օրն իսկ խմբի կացարանը պաշարվում է «այցելուների ահագին խմբերով»: Գրողը արձագանքում է. «Դարձյալ քաջալերական խոսքեր, որ արդեն դարձել են թուրքակի երգ և ինձ զզվեցնում են, նույնիսկ կարեկցության զգացումը սկսում է բթմալ, ինչպես, առհասարակ, ամեն մի զգացում: Յոթն օր է միևնույն ներվերին շարունակ զարկում են մուրճով միևնույն հարվածով, միատեսակ տաղտկալի և միատեսակ նողկալի»³⁴: Եվ անմիջապես էլ շարունակում է առանց հապաղելու. «Գնացիմք զորաբաժնի գլխավոր գեներալ-լեյտենանտ Ա.-վի մոտ: Հարկավոր էր նրան հայտնել մեր մարշրուտը: Որոշել էինք գնալ Դուբաղ մեր կամավորների հետ տեսնվելու և հետո անցնել Բասեն:

— Այդ ես չեմ կարող թույլ տալ, — ասաց գեներալը...:

— Ինչո՞ւ:

— Որովհետև ներկայումս Դուբաղի մոտ տեղի ունի ճակատամարտ, որին մասնակցում են և ձեր կամավորները:

— Մեզ այնտեղ մղողն իսկ և իսկ այդ է:

— Անհնարին է: Թուրքերը կարող են ձեզ գերի վերցնել: Ես այդ աշխարհական պարոնների մասին չեմ հոգում, այլ ձեր մասին, սրբազան: Զինվորականներս կխայտառակվենք, եթե դուք ընկնեք թուրքերի ձեռքը: Ո՛չ, ո՛չ, թույլ չեմ տա:

— Ինչո՞ւ գեներալ Բ.-ը չվախեցավ թույլ տալ Վրաստանի Էկզարխին կռվի դաշտ գնալու և մոտիկից տեսնելու ճակատամարտը:

— Դեռ հարց է, լա՞վ էր, որ գլխավոր հրամանատարը թույլ տվեց

³³ Նույն տեղում, էջ 500:

³⁴ Նույն տեղում, էջ 501:

էկզարիսին գնալու պատերազմի դաշտը, թե՞ չէ, բայց ինչ վերաբերվում է ինձ, ես հակառակ եմ ...

Մենք հասկացանք գեներալի հետին միտքը: Նա չէր ուզում, որ մենք հանդիպենք մեր կամավորներին:

— Իսկ Ալաշկերտ կարո՞ղ ենք գնալ:

— Կարող եք:

— Եվ անցնել Դայա՞ր:

Գեներալը տատանվեց իսկույն պատասխանելու: Ստաժեց և ասաց անորոշ.

— Այդ էլ կասկածելի է... Դ՛

— Ինչո՞ւ:

— Գիտեք, ես խորհուրդ եմ տալիս ձեզ վերադառնալ նույն ճանապարհով, որով եկել եք, և Իզդիբի վրայով անցնել Սարիղամիշի կողմերը»:

Եվ խոսակցությունը վերաճելով՝ հանգում է երկդիմի նման երկ-խոսության. «Գեներալը նորից մտածեց ու ասաց.

— Չե՞ք կարող արդյոք մի օրով հետաձգել ձեր ուղևորությունը...

— Լա՛վ կսպասենք»:

Գնալով խոսակցությունն ավելի է խճճվում. «Խոսք բացվեց կամավորների երկրորդ խմբի մասին: Կամեցանք իմանալ այս անգամ մի զինվորականի կարծիքը, որ ինքն էլ կովկասցի էր և ոչ ռուս (հավանաբար, վրացի. — ԱՄ. Ջ.):

Քանի մի մութ ակնարկներ, մի հարատև հեզնական ժպիտ ոչ ռուս ազգի գեներալի երկարավուն կարմիր-կապտագույն դեմքի վրա, և մենք հասկացանք նրա տրամադրությունը, որ հարկավ անհաճո էր մեզ համար:

Հետագայում փաստերը հաստատեցին, որ մեր տպավորությունը ճիշտ է եղել:

Ակնարկ եղավ տեղական հայերի անմխիթար կացության մասին:

Գեներալն ասաց.

— Այստեղ հայերը զբաղված են միայն կողոպուտով:

— Ու՞մ են կողոպտում:

— Թուրքին և քուրդին:

Մեր տեսակցության ժամանակ ներկա էր գեներալի շտաբի գլխավոր գնդապետ Լ.-կին: Այդ մարդը կրկնում էր բոլորը, ինչ որ ասում էր իր մերձավորը»³⁵: Ուրեմն, կոտորվող ժողովուրդը զբաղված էր կողոպուտով... Այսքա՛ն էլ աբսուրդ...

³⁵ Նույն տեղում, էջ 501-502:

Ինչևէ. այս դրվագը ևս վերջավորվում է տեր-Նիկոլի զվարթ տրամադրությամբ ... ու որկրամոլությամբ:

XIII դրվագն էլ երկար-բարակ պատմություն է ռուսներին «անձնատուր» եղած քուրդ Սելիմ փաշայի բողոքի մասին, որի ասածները թարգմանում են՝ «մերթ Զակոբ աղան, մերթ Խաչատուրը և երբեմն Միհրան անունով մի վաճառական»: Գանգատը սա է. «... հայերը քչել են նրա տավարն ու ոչխարները և տարել իրենց գյուղերը:

— Ուրեմն, դուք կողոպտվե՞լ եք փաշա:

— Այո: ... Միջամտեցեք, որ իմ սեփականությունն ինձ ետ տրվի:

Քովս նստած կարմրերես տղամարդը չկարողացավ իրեն զսպել և վրդովված գոչեց.

— Դո՞ւք եք գանգատվում հայերի վրա, փաշա:

... Պարզվեց, որ իրավ մի քանի հայեր զինված հարձակվել են Սելիմի ծառաների վրա և նրա տավարի մի մասը տարել: Բայց այդ եղել է ոչ փաշայի սեփականությունը, այլ չնչին մասն այն ավարի, որ խլված է հայերից»³⁶:

Եվ, այսպես, շարունակ, հայերը թալանում են, հա՛ թալանում, այն էլ՝ հերթականորեն: «Նույն օրն եկան երկու թուրք գյուղացիներ, — շարունակում է Շիրվանզադեն, — որոնցից մեկը մոլլա էր, և գանգատվեցին, թե Վահան անունով մի ուսուցիչ խիղեր գյուղից ինչ-որ Սաքոյի, Սուշեղի և Մխոյի հետ հարձակվել են թուրքական Փոխան գյուղի վրա և թալանել...

Նույն պատասխանն ստացան նրանք, ինչ որ Սելիմ փաշան:

— Ասացեք ինձ անկեղծ, — դիմեցի ես մի ռուսահայի, որ պատերազմի սկզբում ռուս զորքերի մեջ էր եղել, — արդարացի՞ են այդ գանգատները»³⁷:

Եվ նույն համոզվածությամբ հայ գրողն ամրագրում է ռուսահայի ասածը, թե ճիշտ է, պատերազմի սկզբում, երբ ռուսները զենք են տվել, կռվել են, բայց շուտով թողել են կռվի դաշտը և «սկսեցին կողոպտել քուրդերին», մինչև իսկ իրենց մոտ եկած «լալկանների մեջ կան»... կան այդպիսիք...

Եվ այսպիսի անհատնում հպվաստումներ, անգամ «ռուս մեծավորները, մասնավոր դեպքերն ընդհանրացնելով, ասում են. «Հայերն այժմ միայն կողոպուտով են զբաղված»: «Դա է, — շարունակում է ռուսահայը, —

³⁶ Նույն տեղում, էջ 505:

³⁷ Նույն տեղում, էջ 506:

որ ահագին վնասներ է տալիս մեր հայրենակիցներին: Ղա է, եթե կամենաք, գլխավոր պատճառը, որ այլևս նրանց զենք չեն տալիս ինքնապաշտպանության համար:

— Բայց մի՞թե իրենք, հայերը չեն կարող արատից մաքրել իրենց անունը, զսպելով կամ նույնիսկ պատժելով մասնավոր կողոպտիչներին:

— Կարող են, իհարկե, եթե կամենան և շատ լավ կլիներ, եթե անեին: Բայց չեն անում, այս է ցավալին»³⁸:

Զարմանք - զարմանքի հետևից, հիրավի, անսասան - անսանձ այդ ի՞նչ տեսակի խղճով է ծավալվում մի այսպիսի մտայնություն, ասենք... խեղաթյուրում, թե անասելի - անհասկանալի ... ժառանգություն. անմարդկային - անհոգի անաստված հանգույցներով ու ... պարպումով. XIV դրվագից սկսած՝ նույնատիպ զիզգագներով: Եվ այսպես. «Երեկոյան գեներալը լուր ուղարկեց մեզ, թե մեր նախագծած երկրորդ ուղղության վրա մարտական ընդհարումներ տեղի չունեն: Եթե կամենանք, կարող ենք ուղևորվել Ղայար, միայն՝ այդ դեպքում գեներալը հրաժարվում է երաշխավորել մեր (ասել է՝ խմբի. — *ԱՄ. Զ.*) ապահովությունը»:

Ու ընդամենը չորս տող հետո մշտանույն անխռով սառնասրտությամբ էլ արձանագրվում է. «Որոշեցինք վաղը գնալ Ալաշկերտ և այնտեղ տեսնել՝ եթե ճանապարհը ազատ է, գնալ Ղայար, իսկ եթե ոչ՝ ընտրել մի նոր ուղղություն», որին հաջորդում է հետևյալ վերապահությունը. «— Բայց այդ ճանապարհին ավելի վտանգավոր է, — ասաց Խաչատուրը:

— Ինչպե՞ս ...

— Այս րոպեիս լուր ստացվեց, որ ... քուրդերը հարձակվել են Կաղզվանից եկող հայերի վրա և սպանել ու վիրավորել յոթ մարդ»:

Տեր-Նիկողին ու Թումանյանին հեգնել-խայթելը (մեկի հարիսա պատրաստելը, մյուսի համար նոր ձի սակարկելը) այստեղ ևս չի դավաճանում «անաչառ» հուշագրին, որից հետո միայն հարկ է համարում հայտնել «Շտաբի գլխավորի» նամակում «չսպասված» հայտնածը. այն է, թե՝ «թուրքերը պատրաստվում են մեծ ուժերով հարձակվել Սարիղամիշի վրա: Տարօրինակ բան: Նոյեմբերի 28-ին Ղարա-Քիլիսայում գիտեին այդ բանը, մինչդեռ դեկտեմբերի 12-ին, երբ արդեն հարձակումը սկսվեց, Սարիղամիշում տեղեկություն չունեին թուրքերի քանակության մասին, կարծում էին, որ հարձակվողը մի ավազակախումբ է ...

— Է, է՛, պարոններ, — ասացի ես, — ինչպես տեսնում եմ, մեր Ղելի-Բաբա գնալը չի հաջողվելու, եկեք վերադառնանք և Սարիղամիշի վրայով

³⁸ Նույն տեղում:

գնանք դեպի՝ Իջ ֆրոնտը:

Ինձ հետ համաձայնվեց միայն Խաչատրյանցը:

— Դուք վախկոտ եք, — պատասխանեց Խորեն եպիսկոպոսը մի ձեռով շոշափելով գրպանի ռևոլվերը, մյուսով, ըստ սովորության, մտրակելով ֆարաջեի փեշերը:

— Այո՛, դուք վախկոտ եք, — հետ չմնաց Զելիմ խանի փափախը:

Հովհաննես Թումանյանը ոչինչ չասաց, այլ միայն կողքին քարշ արած արկղը դղրդացրեց:

Երևանի քաղաքագլուխը նենգամիտ ժպտաց: Մենք երկուսս էլ սարսափում էինք ոչ այնքան քուրդերից, որքան այդ ահեղ երրորդու-թյունից:

Ինչ վերաբերվում է տեր-Նիկոլին, նա ասաց.

— Գյալմիդասան Հայրապետյանցն ասել է. եթե այսօր չգնան, թող ճաշին շնորհ բերեն ինձ մոտ»³⁹:

Հարց է ծագում, ինչո՞ւ պետք է «սարսափի» եռյակից (կամ հեզնի)... Բայց թե ո՞րն է տարակարծության պատճառը, շարունակվում է մնալ անպատասխան: Եվ քանի որ չի ընդունվում իր առաջարկը՝ «կազակ օֆիցերի» հետ հեռվից լսվող թնդանոթի որոտի տակ ուղևորվելով հասնում են Ալաշկերտ: Ու Շիրվանզադեի գրչի «պատճառակցական» գիզգագներն այժմ էլ բեկբեկվում են այսպիսի հանգով. «Մեզ դիմավորեց կովկասյան լեռնականի հագուստով մի հայ երիտասարդ և հրավիրեց իր տունը: Փոքրիկ և մաքուր երկհարկանի մի կացարան էր դա ժայռի կրծքին կպած արծվի բնի պես: Երբ տեղավորվեցինք բավական լուսավոր և ընդարձակ սենյակում, ներս մտավ չալմայով մի թուրք և շնորհավորեց մեր գալուստը նույնպես ինչպես տանտեր: Պարզվեց, որ տունն իսկապես թուրքին է պատկանում, իսկ հայը նրան ժամանակավորապես է տիրացել:

— Ինչո՞ւ, — հարցրինք մենք:

— Կարգ է: Հաջին կվախենա ռուսներու արկածներեն: Երբ քուրդերը կուզան, մենք ալ մեր տները թուրքերի պաշտպանությանը կհանձնենք:

Հաջին խելացի ու միհար դեմքով մի ծերունի էր, երկայն, հինայած մորուքով: Թուրդերի վերջին հարձակման ժամանակ նա իր տանը պատսպարել էր տասնունեկ հայ ընտանիքներ և նրանց ազատել կոտորածից:

— Վալլահ, բիլլահ, — ասաց նա, վառարանի քով նստած, տաշեղներ մանրացնելով, — մենք հանգիստ կապրեինք մեր տներում, եթե ալըմանը

³⁹ Նույն տեղում, էջ 507-508:

ջուրը չպղտորեր և Անվերը չլրբանար:

Ալըմանը գերմանացին էր, Անվերը — էնվեր փաշան:

Հաջին, ձեռքերը դեպի վեր բարձրացնելով, անիծեց երկուսին էլ, կանչելով երկնքի բոլոր չարիքները նրանց վրա»⁴⁰:

Սա հուշարկման գաղափարական ընդհանրացումների կարևոր հանգույցներից է, որը հեղինակը հարկ է համարում ամբողջականացնել լրացուցիչ նոր պարզաբանումով ևս: Ուստի, պարզվում է, որ ճանապարհին լսած կրակոցները մերձակա ինչ-որ գյուղից եղել է հետևյալ պատճառով. «Քուրդերի մի մեծ բազմություն հարձակվել է հայերին կողոպտելու և կոտորելու». ալաշկերտցիներից գնացել են գյուղը պաշտպանելու՝ «չեն կարողացել դիմադրել քուրդերի քանակությանը: Օգնության են հասել կազակները և, քուրդերի մի մասը կոտորելով, մյուսներին ստիպել են փախչել: Հայերից սպանվել են ընդամենը երկու հոգի:

— Սակայն եթե չըլլար կազակների օգնությունը, գյուղն ամբողջովին պիտի ջնջեին, — խոստովանում էին ալաշկերտցիները, նույնիսկ նրանք, որոնք ...

Մեզ խնդրեցին միջամտել, որ կազակներ ուղարկեին, հայերի օգնությամբ, սպանված երիտասարդների դիակները բերելու ու հողին հանձնելու»: Եվ դիակները բերվում են, ու հարանույն մանրամասնությամբ թաղվում ...

XVI դրվագն արդեն դրամատիկ է այնքանով, որքանով Ալաշկերտից խասթիւր գյուղ ճանապարհին երևում են մարդիկ, և պարզվում է, որ նրանք կարող էին և կրակել խմբի վրա: Լավ է գուշակում «օֆիցերը»: «— Երևակայեցեք, քիչ էր մնացել, որ այդ հիմարները մեզ վրա կրակ բացեին, — ասաց նա, ցույց տալով մի խումբ զինվորների, որ, հրացանները կրծքներին սեղմած, դուրս էին գալիս խրամատի միջից:

— Ինչու՞:

— Կարծում էինք քուրդեր եք ...

— Ունեն իրավունք, — ասաց օֆիցերը, — մենք պետք է սպիտակ դրոշակ բարձրացնեինք: Զգուշացնում են ձեզ, Դայարին մոտենալիս մի թաշկինակ կապեցեք ձեռնափայտի ծայրին և բարձրացրեք, այլապես ձեզ չեն ճանաչիլ...». իհարկե, այսպիսի հետևանքներով, որ արձանագրում է գրողը. « Եթե պահակը խրամատից կրակեր, անշուշտ առաջինը Հովսեփի հունուկն էր պիտի գլորվեր: Նա ամենից առաջ էր գնում՝ խոշոր նշանն էր իր վիթխարի փափախով: Նրանից հետո, իմ հաշվով, պիտի

⁴⁰ Նույն տեղում, էջ 508-509:

օղը ցնդվեր Յովհաննես Թումանյանի ականջավոր մաշկյա գդակը, որ նմանվում էր թևատարած ագռավի: Կկամենայի իմանալ՝ այն ժամանակ ի՞նչ դեր պիտի խաղար նրա սոսկալի արկղը, որ այնպես դղրդում էր նրա կողքի վրա»: Յետո էլ, անցնելով իրեն, արծանագրում է, թե՛ «Գալով ինձ, ես ապահով էի, վասնզի իմ իմաստուն երիվարը ինչպես սկզբից կեթ վճռել էր, այնպես էլ արավ — մինչև վերջը մնաց ամենից ետ, չնայելով գավազանիս ու ոտքերիս կատաղի հարվածներին և թևերիս հուսահատական թափահարումին»⁴¹:

Ապա հետևում են հայերի կաթուղի և լուսավորչական համայնքների ինչ-ինչ գծծիւթյուններ, որպիսիք շարժում են գրողի նողկանքը: Այսպես, վերջ չունի հայեր այսպանելը...

Ավելին. կողք կողքի դրվագով էլ եկեղեցու առջև անվայել արարքով ներկայանում են մի «լալկան» կաթուղի քահանա, և մի այսպիսի հայ. «Ղարա - Բիլիսայուն մի ինչ-որ կաթուղի քահանա ամուր բռնել էր խորենի փեշերը և բաց չէր թողնում: Արտասուքը աչքերին ողբում էր, որ եկեղեցուց անհետացել է մի արծաթյա սկիհ և ընկել կազակների ծեռքը: Կազակները սկիհը ծախել են ութ ռուբլով մի հայի, և այժմ հայը չի ուզում սրբազան անոթը վերադարձնել եկեղեցուն առանց իր ութ ռուբլին ստանալու: Եվ կաթուղի հոգևորականը եպիսկոպոսի փեշերը բաց չթողեց, մինչև որ հայը գտնվեց, սկիհը մեր դրամով գնվեց և հանձնվեց լալկանին»⁴²:

Եվ, այսպես, աջից ծախ մերկացվում են ամեն տեսակի հայեր, մինչև որ վերջապես անսպասելի հանդիպում է մի այսպիսի երջանիկ դիպված. «Երբ ծի էի նստում, մոտեցան մի երիտասարդ և մի պատանի՝ ծիուս ասպանդակը բռնելու:

Երիտասարդը լսելի ձայնով շշնջաց իմ անունը:

— Գիտեմ, — պատասխանեց պատանին:

— Ի՞նչ գիտես, սիրելիս, — հարցրի ես հետաքրքրված:

— Ձեր երկերը, — պատասխանեցին միասին երիտասարդն ու պատանին: — Կարդացել ենք ամենքս:

Այդ ինձ համար անսպասելի էր:

— Միթե՞ դուք գրագետ եք, — հարցրի ես:

— Մեր գյուղում ամենքը գրագետ են: ...

— Կանայք նույնպե՞ս:

— Կանայք, ծերերը. մեր մեջ չկան անգրագետներ:

⁴¹ Նույն տեղում, էջ 511-512:

⁴² Նույն տեղում, էջ 512:

- Ուրեմն դպրո՞ց ունիք:
- Հարկավ: Այժմ փակ է պատերազմի պատճառով, բայց եղել է միշտ...
- Ո՞վ է պահում:
- Պոլսո Միացյալ Շնկերությունը: ...

Տեղական կոմենդանտն ինձ հավատացրեց, որ այս գյուղում գրեթե ամենքը գիտեն ֆրանսերեն ... »⁴³:

Ասել կուզի, Կ.Պոլսո հովանավոր երաշխիքով վիլայեթներում սերմանվում էր քաղաքակրթություն: Բայց, հետաքրքիր է, այդ գյուղում թումանյանի «երկերը» չէի՞ն կարդացել ու չէի՞ն կարդում...

* * *

XVII դրվագն արդեն նախորդի հակադրությունն է՝ առաջին իսկ տողից: Այն է. «Ձեթկանումն ենք: Չեն կարող առանց սարսուռի հիշել այդ անունը»: Քանի որ իրենց խմբի այցելությունից հետո՝ վերադարձին 90 ընտանիք ունեցող գյուղը ավերվել էր հիմնահատակ: Ուստի, գրողը վերստին սկսում է դատել՝ նորից վերադառնալով նույն մերկացումների հունը. «Չտեսա մի հայ գյուղ այդ երկրում, որ ունենար քրդական գյուղերի ընդհանուր դիրքը — բարձր լեռների վրա կամ անմատչելի ժայռերի մեջ: Բոլոր հայի գյուղերը տեղավորված են կամ տափարակների վրա, կամ ձորերում: Եվ այդ կողմից Ձեթկանը, բլուրներով շրջապատված, մի գեղեցիկ նշանակ էր թշնամական հարձակումների համար»⁴⁴:

... Գյուղում, աթարով տաքացվող օդայում տիրում է ջերմություն, և, ահա, գյուղացիների բազմության մեջ առանձնանում է մաքուր արևմտահայերենով խոսող Պողոս Սուրադյան անունով գրագետ մի ծերունի՝ քաղաքական տարբեր-տարբեր դատողություններով, թե՛ «Համիդ դիպլոմասի գիտեր: Խորամանկ ալ էր: Իթթիհատ չկրցավ փրկել Թուրքիա: Պիտի կործանվե մեզի ըրած չարիքներուն մեղքով... Ճշմարիտ կսեն»⁴⁵: Շիրվանզադեի՝ «— Ծի՞շտ է, որ քուրդը քաջ է», հարցին էլ հեզմորեն պատասխանում է. «Քա՜ջ, — գոչեց ծերունին, ընդունելով իմ առաջարկած ծխախոտը, — անոր քաջությունը անգեներուն, կանանց ու ծծկեր մանուկներուն համար է: Թող ռուս տա ինձ քառասուն հրացանակիր կազակներ, քանի մը օրեն ամբողջ Ալաշկերտի շրջան

⁴³ Նույն տեղում, էջ 513-514:

⁴⁴ Նույն տեղում, էջ 514-515:

⁴⁵ Նույն տեղում, էջ 516:

կմաքենմ քրդերեն»:

Դժվար է հասկանալ, եթե մի երկու էջ առաջ գրողը մեղադրում էր, թե իրենց «հուժկու բազուկով» ինչու չեն խեղդում «Հասան աղային» ու նրա եղբայրներին, այստեղ էլ ծաղրում-ծանակում է մեծահարուստ մեկին անհարկի մի այլ տեսանկյունից՝ այս դեպքում արդեն չխմայելով մեծ ու փոքր, առհասարակ, այսպես ասած, չխմայելով «երկիր դրախտավայրը»: Ահա այսպիսի հետևողականությամբ. «Է՛հ, – ավելացրեց ծերունին, – հոգ չէ: Թող պատերազմ դադարե, երկիր խաղաղվե, իմ զավակներ նորեն կվաստակեն: Անոց կյանքի ապահովությունն է, որ զիս մտահոգություն կպատճառե: Ըսեք, սրբազան, ռուս երկու անգամ երկիր գրավեց ու ձգեց, գնաց. նորե՞ն պիտի ձգե...

Պատասխանն եղավ նույնը, ինչ որ ամենուրեք, անհամության հասած թութակի երգ.

— *Դարեր եք համբերել, համբերեցեք մի փոքր էլ, ազատությունը հեռու չէ ... (ընդգծումը մերն է. – ԱՆ. Ջ.):*

Ծերունու ձեռները դողացին ուրախ հուզմունքից:

Նա գոչեց.

— Ահ, կաղաչեմ աստծուն: Այն ատեն կմոռնանք բոլոր աղետներ...

— Հարկավ, հարկավ, – ծայնակցեցին մյուս գյուղացիները ուրախությունից իրարու բոթելով:

Մի պառավ կին, որ կուչ էր եկել դռների մոտ, ծանր հառաչեց և ջլուտ ձեռքերը բարձրացրեց վեր:

Մի ութ տարեկան մանուկ, որ կպած էր նրա փեշերից, վազեց դուրս, երևի ուրախ լուրը մյուս կանանց հայտնելու:

Նույնիսկ լուռ ու մռայլ վարդապետն իր ոսկրոտ կոկորդից արծակեց ուրախության հնչյունի պես մի բան և փոխեց իր երկայն ծնկների անշարժ դիրքը:

Մարդիկ ցրվեցին ապագա դրախտի հույսերով ներշնչված⁴⁶:

Դարձյալ հեգնանք, դարձյալ ծաղր սեփական ժողովրդի հասցեին...

Ինչպես տեսնում ենք, բավականաչափ սառնարյուն դատ ու դատողություններ, այնքան որ զգում է ինքը՝ հեղինակը, ուստի «հուշատետրից» հարկ է համարում հավելել. «Ու՛շ գիշեր է: Ընկերներս քնած են: Երանի նրանց: Մի ծանր նախազգուշացում պաշարել է ինձ և քունս փախցրել: Լսվում է շների միապաղաղ ոռնոցը գիշերային լռության մեջ: Ի՞նչ են գուշակում նրանք: Զգում են ինչ-որ անբացատրելի սարսափ: Թվում է

⁴⁶ Նույն տեղում, էջ 517:

ինձ, որ մենք փակված ենք գերեզմանատան մեջ: Այդ թշվառները, որ ցրվեցին, թողին իրենց հետևում դիակների հոտ»...»⁴⁷:

Մեղմ ասած՝ այդքան թուքումրի, ծաղրուծանակի հանրագումարով հետգրությունը մի տեսակ բնական չի հնչում՝ մանավանդ խմբի մյուս անդամների հակադրությամբ... Ինչևէ...

* * *

Հերթական լուսաբացն արդեն բերում է ինչպես ռազմական դեպքերի, այնպես էլ խմբի անդամների հարաբերությունների ու դիրքորոշումների նոր սրություն: Եվ, ճիշտն ասած, խոհեմությունը զգալիորեն նահանջում է՝ վերաճելով անպարկեշտության: Դարձյալ իր իսկ գրողի խոստովանությամբ՝ «ոչ առանց չարախնդության»: Բանն այն է, որ գեներալից ստացվել էր երկու նամակ. մեկով՝ խմբին խորհուրդ էր տալիս կազակների հետ գնալ Դայար, մյուսով զգուշացվում էր, թե Դայարը քրդերը գրավել են, և հարկավոր է կամ սպասել, կամ էլ վերադառնալ Ղարա-Քիլիսա: Մինչդեռ մեկեն եպիսկոպոսը հայտնում է, թե հարկավոր է արշավել դեպի «այդ Դայար կոչված անիծյալ վայրը», որին, քարտեզը պրպտելով, միանում է Խունունցը: Իսկ ինքը՝ Շիրվանզադեն, գտնում է, թե՝ «— Ո՛չ, չպետք է գնալ», և նրան էլ միանում է Խաչատրյանցը: Դառնալով Թումանյանին՝ շարունակում է ասելիքը մի տեսակ մանրախնդիր «չարախնդությամբ», ամեն դեպքում ինչպես միշտ տիպ: Այսպես. «Հովհաննես Թումանյանը գերադասեց բազմախորհուրդ լռությունը (միակ ձեռնտվությունը այդպիսի վեճերում), բայց և այնպես սոսկալի արկղը նորից քարշ արավ կողին:

Տեր-Նիկոլը բացակա էր: Վարդապետը նրան տարել էր չգիտեն ուր՝ գաթա ուտելու:

Եվ այսպես, ոչ մի կողմը ծայների մեծամասնություն չստացավ:

Այն ժամանակ Հովհաննես Թումանյանը, ըստ սովորության, քրեց իր երկայն վիզը և այնտեղից դուրս բերեց մի շատ սրամիտ անեկդոտ, որ, դժբախտաբար, մոռացել են», — գրում է Շիրվանզադեն՝ հայտնելով, որ այնուամենայնիվ՝ «Կազակները գնացին Դայար առանց մեզ»⁴⁸:

Օրվա մեջ վեճերը շարունակվում են գյուղացիների գանգատներով,

⁴⁷ Նույն տեղում, էջ 518:

⁴⁸ Նույն տեղում:

իսկ, ահա՛, ճաշից հետո «Հովհաննես Թումանյանն իր համար զբաղմունք գտավ: Կանչել տվեց երկու հեքիաթախոս գյուղացիների և պատվիրեց, որ պատմեն «Հազարան Բյուլբյուլը»:

Հիշեցի մանկությունս, պառավ տատիս և միքիս եկավ:

Երկար, երկար ժամանակ կիսաքուն և կիսաթրուն լսում էի:

«Անկե հետո, էֆենդիմ, ելավ, գացավ» և այլն...»⁴⁹:

Այսչափ անսպառ չարախոսություն, և հաղթանակում է սեփական մարգարեությունը: Ուստի, միանգամայն հավաստի՝ «հետևյալ առավոտ» արդեն հայտնվում է, որ երեկ՝ ասել է, երբ *Թումանյանը «Հազարան Բյուլբյուլ» էր լսում*, կազակների «րազիեզդը Դայար չի կարողացել մտնել», չկարողանալով դիմադրել նահանջել են՝ հանդիպելով «քուրդերի ահագին բազմության և կրակի ենթարկվելով...»:

Շիրվանզադեի վերաբերմունքն ուրախալի է, դրսևորումը՝ անմիջական. «— Տեսա՞ք, պարոններ, — ասացի ես ոչ առանց չարախոսության, — եթե գնացած լինեիմք, մեր ձիերը մեզ չէին փրկիլ: Կամ պիտի ընկնեինք քուրդերի ձեռքը, կամ գիշերեինք բաց երկնքի տակ որևէ կիրճում, սառնամանիքի մեջ»: Եվ մյուսները ծայնակցում են «Դա՛ ա՛» — երով: Խուճուճում էլ հետախուզելով քարտեզը՝ գտնում է, որ փրկության համար «միայն մի ճանապարհ է մնում՝ Դելի-Քիոյ»: «— *Եթե միայն ճանապարհը բաց է, — ասացի ես, որ արդեն մտել էի հաղթողի դերի մեջ*» (ընդգծումը մերն է. — *ԱՆ. Չ.*): Վեճերը բորբոքվում են, և գրողի հաղթարշավով վճռվում է «Մոսուճի բարձունքներով վերադառնալ սահմանագլուխ և Սարիդամիշի վրայով գնալ աջ ֆրոնտը»:

Պատերազմական անցուդարձն այս պահից սկսած ավելի քան ճակատագրական է, և նորից նկարագրելը պետք է, որ տեղը զիջի գրողի բավականաչափ սառնարյուն դիտարկումներին: Ինչպես միշտ խառնակ՝ այսպիսին. «Երբ մենք դուրս էինք գալիս Ձեթկանից, գյուղի ծայրում հանդիպեցինք մի խումբ անգեն քուրդերի: Եկել էին մեզ խնդրելու, որ թույլ տանք իրենց մեզ հետ մինչև Չիլկան գնալու: Նրանք ճանապարհին վախենում էին հայերից ոչ կազակներից»: Դիտողությունը տեղին է՝ ուղղված հայերին՝ «— Այժմ հերթը ձերն է», — դարձյալ արձանագրում է հուշագիրը՝ շարունակելով. «Ավա՛ղ, այդպես չեղավ: Քուրդը դեռ չէր վերջացրել իր դերը: Ճակատագիրը Ձեթկանի և նրա հարևան Մուլլա — Սուլեյման նույնպես հայաբնակ գյուղի համար պատրաստել էր հարվածներից ամենասոսկալին:

⁴⁹ Նույն տեղում, էջ 519:

Հագիվ մեր այցելությունից մի շաբաթ անցած էր, երբ *ռուս զորքը հրաման ստացավ ձգել Ալաշկերտի հովիտը և նահանջել դեպի սահմանագլուխ* (ընդգծումը մերն է. — ԱՄ. Ջ.):

Ահաբեկված հայ ազգաբնակչությունը թողեց ամեն ինչ... հետևելով ռուս զորքին: Սկսվեց մի գաղթականություն, որի նմանը Շահ-Աբասի օրերն էին միայն տեսել»⁵⁰: Եվ, ահա, վերոհիշյալ երկու գյուղերի բնակիչները չկարողանալով միանալ գաղթականության հոսանքին՝ կործանվում են: Եվ Շիրվանզադեն խոսքը տալիս է մի ականատեսի, որից լսել էր, թե ինչպիսին է եղել պատկերը, «երբ ռուս զորքերը նորից գրավում են հովիտը: «Առաջին օրը մեր կազակները արյունաշաղախ փողոցներում ժողովեցին տասնևյոթ ծերերի, տասնուհինը կանանց և քսանուհինգ երեխաների դիակներ: Եվ ի՞նչ դրության մեջ, աստված իմ: Անարգված, հոշոտված, պղծված: Այստեղ գլուխներ, այնտեղ ոտքեր ու ձեռներ: Այստեղ կանանց ծծեր, այնտեղ նրանց մարմինները: Ծերերի աչքերը դուրս բերված: Մանուկների բազուկները կտրտած, երևի մայրերի փեշերից պոկելու համար:

Եվ պետք է տեսնենք, ինչպես էին լալիս մեր կազակները, արցունքները սրբելով իրենց թևերով: Մարդիկ, որոնց զգացումները բովվել էին արյան և կրակի մեջ, փափկել էին ինչպես երեխաներ:

Ինչ վերաբերում է ինձ, չկարողացա կրել տեսարանի կսկիծը և հեռացա:

Ջեթկան չկարողացա մտնել: Արդեն տեսածս բավական էր, որպեսզի հավիտյան չնոռանամ: Բայց ընկերս պատմեց, որ նույնն է եղել և այնտեղ»...»⁵¹:

Այնուհետև խոսքը վերցնելով՝ գրողը հայտնում է, թե խղճի սուր խայթոցով մեղավոր է զգում, որ իրենք «այդ թշվառներին» մխիթարել են՝ «Դարեր եք համբերել, համբերեք մի փոքր էլ, ազատությունը հեռու չէ» խոսքերով...

* * *

Հաջորդ XIX դրվագից արդեն հարցադրումները հիմնականում ընդհանուր գաղափարական են՝ քննական-վիճաբանական ծավալումներով: Նախ արևմտահայ - արևելահայ տարբերությունների դրվածքով: Վարում է գրողը՝ որպես «քաղաքակիրթ եվրոպացի» իր վրա «լավագույն

⁵⁰ Նույն տեղում, էջ 520:

⁵¹ Նույն տեղում, էջ 521:

տպավորություն» թողած «մեր կամավորների երկրորդ խմբի պետ» Արմեն Գարոյի հետ: Հայացքները նույնն են, համընկնում են. արտահայտողն էլ միշտ Գարոն է, որ օրեր առաջ իր տղերքով «մի նոր» ընդհարում է ունեցել քրդերի հետ: Եվ հիմա պատասխանում է գրողի հարցերին՝ «ըստ սովորության, խույս տալով չափազանցություններից»: Այսպես.

«— Լա՛վ են կռվում տղերքը:

— Ո՞ւմանք լավ, ո՞ւմանք անփորձ, ընդհանրապես անձնվեր... Պայմանները շատ դժգոհ են:

— Բայց կարողանո՞ւմ են ընտելանալ:

— Ինչո՞ւ չէ, միայն ռուսահայերն ավելի դժվարությամբ, քան թուրքահայերը:

— Ինչի՞ն եք վերագրում այդ:

— Կենցաղների տարբերությանը: Թուրքահայի կյանքն ավելի դժգոհ է եղել... Ու ավելի է ծանոթ երկրի պայմաններին:

— Հա՞շտ են վարվում իրար հետ:

— Այո, թեև երբեմն իրարու խայթում են: Բայց դիսցիպլինա ճանաչում են և ենթարկվում»:

Այնուհետև. «— Ի՞նչ կասեք քրդերի մասին:

— Դժգոհ են, բայց ոչ քաջ:

— Եվ դիմացկուն, — ավելացրի ես (ասել է՝ Շիրվանզադեն. - *ԱՆ. Ջ.*) և ցույց տալով այն մի խումբ քրդերին, որ գնում էին մեր առջև և մեր հովանավորության տակ, շարունակեցի. — տեսնո՞ւմ եք ինչպես են քայլում... Մի արշին ծյուն, իսկ իրենք կիսամերկ, կիսաբոբիկ: Ահա դրա մեջ է քուրդի առավելությունը:

— Այդ ճիշտ է, — պատասխանեց Գարոն:

Եվ հետևում է Շիրվանզադեի բացատրությունը. «Արդարև, մի առավելություն, որ ռուս զորավարները չէին նախատեսել իրենց ասելով: Ասիական Թուրքիայում պատերազմի կեսը բնության դեմ է: Եվ ոչ ոք չի կարող նրա արհավիրքներին դիմանալ այնպես, որպես քուրդը: Դաշտերի ծյունը, լեռների բուքն ու բորանը...» և այլն: Եվ հերթը վերջապես հասնում է թուրքին: «— Իսկ ի՞նչ կասեք թուրք զինվորի մասին, — հարցրի ես:

— Թուրքը, — պատասխանեց Գարոն, ըստ սովորության կանխապես խորհելով, — նա այլ բան է: Թուրքը զինվոր է և գիտե կռվել: Հրացանա-ծգության մեջ կան վիրտուոզներ, որոնք կարող են մարդու ականջը թռցնել առանց գլխին վնասելու: Մի բանից է թուրքը վախենում — սրամարտից: Այստեղ արդեն առաջնության դափնին ռուս կազակին է

պատկանում, ինչպես և սուսերամարտերի մեջ ռուս հետևակ զինվորին: Ինչպես տեսնում եք, հայ խմբապետի կարծիքը թուրքերի և քուրդի մասին գրեթե ոչնչով չի տարբերվում ռուս զինվորականների կարծիքից»⁵², - եզրակացնում է գրողը: Եվ որքան էլ խոսակցությունը հաճելի, շտապում է ժամ առաջ խմբի և Արմեն Գարոյի աչքում նվաստացնել Թումանյանին: Ու դարձյալ հարկ է զգացվում այս դեպքում ևս վերաքաղելու հետևյալ դրվագը. «Առավոտյան, երբ պատրաստվում էինք ճանապարհի ընկնելու, Յովհաննես Թումանյանը վերջին անգամ ասալարեզ հանեց իր սոսկալի գնքը:

— Օհո՛, — գոչեց Գարոն, ապշելով բանաստեղծի ռազմական կերպարանքից, — այդ ի՞նչ թաքաղա է:

Յովհաննես Թումանյանը ձեռը զարկեց թաքաղին և ասաց.

— Եթե իմանալիր ինչ կա սրա մեջ, կճանաչեիր ով եմ ես:

— Գիտեմ, — ժպտաց Գարոն մեղմիկ, - մաուզեր է: Տուր ինձ, մա քեզ համար ավելորդ բեռ է:

— Խլիր ձեռքից, ի սեր աստծո, — ասացի ես, — հոգիներս հանեց ամբողջ ճանապարհը իր թախկաթխկով:

— Բայց... — փորձեց պաշտպանվել բանաստեղծը:

— Բայց — մայց չկա, բաց արա գոտիդ:

Թումանյանը դես մայեց՝ օգնություն չգտավ, դես մայեց — նույնպես, քները թափահարեց օդի մեջ, մի անգամ էլ փորձեց մեզ խաբել Լոռվա անկեղծությունով — չեղավ: Գարոն նրան փառավորապես զինաթափ արավ»⁵³:

Եվ այսպես, նույն ճանապարհով հետ դառնալիս Թումանյանից սկսած շարունակելով - շարունակում է իր գրչի խաղերը՝ կրկին մերկացնելով - ծանակելով հայկական արատները. մի Բաղդոյի Յուդայի դրամապաշտությունը, տեր-Նիկոլի ոչ միայն որովայնամոլությունը՝ այս անգամ արդեն նաև փողասիրությունը (թե Բաղոն «հազարներ է ունեցել ու ես չեմ իմացի»), «մեղալակիր ստարչինա», նախկին Մելքոն էֆենդու խաբեբա պահվածքը. «քրիստոսի խոնարհ պաշտոնյան»՝ Խորեն եպիսկոպոսն անգամ չի խնայվում... անխնա ծաղրում է հուշագիր Շիրվանզադեն խոցված սրտով ու հոգով՝ եզրակացնելով պատգամում. «Ոչ մի բանում մարդկանց բնույթն այնպես շուտ և այնպես ճիշտ չի որոշվում, որպես թղթախաղի և ճամփորդության մեջ: Թե՛ այնտեղ և թե՛ այստեղ պահանջվում է փոխադարձ զիջողություն: Նա, որ թղթախաղի մեջ *ռեմիզ*

⁵² Նույն տեղում, էջ 522-523:

⁵³ Նույն տեղում, էջ 523:

չի դնում, կարող է, իհարկե, մի անգամ տանել, բայց երկրորդ անգամ նրա հետ չեն խաղում, իրանց բարեկամներին էլ զգուշացնում են չխաղալու...»⁵⁴:

Այնուամենայնիվ, թղթախաղի հետ համեմատությունը և բնույթը զարմանալի ու անհասկանալի է: Նախ, հասկանալի չէ. այդ որ ծանր մեղք-մեղավորության համար են այդպես ատելի (մեղմ ասած) պրիմիտիվ-անհետաքրքիր, տվյալ դեպքում նաև «հրծիգ» թուևանյանը, Քրիստոսի ծառա եպիսկոպոսը և հայոց շարականների ու սաղմոսների անմնամ կատարող տեր-Նիկողը: Եվ, առհասարակ, ի՞նչ «զիջողության» ու «բարեկամներին էլ զգուշացնելու» մասին է խոսքը. կարելի է մտածել, թե խոսքը վերաբերում է ռուս-հայկական հարաբերության-բարեկամությանը: Մանավանդ որ հաջորդում է մերծավոր մի այսպիսի՝ արդեն հիշատակված, հատվածի. «Ձեթկանն ու Սոլլա-Սուլեյմանը, ընկած լինելով Ալաշկերտի խորքում, չկարողացան միանալ գաղթականների հոսանքին և կործանվեցին»՝ լաց ու կոծ, անասելի վիշտ պատճառելով ռուս կազակներին, ինչպես նկարագրել է «մի ականատես»։ «Եվ պետք է տեսնենք, ինչպես էին լալիս մեր կազակները, արցունքները սրբելով իրենց թևերով: Մարդիկ, որոնց զգացումները բովվել էին արյան և կրակի մեջ, փափկել էին ինչպես երեխաներ»:

Եվ, սակայն, իրականում հայտնի է, որ այդ վիճակում է եղել Ալաշկերտի ողջ հովիտը: Կրկնենք, միայն թե անհասկանալի է՝ այդ ի՞նչ զիջման մասին է խոսքը. և հարկ է զգացվում հիշեցնել, որ պատերազմ էր հայտարարել և պատերազմում էր Ռուսաստանը: Ուրեմն և այդ ինչպե՞ս կարող էր հայությունն իր բարեկամին «զգուշացնել»՝ չպատերազմել թուրքիայի դեմ կամ հակառակը. անտրամաբանական է՝ անգամ եթե «լալիս են» կազակները: Համեմայն դեպս, աստառը ռազմաքաղաքական է և վերաբերում է հայ-ռուսական կամ ռուս-հայկական բարեկամությանն ու հարաբերություններին...

* * *

... Այս ամենի կողքին ակնարկ-հուշագրության XX դրվագը վերջապես նշանավորվում է «Թուրքիա» և «թուրքեր» բառերի հիշատակությամբ՝ մարդկայնության պոռթկումով և մի տեսակ սարքովի դրվագով: Ահա այսպիսի. խմբին ուղեկցող կամավորականներից մեկը Ա.-րս գյուղից

⁵⁴ Նույն տեղում, էջ 524:

անցնելուց հետո «վեճի է բռնվում մի խումբ թուրքերի հետ և նրանցից երկուսին սպանում է ու մեկին ծանր վիրավորում»։ Ընդ որում՝ «Երկար ժամանակ մարդասպանը չէր համարձակվում երևալ մեզ։ Երբ, վերջապես, մոտեցավ, նրա փոքրիկ խոր ընկած աչքերը տակավին լի էին արյունով և հաստ բեղերի տակ կապտած շրթունքները դողում էին։

— Ինչպե՞ս հանդգնեցիր այդ անել, — գոչեցի ես մինչև հոգուս խորքը վրդովված։ (Իսկապես՝ ինչպե՞ս հանդգնեց... — Աճ. Ջ.):

— Եթե չանեի, իրենք պիտի սպանեին ինձ»⁵⁵։

Յենց այսքանով էլ դրվագն ավարտվում է և մնում է եմթադրել. կամ հեղինակը ցուցադրել է իր բազմիցս խոստովանած աշխարհաքաղաքացի լինելը, կամ էլ ցանկացել է ներկայացնել կամավորի քաջություն՝ թերևս այդպես կամենալու դեպքում, ի հակադրություն կամավորական շարժման ուղեկցող տևական ասեկոսների, որ կասկածելի է։ Երկու առումով էլ ավելորդ, անօգուտ «տարր», քանի որ այդքանով էլ անհետանում են տեսադաշտից թե՛ կամավորական «մարդասպանը», թե՛ թուրքերը։ Մինչդեռ, թվում է, հեղինակը մտադիր էր օգտագործել դրվագը հնչեցնելու համար մարդասիրական-խաղաղասիրական ծանրակշիռ գաղափարներ...

Ինչևէ. այնուհետև ներկայացվում է դեպի Իգդիր վերադարձի ճանապարհին մոլորվելը. Դիադինի վերելքով՝ նախ ուշագրավ բնակարով, և ապա նույնպես հիշարժան խոսակցությամբ, որոնք քաղում ենք դարձյալ կրճատ. «Երկար ժամանակ գնում էինք մոլորության մեջ։ Ձյունի միապաղաղ ճերմակությունը թաքցրել էր երկրի խորշերը։ Թվում էր, որ մեր առջև տարածված է հարթ-հավասար մի անապատ, անվերջ, անեզր, որպես օվկիանոս։ Այնինչ՝ շարունակ իջնում ենք փոսերի մեջ և բարձրանում բլուրների վրա, որպես ալիքների հաճույքին ձգված նավակների քարավան։

Մեր խումբն այս անգամ բաղկացած էր ավելի քան հիսուն ձիավորներից։ Երկու երրորդականը կազակներ էին։ ...

Մարդկային հետքի և ոչ մի նշույլ։ Ո՛չ մի գյուղ, ոչ մի ավերակ՝ ավեր երկրում, ո՛չ մի ծառ կամ մացառ։ ...

Դուրս եկանք մի բարձրավանդակ, ուր ծյունը թեև նոսր է, բայց սառած, քարացած»։

Տողամիջի, Երևի թե, բավականաչափ խոսուն հատվածներով՝ դարձյալ «անիծյալ տեղեր» հիշվումով՝ այս անգամ արդեն կազակ

⁵⁵ Նույն տեղում, էջ 525:

«օֆիցերի» այս «համեստ» մտաբերումով, Շիրվանգաղեն շարունակում է. «— Այժմ ճանաչեցի այս անիծյալ տեղերը, — ասաց մեզ առաջնորդող երկու օֆիցերներից մեկը: — Ձյունը ամեն ինչ ծածկել է: Ահա այն ծորում մենք ընդհարվեցինք թուրքերի և քուրդերի հետ:

— Մե՞ծ կռիվ էր:

— Ոչինչ, միջակ, — պատասխանեց օֆիցերը ռուսին հատուկ անփութությամբ, — բայց բավական զբաղեցրեց մեզ: Գիտե՞ք հարկավոր է շտապել...

Ես հետևեցի նրան որքան թույլ էին տալիս ծիուս ուժը և ոտիս ցավը»⁵⁶:

Ի դեպ, ոտքի ցավն անընդմեջ հիշատակվում է համարյա բոլոր դրվագներում. դժգոհությամբ, տանջանք-տրտուներով, բողբոջով, հանդիմանել-համեմատելով խմբի այս կամ այն անդամի հետ: Այս դեպքում հետաքրքիր ահա այսպիսի. «Չհավատաք, եթե բանաստեղծները ձեզ ասեն, թե գեղեցկությունը կարող է մոռանալ տալ ամեն բան: Համենայն դեպս նա անգոր է քաղցի և մանավանդ մարմնավոր ցավի դեմ: Այն պահին, երբ երկինք ու երկիր պարզել էին մեկն իրենց բյուրավոր հրաշալիքներից, ես ուժասպառ ծիուս վրա գալարվում էի ոտիս սոսկալի ցավից և անիծում բնությունը, որ ոչնչով մեղսակից չէր մի եպիսկոպոսի անզգայությանը» (անհասկանալի որքան հերյուրանք — մաղծ ... — *ԱՆ. Ձ.*): Իր հերթին բացեիքաց արհամարհանք եպիսկոպոսի հասցեին, բայց և առաջին հերթին Արարատին ուղղված՝ ներառյալ խորհրդանշանային առումով՝ այն էլ երկրորդ անգամ. «Երկինքը պարզվեց, և մեր առջև բացվեց Արարատը, այս անգամ մի ուրիշ կողմից: Իրիկնադեմի արեգակի ճառագայթները նրա հսկա կրծքի վրա ձգել էին գույների մի քմահաճ հյուսվածք: Քանի ճառագայթները մարում էին, այնքան հյուսվածքը նրբանում էր: Շուտով նա չքացավ, և մնաց մի թեթև ոսկեգույն պսակ Արարատի գագաթին: Չքացավ այն էլ, և մնաց բիրլիական հսկայի կաթնագույն սիլուետը դժգույն հորիզոնի վրա». ասել է՝ բանաստեղծների ասած գեղեցկությունը...

Եվ վերստին շարունակվող մթություն. ոտքի ջղերի ցավ ... «Աջ ոտս, որ առանց այդ էլ երջանիկ վիճակում չէր, մնաց ծիու տակ: Բարեբախտաբար անբան կենդանին շուտով ոտքի կանգնեց, այսպիսով ցույց տալով ավելի ջենտլմենություն, քան բանավոր կենդանիները:

Երբ Մոսուն հասանք, տեր-Նիկոլն ասաց.

— Լավ էր, ծիս ընկավ և մեջքը կոտրեց:

⁵⁶ Նույն տեղում, էջ 526:

եպիսկոպոսը ծիծաղեց: Նա սիրում էր ծիծաղել:

Նույն գիշեր տեր-Նիկոլի ձին սատկեց ...»⁵⁷, – և «ջենտլմենական» անվերջանալի այսպիսի խայթոցներ ...

* * *

Եվ այսպես՝ XXI դրվագով հասնում են «հայաբնակ» Մոսուկ. «մրա ճակատագիրը նույնն էր, ինչ-որ մյուս բոլոր հայ գյուղերինը: Կողոպուտ, սպանություններ, բռնաբարություններ, իսկ այժմ միմյանց կողոպուտ, այս անգամ, հարկավ, ոչ քուրդերի կողմից...»⁵⁸: Ուրեմն, ի՞նչ, միմյա՞նց կողմից...

... Եկել է, ասել է, մտածելու ժամանակը, և խումբը պետք է որոշի, թե «երեք շաբաթ» «ծի նստելուց և երեկոյան իջնելուց», ամենուրեք «աղիողորմ գանգատները» լսելուց բացի, ի՞նչ է արել խումբը: Եվ Շիրվանզադեի պատասխանը սա է. «խոսել ենք: Միմիայն խոսել և ... քաջալերել շաբլոն խոսքերով»: Հիմա էլ ակնհայտ է. «Մի՞թե մենք մեզ վրա չենք վերցրել մի մեծ բարոյական պատասխանատվություն: Այդ թշվառ ժողովրդի կյանքը քարշ է ընկած մի բարակ թելի վրա: *Մի թեթև շարժում ռուս բանակի՝ հետ կամ առաջ, և նա պիտի նորից դառնա քավության նոխազ* (ընդգծումը մերն է. – ԱՄ. Չ.): Ի՞նչ պիտի մտածե նա մեր գրեթե թեթևամիտ խոստումների մասին այն պահին, երբ քուրդի սուրը պիտի ցցվի նրա սրտին»⁵⁹: Ուրեմն, հայերը պետք է թողնեին ու հեռանայի՞ն...

Հետադարձ հայացքով դժվար չէ նկատել, որ առաջին էջից Շիրվանզադեն հետամուտ է հենց այդ պատասխանին՝ քաղաքական հայացքների ճյուղավորումներով, կողմնորոշման վայրիվերումներով և արդյունքով: Տպավորությունն այն է, որ նա պատերազմի սկզբից և ընթացքով գուշակում էր ու գիտեր արդյունքը՝ եզրահանգումով: Ինչպիսին են բերված հատվածին հաջորդած այս տողերը. «Ո՛հ, չպիտի խոսեինք... Մենք միայն ունեինք իրավունք ասելու ... մի բան...

— Հայ ժողովուրդ, ես խոնարհվում եմ քո տանջանքների առջև: Դու կրել ես քո ծանր խաչը, շարունակիր կրել նույն անսպառ համբերությամբ: Իսկ ապագա՞ն... Նա թանձր խավարի մեջ է, և մեր աչքերն այնքան սուր

⁵⁷ Նույն տեղում, էջ 527:

⁵⁸ Նույն տեղում, էջ 528:

⁵⁹ Նույն տեղում:

չեն, որ տեսնեն նրան... Ո՞վ գիտե, գուցե շների այդ սոսկալի ոռնոցն ավելի է գուշակում, քան մենք...»:

... Շարունակենք հետևել Մոսունից Իգդիր և ապա Սարիղամիշ խմբի հետդարձին. կարճառոտ մերջերումով՝ վերստին առանձին տողեր քաղելով Շիրվանզադեի գրառումներից. «Իգդիրի հայերի ... աչքերը... մեզ դիմավորեցին նույն տարակուսանքով, որով ճանապարհ էին դրել: «Այդ մարդիկ ու՞ր գնացին, ինչո՞ւ վերադարձան...»⁶⁰:

Եվ խմբի անդամները սկսում են ցրվել. «Տեր-Նիկողն ասաց. – Ես գնում եմ Թիֆլիս»: Անցնում են էջմիածին. «Նորից վայելեցի իմ բարեկամ Բաբկենի հյուրասիրությունը»: Գնում են Երևան, ապա Ալեքսանդրապոլ. «Վերադարձանք Ալեքսանդրապոլ: Մնում էր ամենագլխավորը: Դրա մասին նոր պիտի մտածեինք: Սակայն չար լուրերն արդեն կորցրել էին իրենց սրությունը: Բանասարկությունները անգոր էին եղել հայ զինվորի հավատարմության և քաջության հռչակը նսեմացնելու, և շատ բանասարկուներ իրենք էին խոստովանել իրենց սխալը: Այլևս ավելորդ էր մեր միսիան»⁶¹ (ընդգծումը մերն է. — ԱՆ. Զ.):

Այնուամենայնիվ, որոշում են գնալ Սարիղամիշ. և ճանապարհվում են Ղարս: «Անձամբ ես, – գրում է Շիրվանզադեն, – ունեի և մի ուրիշ նպատակ — տեսնել որդուս, որ հրամանատար Բ.–ի շտաբումն էր»: Այնուհետև՝ «Դեկտեմբերի տասնմեկն էր, երբ մենք հասանք Սարիղամիշ: ճիշտ նախընթաց օրն այն նշանավոր կռվի, որ տևեց մոտ երկու շաբաթ և որ այնքան ճակատագրական եղավ էնվեր փաշայի հանդուգն ավանտյուրայի համար»: Ապա հետաքրքիր տվյալներ. «Շարժումը (գաղթը. — ԱՆ. Զ.) սկսվել էր ռուս զորքերի Քեփրի-Քյոլից նահանջելու միջոցին, կեսգիշերին: Կազակներն ահագին օգնություն էին ցույց տվել կանանց և մանավանդ երեխաներին, տալով նրանց իրենց ձիերը, տաք վերնազգեստները և շատերին կերակրելով: Մի շարք կազակներ երեք, չորս օր պահել ու կերակրել էին երեխաներին մինչև նրանց ծնողների գտնվելը:

Գաղթականների ընդհանուր թիվն էր այդ ժամանակ ոչ ավելի, քան 8000 հոգի: ... Քահանան գանգատվեց գաղթականների ծուլության վրա: Զինվորական իշխանությունն առողջ տղամարդկանց առաջարկում է ոչ զինվորական գործ՝ օրական 1ռ. 40 կ. վարձով, հրաժարվում են աշխատելու, գերադասելով մուրացկանությունը»⁶² և այլն, և այլն:

⁶⁰ Նույն տեղում, էջ 529:

⁶¹ Նույն տեղում:

⁶² Նույն տեղում, էջ 530:

XXII դրվագը ևս սկսում է նվաստացնող այսանումներով, որից վերստին զերծ չեն մնում Խորեն եպիսկոպոսը և, իհարկե, Յովհ. Թումանյանը: Այսպես, վերջինս «հմուտ զինագետի խորհրդավոր դեմքով զննեց հրացանը, մի քանի անգամ կոթը հենեց ուսին, դետուղեն նշան դրեց և վերջն ասաց.

— Անպետք բան է: Ա՛խ, իմ մաուզեր...»⁶³:

Քիչ է մնում ասվի՝ մաուզերիստ Թումանյան...

Իսկ ինքն էլ՝ Շիրվանզադեն, Սարիղամիշի կայարանում հանդիպում է որդուն... Եվ՝ «Հանդիպումն ինձ այնքան չուրախացրեց, որքան տրտմեցրեց: Նախազգում էի, որ շուտով թուրքերը պիտի Սարիղամիշը կտրեն Միջինկերտից, այսինքն գեներալ Բ.—ի զորաբանակից, որ այդ ժամանակ գտնվում էր Միջինկերտից էլ 25 վերստ հեռու, թուրքական հողի վրա:

— Դու պիտի վերադառնա՞ս,— հարցրի ես սրտատրոփ:

— Պարտավոր եմ»:

Հաջորդ օրն էլ, ուրեմն, «— Օթոմոքիլը մի ժամում ինձ Միջինկերտ կհասցնե, և ես կլինեմ շտաբում»: Այդպես էլ որդին մեկնում է. նրանից լուր է ստանում «երեք շաբաթ անցած». պարզվում է նա «տասներկու օր գտնվել է մի կողմից ռուս, մյուս կողմից թուրք ռումբերի ու շրպանեղների տարափի տակ մի գեներալի և երկու գնդապետների հետ փակված Սարիղամիշի տնակներից մեկում»...

Իսկ իրե՞նք. «մենք վերադարձանք Թիֆլիս, հնարավորություն չունենալով կատարել մեր վրա դրված պարտականությունը...»⁶⁴:

* * *

Ալ. Շիրվանզադեի «Պատերազմի վայրերում» հուշերին կամ ուղեգրությանն ուշադիր հետևելիս՝ կարդալու ընթացքում և հետո, տպավորությունը լինում է անհասկանալի: Ծագում են բազմապիսի հարցեր, տարակուսանքներ, հեղիեղուկ մտածումներ և հարցադրումներ: Դրանք պարզաբանելու նպատակով էլ պայմանավորված էր նյութը ներկայացնելու բնույթը: Ընտրվել են որոշակի տողեր ու հատվածներ, որպիսիք քաղելով և դնելով կողք կողքի՝ թափանցիկ են դարձնում գրողի

⁶³ Նույն տեղում, էջ 531:

⁶⁴ Նույն տեղում, էջ 535:

քաղաքական կողմնորոշումը (օրինատացիան)՝ առանձին - առանձին կողմերով և եությամբ:

Օրինատացիան պարզորոշ ռուսական է՝ առաջին եջից վերջինը՝ առանց վերապահության՝ հաստատուն: Բայց և միաժամանակ թուրքական է: Երբեմն էլ առաջ է քաշվում ու շեշտադրվում «զիջելու» գաղափարը: Թե ինչպե՞ս և ինչպիսի՞, որոշակի չի ասվում, մնում է գուշակել: Եվ հենց այդ տեսակետից բնորոշ է, որ դեպքերի շարադրանքով Իգդիրից սկսած ուղևորությունը մինչև Դայար՝ պատերազմական իրադարձություններում գործում են միայն քրդերը: Իսկ թուրքերը մինչև Բայազետ և հետո չկան, ու ավերածություններ էլ չեն գործել...

Տեսադաշտում չեն և հայ կամավորականները, որոնց մասին տարածված չարախոսությունները (թե լքում են ճակատը և այլն) ստուգելու նպատակով էլ «Պատերազմի վայրեր» են մեկնել Շիրվանզադեի հետ Յովհ. Թումանյանը, տեր-Նիկոլը, Խորեն Եպիսկոպոս Մուրադբեկյանը և Երկու ուրիշ՝ արդեն պատվելի անձինք: Մինչդեռ, կրկնենք, թվարկված երեքը դրվագ առ դրվագ Շիրվանզադեի գրչով թունոտ ծաղրուծանակի կրակի տակ են: Թե հակոտնյա - հակադիր ի՞նչ պատճառներով, դարձյալ մնում է անմեկնելի: Ի դեպ, Թումանյանը «վրդովված» է եղել Շիրվանզադեի ակնարկի «զավեշտական տոնից ու մանրուքների նկարագրությունից»: «— Էս տմաշենը էն տոնով է գրում, կարծես թե հարսանիք է զմացել ու էնտեղից է վերադառնում... Ավերված երկիրը, ժողովրդի գաղթն ու կոտորածը տեսնողը մի՞թե էդ ձևով պիտի գրի: Աչքի առաջ մի ամբողջ ժողովուրդ է կոտորվում, կործանվում, իսկ նա ինչ-որ մանր, ծիծաղաշարժ դեպքեր է հիշում ու նկարագրում...»⁶⁵, — ասել է նա: Ն. Թումանյանի վկայությամբ, բանաստեղծը «մտածում էր... գրել ու հրատարակել իր ուղեգրությունները»⁶⁶, որը, սակայն, չի իրագործել:

Ինչևէ. վերադառնալով վերևի մտքին, ասենք, որ ստացվում է կամ մնում է մտածել, որ հենց թվարկված անձինք ու նրանց նմաններն են պատերազմ հայտարարել, և հիմա էլ «զիջելու» փոխարեն՝ պատճառ են քաջարի «ռուս կազակները»: Երկբայություն չկա. ստացվում է, որ Կովկասյան ռազմաճակատում երկու ճակատով Ռուսաստանը չէ պատերազմ հայտարարողը Թուրքիային՝ բոլոր միջոցներով բոլորքել -

⁶⁵ Ն. Թումանյան. Յովհեր և գրույցներ, Երևան, 1987, էջ 119:.

⁶⁶ Նույն տեղում:

բորբոքելով կամավորական շարժումը՝ հետն էլ վարկաբեկելով – չարախոսելով...

Նյութի շարադրանքից նաև հետևում է, որ Շիրվանզադեն տեղը տեղին գիտե ռուսական բանակի պատերազմական տակտիկան, գեներալներին, ռուսական զորքերի առաջ շարժվելը քայլ առ քայլ երկու ճակատով՝ թե Իգդիրի (խմբի անցած տեղանքով), և թե Սարիղամիշի: Սա տակտիկական կրկնությունն էր 1877 – 1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի, երբ Մ. Լոռիս-Մելիքովի և Յ. Լազարյանի հրամանատարությամբ ռուսական զորքերը գրավեցին Կարսը և Սարիղամիշը: Չայերը մասնակցել էին այդ պատերազմին ևս, սակայն ներկա պատերազմում առաջին իսկ մարտերից երկու ճակատում էլ կռվում էին հայ կամավորական զորախմբեր:

Վերհիշենք նաև, որ տակավին XIX դարի ռուս-թուրքական պատերազմների-ժամանակ ռուսական բանակն ամառը շրջապատում էր Կարսը կամ Էրզրումը, այնուհետև հեռանալով՝ հետը տանում հայության զանգվածներ: Ինչպես 1829-ին ջավախքահայությանը, այդ թվում՝ Վ. Տերյանի նախնիներին: Երևի թե վերջիններիս դասերով էլ ռուս-թուրքական հերթական պատերազմում հարազատ ժողովրդի ճշգրիտ կողմնորոշումները պատկանում են Վ. Տերյանին: Բալկանյան պատերազմի շեմից, ասես, աշխարհի հզորների, այդ շարքում ռուս-թուրքական շահատակությունների, փոխադարձ սպասելիքների, պատերազմական հանգամանքների ստույգ հաշվարկով՝ թախանձանքի հասնող հանդգնածությամբ հաստատելով-հաստատում էր, որ առանց միասնական համերաշխության, մտածված-ծանրակշիռ զգաստությամբ չգործելու դեպքում վերահաս պատերազմը հարազատ ժողովրդի համար լինելու է աղետալի: Գիտակցական ողջ կյանքը Մոսկվայում անցկացրած, բազմակողմանիորեն կրթված, լայնահայաց, լեհ և մերժբալթյան ուսանողության հետ մերձավոր շփումներով կոփված, տակավին 1905 թ. հեղափոխության-հակահեղափոխության միջոցին ուսանող հայ ընկերների հետ ծերբակալված Տերյանը՝ իր բնատուր գերզգայությամբ անկարելի էր, թե չզգար վերահաս ողբերգությունը: Մանավանդ որ սեփական վկայությամբ փաստացի ներկա է եղել Պ. Միլյուկովի խոստումներին՝ անգամ Յովի. Թումանյանի «Լուսավորչի կանթեղի» հոլովումով⁶⁷... Ուրեմն և ոչ միայն այդ մեկ, այլև «Մշակի» էջերում տպագրված քաղաքական զգաստ կողմնորոշումով գրելով, թե՝ «.... չէ՞ որ մեր ամբողջ ժողովրդին

⁶⁷ Վ. Տ երյ ա ն. Երկերի ժողովածու, հ. IV, Երևան, 1925, էջ 248:

անդառնալի, անսփոփելի աղետի վտանգ է սպառնում:

...Պարզ պետք է լինի մեզ ամենքիս համար, որ այսօր մեր կյանքի և մահու խնդիրն է դրված հրապարակի վրա»⁶⁸ և այլն, և այլն: Եվ, առհասարակ, անկարելի է, թե դավադիր այլևայլ նոտաներ չորսար ինչպես Միլյուկովի, այնպես էլ հասարակական ընդհանուր տրամադրության, մամուլ կոչվածի ամենօրյա «փրկարար» քարոզչական ոգորումներում ...

* * *

Այսպիսով՝ 1914-1919 թթ. մամուլում տպագրած հրապարակախոսական հոդվածներում և «Պատերազմի վայրերում» ակնարկ-հուշագրությունում նույն հարցերի շուրջ, ինչպես տեսանք, կան հակոտնյա, խճճված բազմաթիվ հանգույցներ, որոնց մանրագնին համեմատական քննությունն ու գնահատությունը, իրոք, դուրս է սույն աշխատության շրջանակից, և կարոտ է հատուկ ուշադրության ու սթափ մեկնաբանության...

⁶⁸ Նույն տեղում, էջ 198, 200:

ИЗ ПУБЛИЦИСТИЧЕСКОГО НАСЛЕДИЯ ШИРВАНЗАДЕ (1914–1919 гг.)

АНУШАВАН ЗАКАРЯН

Резюме

Одной из весомых и важных сфер творческого мира Александра Ширванзаде (1858–1935) является его публицистическое наследие 1914–1919 гг., до сих пор почти не знакомое широкой общественности. Опубликованные в печати того времени его статьи представляют определенный литературно-исторический интерес и имеют актуальное звучание. Освещаемые в них многочисленные и разнообразные вопросы национальной жизни злободневны и в наши дни. Это отголоски будней тяжелой исторической поры в жизни армянского народа 1914–1919 гг., свидетельства исторических фактов: живое, звучащее зеркало, отражающее положение народа, нравы и обычаи общественных слоев, большие и малые пороки, злоупотребления депутатов Национального Совета, взаимоотношения с соседними странами, партийные разногласия, самые различные культурно-интеллектуальные проблемы и т. д. Эти статьи – важные материалы для освещения по-новому истории армянского народа данного периода, содержат поучительные уроки и советы для современных историков, литературоведов, педагогов, публицистов, журналистов, партий и вообще деятелей культурно-гуманитарной сферы.

Жизненно важные для армянского народа вопросы затронуты и в очерке Ширванзаде “В местах войны”, написанном в 1915г.

FROM SHIRVANZADE'S PUBLICISTIC HERITAGE (1914–1919)

ANUSHAVAN ZAKARYAN

Summary

One of the ponderable and important spheres of Alexander Shirvanzade's (1858–1935) creative world is his publicistic heritage of 1914–1919 that has almost been unknown to the general public up to now. His articles published in the press of that time represent definite literary, historical interest, have actual sounding. A lot of various burning problems of national life existing nowadays, too, are elucidated in them. These are echoes of everyday hard historical time in the life of the Armenian people in 1914–1919, evidences of historical facts: living, sounding mirror, reflecting the people's condition, customs, morals and manners of social strata, big and small vices, abuses of deputies of National Soviet, relations with neighbouring countries, party disagreements, the most different cultural-intellectual problems, etc. These articles are important materials for interpretation of the history of the Armenian people of that period in a new way. They contain instructive lessons and advice for modern historians, literary critics, teachers, publicists, journalists, parties and men of cultural-humanitarian sphere, in general.

Questions of vital importance for Armenian people are also touched in Shirvanzade's essay "In the Places of War", written in 1915.

Շ Ի Ր Վ Ա Ն Ջ Ա Դ Ե Ի
Հ Ր Ա Պ Ա Ր Ա Կ Ա Խ Ո Ս Ա Կ Ա Ն
Հ Ո Դ Վ Ա Ծ Ն Ե Ր Ը

ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐԸ

Եթե ճիշտ է “Ես” լրագրի հաղորդած լուրը, թե իբր Բաքվի հարուստներից մեկը վճռել է մոտ մի միլիոն ռուբլի նվիրաբերել հայ կուլտուրական կարիքների համար, ցանկալի է, որ այդ վճիռը սոսկ վճիռ չմնա, ինչպես պատահել է շատ անգամ հայ կյանքում, այլ իրագործվի կարելույն չափ շուտ:

Մի միլիոնը պատկառելի գումար է: Նրանով կարելի է մի համեմատաբար խոշոր գործ կատարել ազգային քաղաքակրթության համար: Բայց ցանկալի է, որ գումարը գործադրվի մի և միայն մի և ոչ տասնյակ նպատակների համար: Մեր բարեգործները սովորաբար, նախքան որևէ գումար նվիրելը, երկար ժամանակ տատանվում են ո՞ր նպատակին հատկացնել իրանց նվերը: Արդարև օգնության կարոտ տարրեր շատ կան կյանքում, և նվիրատուն եթե վաղուց ի վեր հափշտակված չէ մի որոշ գործով, շփոթվում է և չգիտե շատերի մեջ ո՞րն ընտրել օգնության համար:

Սկստի՛չ Սանասարյանը հափշտակված էր թուրքահայաստանում մի միջնակարգ հայ դպրոց ունենալու մտքով, և նա իր ամբողջ կարողությունը — մոտ կես միլիոնի — կտակեց այդ նպատակին: Եվ ահա այսօր Սանասարյան դպրոցը մեր ամենաօգտակար և ապահով հաստատություններից մեկն է: Ենովք Բուդաղյանը կտակեց երկու անգամ ավելի գումար, քան Սանասարյանը, բայց բաժանեց տասնյակ կտորների: Բարեբախտաբար մի խոշոր կտոր հատկացրեց Բաքվում նոր հայ եկեղեցի կառուցանելուն, և այսօր Բուդաղյան բարեգործությունների մեջ ամենափառահեղը այն հոյակապ շինությունն է, որ թագավորում է քաղաքի կենտրոնում: Հանգուցյալ Ալ. Մամբաշյանն առանց որոշ ցուցմունքի և միայն բարեգործության ընդհանուր խոսքով կտակեց մի համեմատաբար խոշոր գումար, որ նույնպես կտոր-կտոր եղավ և որի հետևանքներն այժմ գրեթե անզգալի և անշոշափելի են: Շատ հիմնարկություններ ստացան բաժին, բայց ոչ մի քիչ թե շատ աչքի ընկնող գործ չստեղծվեց հանգուցյալի կտակած գումարից, որ շատ էլ փոքր չէր:

Նույնը կարելի է ասել և ուրիշ շատ ավելի մեծ կամ ավելի պակաս գումարների մասին, որոնք նվիրված կամ կտակված են առանց որոշ նպատակի:

Արդ, իմ համոզմունքով, Բաքվի առայժմ անհայտ բարեգործը շատ մեծ սխալ կգործի, եթե իր խոշոր նվերը բաժան-բաժան անէ: Հարկավոր է շատերի մեջ ընտրել մի և միայն մի գործ և այդ գործին հատկացնել նվիրվելիք գումարը, այնպես, ինչպես ժամհարյան եղբայրները իրանց ոչ պակաս առատ նվիրաբերությունը հատկացրին մի գործի:

Անկասկած՝ օգնության արժանի շատ գործեր կան կանգնած անհայտ բարեգործի առջև, և, երևի, նրա խորհրդատուների թիվը փոքր չէ: Բայց կա մի մեծ գործ, որ վաղուց է սպասում իր հերթին և որ վաղուց է ապացուցել, որ առանց իր գոյության հայը երբեք չի կարող համարվել քաղաքակրթության ճանապարհի վրա կանգնած:

Դա ազգային թատրոնն է: Ժամանակ է վերջապես զգալու և հասկանալու, որ միայն դպրոցը չէ, որ ապահովում է ազգերի քաղաքակրթությունը, որ կան եթե ոչ նրանից բարձր, զոհե նրա հավասար տարրեր առաջադիմության — թատրոն և գրականություն, առանց որոնց՝ եթե կամենաք՝ դպրոցի գոյությունն անգամ ապարդյուն է:

Հարկավոր է ունենալ ազգային թատրոն, և այդ ազգային թատրոնը ռուսահայերի համար պիտի կառուցվի ուրիշ ոչ մի տեղ եթե ոչ Թիֆլիսում: Սխալվում են չափազանց նրանք, որոնք Բաքուն հակադրում են Թիֆլիսին: Բաքուն երբեք ռուսահայերի համար քաղաքակրթության կենտրոն չէ եղել և չէ կարող լինել: Ինչո՞ւ: Որովհետև նա նախ և առաջ հայության կենտրոն չէ: Նա լոկ հայկական գաղութ է, շրջապատված թուրք ազգաբնակչությամբ: Բաքուն թուրքական քաղաքակրթության կենտրոն կարող է լինել, բայց հայկական՝ երբեք: Ես համաձայն եմ, որ Բաքվում կա հայ մտավորականություն և գուցե շատ բաներում անհամեմատ բարձր, քան Թիֆլիսի հայ մտավորականությունը: Բայց նրա գոյությունն այնտեղ, մանավանդ ավելացումը ավելի քան երկբայելի է: Այսօր նա կա, վաղը կարող է չքանալ: Նրա գոյությունը կախված է նավթից: Այնինչ՝ Թիֆլիսը միշտ ձգտել է դեպի ինքը հայ մտավորականությանը և ձգտում է մանավանդ այժմ. բացի դրանից, Թիֆլիսի հայ ազգաբնակչության թիվն երբեք անգամ ավելի է Բաքվի հայ ազգաբնակչության թվից:

Ահա ինչո՞ւ, եթե իմ առաջարկությունը բախտի բերմունքով արժանանա անհայտ բարեգործի ուշադրությանը և ընդունվի, ազգային թատրոնը պետք է կառուցվի ուրիշ ոչ մի տեղ, եթե ոչ Թիֆլիսում: Եվ եթե կառուցվելու է նա մի երջանիկ օր, պիտի կառուցվի շուտով: Քաղաքի

կենտրոնում միայն մի կտոր ազատ տեղ կա, որ հարմար է ազգային թատրոնի համար: Այդ տեղը, ինչպես ինձ հաղորդեցին, վաճառվում է: Ցավալի կլինի հարմար դեպքը ձեռքից բաց թողնել:

Կփափագեի, որ բաքվեցի բարեգործը ուշադրության առներ իմ առաջարկությունը, և ով գիտե գուցե այն ժամանակ մենք, վերջապես, ունենանք այն, ինչ որ վաղուց, շատ վաղուց պետք էր, որ ունեցած լինեինք:

Ազգային թատրոն — ահա ամենակարևորը և ամենահերթականը:

«Մշակ», 3.IV.1914:

ՆԱ ԱՐԴԵՆ ՀԱՂԹՎԵԼ Է

Ի՞նչ կլինի Փարիզի վիճակը, եթե, Տերը մի արասցե, կատարվի անհնարինը, այն է՝ եթե ժամանակակից վանդալները, գերմանացիները, ներս խուժեն հրաշալի քաղաքը:

Ես ասում եմ՝ գերմանացիները և ոչ պրուսացիները, հակառակ ընդունված սովորության, որովհետև այժմ չկա պրուսացի, բավարացի, սաքսոնացի, այլ կա վայրենիների մի լեգեոն, որ կոչվում է գերմանական զորք, նրանք բոլորը բաղկացած են միևնույն խմորից, և այժմ անհնարին է որոշել, ո՞րն է ավելի բիրտ ու դաժան՝ պրուսացի՞ն, թե՞ մյուսները:

Լրագիրները հաղորդեցին, որ ֆրանսիական խոհեմ կառավարությունը կարգադրել է նշանավոր Լուվրի գեղարվեստական անգուգական իրերը փակել պողպատաշեն նկուղներում «համեմայն դեպս»:

Ինձ թվում է, որ դրանից ավելի զորեղ բարոյական ապտակ չէր կարելի հասցնել գերմանական տխրահռչակ քաղաքակրթությանը: Ասել է, որ մարդկության պարծանք Ֆրանսիան համոզված է, որ իր թշնամին անազնիվ է, գիտե, որ եթե նա մտնե գեղարվեստների մայրաքաղաքը, չի խնայելու թրի և հրի մատնելու նույնիսկ աստվածներին:

Եվ Ֆրանսիան ունի կատարյալ իրավունք այդպես կարծելու: Չէ՞ որ վանդալները այրեցին Լուվրի հռչակավոր գրադարանն ու թանգարանը:

Աստված իմ, այրել 20-րդ դարում գրականություն, պատմություն, արվեստներ. կարո՞ղ է լինել ավելի զորավոր ապացույց վայրենության:

Ասում են, այնուամենայնիվ գերմանացիք կուլտուրական ազգ են, որովհետև նրանք տվել են Գյոթե, Շիլլեր, Լեսինգ, Բեթհովեն, Հեգել, Մարքս

և այլն: Թող այդպես լինի, բայց ու՞ր է այդ անմահների թողած հետքը, նրանց ազդեցությունը սերունդների վրա. ու՞ր են նրանց ժառանգները, որ պաշտպանեին իրանց հայրերի և նախահայրերի պատիվը:

Ահա նրանք: Մարքսի ժառանգը վազում է Իտալիա՝ այնտեղի սոցիալիստներին գրգռելու, որ զենք բարձրացնեն իրանց ֆրանսիացի, անգլիացի, ռուս և բելգիացի «ընկերների» դեմ: Յեզեյի ժառանգը ժողովում է իր ազգակից գիտնականներին և հորդորում է ու աջողում է համոզել վերադարձնել թշնամի երկիրների գիտնական ընկերություններից ստացած իրանց պատվո նշանները: Գյոթեի և Շիլլերի աշակերտները նույնպես ժողովվում են և միաձայն որոշում այսուհետև ոչինչ չթարգմանել թշնամի ազգերի գրականություններից և առհասարակ արտաքսել այդ գրականությունները Գերմանիայից:

Իսկ Յուլիանը, Գերմանիայի այժմյան պարծանք դրամատուրգը, ներքող է կարդում իր հայրենիքի բիրտ զորության և պահանջում է, որ նա իր թշնամիների արյունը ծծե մինչև վերջին կաթիլ: Եվ այդ այն ժամանակ, երբ թշնամի երկիրների գրողները, փիլիսոփաները, գիտնականները համբերամիտ վեհամձմությամբ և տխուր դիտում են ազգերի արյան հեղեղը, ողբալով հավասար վշտով թե իրանց հայրենակիցների և թե թշնամիների անհուն կորուստները: Եվ այդ այն ժամանակ, երբ անգլիացին նախկին ոգևորությամբ և առանց որևէ թշնամական գրգռման լսում է Բեթհովենի և Վագների երկերը:

Մի՞թե կարող է լինել ավելի մեծ ապացույց փոքրոգության և ավելի մեծ ապացույց վեհամձմության:

Գլխավորն այն չէ, թե պատերազմը ո՞ր կողմի հաղթությամբ կվերջանա: Գլխավորն այն է, որ Գերմանիան արդեն հաղթվել է բարոյապես և կործանվել պատմության առաջ:

«Մշակ», 30. VIII. 1914:

,

ԱՅԼ ԿԵՐՊ ՎՏԱՆԳԱՎՈՐ Է

Կարդացի “Ծափ” լրագրի խմբագիր պ. Քրիստափոր՝ Վերմիշյանի հոդվածը, որ առաջարկում է ռուսահայ ժողովրդին ներկա հսկա պատմական վայրկյանին թողնել ամեն անջատական դատողություն և

արտահայտվել ինչպես մի ամբողջական մարմին, ինչպես որոշ բարոյական տարր պարզ ընդգծված համակրանք ու հակակրանքով, որոշ աշխարհայացքով և, վերջապես, որոշ պահանջներով: -

Այն անկեղծ հայրենասիրական զգացումը, որով տոգորված է շնորհալի հրապարակախոսի առաջարկը, և այն առողջ իմաստը, որ պարունակվում է նրա մեջ, ըստ ամենայնի առաջարկը դարձնում են ոչ միայն ընդունելի, այլև համակրելի, այլև պարտավորական:

Ազգերի կյանքում լինում են մոմենտներ, երբ նրանց բարոյական կորուվի և քաղաքակրթության չափը որոշվում է միանգամից, առանց երկար ուսումնասիրության: Ընթացիկ դեպքերը ինչպես պրոժեկտոր իրանց զորավոր ճառագայթները հանկարծակի սփռում են ազգերի և ժողովուրդների դարերի ընթացքում ամբարած բարոյական գանձի վրա: Եվ միանգամից լուսավորվում է այն, ինչ որ մինչև այդ ժամանակ մութ էր, անորոշ, քառասական և վիճելի:

Այդպիսի մի մոմենտ է ապրում այժմ համայն մարդկության գրեթե կեսը, զոմե նրա ամենաքաղաքակիրթ բաժինը: Ներկա պատերազմը եղավ այն հսկայական պրոժեկտորը, որ մի հոսանքով լուսավորեց մեզ համար ամբողջ տասնյակ մեծ և փոքր ազգերի հոգեկան ու բարոյական կարողությունը:

Ասում են հոգեկան և բարոյական, վասնզի քաղաքակրթության տեսակետից այդ գանձն անսահման ավելի գնահատելի, զորավոր է, քան քնդանոթների ուժը:

Եվ մենք տեսանք մեծ ազգերի հետ նաև փոքր ազգերի մեջ բարոյական անակնկալներ, որ մեզ ապշեցրին և հիացրին իրանց մեծությամբ: Մենք տեսանք ռուս ազգի մեծությունը Պետական դումայի և Պետական խորհրդի պատմական ժողովների մեջ: Մենք տեսանք անգլիական ազգի բարոյական հզորությունը պատերազմ հայտարարելուց առաջ պառլամենտի մի երկու հակառակ կուսակցությունների միահամուռ և անխտիր կատաղության մեջ դեպի Գերմանիայի բիրտ վարմունքը խաղաղասեր Բելգիայի ճակատագրի վերաբերմամբ: Այնուհետև մենք տեսանք ֆրանսիական ազգի վեհությունը՝ երբ բարձր կառավարչական սեղանի քով ծայրահեղ բուրժուալի և մոլեռանդ միապետականի հետ բազմեցին և կատաղի սոցիալիստները: Վերջապես, մենք տեսնում ենք և փոքր ազգերի, բելգիացիների, սերբերի և չեռնոգորցիների հոգեկան մեծությունը ընդհանուր վտանգի առջև:

Պատմական մեծ վայրկյանին ազգերը մոռացան իրանց ներքին երկպառակությունները և դրանով ցույց տվեցին իրանց քաղաքակրթու-

թյան բարձր աստիճանը:

Բոլորովին ճիշտ է պ. Վերմիշյանի միտքը, թե ռուսահայ ժողովուրդը՝ լինելով Մեծ Ռուսաստանի մի անբաժան մասը, այնուամենայնիվ մի որոշ ամբողջություն է: Անխզելի կապված լինելով ռուս ազգի հետ քաղաքականորեն և բարոյապես, այնուամենայնիվ ունի իր որոշ դիրքը՝ ոչ իբրև քաղաքական առանձին մարմին, քաղ լիցի, այլ իբրև բարոյական մի ամբողջություն, ինչպես լեհացիները:

Եվ իբրև այդպիսի մի ամբողջություն ներկա պատմական ընթացքում, երբ կատարվող խոշոր դեպքերը շոշափում են նրա շահերը, այսօր կողմնակի, գուցե վաղը անմիջապես, պարտավոր է արտահայտվի իր ամբողջությամբ: Ասել է՝ պետք է մոռացվեն ներքին խռովությունները, կուսակցական երկպառակությունները և մամավանդ անձնական համակրանք ու հակակրանքները, և հրապարակ դուրս բերվեն ամբողջության համակրանքը, վշտերը և սպասումները:

Չէ կարող լինել դրանից ավելի խելացի, ավելի ժամանակակից, ավելի պարտավորական առաջարկ:

Եվ այն անհատը կամ կուսակցությունը, որ կբողոքե այդ առաջարկի դեմ կամ կհակառակե, չէ կարող համարվել ո՛չ հայրենասեր, ո՛չ ժողովրդասեր, ո՛չ խելացի և ո՛չ նույնիսկ բարոյական:

Այդպիսի անհատների կամ կուսակցությունների առանձնակի կամ խմբային գործունեությունը կարող է առաջացնել ահագին սխալներ, նույնիսկ վտանգ հայ ժողովրդի շահերին: Ուստի ամեն մի անկեղծ հայրենասեր պարտավոր է խափանել ամեն մի այդպիսի անջատական քայլ:

«Մշակ», 3.IX.1914:

ԴԱՏԱՎՃԻՐՆ ԱՆՔԱԿՏԵԼԻ Է

Շահերի խոշոր ընդհարման միջոցին պարզվում է ազգերի, ինչպես և անհատների հոգեբանությունը: Բարոյական մեծության չափը որոշվում է, երբ ճակատագիրն է ենթարկված ահեղ վտանգի:

Սովորական կացության ժամանակ, երբ կյանքի անիվը գլորվում է առանց խորտակիչ խոչընդոտների հանդիպելու, մի միապաղաղ շղարշ

սփռվում է հոգիների ու սրտերի վրա և թաքցնում նրանց արմատական թերություններն, ինչպես և առավելությունները: Միայն ընտրյալներին է պարգևված այդ շղարշը սուր հայացքով թափանցելու և թաքնված խորդուբորդները տեսնելու բարձրագույն ընդունակությունը:

Ավելի քան 40 տարի է, որ մտածող մարդկության 99% - ը, որ ամենուրեք թերատեսներից է բաղկացած, միաձայն գոռում, աղաղակում էր, թե գերմանական ազգն առաջինն է աշխարհիս երեսին ոչ միայն իբրև ռազմական ուժ, այլև իբրև քաղաքակրթության գործոն: Արտաքին փայլից կուրացած՝ չէին կարողանում տեսնել այն բարոյական նեխվածքը, այն մտավոր կազմալուծումը, այն հոգեկան զազրելի ապականությունը, որ թաքնված էին այդ շլացուցիչ արտաքինի տակ:

Գոռում ու աղաղակում էին, թե Ֆրանսիան է այլասերված, նա է ապականված, նրան է սպառնում կործանում ֆիզիկական և բարոյական: Փաստերը միմյանց ետևից այլ բան էին ցույց տալիս, անբարոյականության վիճակագրությունը անկման կշիռը դեպի Գերմանիան էր թեքում, այնուամենայնիվ ընդմեջ մի անգամ ստեղծված էր և կեղծիքը մնում էր անհերքելի մույնիսկ առողջ մտքի տեր մարդկանց համար:

Եվ հարկավոր էր մի համաշխարհային սոսկալի արյունհեղություն, որպեսզի վաղուց հայտնված ճշմարտությունը, վերջապես, մարդկության թերատես մեծամասնության համար դառնար ըմբռնելի:

Մեղադրում են Վիլհելմին պատմական հսկայական հանցանքի մեջ և նրան են համարում տիրող դժբախտության պատճառը: Բայց չէ՞ որ խելառ հանցավորը իր ազգի հարազատ զավակն է: Չէ՞ որ ահա քառորդ դար է այդ ազգը պաշտում է նրան կուռքի պես և հրճվում նրա յուրաքանչյուր ժեստից: Չէ՞ որ նույն ազգը սկսած առաջին փիլիսոփայից մինչև վերջին ռամիկը այժմ իսկ, երբ արդեն ակնհայտ է նրա հանցանքը, դարձյալ ծափահարում է նրան և խրախուսում մեկը մյուսից ավելի այլանդակ գործողություններով ու ցույցերով:

Ո՞ր մնաց գերմանական փառաբանված կուլտուրան, ինչո՞ւ նա չի բռնում համաշխարհային չարագործի ձեռքը և բարձրաձայն գոռում. «Բավական է, կանգ առ, դու դեպի անդունդ ես քաշում մեզ»:

Հավանական է, որ այդ ազգի դանդաղ միտքը մի օր, վերջապես, արթնանա և ասե՛ այն, ինչ որ վաղուց պիտի ասեր: Բայց միգուցե այն ժամանակ այլևս ուշ լինի: Գերմանիան արդեն բարոյապես կործանվել է մարդկության աչքում, նրա ընդմեջ իբրև կուլտուրական ազգի արդեն ապականվել է պատմության համար և այլևս դժվար է ձեռք բերել նախկին կեղծ հռչակը: Բայց ցանկալի է և՛ նրա ֆիզիկական կործանումը իբրև մեծ

պետության: Այս է պահանջում մարդկության ապահովությունը, այս են պահանջում և՛ բնության օրենքները, որոնց դատավճիռն անքակտելի է :

«Աշակ», 7.IX. 1914 :

ԾՆՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՏԻԺ

Մայրաքաղաքի լրագիրները միաբերան և արտասահմանից վերադարձողները միաձայն հաստատում են, որ Ֆրանսիայում պատերազմը ծագելու օրից տիրում է այնպիսի լուրջ անդորրություն, որի նմանը անկարելի էր երևակայել մի դյուրագգաց հարավային ազգի համար: Պետությունն ու ժողովուրդը, մեծն ու փոքրը, բանվորն ու բուրժուան խղճի լիակատար հանգստությամբ դիտում են պատերազմի դաշտում տեղի ունեցող դեպքերը, որոնք պիտի վճռեն ազգի ճակատագիրը: Միևնույն ժամանակ, հարկավ, ոչ ոք չէ ծուլանում իր հայրենասիրական պատքը կատարելու:

Հակառակն ենք կարդում ու լսում Գերմանիայի մասին: Երկրում չքացել է մի կողմից գերման ցեղի փառաբանված սառնասրտությունը, մյուս կողմից ամբարտավանությունը: Տիրում է մի ներվայնություն, որ հավասար է ահաբեկության:

Ի՞նչ է պատճառը, որ երկու տարբեր ցեղերի հոգեկան տրամադրությունը ճակատագրային պայքարի միջոցին արտահայտվում է իրանց ցեղական բնույթներին տրամագծորեն հակառակ ուղղությամբ: Ինչո՞ւ ֆրանսիացին, որ համարվում էր դյուրաբորոքը, հիվանդոտ, այլասերված, թույլ և նույնիսկ երկչուտ, այդքան հոգեպես զորեղ և անընկճելի է ճակատագրի այդ սոսկալի փորձանքի մեջ: Եվ ինչո՞ւ գերմանացին, որ համարվում էր խոհուն, պաղարյուն, առողջ, զորեղ, այդքան տկար է և անհանգիստ տագնապալի մոմենտին:

Պատճառը այնքան հասարակ չէ, որքան գուցե կարծվում է: Պատճառը միայն ամասնական երկյուղը չէ, այն սարսափը, որ ներշնչում է ազգերին, ինչպես և անհատներին կյանքի և մահի պայքարը: Ֆրանսիական ազգի գոյությունը նույնչափ վտանգի է ենթարկված, որչափ և գերմանական ազգի գոյությունը: Հետևաբար պարտության ուրվագիծը պետք է հավասար ահաբեկեր երկու ազգերին ևս, եթե ոչ ֆրանսիացուն ավելի, քան գերմանացուն: Այն ինչ՝ մի կողմը, որ ըստ իր

հոգեկան խառնվածքի՝ պետք է լիներ ավելի ներվային, հանգիստ է, մյուս կողմը, որ ըստ իր հոգեկան խառնվածքի՝ պետք է ավելի անդորր լիներ, հուզված է:

Վխավոր պատճառը հոգեբանական է: Ազգերի հոգեբանությունը նույնն է, ինչ որ անհատներինը: Երբ երկու անհատներ կռվում են, հոգեկան գորությունը միշտ այն կողմն է, որ իրան արդար է զգում: Թող նրա բռնցքը լինի ոչ այնքան զորեղ, որքան հակառակորդինը, նրա հարվածները խղճի հանգստությունից ստանում են առանձին մի պաշտպանություն, որ չունի նա, որի խիղճը հանգիստ չէ, որ իր մեջ է զգում կռվի սկզբնապատճառը:

Երբ Վիլհելմը պատերազմական մանիֆեստների մեջ այնպես անարդարաբար պատերազմի մեղքը ծագում էր իր հակառակորդի վրա, երբ նա ասում էր, թե Գերմանիան երբեք ագրեսիվ ձգտումներ չէ ունեցել և միշտ պաշտպանել է խաղաղության սկզբունքը, շատ լավ գիտեր իր խոսքերի արժեքը: Այլ կերպ նա խոսել չէր կարող իր գործերին ու ազգին ուժ և ոգևորություն ներշնչելու համար: Նա այնքան պարզամիտ չէր, որ ցույց տար ամբոխին իր ձգած ձեռնոցը: Նա գիտեր, որ եթե ճշմարտությունն ասե, գերմանացի զինվորի բազուկը մի աստիճան պիտի թուլացնե, վասնզի այն բազուկն է ավելի զորեղ, որ ավելի արդար է:

Բայց ճշմարտությունը հոսուն ջուր է, որ վաղ թե ուշ գտնում է իր ճիշտ ուղին: Այս անգամ նա ավելի վաղ գտավ, քան կարծում էր Վիլհելմը: Գերմանացի ժողովուրդը զգաց իր թագակիր պետի սուտը: Նա տեսավ, որ ոչ ոք չէ կանցցել իր հանգիստը խռովել, ոչ Ֆրանսիան, ոչ Անգլիան և ոչ մանավանդ Ռուսաստանը: Նա տեսավ, որ իր ամբարտավանությունն է պատերազմի իսկական պատճառը, մի անօրինակ ամբարտավանություն, որի նմանը դեռ պատմությունը չէ տեսել և որի կատարյալ մարմնացումը իր թագակիր պետն է:

Եվ երբ նա զգաց և ըմբռնեց, նրա խիղճը կորցրեց իր անդորրությունը: Արդարության ուրվականը կանգնեց նրա առջև իր ահեղ կերպարանքով և ասաց. «Մեղավորը դու ես, դու էլ պիտի կրես քո պատիժը»: Ահա գերման ժողովրդի անհանգստության իսկական պատճառը: Նա բնազդաբար զգում է, որ ճշմարտությունը անհաղթելի է: Նա զգում է, որ իր անխոհեմ, գոռոզ և արկածասեր պետի գործած պատմական հոյակապ հանցանքի իսկական գործոնն ինքն է: Այս գիտակցությունն է, որ նրան գրգռում է: Անարդար խիղճը բորբոքվել է և տանջում է նրան:

ՊԵՏՔ Ե՝ ՏՄԼ ԱՎԵԼԻ

Այսօր, կիրակի, պիտի կայանա Կովկասյան Հայոց Բարեգործական ընկերության արտակարգ ընդհանուր ժողովը:

Ընկերության խորհրդի ցրած հրավիրակոչի մեջ ասված է, որ ժողովի քննությանը պիտի առաջադրվի, թե ի՞նչ ձևով և ձեռնարկություններով պետք է մասնակցե ռուսահայ ազգաբնակչությունը «իբր մի ամբողջություն» վիրավորված գինվորների օգնության և պատերազմ գնացած պահեստի գինվորների ընտանիքների նյութական ապահովության գործում:

Ավելի քան համոզված եմ, որ այդ կոչը արծագանք է բովանդակ հայության բուռն զգացման դեպի մեր ընդհանուր հայրենիքը, Ռուսիան, որ իր ազնիվ դաշնակիցների հետ կռիվ է մղում հանուն արդարության, իրավունքի և քաղաքակրթության՝ բռնակալության, կոպիտ ուժի և վայրենության դեմ:

Հոգեկան ջերմ փափագով և վերջնական հաղթությունը տանելու մեծ հույսով՝ մենք պատերազմի դաշտն ուղարկելով այն, ինչ որ մեզ համար ամենաթանկն է, մեր ծաղիկ երիտասարդությանը, մի վայրկյան անգամ չպիտի տատանվենք նյութական զոհաբերության առջև:

Պետք է լինել շիտակ և անկեղծ. այն, ինչ որ այժմ արել են հայերը նյութապես, համեմատաբար քիչ է, մինչև անգամ շատ քիչ: Ինչո՞ւ չասել՝ ռուսահայ ազգաբնակչությունը ունևոր է: Թող ինչ ուզում են ասեն լավկանները, նյութական ապահովության կողմից նա առաջին տեղն է բռնում Կովկասի ազգաբնակչությունների մեջ: Դա մի փաստ է, որ միայն կեղծ համեստությունը և մտավոր երկյուղը կարող են հերքել:

Արդ, մի ազգաբնակչություն, որ ամենից ունևոր է, բարեգործության մեջ ամենից առատածեռնը պիտի լինի: Հայը ժլատ չէ: Այդ նա շատ անգամ է ապացուցել: Դեռ մինչև այսօր ոչ մի կովկասյան ազգաբնակչություն իր բարեգործությամբ, իր առատ ազգային ու հասարակական նվիրաբերություններով չէ կարողացել հավասարվել հայ ազգաբնակչությանը և հազիվ թե երբևիցե հավասարվի: Հայն է, որ իր հարևան ազգաբնակչություններին սովորեցրել է բարեգործություն:

Այդ էլ մի փաստ է, որ կույրերը կարող են չտեսնել:

Եվ ահա մի ժողովուրդ, որ ունի միջոց, ունի զգացում, ունի զգայուն սիրտ, այս անգամ ևս, մանավանդ այս անգամ, պետք է առատածեռնու-

թյան սքանչելի օրինակը տա իր հարևան ազգաբնակություններին ոչ միայն այն պատճառով, որ նա նյութապես ավելի ապահով է, այլև այն պատճառով, որ իր քաղաքակրթությամբ ևս առաջին տեղն է բռնում Կովկասում:

Մենք հեռու ենք պատերազմի դաշտից: Մենք չենք տեսնում նրա արհավիրքը: Բայց վաղը մյուս օրը մեր քաղաքները կլցվեն վիրավորներով, և մենք կզգանք այն ժամանակ, թե որքան մեծ է այդ արհավիրքը: Արյան տեսքը կտա մեզ մարդկային տառապանքների պատկերը, և մենք որքան սառնարյուն լինենք, որքան ևս բթացած լինեն մեր զգացումները, չենք կարող չհուզվել, չտառապել, չլալ: Հապա ինչպե՞ս չաշխատենք մեր հարազատ զավակներին մխիթարելու, նրանց տանջանքները թեթևացնելու, բարոյական և նյութական միջոցը կանխավ ապահովելու:

Կարիքն անհուն է, մեծ պետք է լինի և՛ զոհաբերությունը: Կրկնում եմ, այն, ինչ որ արել են մինչև այժմ իմ հայրենակիցները, շատ քիչ է: Քիչ են արել բաքվեցիները, քիչ է գավառների արածը, քիչ է մանավանդ Թիֆլիսի հայերի արածը: Համեմատաբար չնչին է և այն, ինչ որ վճռել է անել Թիֆլիսի վաճառականությունը:

Այսօր փորձի օր է: Բարեգործական ընկերության դահլիճում պիտի քննության ենթարկվեն մեր սրտի լայնությունը և մտքի ընդարձակությունը: Աշխատենք այդ փորձից դուրս գալ պարզերես, համարձակ: Աշխատենք լինել արդար մեր խղճի առջև: Եթե չտանք այն, ինչ որ պարտավոր ենք և կարող ենք տալ, պատմությունը նախատինք կկարդա մեզ, օտարները կծաղրեն մեզ, և այն ժամանակ իրավունք չենք ունենա ազգերի շարքում ազգ ճանաչվելու:

«Մշակ», 14.IX.1914:

ԱՍԵՆՔ ՄԵՐ ԱՍԵԼԻՔԸ

— Ներկա պատերազմը քաղաքակրթության, իրավունքի և ճնշված ազգերի պատերազմ է անիրավության, անխղճության և բռնակալության դեմ:

Այսպես են ասում անգլիական պաշտոնական և ոչ պաշտոնական մարմինները, երբ հարկավոր է լինում բացատրություն տալու, թե ինչու՝

Մեծն Բրիտանիան միլիոնավոր զորք է պատրաստում ցամաքն ուղարկելու: Նույնն են կրկնում և ֆրանսիական պետությունը, պառլամենտը, մամուլը: Եվ ամենից առաջ, ամենից ահեղ հնչեց այդ մասին ռուսական հաղթական բանակը իր Գերագույն Հրամանատարի պատմական անմահ կոչով լեհացիներին:

Արդ, քանի որ այդպես է, քանի որ մեծ ազգերի ծայրը փոքր ազգերի համար ամենագոր է, ավելի քան արժանի խորին հավատի, քանի որ մեծի հանդիսավոր խոստումը փոքրի համար չէ կարող չլինել անխախտելի և սուրբ, մնում է, որ յուրաքանչյուր ճնշված ու հալածված ազգ ասպարեզ գա և բաց անելով իր կուրծքը, ցույց տալով իր վերքերը ազատարարներին ասե.

— Դուք տառապյալների համար եք կռվում, ահա, նայեցեք, ես ևս տառապյալ եմ, ես ևս տանջվել, հալածվել, ես ևս արժանի եմ ձեր ուշադրությանը:

Եվ ո՞ր ազգն է ավելի հարվածներ կրել, որի՞ իրավունքներն են այնքան ոտնակոխ եղել, որի՞ սրբություններն են այնպես սրբապղծվել, որի՞ կանայք են այնչափ բռնաբարվել, որի՞ երեխաներն են այնքան սրախողխող եղել, որի՞ պատմությունն ունի այնչափ արյունոտ էջեր, և, վերջապես, ո՞ր ազգն է այնքան կռվել իր թույլ ուժերով քրիստոնեության, արդարության, իրավունքի և քաղաքակրթության համար, որքան հայ ազգը:

Այո, ոչ մի ազգ այնքան, որքան հայ ազգը: Թող ազատարարները չմոռնան պատմության խորքերը, կարիք չկա. մեր բազմաչարչար մարմնից հոսող արյունը դեռ շատ թարմ է, դեռ նրա շոգին չէ չքացել:

Եվ մենք պիտի բաց անենք մեր կուրծքը, ցույց տանք ազատարարներին մեր վերքերը և պահանջենք այն վարձը, որ վաղուց ենք վաստակել ոչ միայն մեր արյունով, այլև քրիստոնեությանն ու ժամանակակից քաղաքակրթությանն արած ծառայություններով: Ողորմությո՜ւն: Ոչ, մենք արհամարհում ենք մուրացկանությունը, մենք պիտի պահանջենք իրավունքի գնահատություն, դառն աշխատանքի վարձատրություն: Մենք պիտի ասենք, որ եթե կա մի ազգ, որ ամենից ավելի է ընդունակ ժամանակակից եվրոպական քաղաքակրթությունը խավար Ասիայի խորքերում տարածելու, այդ մենք ենք: Մենք պիտի ապացուցանենք, որ եթե կա ասիական փոքր ազգերի մեջ մեկը, որ ամենից աշխատասերն է, ամենից բարոյականը, ամենից տոկունը, ամենից զորեղը, ամենից քաղաքակիրթը, այդ մենք ենք: Այդ մենք կարող ենք ապացուցանել ոչ լոկ խոսքերով, ոչ սնապարծությամբ, այլ կենդանի փաստերով, մեր

ստեղծագործական տաղանդով, մեր անհուն սիրով դեպի գիտությունները, մեր առևտրական և արդյունաբերական ծիրքերով և, վերջապես, մեր հոգու և մարմնի եռանդով ու կորովով:

Կեղծ համեստությունը նույնքան դատապարտելի է, որքան անհամեստությունը: Մենք երբեք չենք լինի անհամեստ, եթե պահանջենք այն, ինչ որ իրավունք ունենք պահանջելու — Թուրքահայաստանի կատարյալ անկախությունը: Այո, կատարյալ, որովհետև աղաղակիչ փաստերը բյուր անգամ ապացուցեցին, որ մեր ճակատագիրը երբեք և երբեք չէ կարող հաշտվել թուրքաց իշխանության հետ, որ մենք և նրանք տրամագծորեն հակառակ տարրեր ենք, որ թուրքը միանգամայն անընդունակ է ժամանակակից կուլտուրայի, իսկ մեր միակ տենչը հենց այդ կուլտուրան է, նրա համար ենք ուզում ապրել և նրա համար էլ պատրաստ ենք մեռնել:

Ասենք մեր ասելիքը աներկյուղ:

«Մշակ», 21.IX.1914:

ԵՂԵՔ ԱՎԵԼԻ ԱՌԱՏԱԶՆՈՆ

Կվերջանա վաղ թե ուշ հսկայական ողբերգությունը, կդադարե հոսել մարդկային սրբազան արյունը, և ազգերն ու ժողովուրդները կկանչվեն դատի: Համաշխարհային արեուպագը հզորների և տիրապետողների քննության կենթարկեն յուրաքանչյուրին առանձին-առանձին:

Անտարակույս հայ ժողովուրդն ևս կլինի քննվողների շարքում, անտարակույս նա ևս կգնա իր բարք ու վարքի թվանշանն ստանալու: Եվ երբ հերթը հասնե նրան, դատավորները կհարցնեն.

— Հապա, ասա, փոքրիկ ժողովուրդ, որ եկել ես քո վարձն ստանալու, դո՞ւ ինչ ես արել, դո՞ւ ինչ իրավունքով ես քեզ վարձատրության արժանի համարում: Մենք գիտենք, որ դու թե՛ քո հին, թե՛ նոր պատմության մեջ շատ ես տանջվել, շատ ես տառապել հանուն քրիստոնեության, հանուն քաղաքակրթության: Բայց այդ դեռ բավական չէ արդար ավարից բաժին ստանալու համար: Ասա, ինչո՞վ ես մասնակցել ավարտված ողբերգության մեջ: Ո՞րն է եղել քո դերը:

Այն ժամանակ հայ ժողովուրդը կպատասխանի.

— Ներեցեք, դատավորներ, ես չեմ եղել ոչ Բելգիա, ոչ Սերբիա, ոչ

նույնիսկ Չերնոգորիա, թեև քանակությամբ պակաս չեն նրանցից: Տեսնո՞ւմ եք, ես չեմ էլ համարժակվում նրանց շարքում նստելու: Բայց, հավատացեք, եթե ես ունենայի անկախություն, սեփական պետություն, սեփական զորք, առանց մի վայրկյան տատանվելու, կմիանայի նրանց, որոնք կռվում էին հանուն իրավունքի և արդարության և որոնց կողմն էին խիղճը, ազնվությունը և վեհությունը:

— Հավատում եմք, այնուամենայնի՞վ...

— Այնուամենայնիվ, ես արել եմ այն, ինչ որ ունեի իրավունք և կարող էի անել: Ես հպատակ եմ մի հզոր պետության, որ ամենախոշոր դերն է կատարել ողբերգության մեջ: Նրան եմ տվել ես իմ ունեցածը, այն, ինչ որ ամենաթանկն է բոլոր ազգերի համար, — իմ ժաղիկ երիտասարդությունը: Ես ուղարկել եմ զավակներին պատերազմի դաշտ ոչ լաց ու կոծով, ոչ աղի արցունքով, այլ ցնծությամբ, ջերմ փափագով և ուրախ ու զվարթ երգերով: Հաշվեցեք, ես պատերազմի դաշտում եմ ուղարկել գուցե այնքան, որքան մի Բելգիա, մի Սերբիա և մի քանի անգամ ավելի, քան Չերնոգորիան: Եվ ահա ես նրանց արյան վարձն եմ սպասում ձեզանից, արդարադատ դատավորներ: Ահ, ինձ համար չեմ պահանջում, ոչ, քավ լիցի: Ես իմ վարձը կստանամ այն պետությունից, որի հպատակն եմ, և ոչ ավելի ոչ պակաս, քան նրա մյուս հպատակները: Իմ սպասելիքը իմ հարազատ եղբոր համար է, որ չունեն գոնե այն, ինչ որ ես ունեմ, կյանքի և գույքի ապահովություն:

Եվ դատավորները կհեռանան խորհրդարան ու այնտեղ կորոշեն այն, ինչ որ կթելադրե նրանց խիղճը:

Բայց ավա՜ղ, հայ ժողովրդի արդար խղճի վրա կմնա մի փոքրիկ ծանրություն:

Դա նրա հարուստ դասակարգի բռնած դիրքն է: Երբ ամեն օր թերթում եմ լրագիրները, կամա ակամա մտածում եմ, արդյոք եթե հայ ազգը չունենար այդ դասակարգը, ավելի բախտավոր չէ՞ր լինի: Դա հիասթափումից առաջացած չափազանցություն չէ, այլ մի տխուր իրականություն:

Ի՞նչ են արել մինչև այսօր մեր հարուստները բացի գուցե մի երկուսից: Ի՞նչ են արել համեմատաբար այն հսկայական կարիքի, որ կանգնած է մեր առջև: Ոչինչ, կամ գրեթե ոչինչ:

— Ես վերցնում եմ ինձ վրա մի մահճակալի ծախսը, — ասում է հպարտությամբ մեկը, որ ամենայն դյուրությամբ կարող էր վերցնել 40 մահճակալի ծախսը:

— Ես տալիս եմ 200 ռ., — ասում է մի ուրիշը, որ կարող էր նույն դյուրությամբ տալ հարյուր անգամ ավելի:

— Իմ փոքրիկ Լևոնիկը նվիրում է իր տոնախմբության ծախքը, — պարծենում է քնքուշ հայրը և հանգիստ պառկում իր ոսկեզօծ գահավորակի վրա:

Բավական է վերջապես: Կամ տվեք այնքան, որքան կարող եք և պարտավոր եք տալ, կամ ոչինչ մի տվեք. լռեցեք և ձեզ ու մեզ ծաղրելի մի դարձնեք օտարների առջև:

«Մշակ», 22.IX.1914:

ՎԱՂՈՒՑ ԷՐ ՀԱՐԿԱՎՈՐ

Երբ ողորմելի Թուրքահայաստանում ապստամբություն ծագեց, երբ Աբդուլ-Ֆամիդի ռեժիմը իբր թե տապալվեց, երբ հրատարակվեց իբր թե սահմանադրություն, ես մեկն էի այն փոքրաթիվ թերահավատներից, որոնք ավելի քան կասկածով ընդունեցին աշխարհի ապշեցնող լուրը: Փարիզի հայկական ժողովներում և մասնավոր խոսակցությունների ժամանակ, նույնիսկ երիտասարդ — թուրքերի ներկայությամբ, ես շարունակ պնդում էի, թե դա հեղափոխություն չէ իր իսկական նշանակությամբ, այլ սոսկ մի զինվորական ապստամբություն: Ինձ թվում էր վիրավորական, երբ այդ ապստամբությունը հավասարեցնում էին ֆրանսիական հեղափոխությանը, համաշխարհային քաղաքական պատմության այդ ամենափայլուն էջին: Ես այն համոզմունքի էի, նույնն են և այսօր, որ իսկական հեղափոխության ընդունակ են միայն այն ազգերը, որ ունեն մտավոր և հոգեկան գանձ՝ գիտություններ, փիլիսոփայություն, գրականություն, արվեստներ:

Թուրք ժողովուրդը երբեք չէ ունեցել այդ գանձը, չունի և այժմ, և հազիվ թե երբևիցե ունենա:

Եվ ահա իմ դյուրահավատ ու դյուրազգաց հայրենակիցների ուրախության գոռում-գոչյունները, որ երբեմն հասնում էին ցավալի ծայրահեղության, ինձ, իբրև հայի, և՛ վիրավորում էին, և՛ վշտացնում: Վիրավորում էին, որովհետև այդ գոռում-գոչյունների մեջ շատ անգամ խլանում էր ազգային հպարտության ծայրը: Վշտացնում էին, որովհետև ես նախագուշակում էի իմ հայրենակիցների անխուսափելի հիասթափումը, որ պիտի լիներ այնքան դառը, որքան քաղցր էր հիացումը:

Փաստերը չուշացան իմ կասկածներն ու նախագուշակումը

արդարացնելու: Սկսվեցին նրանք արտաքուստ շատ փոքր, շատ աննշան, բայց ըստ էության շատ իմաստալի, շատ խորհրդավոր և բնորոշ մի եղելությամբ: Դա Ահմեդ-Ռիզայի պատմական համբույրն էր, որ նա դրոշմեց հրապարակորեն կարմիր սուլթանի արյունածարավ և արյունաշաղախ ձեռքի վրա ելլող-Քեռշկի պալատում: Համբույրն այն մարդու, որ համիդյան ռեժիմի ամենախոշոր ու ամենակատաղի թշնամին էր եղել և «հեղափոխական» կոչվածների գլխավոր շեֆերից մեկը:

Թվում էր, որ այդ միակ բանը բավական էր գաղափար կազմելու համար թուրք կոչված արարածի ապականված պսիխիկայի մասին: Բայց իմ միամիտ հայրենակիցները շարունակում էին հափշտակվել և սնոտի երազներով սնուցանել իրանց անհեռատեսությունը:

Փոքրիկ և աննկատելի փաստին հետևեց մեծագույնը՝ Աղանայի կոտորածը: Հասկանալի էր, քանի որ «երիտասարդ» թուրքը համբուրել էր «ծերունի» թուրքի ձեռքը, ինչո՞ւ չպիտի շարունակեր այդ ձեռքի դժոխային գործը:

Այնուհետև զարհուրելի եղելություններն, ավելի նախանձելի վիճակի արժանի արագությամբ, իրար հաջորդելով՝ վերջապես ամենքին համոզեցին, նույնիսկ կիսախուլ ականջներին և կիսալույս աչքերին, թե չկա ոչ «երիտասարդ» Թուրքիա և ոչ ծեր Թուրքիա, չկան ոչ բռնակալներ և ոչ բռնության թշնամիներ, այլ կա քաղաքակրթության, արդարության, մարդկային սուրբ իրավունքների, լույսի և լուսավորության անհաշտ թշնամի մի զանգված, որ ճակատագրի զարմանալի հեգնությամբ համարվում է ազգ, թուրք ազգ: Մի քիմիական զագրելի բաղադրություն, որ դարեր շարունակ թունավորել է մարդկության օրգանիզմը:

Թանկ, շատ թանկ նստեց հայ ազգին նրա չափազանց լավատես, չափազանց դյուրահավատ զավակների վեց տարվա մոլորությունը: Մի մոլորություն, որ ապագա պատմագիրը համենայն դեպս առանց դառն նախատիմքի չի ների նրանց: Բայց և այնպես ուրախալի է, որ այսօր հազիվ թե գտնվի մի գիտակից հայ, որ հավատա, թե հայ ժողովուրդը կարող է թուրք ժողովրդի հետ հաշտությամբ կրել որևէ քաղաքական լուծ, լինի այդ լուծը բռնապետական, սահմանադրական, թե նույնիսկ ռամկավարական: Ուրախալի է մանավանդ այն, որ «երիտասարդ» թուրքերի երեկվա հայ դաշնակիցները այսօր սթափվել են, վերջապես, և երես դարձրել նրանցից ու աշխատում են գործել հակառակ նրանց ուղղությամբ:

Հայ ժողովրդի մոլորյալ զավակները բռնել են այն ուղին, որ վաղուց պետք է բռնած լինեին: Մեզ մնում է գովել նրանց նոր քայլը և մեր

կարողության չափ խրախուսել նրանց նոր գործը: Վախենալ երիտասարդ-թուրքերի վրիժառությունից՝ կնշանակե լինել փոքրոգի և գործել մի նոր սխալ: Նրանց անսքող թշնամությունը չէ կարող հայ ժողովրդին այնքան վնասել, որքան վնասեց նրանց քողավոր բարեկամությունը, որովհետև չպետք է մարգարե լինել գուշակելու համար, որ Թուրքիա կոչված պետությունը իր մահվան մախօրյակն է ապրում:

«Աշակ», 24.IX.1914:

ԹՈՂ ՊԱՐՁԵՆ

Եվրոպացին ընդհանրապես անկարող է ճիշտ ուսումնասիրել ասիացու հոգեբանությունը: Համաշխարհային բարքագրական գրականության մեջ շատ քիչ է այն իմաստասերների թիվը, որոնց դիտողական ծիրքը թափանցել է արևելցու հոգու խորքերը: Կաբինետային իմաստասերները և մույնիսկ ճանապարհորդները ահագին մեծամասնությամբ շարունակ կրկնում են իրանց մախորդների մի անզամ ասածները: Դժբախտաբար, հենց այդ կրկնություններն են, որ բարոյական մեծ ազդեցություն ունեն եվրոպական հասարակական կարծիքի վրա Արևելքի մասին:

Մի Պիեր Լոտի, որի ճանապարհորդական դիտողությունները բացի միակողմանի լինելուց և չափազանց կասկածելի են անկաշառության տեսակետից, համարվում է հեղինակավոր արևելագետ: Եվ ահա երբ նա խոսում է թուրք ազգի չունեցած առաքինությունների մասին, մի ամբողջ ազգ իր իմաստասերներով, քաղաքագետներով ու քաղաքական գործիչներով հանդեմ հավատում է նրա ասածներին: Եվ ոչ ոք չէ մտածում կամ նեղություն չի կրում նրա ասածները ստուգելու:

Կան արմատական բնազդներ, որոնցից ոչ մի ժողովուրդ, ոչ մի ազգ չի կարող ազատվել՝ որքան ևս քաղաքակրթվի, որքան ևս լուսավորվի: Շողոքորթությունը, ստախոսությունը, կեղծավորությունը և խաբեբայությունը այն դարավոր բնազդներն են, որոնք միշտ եղել են և պիտի հավիտյան լինեն անբաժան օսմանլուի բնույթից: Կրթեցեք նրան որքան կամենաք, տվեք նրան եվրոպական քաղաքակրթության բոլոր բարիքները, թող նա լինի իր հայացքներով, իր բարք ու վարքով, իր արտաքին ու ներքին արժանավորություններով կատարյալ եվրոպացի,

բայց հոգու խորքում միշտ ննջնջելի են ցեղական բնազդները:

Ձարմանում են, որ թուրքիան ներկա պատերազմը հրապարակվելու օրից անորոշ և երկդիմի դեր է կատարում: Ձարմանում են, որ նա չի ուզում դիմակը դեն ձգել և ցույց տալ իր քաղաքականության իսկական կերպարանքը եվրոպային: Հետաքրքրական է իմանալ, թե ե՞րբ, իր պատմության ո՞ր շրջանում են օսմանցիներն եղել շիտակ և անկեղծ: Նրանք միշտ կեղծել են, միշտ ստել, միշտ խաբել աջ ու ձախ: Միակ բանը, ուր նրանք եղել են անկեղծ, դա անգեներներին և անպաշտպաններին հալածել, կեղեքել ու կոտորելն է: Դա է եղել նրանց միակ առաքինությունը և միակ քաջությունը:

Միանգամայն ճիշտ է ասում Մետերլինգը, թե մի ազգ արժանի է այն պետությանը, որ ունի: Այսօր սուլթան Համիդ, վաղը Ահմեդ-Ռիզա, մյուս օրը Էնվեր-փաշա — դրանք բաղկացած են միևնույն խմորից և բոլորն էլ իրանց ազգի հարազատ ծնունդներն են: Եվ թուրք ազգի ոչ մի տարրը և ոչ մի բանով ըստ էության չէ տարբերվում նրանցից: Ինչ որ անում էր երեկ սուլթան Համիդը, այսօր անում են Էնվեր-փաշաները, և ես համոզված եմ, որ վաղը կանեն նույնիսկ Սաբահ-Էդդինները, որքան ևս նրանք խրոխտան իրանց եվրոպական գաղափարներով ու ձգտումներով:

Թող եվրոպացին դեռ շարունակե հավատալ թուրքին. մենք հայերս չենք հավատում, քանի որ արդեն շատ ենք պատժվել մեր դյուրահավատության պատճառով: Մեր ներկա կասկածը մեր հակաթույնն է: Եվ որովհետև մեր ազգի ճակատագիրը կես մասով, դժբախտաբար, կապված է թուրքիայի հետ, բնական է, որ սրա դիմակը պատռելու դժվարին գործի մի մասն էլ մեզ վրա է ընկնում: Ուստի թող այն մարդիկ, որոնք միջոց ունեն և կարող են, աշխատեն թուրքի ապականված հոգեբանությունը պարզել այնտեղ, ուր հարկավոր է պարզել:

«Մշակ», 26.IX.1914:

ԺԱՄԱՆԱԿ Է

Բոլոր ստրկությունների մեջ կա մեկը, որ ամենից դաժանն է և ամենից անտանելին: Դա նյութական ստրկությունն է: Նա, որ ճնշում է մարդկային հոգին արժիժի պես, ստորացնում է մարդկային եսը: Նա, որ դանդաղորեն, բայց հաստատապես ներգործող թույնի նման կամաց-կամաց անզգալի-

որեն մահացնում է արժանապատվության զգացումը ինչպես անհատների, նույնպես և հավաքական մարմինների մեջ:

Այսպես է, դժբախտաբար, ամենուրեք, աշխարհի բոլոր վայրերում:

Բայց կա ստրկություն և ստրկություն: Հայ ժողովրդի մեջ մա ունի մի այնպիսի այլանդակ կերպարանք, որի նմանը չեմ կարծում, թե հանդիպվի որևէ ժողովրդի կամ ազգի մեջ: Դրանը հայի կուլտն է. այս մասին գրվել է բյուր անգամ, և մենք ձեռներս մեր խղճի վրա դրած պիտի խոստովանենք, որ այդ ճիշտ է: Խոսքս բացառությունների մասին չէ. բացառությունները օրենք չեն կազմում: Օրենքն այն է, ինչ որ արմատացած է մասսայի հոգու խորքում և անբաժան է նրանից:

Դիտեցեք մեր բոլոր դասակարգերը սկսած մտավորական շրջաններից և բարձր հոգևորականությունից մինչև ժողովրդի ամենագոեհիկ խավերը, և դուք կտեսնեք միևնույնը — խորին երկրպագություն և անսահման փառաբանություն ոսկյա հորթին: Կարծում եք միշտ շահասիրությունի՞ց դրդված: Ոչ, այլ շատ անգամ հենց այնպես, անշահ, միայն և միմիայն սովորույթից և դարավոր ավանդությունից հարկավորված:

Հայ ժողովուրդը, ինչ որ վերաբերում է նյութականին, իր հավատը պարզելում է ոչ նրանց, որ ունեն բարոյական վարկ, այլ նրանց, որոնք նյութական վարկի տերերն են: Փաստե՞ր եք ուզում. ահա ձեզ: Փորձեցեք բաց անել որևէ հանգամանակություն այս կամ այն հասարակական կամ ազգային նպատակով և գործը հանձնել թեկուզ ամենաբարոյական, ամենաառաքինի, ամենամանշահասեր անձանց, հանգամանակությունը կամ ամենևին աջողություն չի ունենա, կամ շատ չնչին արդյունք կտա: Բայց նույն հանգամանակության թերթը տվեք մի հարուստ մարդու ձեռքը, և այլ պատկեր կստանաք:

Մեր այսպես կոչված բարեգործները իրանց նվերները տալիս են ոչ այս կամ այն գործին, այլ այս կամ այն անձին: Երբ նրանց դոնները զարկում են, առաջին հարցն է լինում՝ ովքե՞ր են զարկողները: Եթե դիմողը հարուստ մարդ է, կամա թե ակամա դոնները բացվում են նրա առջև, իսկ եթե ոչ՝ թող հեռանա: Գործը կարևոր չէ, կարևորը գործի համար եկողի անձնավորությունն է: Ա՛հ, ներողություն, ոչ անձնավորությունը, այլ նրա գրպանը:

Այս վերին աստիճանի տխուր և մի ազգի բարոյական հռչակը արատավորող երևույթը ամենից շատ խրախուսվում է հայ գործիչների և հայ մտավորականության կողմից: Ամեն անգամ, երբ հարց է լինում այս կամ այն ազգային կամ հասարակական գործի համար դրամ հանգանակելու մասին, հայ մտավորականությունն իր գլուխը ստրկաբար թեքում է

հարուստների առջև և աշխատում է նրանց հանձնել հանգանակության թերթը: Նա չէ հասկանում կամ չէ ուզում հասկանալ, որ այսպիսով ոչ միայն գործի նշանակությունն է նսեմացնում, այլև ինքն իրան ստորացնում: Նա չէ ըմբռնում, որ այսպիսով նա վարկաբեկ է անում ինքն իրան ոչ միայն ժողովրդի առջև, այլև հենց այն հարուստների առջև, որոնց աջակցությունը ձեռք է բերում սովորաբար հազար ու մի աղաչանք-պաղատանքներով: Նա չէ զգում, որ իր այդ վարմունքով նա խրախուսում ու պաշտպանում է մի հասարակական օրգանիկական անբարոյականություն:

Ինձ թվում է, որ ժամանակ է այդ եղելի երևույթի դեմ կռվելու և արմատախիլ անելու նրան: Ինձ թվում է, որ ժամանակ է, որ հայ գործիչները և հայ մտավորականությունն աշխատեն հասարակության և ժողովրդի մեջ բարձրացնել իրանց վարկը և նվիրատուներին սովորեցնել, վերջապես, հարգել գործը, այլ ոչ անձը: Կփափագեի, որ իմ միտքը ճիշտ հասկացվի: Ես չեմ ասում, թե հարուստներին պիտի հեռացնել հանգանակության գործից: Ամենևին: Չեմ ասում, նամանավանդ, որ ամեն մի մտավորական բարոյական վարկի տեր է, և ամեն մի հարուստ՝ ընդհակառակը: Քա՛վ լիցի: Բարոյական վարկը ես չեմ ուզում կապել գրպանի վարկի հետ: Կան մտավորականներ, որոնց բարոյականը նույնքան սնանկ է, որքան և նյութականը: Կան և հարուստներ, որոնց բարոյականը չէ ազատվել ոսկու ժանգից:

Ես ուզում եմ միայն ասել, որ հայ գործիչներն ու հայ մտավորականությունն եթե ունեն արժանապատվության զգացում, պիտի մտածեն այսպես. «Յայ ժողովուրդ, այսօր դու ինձ չես հավատում քո կոպեկները, բայց ես կաշխատեմ և կգրավեմ քո հավատը: Ես քեզ կսովորեցնեմ հարգել ինձ»:

Ժամանակ է:

«Մշակ», 27.IX.1914:

ԲԱՐԻ ՃԱՆԱԴԱՐՉ

Խլեցեք մարդու հարստությունը, նա կարող է նորից ձեռք բերել կորցրածը: Խլեցեք մարդու պատիվն անգամ, նա կարող է նորից վերականգնել նրան: Բայց զրկեցեք նրան կյանքից, և ամեն ինչ վերջացած է:

Նա, ով զոհու՞մ է իր զանձը մի վեհ գործի համար, սոսկ մի բարերար է: Նա, ով վտանգի է ենթարկու՞մ իր բարոյական հարստությունը, հույս ունի նրան պաշտպանելու: Իսկ նա, ով իր կյանքն է տալիս, մարտիրոս է:

Կյանքն է ամենամեծ գանձն աշխարհի: Նա է բոլոր բարիքներից մեծագույնը, ամենից անգնահատելին, ամենից անձեռնմխելին: Եվ նա , ով չի խնայու՞մ իր կյանքը մի վեհ գործի համար, պիտի դասվի սրբերի շարքը:

Որքան խղճալի է այն զինվորը, որ փախչու՞մ է պատերազմի դաշտից. որքան քստմնելի է այն երիտասարդը, որ համաշխարհային արհավիրքի ժամանակ կանչված լինելով իր քաղաքացիական պարտքը կատարելու՝ դիմու՞մ է հազար ու մի աններելի միջոցների — ստի, խաբեբայության, կեղծիքի, կաշառքի — վառողի հոտից խուսափելու համար, նույնքան պաշտելի է նա, ով իր հոժար կամքովն է վազու՞մ պատերազմի դաշտը:

Արդ, արհամարհելով պարագիտներին և երկչոտներին, հարգենք հերոսներին, եթե չունենք քաղաքացիական քաջություն նրանց առջև խոնարհվելու:

Եվ տանք նրանց այն, ինչ որ կարող ենք և պարտավոր ենք տալ — մեր նյութական աջակցությունը և մեր բարոյական խրախուսանքը: Տանք և ասենք.

— Բարի ճանապարհ, ազնիվ և աներկյուղ հոգիներ: Երջանիկ երթ և հպարտ վերադարձ և՛ ձեզ, որ գնու՞մ եք մեր մեծ հայրենիքի պատիվը պաշտպանելու համար, և՛ ձեզ, որ գնու՞մ եք մեր բազմաչարչար մայրենի ժողովրդին սպասվող վտանգներից փրկելու համար:

«Մշակ», 28.IX.1914:

ՕՐԵՆՔՆ ԱՆՈՂՈՔ Է

Երբ Փարիզի Վալ-դը-Գրաս հիվանդանոցում խուզարկու՞մ են մի գերմանացի զինվորի հագուստը, նրա գրպանու՞մ գտնու՞մ են մի կնոջ ձեռք: Երբ Լիոնի մի հիվանդանոցում խուզարկու՞մ են մի ուրիշ գերմանացու, նրա գրպանու՞մ գտնու՞մ են մի երեխայի ձեռք:

Հարցաքննությամբ պարզվու՞մ է , որ առաջին զինվորը ֆրանսիացի կնոջ ձեռքը կտրել է , որպեսզի հետո նրա վրա եղած մատանիները վերցնե, իսկ երկրորդ զինվորը երեխայի ձեռքը կտրել է, «որպեսզի նրա մորը ցավ պատճառե»:

Ժան դ'Օրսեյը «Մատեն» լրագրում առաջ բերելով գերմանական գազանություններից նյս երկու օրինակը, քաղվածքներ է անում գերմանական գրքերից և դասագրքերից, որոնցից երևում է, որ վերջին 2 տասնյակ տարիները գերմանական դպրոցը չէր կարող պատրաստել ուրիշ բան, եթե ոչ կանանց և երեխաների ձեռներ կտրող հրեշներ:

Մենք իայերս, որ մեր մարմնի վրա դեռ կրում ենք այնքան թարմ վերքեր՝ ստացած թուրքերի, չերքեզների և քուրդերի վայրենությունից, ըստ երևութին չպիտի այնքան վրդովվենք գերմանական գազանություններից, որքան ֆրանսիացին, անգլիացին, բելգիացին, որոնց համար մարդկային կյանքը վաղուց է իր բարձր գնահատությանն արժանացել: 2^o է որ մեր կանանց ձեռներն էլ են կտրել, ոտներն էլ, կրծքներն էլ. 3^o է որ մեր երեխաներին մայրական արգանդներից են դուրս բերել սվինի ծայրով: Ի՞նչ կա մեզ համար զարմանալու և զայրանալու, եթե մի պրուսակ կամեցել է ֆրանսիացի կնոջ ձեռքը նվեր տանել իր քնքուշ գրեթեխին:

Բայց ոչ, մենք զայրանում ենք ավելի, քան գուցե ովևիցե. մենք կատաղությունից կրճտում ենք մեր ատամները ավելի, քան եվրոպացին: Ինչու՞: Ռոպիետև մարդկային գազանությունն այս անգամ գալիս է եվրոպայի կենտրոնից: Այն երջանիկ վայրից, որի անունով մենք շատ անգամ ենք երդվել և որի վրա մենք տգետ ասիացիներս այնքան հույսեր ունեինք:

Մենք կարծում էինք, որ եվրոպական կոչված քաղաքակրթությունն այնպիսի մի զորավոր ուժ է, որի ազդեցությամբ պիտի հալվեն, հօդս ցնդեն ու չքանան մարդկային անասնական ամենագազրելի բնագոյները: Մենք հույս ունեինք, որ եթե այսօր թուրքը, բաշիբոզուկը, քուրդը գազաններ են, վաղը, ճաշակելով եվրոպական քաղաքակրթությունը, կդառնան. մարդ, և մենք հնարավորություն կունենանք նրանց հետ կից առ կից ապրելու:

Պարզվում է, որ մենք չարաչար մոլորված ենք եղել: Այն, ինչ որ անում է այսօր եվրոպայի ամենակիրթ ազգերից մեկը իր զավակների ձեռքով, մի տխուր ապացույց է, որ կարելի է ունենալ ամենաբարձր քաղաքակրթություն, բայց դարձյալ չազատվել ցեղական բնական վայրենի բնագոյներից, կարելի է արտաքուստ երևալ կատարյալ մարդ և ներքուստ մնալ կատարյալ գազան: Պարզվում է, որ ոչ նախնական պարզության հասցրած քրիստոնեական մարդասեր գաղափարը, ոչ բարդ գիտությունները, ոչ բարձր արվեստները և ոչ նուրբ փիլիսոփայությունը չեն կարող փրկել այն ցեղական ախտերից, որոնց ինքը բնությունն է արմատացրել

մի ազգի կամ ժողովրդի մեջ: Պարզվում է նաև, որ, ընդհակառակը, այդ ախտերը երբեմն ամուր հենակետ են գտնում և քրիստոնեության գաղափարը կրողների մեջ – ապացույց այն մարդատյաց քարոզները, որ այժմ արտասանում են բողոքական քարոզիչները Գերմանիայում, և գիտությունների մեջ – ապացույց Գերմանիայի մարդաչինջ գործիքները պատերազմի, և արվեստների մեջ – ապացույց գերմանական նկարիչների և արձանագործների ռազմական ստեղծագործությունները, և գրականության մեջ – ապացույց գերմանական վիպասանության և բանաստեղծության վերջին տասնյակ տարիների արտադրությունները, և, վերջապես, բարձր փիլիսոփայության մեջ – ապացույց Ֆրիդրիխ Նիցշեի մարդատյաց ցնդաբանությունները:

Երբ մի ազգ աշխարհ գալով՝ չի բերել իր հոգու մեջ բարության, ազնվության և վեհության սերմեր, այդ ազգը կա և միշտ էլ կմնա կոպիտ և վայրենի, որքան ևս պարծենար իր բարձր քաղաքակրթությամբ:

Բնության օրենքն անողոք է:

«Մշակ», 30.IX.1914:

ՂՈՒՔ ԵՎՍ ՊԱՐՏԱՎՈՐ ԵՔ

Ներկայումս ֆրանսիական գործող բանակում կան մոտ 15.000 հոգևորականներ: Վարդապետ, քահանա, միսիոներ՝ մի կողմ են ձգել ֆարաջաները և գնացել պատերազմի դաշտը իրանց բարձր քաղաքացիական պարտականությունը կատարելու՝ զենքով հայրենիքի գոյությունը պաշտպանելու համար:

Ռուսական օրենքով հոգևոր դասն ազատ է զինվորական ծառայությունից, բայց նույն օրենքը պարտավորեցնում է հոգևորականներին պատերազմի ժամանակ գնալ կռվի դաշտը քրիստոնեական խաչը ձեռներին՝ մահամերձ վիրավորներին հաղորդություն տալու, մեռելներին թաղելու, վիրավորյալներին խնամելու և առհասարակ կատարելու իրանց կոչման սովորական պարտականությունները:

Եվ այսօր, երբ Ռուսաստանը հայրենական ահեղ պատերազմի մեջ է, ուղղափառ հոգևորականությունը կատարում է այն, ինչ որ նրանից պահանջում են օրենքն և իր կոչումը: Ռուս քահանաները գնում են պատերազմող բանակը ահագին քանակությամբ ու նրանց ներկայու-

թյունն այնտեղ մեծ հոգևորություն է ներշնչում հայրենիքի հավատացյալ պաշտպաններին: Այդ չէ միայն. ռուս բարձր հոգևորականությունը սինոդի նախաձեռնությամբ իր ծախքերով բաց է անում հիվանդանոցներ, բուժարաններ և պատերազմի դաշտն է ուղարկում սանիտարական խմբեր, և այդ բանում նյութական ու բարոյական աջակցություն չեն խնայում լայնատարած Ռուսաստանի բոլոր հոգևորականները՝ սկսած ամենամեծից մինչև ամենափոքրը:

Արդ, ինձ համար, իբրև հայ լուսավորչականի, խիստ հետաքրքրական է իմանալ, արդյոք ի՞նչ է արել մինչև այսօր հայ հոգևորականությունը: Ավելին չեմ սպասում, սոսկ այն շրջանակում, ուր ազատ էր և կարող էր գործել, պարզ քրիստոնեական բարեգործության սահմաններում:

Գուցե ես սխալվում եմ, բայց մինչև այժմ դեռ ոչինչ չեմ տեսել ու լսել: Չկա Ռուսաստանում և Կովկասում մի համայնք, մի դասակարգ, ինչ ազգության և ինչ դավանանքի ևս պատկաներ նա, որ արծագանք տված չլիներ մարդկային ներկա արհավիրքին:

— Օգնեցեք վիրավորյալներին, օգնեցեք նրանց թշվառ ընտանիքներին, — լսում եմք ամեն օր և ամեն ժամ:

Խուլ եմ հայ բազմաթիվ քահանաները, խուլ եմ եպիսկոպոսներն ու վարդապետները: Լուռ է նաև էջմիածինը: Այնինչ օգնության առաջին օրինակը հայ ժողովրդին հենց էջմիածինը պիտի տար:

Եթե մեր հոգևորականությունը կարծում է, թե մաղթանքներ կատարելով և այս ու այնտեղ հեռագիրներ ուղարկելով արդեն կատարել վերջացրել է իր ամբողջ պարտականությունը, թույլ եմ տալիս ինձ ասելու, որ նա ոչ միայն սխալվում է, այլև մի որոշ մեղք է գործում իր բարձր կոչման դեմ:

Մենք խոնարհվում ենք նրա մաղթանքների և համակրական աննյութ ցույցերի առջև, բայց ավելի կխոնարհվեինք, եթե նա ասպարեզ գար իր նյութական աջակցությամբ: Արդարանալ նյութականի պակասությամբ հայ հոգևորականությունը չի կարող և չունի իրավունք: Որքան ևս նա չունևոր լինի, հասարակ արհեստավոր և պարզ բանվոր դասակարգերից չքավոր չէ: Եթե մի եպիսկոպոս վախճանվելով թողնում է աշխարհին մի բավական խոշոր գումար, ինչո՞ւ չկարծել, որ մյուս եպիսկոպոսներն էլ կարող են ունենալ, եթե ոչ այդչափ, գոնե մի որոշ գումար: Եթե նավթային հանքերում դժոխային աշխատանքով կոպեկներ վաստակող բանվորները կարող են իրանց ամսականից մի որոշ տոկոս գոհել վիրավորյալներին, ինչո՞ւ նույնը չեն կարող անել և մեր քահանաները:

Բայց հայ հոգևորականությունն այնքան սովորել է ստանալը, որ տալը

միանգամայն մոռացել է: Նա կարծում է, որ ամեն ցավ կարելի է աղոթքներով ու մաղթանքներով բուժել:

Ոչ, հոգևոր հայրեր, կան հանգամանքներ, երբ դուք ևս սոսկ քաղաքացիներ եք: Ներկա հանգամանքում դուք ևս ունեք քաղաքացիական պարտականություն, որ պարտավոր եք կատարել:

Կատարեցեք ուրեմն:

«Մշակ», 2.X. 1914:

ԴԱ ՄԻ ԱԽՏ Է

Ով չգիտե ինքն իրան հարգել, թող չսպասե, որ ուրիշները կհարգեն իրան:

Մի ազգ, որ ինքն իր ունեցած արժանավորությունները չի ուզում ճանաչել կամ գիտակցաբար ոտնակոխ է անում, արժանի է ամենայն արհամարհանքի: Համենայն դեպս նա չի կարող վայելել օտարների հարգանքը:

Որքան հակակրելի է այն անհատը կամ ազգը, որ անսահման սնափառ է, ինքնագոհ է ինքն իր վրա սիրահարված, նույնքան և ավելի հակակրելի է այն անհատը կամ ազգը, որ ինքն իրան արհամարհում է և ինքն իր գոյությունից ամաչում:

Հրեաների ամենախոշոր և ամենաեական թերությունը նրանց արհամարհական վերաբերմունքն է դեպի իրանց ծագումը: Չկա ավելի զազրելի էակ, քան նա, որ ամաչում է իր ծնողներին ճանաչել և հարգել: Եվ ազգամոռ կամ, ճիշտն ասած, ազգատյաց հրեաները, որոնց թիվը, դժբախտաբար, շատ է, անհամեմատ ավելի վնասակար են իրանց ազգի համար, քան բոլոր հալածանքները, որ կրում է այդ ազգն օտարներից:

Ինչո՞ւ էն անգլիացիք ուժեղ: Նախ և առաջ իրանց ազգային հպարտությամբ, իրանց ցեղական արժանավորությունների գիտակցությամբ և այն անդրդվելի հավատով դեպի իրանց բարոյական ու մտավոր կարողությունը, որ որքան զորեղ է, նույնքան և՛ հեռու սնապարծությունից և անհամեստությունից:

Վաղուց է, որ հայ ժողովուրդն իր միջից արտադրում է մի բաղադրություն, որ քանի գնում այնքան ավելի մեծանում է, հետևաբար և՛ այնքան ավելի վնասակար դառնում: Չուլվում է այդ բաղադրությունը զանազան

տարրերից: Կան նրա մեջ և՛ վաճառականներ և նույնիսկ գործակատարներ, զինվորականներ, պետական պաշտոնյաներ և՛ նույնիսկ գրազետներ, համալսարանականներ և՛ նույնիսկ թերուներ:

Խոսքս այն բազմաթիվ անհատների մասին է, որոնք իրանց ազգությունից չհրաժարվելով հանդերձ, անում են ամեն ինչ, որ ցույց տան օտարներին, թե իրանք բարձր են այդ ազգությունից իրանց մտավոր և բարոյական արժանավորություններով:

Խոսքս հայ «պառվընու» - ների մասին է: Այն ազգային պատվասիրությունից զուրկ մարդկանց, որոնք հայ պատմական և ոչ պատմական առաքինությունների նսեմացնելը իրանց անձնական արժանավորությունների համար ամուր պատվանդան են համարում: Հասարակական վայրերում, մասնավոր շրջաններում, ընտանիքներում, ամենուրեք, ուր կարող են, նրանք չեն ծուլանում ցույց տալ մի տեսակ ու անպատկառ արհամարհանք դեպի իրանց ազգային արժանավորությունները: Եվ ի՞նչ է նրանց նպատակը: Ոչինչ, մի դատարկ սնափառություն. համոզել օտարներին, թե իրանք մի տեսակ երջանիկ բացառություն են կազմում այն փոքրիկ ազգի մեջ, որ մեծերից այնքան ստոր է իր բարոյական և մտավոր կացությամբ: Հարկավ, ոչ մի քիչ թե շատ խելացի օտարազգի չի կարող հարգել իր հոգու խորքում այդ տեսակ մարդկանց: Բայց նրանց համար մի մեծ վարձատրություն է և նույնիսկ պարծանքի նյութ, երբ որևէ մի տգետ օտարազգի ասում է.

—Ա՛հ, դուք բոլորովին նման չեք հայի:

Եվ քանի—քանի անգամ մեր հայրենակիցների բերանից լսել ենք. «Գիտեք, ինձ օտարներն հայի տեղ չեն ընդունում»: Լսել ենք և ի մեծ անոթ չենք զայրացել և չենք ապտակել այդ տեսակ հայերին:

Ամենից անտանելին և ամենից հակակրեղին այդ տեսակ մեր հայրենակիցների մեջ նրանք են, որ օտար մամուլի մեջ են երևան գալիս թե՛ իբրև խմբագիր և թե իբրև աշխատակից կամ թղթակից: Կարդացեք դրանց վայրիվերո դատողությունները հայ հասարակական կյանքի, հայ մամուլի, հայ գրականության, հայ թատրոնի, հայ ընկերությունների մասին և տեսեք ի՞նչ արհամարհական տոն կա նրանց մեջ, որպիսի անձնական ամբարտավանություն: Կարծես, մի ռուսերեն թերթի հայ խմբագիր կամ հայ աշխատակից մի մեծ պատիվ է անում, մի ահագին գիշողություն է անում հայ ազգին, որ խոսում է նրա մասին: Կարծես, հայ ազգը իսկի չի կարող գոյություն ունենալ առանց այդ մարդկանց: Շշմարիտ, բացառություններն այնքան սակավ են, որ թվում է, թե մի տեսակ օրենք է դարձել հայի արհամարհանքը դեպի իր ազգայինը

օտարների մոտ:

Դա մեր կյանքի ամենազագրեւի ախտերից մեկն է, որի դեմ անհրաժեշտ է մաքառել:

«Մշակ», 4.X.1914:

ՊԵՏՔ Ե ԶԳՈՒՅՇ ԼԻՆԵԼ

Երեկ մեկն իմ ծանոթներից վրդովված տալիս է ինձ “Кавказ” լրագրի վերջին համարն և ասում.

— Կարդացեք, միթե՞ ներելի է համբերել այդ տեսակ անամոթության:

Կարդում եմ: Դա մի հոդված է «Վիրավոր կամավորներ» վերնագրով և վերնագիրը չակերտների մեջ: Հեղինակը, ոմն Դ. Ա., ծաղրով և հեզմանքով պատմում է հետևյալը:

Ամսիս 7-ին վիրավորներին խնամող քաղաքային ենթահանձնաժողովը ստանում է հեռագիր, թե հետևյալ առավոտ 5 ժ. 55 րոպեին գնացքով Թիֆլիս են հասնելու Ջուլֆայից 61 վիրավորված հայ կամավորներ: Հանձնաժողովը կարգադրություն է անում վիրավորներին ընդունելու, և մյուս օրը վաղ առավոտյան կայարանը լեցվում է հետաքրքրվող բազմությամբ: Գալիս է գնացքը և նրա միջից դուրս են գալիս ոչ վիրավորներ, ոչ հիվանդներ, այլ առողջ երիտասարդներ՝ կամավորների համազգեստով:

— Ու՞ր են վիրավորները, — հարցնում են նրանց:

— Մենք վիրավորներ չենք: Մեզ հետ եկել է միայն 4 վիրավոր զինվոր:

Դուրս է գալիս, որ այդ «առողջ» երիտասարդները Անդրանիկի խմբից են: Խմբապետը, քննելով նրանց, գտել է ոչ պիտանի իր խմբում գործելու համար և ետ է ուղարկել:

“Кавказ” լրագրում գրող պ. Դ. Ա. այդ դեպքը ծաղրով ու ծանակոթությամբ հաղորդելով՝ չի հաղորդում, թե ո՞վ է եղել այն մարդը, որ մոլորության մեջ է գցել թե քաղաքային ենթահանձնաժողովը և թե հասարակությունը, և ինչ նպատակով: Եթե մի այդպիսի առնվազն անտակտություն ցույց տար մի փողոցային թերթուկ, շատ-շատ՝ կարող էր արժանանալ մեր թուքին. բայց երբ անտակտությունը և անճարպիկ թաքնված տգեղ տեմդենցիան թույլ է տալիս իրան լուրջ համարող օրգան,

դեպքը դառնում է ոչ միայն քստմնելի, այլև վտանգավոր, որ կարող է շատ անախորժ թյուրիմացությունների պատճառ դառնալ:

“Кавказ”-ը կիսապաշտոնական օրգան է, հետևաբար նա ավելի քան մի ուրիշ օրգան պարտավոր է զգալ, թե որքան մեծ է լավ չստուգված և լավ չքննված դեպքերի և դիպվածների մասին այդքան համարձակորեն գրելու պատասխանատվությունը մանավանդ ներկա փափուկ ժամանակներում: Նախքան հրատարակության հանձնելը հաղորդագրությունը մի ողորմելի ռեպորտեորի, որ բացի մարդկանց մտքերը պղտորելու անարգ նպատակից ունեցել է անշուշտ և տողավարժի հրապույր, “Кавказ”-ը պետք է պահանջներ նրանից հիշելու այն անձի անունը, որ տվել է հեռագիրը, եթե միայն վերջինը ստորագրված է: Նա պետք է մտածեր և արտահայտեր, որ դա կարող է լինել ոչ միայն սոսկ թյուրիմացություն, այլև մի մութ, անհայտ ձեռքի ինչ-որ կասկածելի նպատակով եղած գործողություն: Նա պետք է նախագուշակեր, որ իր թշվառ ռեպորտեորի անվայել կատակը կարող է վիրավորել շատ սրտեր և վշտացնել շատ հոգիներ, որոնք այսօր ամենայն սիրով ու հոժարությամբ իրանց նվիրել են հայրենիքի պատվին և պաշտպանությանը:

Իբրև հայ ես բողոքում եմ ամբողջ հոգով “Кавказ” լրագրի ավելի քան անտակտ վարմունքի դեմ: Թող լավ գիտենա ռուս լրագիրը, որ հայ ժողովուրդը ներկայումս այնպիսի հոգեկան վիճակի մեջ է, որ յուրաքանչյուր գիտակցաբար կամ անգիտակցաբար արտահայտված վիրավորական ակնարկ նրա սիրտը կարող է խոցոտել:

«Մշակ», 11.XI.1914:

С ДОРОГИ

Ст. ЭЧМИАДЗИН

16 ноября

Поезда и поезда на каждой станции и на каждом разъезде вплоть до конечного пункта железной дороги. Скользят они мимо нас тихо, почти бесшумно, оставляя наш поезд позади.

До эчмиадзинской станции мы встретили несколько поездов с пленными турками и курдами, гамидийцами. Все они худые,

истощенные в грязных лохмотьях, точно полуобщищенные куры. Когда поезда эти останавливаются на станциях, моментально часовые обступают их с целью оберегать несчастных от любопытных взглядов, и, может быть, нескромных расспросов праздной публики, переполняющей платформы всех станций.

В маленькой и грязной комнате “зале I класса” в ожидании экипажа сидит за чаем группа молодых и пожилых офицеров и беседует спокойно на самые мирные темы. Некоторые из них уже получили боевое крещение, остальные ждут своей очереди.

Все они одинаково спокойны и вместе с тем чувствуется, что каждый из них охвачен глубоким сознанием тяжелого долга перед дорогой родиной.

Ко мне подсаживается молодой симпатичный офицер и в беседе передает о следующем возмутительном факте праздной болтовни. Оказывается, брат его — капитан Г. — участвовавший в 20-дневных боях у Кепри-Кея, не имел возможности переписываться со своей семьей, живущей в Александрополе. Естественно, жена его беспокоилась. Какая-то кумушка приходит к ней, заявляет, что капитан Г. пропал без вести. Известие производит на бедную женщину до того сильное впечатление, что она тут же умирает от разрыва сердца. И что же: оказывается, капитан Г. не только не пропал без вести, но даже и не контужен. Несчастный муж приезжает и застаёт могилу жены...

Ночь, холодно, не могу долго писать. Ждем из Эчмиадзина экипажа. Решили, прежде чем отправиться на театр военных действий, представиться католикосу всех армян и получить его благословение.

Наш отряд состоит из семи человек с епископом Месропом во главе. Едем мы со специальной целью по поручению централ<ьного> армянского национ<ального> бюро. С нами едет представитель Кавказ<ского> отдел<ения> Всерос<сийского> союза городов И. Н. Хунунц. Он везет для передовых позиций теплую одежду и провиант для организаций питательно-перевязочных пунктов со складом белья в тылу армии. Организацией этой займется Кутаисский гор<одской> голова Чиковани, который выедет на днях на места.

ЭЧМИАДЗИН

17 нонбры

В Эчмиадзине мы остановились у архиепископа Усика, в стильном здании библиотеки, недавно выстроенном стараниями епис. Месропа и на средства Д. Б. Авань - Юзбаша хана.

Времени у нас было весьма мало, а потому быстро привели себя в порядок и сейчас же представились католикосу. Оставались у Его Святейшества около часу, затем были приглашены к нему на обед. Во время аудиенции его святейшество, между прочим, нам сообщил, что он получил по телеграфу разрешение наместника на открытие подписки в пользу беженцев-армян.

Кстати, несколько слов об этих беженцах. Заполнив почти всю линию русско-турецких границ, они стремительным потоком направляются вглубь Закавказья. Авангард их уже добрался до Александрополя. Чтобы приостановить это движение, чреватое нежелательными последствиями, национальное Армянское бюро решило употребить все свои усилия и влияние на временное водворение этих несчастных в пограничных армянских селах. По всей вероятности, по окончании войны или приведении в полное безопасное состояние уже завоеванных у Турции местностей, все они будут возвращены на свои родные пепелища. В этом же направлении будет действовать и католикос с согласия высших властей края.

Пока же будущее темно, и весьма трудно учитывать последствия текущих событий.

После аудиенции у католикоса мы посетили эчмиадзинскую академию. Была большая перемена. Ректор академии Степ. Малхасян, рассказав нам о необычайном волнении учеников по поводу войны, прибавил, что 27 чел. из них решили во что бы ни стало идти в добровольцы. При этом ректор просил еп. Месропа успокоить их своим пастырским словом. В большом актовом зале выстроилось в шеренги несколько сот юношей в возрасте от 10 до 25 лет и епископ объяснил, что в настоящее время нет надобности бросать им учение и идти в добровольцы.

Осмотрели новостроящийся дворец католикоса в 50 комнат.

Здание строится на пожертвование покойного А. И. Манташева и обойдется с обстановкой по полмиллиона руб. Производит оно довольно хорошее впечатление за исключением внешнего портала, слишком громоздкого и не изящного.

К нам присоединился ерев<анский> епарх<иальный> начальник еп. Хорен, уже третий день ожидавший нас здесь. Подали фаэтоны, надо спешить, чтобы засветло приехать в Игдыр. Все в один голос твердят, что дорога адски плохая и что даже автомобили с трудом двигаются в аршинной грязи.

Это нетрудно нам представить, судя по пути от ст. Эчмиадзин до Эчмиадзина, 12-верстное протяжение которого мы проделали более чем в 3 часа.

Один из наших фаэтонов, на котором сидел наш симпатичный поэт Ованес Туманянц с попутчиком своим, завяз в грязи так, что нам пришлось употребить целый час времени, чтобы высвободить его. После этого еп. Месроп вынужден был остальную часть дороги с поэтом пройти пешком.

Впрочем, по большому вопросу о дорогах я поговорю особо.

“Кавказское слово”, 25.XI.1914.

С ДОРОГИ

ИГДЫР

18 ноября

Прибыли мы в Игдыр вчера поздним вечером под сильным дождем. Местная интеллигенция, узнав о нашем приезде, заранее позаботилась о нашем помещении. Хорошо, что так, иначе нам пришлось бы трудно, т. к. найти здесь приют, хотя бы на одну ночь, задача не легкая. Заняты не только гостиницы, но и все общественные учреждения и частные квартиры.

Сегодня утром представились генералу О. Приняв нас весьма любезно, он тут же сделал распоряжение о том, чтобы завтра нас в Диадин сопровождал конвой из казаков.

Узнали радостное известие. Около Дутаха мы одержали новую

победу. Взято в плен 170 конных аскеров и гамидийцев, отбиты два пулемета. Убито и ранено 400 турок. В бою участвовала армянская дружина.

Купили 9 лошадей для поездки в Баязет и далее. Лошади прескверные, но нечего делать. Иначе пришлось бы взобраться на спину верблюдов и так совершить наше путешествие, как это делают многие.

Игдыр — огромное армянское село в 3000 дымов слишком. Это преддверие Турецкой Армении. Сюда направляются, главным образом, переселенцы и беженцы из Баязетского вилайета. На улицах видно много пограничных курдов. С виду они мирные жители, но в сущности это те же разбойники, что и их сородичи по ту сторону границы. Они здесь, конечно, не вооружены, но у каждого из них, по единодушному уверению местных жителей, есть ружье, которое они готовы направить против нас в случае малейшего успеха турок.

Что касается курдов вновь занятых нашими войсками местностей, то решено их обезоружить. Первые попытки в этом отношении оказались безуспешными. Сдавать-то оружие курды сдавали, но не то, что нужно, а негодную рухлядь. Годное оружие они прятали. В настоящее время приняты самые суровые меры для окончательного умиротворения их.

Вечером мы посетили местную казарму армянской дружины. Епископы Месроп и Хорен благословили дружинников, ожидающих своей очереди для выступления. Среди них несколько интеллигентных русских, в том числе известный опереточный артист В... человек гигантского роста. Там же видели двух интеллигентных барышень и одну даму с мужем. Последние оба и одна из барышень — русские, люди состоятельные; хлопочут, о получении разрешения ехать на передовые позиции в качестве санитаров.

Дружинники своим видом оставляют прекрасное впечатление. Многие из них испытанные в боях люди. Есть и такие, которые участвовали в русско-японской войне.

Завтра выезжаем в Диадин.

АРЦАП

20 ноября

Из Игдыря до Оргова всего 14 верст. Ехали мы на лошадях в сопровождении прапорщика запаса бывшего армянского артиста Шахатуни с 10 казаками. К вечеру, в нескольких верстах от Оргова, наш проводник из армянских добровольцев для сокращения пути, свернул с “шоссе” направо и ввел нас в болото. Когда выяснилась его ошибка, было уже поздно; лошади наши по колено завязли в липкой грязи.

Мы разбрелись в разные стороны. Начало темнеть. Посреди болота лошади наши остановились и ни за что не хотели двинуться с места. Первой свалилась лошадь И. Н. Хунунца и грозный критик тифлисской городской думы свалился в жидкую грязь как сноп сена. За ним последовал я, а поэт Туманянц уже давно был погружен в тину до пояса и, держа свою лошадь за узду, поэтически обозревал чудные очертания окружавших нас снежных гор. Оставался стойким один Шахатуни, благодаря крепости своего коня.

Стали мы звать на помощь. Но никто не отзывался; как мы после узнали, всех наших товарищей, за исключением епископа Хорсена, постигла та же участь. Было довольно жутко, тем более, что в темноте ничего не было видно, кроме коварной поверхности болота. К счастью, мучения наши продолжались не долго, всего 40 - 50 минут. Вдали мы заметили огонек и, кое-как, шагая и таща за собой лошадей, направились туда и выбрались из проклятого болота.

Дальнейший путь до Оргова мы совершили относительно благополучно.

Когда мы, приехав в Оргов, рассказывали о нашем приключении офицерам, они удивлялись, что дело обошлось без несчастья. Оказалось, что мы попали в одно из исторических нижеараратских болот, где в давние времена погибали целые войска. Стоило нам сделать еще несколько шагов и мы очутились бы в подболотной пропасти.

Благодаря любезности офицеров, в Оргове нам отвели две комнатки в казарме и дали нам самовар. Согрелись, напились чаю и заснули.

Утром мы любовались Алагезскими горами. Арарат утопал весь в облаках. Орговская долина одна из красивейших на Кавказе и любителю природы есть здесь чем восторгаться.

После Оргова начинается Чингирский перевал, превосходящий своей суровой красотой Гудаурский.

Ехали мы сначала по гололедице. Лошади наши, должно быть умудренные опытом, ступали весьма осторожно: почувствовав под собой только что выпавший пушистый снег, они уже развеселились.

Высшая точка перевала около 700 фут. над уровнем моря. Здесь стоит пограничный столб. Шахатуни нам здесь показал то место, где произошел первый бой между нашими пластунами и турками. Ниже в 2-3 верстах находился турецкий пограничный пост, ныне обращенный нами в лазарет. Доктор лазарета нам показал железную кассу поста. Наступление наших славных казаков было до того быстро и неожиданно, что турки успели только разбить эту кассу и испортить водопровод.

В лазарете мы нашли десятка два больных и раненых нижних чинов. Больные страдают большей частью болотной лихорадкой.

“Кавказское слово”, 27. XI. 1914.

В ЗАВОЕВАННОЙ ТУРЦИИ

АРЦАП

Это небольшое селение самого примитивного вида. Дома в нем представляют ряд четырехугольных глиняных ящиков на половину в земле, на половину над землей. Характерно, что все они имеют между собой внутреннее сообщение, так что, входя в одном конце селения в первый встречный дом, можно выйти в другом конце, не видя улицы. Осенью и в начале весны, когда на кривых улицах грязи по горло, движение совершается на плоских крышах домов.

Нам отвели для ночевки в один из этих домов, надо полагать, самый лучший, т. к. принадлежал он самому зажиточному

крестьянину. Это была огромная нора, состоящая из трех отделений. В одном помещался домашний скот, в другом огромная семья хозяина-армянина с кучей малолетних детей и несколько солдат, в третьем мы.

Не успели мы расположиться, как сейчас же явились к нам представители армян — крестьян во главе с их семидесятилетним священником в лохмотьях, мало чем отличающих его от других. И стали они изливать свое горе, перебивая друг друга. Все их жалобы сводились к одному: притеснению их курдами - гамидийцами с одной и турецкими властями с другой стороны. Все они в один голос спрашивали нас:

— Останутся ли на этот раз русские у нас навсегда или опять покинут нас на произвол туркам, как это делали три раза.

— Мы уверены, что на этот раз останутся и навсегда, — отвечали мы.

— Дай Бог, дай Бог, — произносили они в один голос.

При этом преждевременно одряхлевший священник поднял руки вверх и тихо молился.

В БАЯЗЕТЕ

Баязет — бывшая резиденция каймакама, т. е. по нашему — уездный город. Расположен он на склоне каменистой горы, под высокими неприступными скалами, острые пики которых издали походят на минареты.

В городе две крепости, когда-то очень грозные. Одна из них расположена на северо-западной окраине города, другая на четверть версты выше, в скалах. Мне удалось посетить первую из них. Обведена она широкими каменными стенами вышиной в 6—7 саж. с бойницами. Входя в обширный двор крепости, я был поражен художественной красотой внутренних построек.

Это не крепость, а скорее роскошный дворец со множеством отделений и довольно большой мечетью. Архитектура построек — смесь древнеперсидского, византийского и армянского стиля. Поражает своей красотой особенно внутренняя сторона купола

мечети и внешняя сторона остроконечной сторожевой башни.

В настоящее время все отделения крепости-дворца заняты нашими войсками. Было бы очень желательно сохранить в неприкосновенности эти художественные постройки. Полагаю, что это так и будет, т. к. нынешний губернатор баязетского округа человек просвещенный и большой ценитель искусств. Он предполагает выписать с Кавказа фотографа для фотографирования и составления альбома наиболее красивых частей крепости дворца.

Как город, Баязет ничего интересного из себя не представляет. Дома низкие, темные, с плоскими земляными крышами, улицы узкие, кривые, немощенные и всюду заваленные кучами мусора и даже падалью.

Накануне войны в городе было около 10.000 жителей, из коих 3.700 армян, остальные турки и курды. С открытием военных действий последние вместе с гарнизоном поспешно бежали из города. Многие из них хранение своих домашних имуществ поручили дружественным армянам. Конечно, со стороны некоторых из последних были злоупотребления, но эти злоупотребления сторицей были заранее вознаграждены самими турками и курдами, перед своим бегством ограбившими армян.

На следующий день после нашего приезда с утра начали навещать нас оставшиеся в городе турки и курды. Каждый из них как бы считал своей обязанностью уверять нас в своей симпатии к русским и армянам и поносить турецкое правительство. Особенно яростно нападал на последнее помещик и член местного суда Исмаил Эфенди Налбанд-Заде, старавшийся доказать нам неизбежную гибель Турции, благодаря Энвер-паше и “алламанам”. Когда он говорил, один молодой его соотечественник, сидя на корточках, уныло качал головой, а другой почтенный старик в чалме, охал и ахал. Невольно во мне зародилось сомнение в их искренности. Казалось мне, что они еще прячут за пазухой кинжал и при первом удобном случае готовы вонзить его нам в грудь. Надо сказать, что прежнее доверие наше к дружественным уверениям турок и курдов теперь понемногу сменяется осторожным отношением к ним.

В ТУРЦИИ

По дороге из Диадина в Учкилису мы встретили партию пленных арабов-сирийцев в 40—50 человек. Десятка полтора казаков верхами гнали их по направлению к Ташличаю. Шли они медленно, еле передвигая ноги. Вид у них был жалкий. Некоторые были в овечьих шкурах, большинство же было одето в лохмотья. Двое или трое были укутаны в изодранные курдские одеяла.

Все они маленького роста, худые, истощенные; оглядывали нас пугливыми глазами. В сел. Казыкей нам сообщили, что сирийский корпус арабов преследует тех курдов, которые не хотят взяться за оружие, и не только мужчины, а и женщины, т. к. настоящую войну арабы считают священной.

Отъехав немного от партии пленных, мы наткнулись на труп араба, лежавший поперек дороги ничком. Такова участь тех пленных, которые отстают от своей партии...

По словам наших офицеров, арабы дерутся менее храбро, чем турки, даже чем курды.

Учкилиса — довольно большое армянское селение. Оно известно своим монастырем имени св. Иоанна. Когда-то в этом монастыре совершалось миропомазание армянских католикосов. Я не знаю на Кавказе храма таких больших размеров, как учкилисский. Длина его более 19 саж., а ширина около 11 саж. Окружен он множеством каменных келий, к сожалению, разрушенных курдами. В монастыре ограблена вся движимость.

В настоящее время монастырь занят нашими войсками и служит приютом для ночевки солдат. Армяне-сельчане и даже сам настоятель его не протестуют против этого. Наоборот, они охотно снабжают солдат всем необходимым безвозмездно.

При въезде в сел. Каракилису почти все местное армянское население вышло нам навстречу, во главе со священниками и учителями.

Мы направились в армянскую церковь. Там епископ Хорен совершил молебствие о здравии Государя Императора и о даровании победы русской армии. Это было первое молебствие в каракилисской

церкви. Затем епископ Хорен обратился к массе присутствовавших с пастырским словом.

На следующий день утром мы сделали визит начальнику отряда ген. А. и просили распоряжения насчет дальнейшего нашего путешествия.

— Я вас не могу пустить в Дутах, — сказал нам генерал.

— Почему?

— Сейчас там идет бой, в котором участвует, между прочим, и вторая армянская дружина.

— В бою мы не будем участвовать, а быть зрителями интересно.

— Нельзя, турки могут вас взять в плен. О вас, писателях и юристах, я не забочусь, а отдать епископа в плен туркам будет... неловко.

Нечего было делать. Волей-неволей мы согласились изменить наш маршрут. Мы решили поехать в Алашкерт и оттуда в Даяр и далее...

На это генерал дал свое согласие и тут же сделал распоряжение о конвое.

* * *

Мы уже были готовы к отъезду из Каракилисы по новому маршруту, как получили новый сюрприз. Явился хорунжий от начальника отряда ген. А. с запиской о том, что кругом дороги к Делибабе, куда мы направлялись, собралась масса курдов и что, поэтому, небезопасно держать путь и по тому направлению.

В записке сообщалось также, что по полученным сведениям, турки собираются совершить нападение на сарыкамышский отряд.

Тем не менее мы решили поехать в Алашкерт и там ожидать более благоприятных сведений. Если условия не изменятся, то из Алашкерта мы имеем перед собой третий путь к намеченному нами пункту, а именно путь через кагызманские горы. Говоря проще, мы предпочитали быть так или иначе в движении, чем сидеть неподвижно в одном месте, хотя бы два дня.

И мы поехали в Алашкерт. В 3—4 верстах от города нам довелось услышать слева канонаду, справа ружейные выстрелы.

— Налево идет бой под Дутахом, а направо перестрелка с курдами, — объяснил нам сопровождавший нас подесаул.

Одновременно с нами прибыли в Алашкерт 4 сотни казаков, направляющихся в Дутах.

В Алашкерте мы остановились в доме одного старого турка. Приведя себя наскоро в порядок, мы пошли в армян<скую> церковь, где нас ожидали местные армяне. Здесь похоронен убитый турками молодой священник Тер-Осеп Тер-Минасян, корреспондент одной тифлисской армянской газеты. Епис. Хорен совершил краткую литию по убитом. Убитый священник оставил без всяких средств жену и четырех малолетних детей. Отец его также священник и ныне находится в Карсе.

Пришли сообщить нам, что в происходящей недалеко перестрелке убит один армянин. По нашей просьбе местный комендант послал 5 казаков для доставки в город трупа убитого.

Алашкерт небольшой город. Жителей в нем всего около 1000 семейств, из коих одна треть армяне, остальные турки. Турки ушли из города и дома их теперь находятся в распоряжении армян и казаков. Некоторые из турок оказывали помощь армянам во время бегства их сородичей, спасая их от резни. Между прочим, хозяин дома, где мы остановились, спас 11 семейств.

Нам прислуживал шустрый курдский мальчик Пизамадзин. Родители его убежали в Дутах, оставив его одного в Алашкерте на попечение армян.

“Кавказское слово”, 17. XII. 1914.

С ДОРОГИ

По распоряжению из Тифлиса, епископ Месроп выехал обратно и мы дальнейшее наше путешествие совершили без него.

Мы выехали из Баязета по направлению к передовым позициям в 9 ч. утра. Генерал-губернатор баязетского округа счел необходимым несколько усилить наш конвой в виду небезопасности дороги.

С высот Баязета перед нами открылась роскошная панорама. Направо вырисовывались снежные высоты Чингирского перевала, впереди, далеко на горизонте красовалась Сурпсинопская гора.

Общий характер географии баязетского, а также алашкертского округов таков: направо и налево тянутся длинные цепи невысоких гор, разделенных друг от друга узкими ущельями, посредине полоса равнины шириной от 10 до 20 верст. Земля здесь отличается большой плодородностью. Орошается она в баязетской долине горными потоками, а в алашкертской священной рекой Евфрат.

Обе долины, когда-то населенные исключительно армянами, ныне почти всецело заняты турецкими племенами, если не считать десятка два армянских деревень.

В настоящее время все курдские деревни пустуют. Покинув их, курды удалились в горы и оттуда они частенько совершают нападения то на казачьи разъезды, то на армянские деревни. Последний набег был на деревню Хачен, в нескольких верстах от города Алашкерт. Это было как раз в момент нашего приезда в Алашкерт, и мы были свидетелями перестрелки между армянами и казаками с одной, и курдами, с другой стороны.

Расстояние между Баязетом и Диاديном 40 верст. Вначале путь идет по равнине. Подходя к Диадину, он все более и более делается круче, трудно проезжать даже на курдских лошадях в зимнюю пору года.

В 6 — 7 верстах от Диадина начальник нашего конвоя, молодой казачий офицер, обратил наше внимание на чернеющие точки в ближайшем ущелье, покрытом свежим снегом.

— Это трупы гамидийцев, убитых нами во время диадинского боя, — сказал он.

— Вы участвовали в этом бою? — спросил я.

— Да, кроме того, участвовал еще в двух других боях.

— Как дерутся курды?

— Отчаянно! Они избегают рукопашной схватки, но стреляют недурно.

Некоторые из трупов лежали почти поперек нашей дороги. Они были совсем голы и производили отвратительное впечатление. Удивительно, что все виденные нами трупы не были тронуты хищными животными и птицами, коими изобилуют эти места.

Вероятно, пока они довольствуются труппами лошадей и ослов, в огромной массе валяющихся по обе стороны дороги.

Диадин — это огромное курдское селение. Армян в нем всего 14 дымов. Занимаются они здесь торговлей и ремеслами. Курды все покинули свои жилища и, по примеру других, прячутся в горах.

Комендант Диадина любезно позаботился о нашем приюте. Назначенный им старшина-армянин достал для нас самовар, поставил его сам и стал рассказывать нам обо всем, что видел и слышал. Оборванный, грязный, он производил на нас впечатление нищего. Оказалось, что он был когда-то богатым купцом и вел торговлю с Кавказом.

На этот раз перед нами оказалась не жертва курдского или турецкого насилия, а совсем другое. При ликвидации дел конторы Цовьяновых он лишился всего своего капитала в 38 тысяч рублей.

“Кавказское слово”, 20. XII. 1914.

ԵՍ ՉԵՄ ԶԱՐՄԱՆՈՒՄ

Եթե մենք ունենայինք հոգեպես անկախ և բարոյապես զորեղ մտավորականություն, իր կոչման հպարտությամբ և դասակարգային պատվասիրությամբ օժտված, այն ժամանակ մեր հասարակությունն այլ մորալ կերպարանք կունենար և մեր գործերն այլ կերպ կընթանային:

Այնպիսի մտավորականություն, որ իր կենցաղավարությամբ, իր բարք ու վարքով, իր մտքի և զգացումների ուղղությամբ կարողանար կրթիչ դեր կատարել: Որ միջավայրից չազդվեր, այլ ինքն ունենար ազդեցություն միջավայրի վրա: Որ իր զգացումները չվաճառեր շրջապատող իրականությանը, միտքը չաղավաղեր ծուռ հասկացված հաշիվներով և սխալ ձգտումներով: Որ զգար և հասկանար, թե կա իր վրա դրված մի սրբազան պարտականություն, որի առջև պիտի կորչեն և ամհետանան ամեն ինչ, որ արատ է գցում այդ պարտականության վրա: Որ կարողանար ամենասուր և ամենադառն ճշարտությունն ասել այնտեղ, ուր հարկավոր է ասել, առանց վայրկյան անգամ մտածելու, թե ում է ասում և ինչ հետևանքներ կարող է ունենալ ասածն իր անձնական շահի համար:

Այո, եթե ունենայինք այդպիսի մտավորականություն, այդքան տգեղ

չէր լինի մեր հասարակության բարոյական կերպարանքը:

Բայց ի՞նչ է մերկայացնում մեր մտավորականությունը, եթե մի կողմ թողնենք առանձին անհատները և վերցնենք նրան իբրև դասակարգային ամբողջություն: Լրագրական մի թռուցիկ հոդվածով անկարելի է ամբողջովին պատկերացնել նրա բացասական հատկությունները: Այսօր ես ուզում եմ շեշտել մեր մտավորականության մի վերին աստիճանի տգեղ հատկությունը: Դա նրա կույր երկրպագությունն է ոսկու տոպրակներին: Ասում եմ կույր, որովհետև երբեմն այդ երկրպագությունն այնքան է անհաշիվ, անհիմաստ, անտեղի, որ չգիտես ինչով բացատրել:

Ոսկին սիրում եմ, իհարկե, ամենքը՝ և՛ մտավորականը, և՛ տգետը, և բնական է, որ ոսկու հրապույրը անդրադառնում է և ոսկետիրոջ վրա: Եվ չկա ազգ, որի մտավորականությունը կարողանա պարծենալ, թե ազատ է այդ համաշխարհային ախտից: Բայց այնպես սիրել, այնպես խոնարհվել, այնպես ստրկանալ, ինչպես սիրում է, խոնարհվում և ստրկանում հայ մտավորականությունը մեր ոսկետերերի առջև, դուք չեք տեսնի ոչ մի ազգի և ոչ մի հասարակության մեջ: Ամացեք բոլոր հայաբնակ վայրերը Թիֆլիսից սկսած մինչև Փարիզ, այցելեցեք հայ ընտանիքները, հասարակական ժողովարանները, և ամենուրեք կտեսնեք միևնույն տեսարանը. հայ մտավորականին — լինի նա բժիշկ, իրավաբան, ճարտարապետ, ինժեներ, դերասան, գրող, նկարիչ, անդրիագործ, ուսուցիչ, վարդապետ, եպիսկոպոս — մեջքից թեքված, քաղցր ժպիտն երեսին հայ միլիոնատերին շոյելիս...

Շատ անգամ հայ մտավորականը ոչ մի կարիք չունի շոյելու, բայց դարձյալ շոյում է: Ինչո՞ւ: Հարցրեք, նա ինքն էլ չի կարող բացատրել: Անգիտակցաբար, անզգալաբար: Հենց այնպես, ըստ ավանդության, ըստ սովորության:

Ահա այս է պատճառը, որ հայ հարուստն այնքան համարձակ, այնքան անվերապահ արհամարհում է հայ մտավորականին և նրա կարծիքին վերաբերվում այնպիսի հանդուգն ծաղրով ու ծիծաղով:

Եվ ես բնավ չեմ զարմանում, որ այսօր ասպարեզ են գալիս և իմ հարձակումների դեմ ոչ միայն բերանացի, այլև գրավոր, հրապարակորեն աշխատում են արդարացնել և պաշտպանել այն միլիոնատերերին, որոնց անսրտությունը և անգթությունը հայ ազգի այժմյան բացառիկ թշվառությունների վերաբերմամբ վաղուց, շատ վաղուց պիտի մատնած լինեին հալածանքի...

ՍՆԱՆԿ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ճշմարտության հետ խաղեր խաղալը երբեք լավ հետևանքների չի կարող հասցնել և չկա ավելի ամոթալի երկչոտություն, քան ճշմարտությունից փախչելը:

Բարոյապես և հոգեպես տկարների համար հաճելի է նիրհել քաղցր երազների հովում, բայց կյանքն անողոք է իր իրականությամբ. նա կործանում է ամեն մի ինքնախաբեություն: Եվ վայ այն ազգին կամ ժողովրդին, որ հոգեկան քաջություն չունի ամենադառն իրականության երեսին ուղիղ մայելու:

Թուրքահայ ժողովուրդը բնաջինջ է լինում, Հայաստանն ամայանում է. սա այնքան ճիշտ է, որքան ինքը ճշմարտությունը: Եվ այն անծինք, որոնք աշխատում են այդ սոսկալի փաստը ոչ հերքել, — վասնզի անհնարին է հերքել համայն աշխարհի վկայությամբ կատարվող իրողությունը, — այլ քողարկել կամ մսեմացնել, հետևում են մի սնանկ քաղաքականության, որ կարող է վատագույն ծառայությունը մատուցանել ոչ միայն թուրքահայ դատին, այլև մեզ ռուսահայերիս:

Դեպքեր կան, երբ լռությունն արդարև խոհեմություն է, բայց ներկա դեպքում քարոզել լռություն — նույնն է, թե իրդեհված տան բոցերի մեջ այրվող մանուկներին ասել. «Մի՛ գոռաք, մի՛ աղաղակեք, որովհետև դուք խանգարում եք իմ քունը»:

Կարո՞ղ է լինել դրանից ավելի դաժան էգոիզմ:

Հարկավ ես չունեմ իրավունք այդչափ էգոիզմ վերագրելու այն իրոք պատկառելի գործիչներին, որոնք լռություն կամ չափավորություն են քարոզում, վասնզի համոզված եմ, որ նրանք ինձանից պակաս չեն տառապում թուրքահայերի համար, բայց կարող են ասել առանց տատանման, որ լռության քաղաքականությունը, որ քարոզում են նրանք, նույնքան կորստաբեր է մեզ համար, որքան և թուրք կառավարության վայրենությունը: Եթե տակավին մնացել է թուրքահայ դատ քաղաքական աշխարհի համար, հապա ի՞նչ կորուստ կարող է կրել նա մեր դառն տանջանքներից առաջացող հեծկլտանքից: Գիտեմ, որ այդ հեծկլտանքը չի կարող օգնել թուրքահային, բայց ինչպե՞ս զսպել տառապող հոգիները, ինչպե՞ս ստիպել նրանց լռելու և ո՞ր բարոյական օրենքով:

Ասում են՝ մի՛ ողբաք Հայաստանը և մի՛ գոռաք ու աղաղակեք, թե նա ամայանում է, որովհետև եվրոպան, լսելով ձեր ծայնը, կասե. «Քանի որ

ինքներդ վկայում եք, որ Յայաստանում հայ չի մնացել, հետևաբար և՛ չի կարող լինել հայկական դատ»:

Կարո՞ղ է լինել ավելի ողորմելի և ավելի սնանկ քաղաքականություն: Կարելի՞ է լինել այդչափ միամիտ, եթե չասենք ավելի:

Կարծես Եվրոպան կույր է ու խուլ, ոչինչ չի լսում, ոչինչ չի կարդում: Կարծես համայն աշխարհի աչքի առջև պատերազմող Թուրքիայի մասին տեղեկությունները նա հայերից է ստանում ու մանավանդ հայ մամուլից: Կարծես եվրոպական մամուլը ոչինչ չի գրում հայերի մասին և հանգամանքներին տեղյակ եվրոպացիներ՝ ավելի բարձր ծայնով չեն աղաղակում թուրքահայերի կորստյան մասին, քան մենք հայերս: Վերջապես կարծես եթե մենք լռենք, Եվրոպան մեր լռությունը կհամարե նշան Յայաստանի հայերի բազմության և հայկական դատը կլուծե համաձայն մեր լռության և ոչ այն տեղեկությունների, որ կժողովե ինքն իր գործակալների միջոցով:

Ոչ, պարոններ, Ձեր պահանջը երեխայական է և ձեր քարոզած քաղաքականությունը սնանկ:

«Մշակ», 23. IX. 1915:

ԱԿԱՍՍ ԵՐԿՏՈՂ

Ինձ համար հասկանալի է այն ծայրահեղ անհանգստությունը, որ պաշարել է հասարակական գործիչ պ. Գրիգոր Չալխուշյանին: Յայի տառապանքները խել էն նրանից սառը խորհելու ու նորմալ գործելու ընդունակությունը և հիմնովին տակն ու վրա արել նրա հոգին: Նա նման է այժմ՝ այն անչափ զգայուն և անչափ ծնողասեր զավակին, որի պաշտեցյալ մայրը տառապում է ծանր տանջանքներից և ինքը չգիտե ինչով օգնել նրան: Նա դիմում է այսօր մի բժշկի, վաղը մյուսին, հետո երրորդին, չորրորդին: Դիմում է իր հարևաններին, ծանոթներին, անծանոթներին և յուրաքանչյուրից խորհուրդ հարցնում, յուրաքանչյուրից օգնություն աղերսում ու ամենքի, անխտիր ամենքի առջև հառաչում է, լալիս, հեկեկում: Իսկ երբ մոտենում է հիվանդին, դեղերը շփոթում է, մեկի փոխարեն մյուսն է տալիս, անժամանակ, անչափ և այսպիսով, օգնելու փոխարեն, ավելի ծանրացնում է հիվանդի վիճակը:

Յարկավ, զգայուն հայրենասիրությունը միմիայն գովասանքի է արժանի, սակայն, երբ զգացումը խելքի ու տրամաբանության հետ հաշտ

չէ և ընդհակառակը բռնանում է նրանց վրա, դրությունը դառնում է ծիծաղելի, որպես ծիծաղելի է այն սգավորը, որ փողոցներում, հրապարակներում ու կտուրների վրա է կուրծքը պատռտում ու մազերը փետում իր մերձավորի մահվան պատճառով:

Սրանից մոտ երկու ամիս առաջ պ. Չալխուշյանը՝ պ. Մաքսիմ Կովալևսկիին ուղղել էր մի մասնավոր նամակ, ուր նա նկարագրելով հայ-թուրքական և առանձնապես հայ-վրացական հարաբերությունները՝ խնդրել էր հայտնի պրոֆեսորին օգնության գալ և մեզ հաշտեցնել մեր հարևանների հետ: Միաժամանակ պ. Չալխուշյանն այդ նամակը հրովարտակորեն ուղարկել էր մի քանի ռուս ու հայ լրագիրների, իհարկե տպելու համար, որպեսզի աշխարհը մի անգամ ևս տեսնե նրա կուրծք պատռտելը և մազեր փետելը:

Նամակը կարդացվեց: Եղան մարդիկ, որոնց դուր եկավ նա. «զգացմունքով է գրված»: Շատերը տարակուսանքով շարժեցին իրանց գլուխը, շատերն էլ ծաղրեցին: Ծաղրեցին մանավանդ վրաց լրագիրները, մի հանգամանք, որ միանգամից արդեն աննյուլե արավ պ. Չալխուշյանի տարօրինակ առաջարկը:

Կարդացի, ի միջի այլոց, և ես այդ նամակը: Զծաղրեցի, որովհետև ես սովորություն չունեմ անկեղծությունը ծաղրելու, որքան ևս նա երեխայական լինի, և որովհետև գիտեի, որ ներկա դեպքում պ. Չալխուշյանին դեկավարողն եղել է անկեղծ հայրենասիրությունը:

Ես միայն մի բան ասացի. այն է, որ նախ այդ տեսակ խնդիրներով զբաղվելու ժամանակը չէ, քանի որ մեր գլխին կանգնած է թշվառ թուրքահայերի ճգնաժամը, երկրորդ՝ որ պ. Չալխուշյանը չէ այն անձնավորությունը, որի միջամտությունը կարող է այս կամ այն ազդեցությունն ունենալ հայ-վրացական հարաբերությունների վրա, և, վերջապես, հազիվ թե պ. Կովալևսկին հանձն առնե մի այդպիսի ծանր, բարդ ու պատասխանատու դեր*:

Իմ ասածներն արդարացան լիովին. պ. Չալխուշյանի դիմույն մնաց առանց որևէ հետևանքի: Վրացիները բացեիքաց հրաժարվեցին օտարի միջամտությունից և, ինչպես ասացի, ծաղրեցին պ. Չալխուշյանի նամակը: Պ. Կովալևսկին, որի համեստությունն անձամբ ճանաչելու դեպքն եմ ունեցել, նույնպես հրաժարվեց պ. Չալխուշյանի առաջարկը ընդունելուց, ասելով. «Ես ի՞նչ կարող եմ անել»: (Այս խոսքերն ինձ հաղորդեց, պ. Կովալևսկիի բերանից լսելով, պրոֆ. Ղամբարյանը):

Ուրեմն ի՞նչ էր մնում պ. Չալխուշյանին անելու: Լռել առնվազն և սպասել մինչև այն ժամանակ, երբ նրան կհրավիրեն դեպի այն դռները, որոնցով նա անկոչ հյուրի պես ուզում է ներս վազել:

Բայց ոչ. պ. Չալխուշյանը նորից կտուր է բարձրացել և նորից կուրծք է պատառոտում և մազեր փետում: Բաքվում հրատարակվող «Արև» լրագրի № 151-ում նա տպել է մի երկար հոդված, ուր նա իր սրտի թույնը, որ առաջացել էր իր անհաջողությունից, թափում է «Մշակի» և իմ գլխին: Կարծես, այդ անհաջողության պատճառը մենք ենք եղել, այլ ոչ պ. Չալխուշյանի անհամեստությունը՝ անպատճառ խառնվել և՛ այն գործերի մեջ, որոնց մասին գաղափար անգամ չունի:

Ինչ վերաբերում է ինձ, պ. Գ. Չալխուշյանի այդ հոդվածին չեմ պատասխանի:

Այդ տեսակ հրապարակախոսների հետ չեմ վիճում: Չեմ կարող վիճել և ես: Բայց կկամենայի մի ցանկություն արտահայտել. այն է, որ պ. Չալխուշյանը դուրս չգար բնությունից իրան սահմանված որոշ հոգեկան ու բարոյական ուժերի շրջանակից: Անկասկած նա վերին աստիճանի օգտակար հասարակական գործիչ է, գիտե իր ծննդավայր Նախիջևանի հասարակության վրա ազդել, տաղանդավոր դրամ հանգանակող է հոգուտ ազգային նպատակների և, վերջապես, զուրկ չէ որոշ հրապարակախոսական ընդունակությունից: Ահա այդ սահմաններում նա ինձ համար միշտ եղել է հարգելի և կմնա: Իսկ երբ նա ձգտում է դուրս գալ իր շրջանակից և ազգային հովվապետի ցուպ է բռնում ձեռքը, դրությունը դառնում է մի քիչ ծիծաղելի...

Համեստությունը կա և միշտ կմնա մարդկային գլխավոր բարոյական գարդը:

«Մշակ», 26. IX. 1915:

СУДИТЕ, НО НЕ ОСУЖДАЙТЕ
(Письмо в редакцию <“Кавказского слова”>)

Я бы не желал вмешаться в полемику, возбуждаемую вашим сотрудником г. Берберовым по поводу обвинения некоторыми Армянского национального бюро в трагедии турецких армян. Позволительно ли домашним затевать между собой спор в то время, когда пожар в доме еще не прекратился. Пользы от этого, конечно, никакой, а вред налицо: напрасная трата энергии, так нужной для

предотвращения дальнейшего несчастья. Наконец, взаимное обвинение друг друга не приведет ли, в конце концов, к тому, что забудется истинный виновник пожара?

Но, к сожалению, в статье вашего сотрудника под заглавием “Верный шаг”* на мой счет допущены фразы, которые могут породить массу недоразумений и вызвать нежелательные кривотолки. Поэтому оставить эти фразы без внимания я не могу при всем желании.

Смысл их таков: раз противники Армянского национального бюро вину несчастья турецких армян сваливают на политику бюро и на выступление армянских дружин, т. е. элементы, якобы возбудившие озлобление турецкого правительства и вызвавшие поголовное истребление армян, то почему же на скамью подсудимых не посадить и того, кто “бросил первый шар об автономии Армении”, а именно: меня.

Возражение совершенно правильное, но в нем есть недосказанность, против которой - то я и протестую всей душой. Умышленно или нет, но г. Берберов косвенно и меня причисляет к группе лиц, обвиняющих и национальное бюро и дружины в истреблении турецких армян. Между тем мое мнение в этом отношении диаметрально противоположно мнению врагов бюро и мне за последнее время не раз приходилось спорить с ними об этом.

Я согласен с тем, что ошибок в деятельности бюро и вообще руководителей армянской политики немало, есть они и теперь, но было бы с моей стороны недобросовестно и нечеловечно ошибки эти возводить в степень исторического преступления. Тот не делает ошибок, кто ничего не делает и не удивительно, что наиболее суровыми критиками деятельности бюро являются, главным образом, люди, во всю свою жизнь проявлявшие преступную индифферентность к судьбе турецких армян; люди, никогда палец о палец не ударявшие в пользу того или другого национального дела; люди, и теперь ничем не оказывающие помощь хотя бы несчастным беженцам.

Появление армянских дружин в рядах нашей армии не есть плод прихоти какой-либо политической группы или национального тщеславия. О, далеко нет. Оно — порождение вековой ненависти турецких же армян к Турции, пять столетий питавшейся их кровью и пять столетий осквернявшей один из красивейших уголков нашей

планеты. Оно — плод глубокой симпатии к России — исконной защитнице восточных христиан. Это было и есть стихийное движение, вызванное вековыми страданиями мирного и культурного народа. Чаша была слишком переполнена, чтобы армяне открыто и смело не выступали против своих угнетателей.

И теперь, когда армянские дружины храбро проливают свою кровь за честь России и в защиту многострадального народа, было бы нечестно и бесчеловечно с чьей бы ни было стороны бросать малейшую тень на их бескорыстное самопожертвование.

Трагедия турецких армян вызвана не выстулением их и даже не местными восстаниями в турецко-армянских провинциях, как это силятся доказать некоторые политики. Наоборот, и появление дружин и эти местные восстания вызваны беспримерными зверствами турецкого правительства. Кому не известно, что последнее давным-давно решило раз-навсегда избавиться от народа, который не мало содействовал моральной и физической гибели Турции.

Где же были дружины в 1895 году, когда по приказанию Султана Гаида было истреблено 300,000 армян и в 1908 году, когда по приказанию младотурок было вырезано в Адане 30,000 армян? **

Надо же быть объективным в столь серьезном обвинении.

“Кавказское слово”, 15. X. 1915.

ԻՆՉՈ՞Ւ ՄԻԱՅՆ ՄԵՆՔ

Բարի ցանկություններով դժոխքի հատակն էլ է ծածկված, բայց այնուամենայնիվ նա դժոխք է:

Բավական չէ ձգտել, այլև պետք է ունենալ ցանկալին իրագործելու բարոյական կարողություն:

Ո՞ր հայը ներկա տխուր օրերին ազգային համերաշխություն չէր փափագում և ո՞րը մեզանից չէր ծափահարի այդ համերաշխությամբ, եթե նա իրագործվեր:

Բայց նա չիրագործվեց հակառակ ընդհանուր ցանկության: Եվ ես կանխավ զգում էի, որ չպիտի իրագործվի:

Ինչո՞ւ: Որովհետև համերաշխ գործելու համար չափտի լինել հայ, այլ բելգիացի, անգլիացի, ֆրանսիացի, այսինքն՝ քաղաքակիրթ: Որովհետև մեր հոգեկան կրթությունը տակավին տկար է համուն ընդհանուր շահերի գեթ ժամանակավորապես մոռանալու անձնական, կուսակցական և ոչ կուսակցական գծությունները:

Մարդիկ իրարու հրավիրեցին՝ համուն ամենքի համար հավասարապես գնահատելի ազգային շահերի՝ մերձենալ, ձեռք ձեռքի տալ և նույն մարդիկ, միևնույն ժամանակ, իրարու գլխին թափեցին ամենավիրավորական, ամենաստորացուցիչ նախատիքները, անարգանքներն ու լուտանքները: Ոչ մի հարգանք դեպի հակառակորդի անձնական պատվասիրությունը, ոչ մի պատկառանք դեպի այն, ինչ որ կոչվում է մարդկային արժանապատվություն:

Եվ ովքե՞ր էին և են այժմ իրարու վրա հազար ու մի տեսակ աղտեղություններ շարտողները: Նրանք գլխավորապես, որոնք, տարիներով ապրելով քաղաքակիրթ երկիրներում, տեսել են և գիտեն, թե այնտեղ որքան զգուշաբար են վերաբերվում հակառակորդները դեպի իրարու անձնավորությունը, բարոյական վարկն ու պատիվը:

Ինչ ուզում եք ասեք, ներկա համազգային թշվառության օրերին՝ ես չեմ կարողանում երևակայել մի հատիկ հայ, որ անկեղծ չվշտանա իր ազգի ցավերով, որ ջերմ ցանկություն չունենա իր ուժերի չափ այդ ցավերը դարձանելու գործին օգնելու: Այնինչ յուրաքանչյուր հայ, որ կարող էր ընկերական գործունեության մեջ օգտակար ուժ լինել, ձգտում է դառնալ մարդկային բարք ու վարքերի մեծակաճառը: Եվ այն հասարակական գործիչները, որոնց անուններն այսօր հնչում են հրապարակում, աշխատում են մի—մի բռնակալ դառնալ նույնիսկ այնպիսի մի անմեղ գործում, որպիսին է գաղթականներին օգնելու գործը: Եվ ոչ մեկը չէ կամենում ընդունել մյուսի հեղինակությունը:

Թվում էր ինձ, որ Թիֆլիսում չկայացած համերաշխությունը կարող է կայանալ Պետրոգրադում: Բայց, նայեցեք, համագումարը դեռ չէ գումարվել և արդեն գծությունների և պառակտման օձն իր գլուխը դուրս է ցցել:

Կովկասի հայերը համառությամբ պահանջում են համագումարը հետաձգել, Պետրոգրադի և Մոսկվայի հայերը նույն համառությամբ չեն համաձայնվում հետաձգել:

Ես չգիտեմ, որ կողմն է ավելի իրավացի, գիտեմ միայն, որ փաստն ինքնընստինքյան տխուր է յուրաքանչյուր անկախ դիտողի համար: Հետևաբար մարգարե չափտի լինել գուշակելու համար, թե ինչ ողորմելի

կերպարանք է ունենալու ճի ազգային կոչված համագումար, որ այդ տեսակ առաջաբանով է սկսվում:

Հետո, այդ ի՞նչ անձնապատկանություն է համագումար հրավիրող կոմիտեի կողմից, որ առանց կովկասյան հայերի հետ կանխապես խորհրդակցելու՝ ինքնազուլխ կազմել է համագումարի զբաղմունքների ծրագիրը և մասնակցողների ցուցակը: Ո՞վ է տվել նրան իրավունք ընտրություններ անելու և հայ հաստատությունները բաժանելու «ընտրյալների» և «ոչ ընտրյալների»: Ի՞նչ բարոյական հեղինակություն ունի նա հայ ազգի աչքում, որո՞նք են այն հասարակական ծառայությունները, որ իրավունք են տալիս նրան հրամաններ արձակելու: Ոչ Պետրոգրադում և ոչ Մոսկվայում չունենք մենք այնպիսի մի հավաքական մարմին, որ բարոյական կարողություն ունենար ազգային որևէ գործի դեկն իր ձեռքն առնելու: Եվ ոչ այնպիսի անհատական խոշոր մեծություններ, որոնց միանձնական հեղինակությունը կարողանար փոխարինել հավաքականը: Կան այնտեղ շատ հարգելի, շատ պատկառելի անձնավորություններ, որոնք ունեն արած որոշ ծառայություններ ազգին, բայց այդպիսիների թիվը տասնապատիկ ավելի է Կովկասում, և միայն մայրաքաղաքներում ապրելը դեռ մի առանձին հեղինակության գրավական չէ:

Ձարմանալի է: Ինչո՞ւ մեզ և միայն մեզ է վիճակված այդչափ անհամեստություն: Եվ ինչո՞ւ մենք և միայն մենք ենք, որ այդքան պաշտում, այդքան երկրպագում ենք անհատականության քուրմին...

«Մշակ», 6. V. 1916:

ԺԱՄԱՆԱԿ Է ՀԱՍԿԱՑՆԵԼՈՒ*

«Մշակի» № 132-ի նկատողությունը հայ լրագիրների գավառական աշխատակիցների վարձատրության և առհասարակ հայ մամուլի նյութական ապահովության մասին՝ շոշափում է մեր բարոյական ամենազգայուն վերքերից մեկը:

Մամուլ, գրականություն և թատրոն — ահա այն երեք ամենաառաջնակարգ գործերը, առանց որոնց մի ազգ չի կարող ազգ համարվել, եթե նույնիսկ ամենափայլուն դպրոցական կյանք ունենա: Եվ վերին աստիճանի ամոթալի է մեզ համար, որ ճիշտ այդ երեք ամենակարևոր

տարրերն են, որ արհամարհված և մոռացված են այն մարդկանցից, որոնք կարող էին նրա նյութական գոյությունը ապահովել:

Հայ դպրոցը շատ էլ մեծ իրավունք չունի գանգատվելու իր վիճակից: Ինչպես մի ժամանակ մեր եկեղեցիներն ու վանքերն էին վայելում բարերար հայերի բարեհաճ ուշադրությունը, նույնպես և այժմ ուսումնարաններն են վայելում նրանց հովանավորությունը: Դա, իհարկե, ըստինքյան ուրախալի երևույթ է, բայց ի՞նչ է հայ դպրոցը առանց հայ գրականության, հայ թատրոնի, հայ մամուլի, եթե ոչ մի ավելորդ տարր: Դպրոցի կոչումն է բանալ ժողովրդի մտավոր և բարոյական ախորժակը, թատրոնի, գրականության և մամուլի կոչումն է հագուրդ տալ բացված ախորժակին: Արդ, երբ չկա ուտելիք, կա ախորժակ, մի՞թե ավելորդ, նույնիսկ վնասակար չէ այդ ախորժակը օրգանիզմի համար:

Ինձ թվում է՝ ժամանակ է հասկացնելու մեր բարեգործներին և կտակարարներին, որ շարունակ իրանց տուրքը դպրոցներին կամ հոգուտ դպրոցականներին տալով՝ նրանք կատարում են մի թերի գործ:

Ժողովրդին գրել - կարդալ սովորեցնելը, հարկավ, շատ լավ բան է, կրթելն ու մարդավարի կյանքի սովորեցնելն ավելի լավ, ավելի բարձր բան է: Ինչի՞ է հարկավոր դիցուք տարրական դպրոցն ավարտած մի հայ, ազգային տեսակետից, եթե նա դպրոցից դուրս, կյանքում չունենալով մտավոր սնունդ՝ մոռանում է իր սովորածն էլ ու մայրենի լեզուն էլ:

Նորերս մեռան երկու հարուստ հայեր. իշխանուհի օր. Բեկթաբեկյան և Այվազյան, որոնք Թիֆլիս քաղաքի ինքնավարությանը թողին մի - մի խոշոր գումար բարձրագույն դպրոցներում սաներ պահելու նպատակով:

Այդ գումարների արդյունքը բարոյականի տեսակետից լինելու է կատարյալ զերո: Իսկ ազգային տեսակետից նա մեզ համար լինելու է կատարելապես վնասակար: Բարձրագույն ուսումը չէ, որ պիտի մեզ փրկե կորստից, այլ ազգային կրթությունը: Եվ այն հայ բարեգործը կամ կտակարարը, որ իր նվերն անելով՝ աչքի առջև չունի իր ազգի բարոյական շահը, լավ գործ կատարելու փոխարեն, կատարում է վնասակար գործ...

Հայ ազգը իբրև այդպիսին կարող է խղճի ամենայն հանգստությամբ ասել, որ ոչնչով երախտապարտ չէ ոչ իշխանուհի Բեկթաբեկյանի և ոչ Այվազյանի հիշատակին...

Սակայն ի՞նչ է նշանակում, որ մեր կտակարարներն իրանց կտակներն անելիս չեն կարողանում դուրս գալ դպրոցի, եկեղեցու կամ վանքի կախարդական շրջանից: Ի՞նչ է նշանակում այդ կատարյալ արհամար-

հանքը դեպի մեր ազգային մյուս բարոյական գործոնները:

Քաղաքակրթության, պակասություն: Հայ բարեգործներն ու կտակարարները տակավին ընդունակ չեն ըմբռնելու հայ մամուլի, հայ գրականության, հայ թատրոնի և հայ գեղարվեստի բարձր արժեքը իրանց ազգի քաղաքակրթության տեսակետից: Նրանք, հետևելով իրարու օրինակին, կարծում են, որ մեր կյանքի ալֆան և օմեգան եկեղեցին է միայն և դպրոցը:

Ժամանակ է նրանց հասկացնելու, որ այդպես չէ: Եվ հասկացնելու պարտքն ընկնում է այն կոչեցյալ կամ ինքնակոչ խորհրդատուների վրա, որոնք շրջապատում են մեր բարեգործներին ու կտակարարներին...

«Մշակ», 19. VI. 1916:

ԵՐԲ ՊԻՏԻ ԼԻՆԻ ՎԵՐՋ

Որքան հրիչ և հակակրելի է ազգային ինքնապաշտումը կամ ամբարտավանությունը, նույնքան և ավելի դատապարտելի է ազգային ինքնաապտակումը կամ անպատվասիրությունը:

Որքան ծաղրելի և եղկելի է նա, որ ինքն իր վրա սիրահարված՝ չի ճանաչում իրանից դուրս և իրանից հեռու գեղեցկություն, նույնքան ավելի ողորմելի է նա, որ ամեն օր հայելու մեջ թքում է իր երեսին և ինքն իրանից զզվանքով փախչում:

Գերմանացին հակակրելի դարձավ ամենուրեք այն օրից, երբ սկսեց իր ազգը համարել տիեզերքի առանցք և մարդկության զարդ: Այն օրից, երբ նա սկսեց աշխարհի բոլոր վայրերում պարծենալ իր «բարձր քաղաքակրթությամբ», որի իսկական արժեքն այսօր պարզ է մեզ համար:

Հրեայի ամենահակակրելի, ամենահրիչ հատկությունը նրա ազգային ինքնաապտակումն է, ինքնաթքումը և ինքնառոտացումը: Չկա մի ուրիշը աշխարհի երեսին, որ այնքան ամաչի իր ծագումից, այնքան ինքնաբերաբար, երբեմն նույնիսկ առանց որևէ պատճառի ստորացնե իր ազգը, որքան հրեան: Բավական է ասել, որ հրեա ժողովրդի մասին ամենակեղտոտ, ամենազազրելի անեկդոտների հնարողներն իրանք հրեաներն են, և նրանք են ամենատաղանդավոր պատմողները այդ անեկդոտների:

Սակայն մարդկային մտքի, բարոյական էության, ճաշակի և նրբազգացության համար որքան ատելի է այն հրեան, որ թքում է իր ազգի

երեսին, նույնքան զագրելի է այն գերմանացին, որ ազգային գոռոզությունից արբեցած՝ ամբարտավանության փխրուն բարծունքից է նայում ուրիշ ազգերին:

Կյանքի առաջին զեղեցկությունն և ազգերի ամենահրապուրիչ զարդը չափի զգացումն է: Չի կարող լինել սիրելի և հարգելի այն ազգը, որ զուրկ է այդ զգացումից:

Գովելի է, հարկավ, երբ մի ազգ գիտե զգալ իր թերություններն և քննադատել ու մտրակել նրանց անխնա: Գովելի է նույնպես, երբ մի ազգ ճանաչում է իր արժանավորությունները և գնահատում նրանց: Բայց երբ քննադատության, նաև գնահատման մեջ մոռացվում է չափի զգացումը, այն ժամանակ առաջինը դառնում է բարոյական ինքնասպանություն, երկրորդը՝ բարոյական պոռնկություն, հատկություններ, որ արժեն իրար իրանց եւթյամբ:

Այս տողերը գրելու առիթը տվեց ինձ այն հախուռն հարծակումները մեր ազգային բարոյական քիչ թե շատ ունեցած զանձների դեմ, որ վերջերս հայ մամուլի էջերում կատարվում են մինչև այժմ չտեսնված թափով:

Խնդիր է հարուցվում հայ դպրոցի մասին, և ահա տեղից վեր կացող առաջին վարժապետը, որ հազիվ հազ սովորել է մանկավարժության այբուբենը, սկսում է քարկոծել ամեն ինչ, որ եղել է իրանից առաջ և կատարվում է իրանից դուրս:

Խոսվում է հայ թատրոնի մասին. ով ասես, արդյոք, որ չի հարծակվում նրա վրա և ոտնատակ չի անում ու ոչնչացնում նրա 60-ամյա թեև ոչ շքեղ, ոչ հարուստ, բայց մաքուր և հպարտ գոյությունը: Դեռ մի քանի ամիս սրանից առաջ կարդացի մի շարք անճաշակ և առարկելի հոդվածներ, որոնց «հեղինակը» կոպիտ գավազանի մի հարվածով ջարդեց ու ոչնչացրեց և՛ Սուևդուկյանին, և՛ Պեշիկթաշլյանին, և՛ Ադամյանին, և՛ Հրաչյային, և՛ Սիրանուշին, և՛ Աբելյանին ու ամենքին: Նրա համար չկա ոչ հայ բեմ, ոչ հայ դերասան, ոչ հայ պիես, ոչ նույնիսկ հայ հասարակություն:

Իսկ հայ գրականությունը: Ես չեմ ճանաչում հայ կյանքում մի տարր, որ այնքան հալածված ու քարկոծված լինի, որքան խեղճ հայ գրականությունը. մի գործիչ, որ այնքան պարսավված լինի, որքան հայ գրողը: Այժմ բանն այնտեղ է հասել, որ մարդիկ իրանց անմաքուր ձեռներով շոշափում են գրողի անձնական, նույնիսկ ընտանեկան կյանքը: Ապականությունն ավելի հեռուն գնալու տեղ չունի: Մնում է բռնել հայ գրողի օձիքից փողոցում ու խեղդել նրան: Ճշմարիտ, եթե մի քաղաքակիրթ օտարազգի կարդա այն բոլորը, ինչ որ գրվում է հայերեն՝ հայ

գրականության և հայ գրողի մասին, կարող է կարծել, որ գրականությունը հայի աչքին հավասար է ավագակության և գրողը՝ ավագակի:

Ե՞րբ պիտի լինի վերջ այդ վակխանալիայի, ես չգիտեմ: Ե՞րբ՝ պիտի զգամ մարդիկ, որ իրանք օտարների առջև թքում են իրանց երեսին և լիզում օտարների կոշիկները, ոտնատակ անելով իրանց իսկ մարդկային արժանավորությունը, չգիտեմ: Գիտեմ միայն, որ այսպիսի պայմաններում մի ազգ չէ կարող ոչ կրթվել, ոչ քաղաքակրթվել:

«Մշակ», 3. VIII. 1916:

ՉԱՐԺԵ ՎՐԴՈՎԿԵԼ*

Երևակայեցեք ձեզ մի մարդ, որ հանկարծ անսպասելի սպրդվում է մի սգավոր տուն և սկսում է սրինգ նվագել, պարել, ոստոստել ու չարախնդության ճիչեր արձակել: Չգիտեմ տանտերերը ի՞նչ անուն կտան այդ մարդուն, խելագար — խեղկատակի՞, թե՞ չարամտի, բայց նախ և առաջ կհրամայեն իրանց ծառաներին դուրս չպրտել նրան:

Ճիշտ այդպիսի մի անկոչ հյուրի դեր է կատարում ոմն Մագիստրանտ հայ ազգի վերաբերմամբ, որի այսօրվա տառապանքները աշխարհի բոլոր ազգերի ու ազգությունների անկեղծ կարեկցությունն են շարժել: Այն ողբերգական պահին, երբ այդ բազմատանջ ժողովուրդը ուժասպառ, արյունաքամ սգում է հարյուր-հազարավոր զավակների կորուստը, այն միջոցին, երբ իր ազգային իդեալները մի կողմ թողած, առայժմ մտածում ու հոգում է միայն և միմիայն իր բեկորների ֆիզիկական փրկության մասին, ասպարեզ է ընկնում հայի դրամով կերակրվող “Кавказское слово” լրագրի էջերում մի ոմն Մագիստրանտ և նենգամտությամբ ծաղրում ու ծաղակոծում է մի ամբողջ ազգի ոչ միայն դարավոր տենչերը, այլև ամենաառօրյա, ամենատարրական մարդկային պահանջները:

Ես բավականաչափ ապրել եմ զանազան տեսակի Մագիստրանտների հայ կյանքում երևան գալը արհամարհանքով ընդունելու համար: Տեսել եմ տիպեր մեր անմախանձելի կյանքում, որոնք իրանց անձնական բարեկեցության կամ հանուն որևէ վարձատրության կամ պարգևի ոտնատակ են արել իրանց ազգային պատվասիրությունը: Տեսել եմ ավելի վատերը. հրեշներ, որոնք առանց խղճի խայթի անարգել են իրանց հարազատ ծնողների հիշատակն անգամ՝ արժանանալու համար որևէ աշխարհային զորավորի բարեհաճ ժպտին: Ինչ փուլթ, որ այդ ժպիտը

գրեթե միշտ տոգորված է նուրբ զգվանքով դեպի նրանց մարդկային արժանավորությունը, որովհետև ու՞մ համար կարող է սիրելի լինել սենեգարությունը: Ի՞նչ փուլթ, կրկնում եմ, քանի որ այդ տեսակ արարածների բարձրագույն բարոյական իդեալը որոշ նախասենյակներից դեմը չի անցնում:

Եվ ահա այդ բոլորը տեսնելուց հետո ես միանգամայն անտարբեր եմ այսօր մի Մագիստրանտի և նրա նմանների երևան գալուն: Եվ ինձ թվում է, որ բոլորովին զուր են վրդովվում իմ հայրենակիցները այդ պարոնի դեմ: Չ՞է որ այդ տեսակ անհայտների առաջին իղձն է իրանց տխուր անձնավորության վրա ուշադրություն գրավել, որպեսզի հետո շահագործեն այդ ուշադրությունը:

Արհամարհանք և նողկանք — ահա ինչը պիտի լինի մեր միակ պատասխանն այդ եղկելիներին:

«Մշակ», 23. VIII. 1916:

ՕՐԻՆԱԿ ՎԵՐՑՈՒՄԵ

Վերին աստիճանի հետաքրքրական և խրատական է այն կտակը, որ թողել է վրաց անվանի բարեգործ Սարաջևի այրին, տիկ. Եկատերինա Իվանովնա Սարաջևան: Հանգուցյալն իր բավական խոշոր հարստության մի պատկառելի մասը, ավելի քան 700,000 ռուբլի, կտակել է բարեգործական նպատակներով և այդ գումարի մի խոշոր բաժինը՝ մոտ 300,000 ռուբլի հոգուտ թատրոնի և արվեստների. այն է 150,000 ռուբլի Քութայիսում թատրոն շինելու համար, 100,000 ռ. Վրաց Դրամ. Ընկերությանը, 20,000 ռ. Վրաց Գեղեցիկ Արվեստների Ընկերությանը և 5000 ռ. Վրաց Երաժշտական Ընկերությանը:

Բացի դրանից՝ հանգուցյալը կտակել է վեց տարվա ընթացքում Դ. Ջ. Սարաջև Ֆիլմայի բոլոր գործերը զուտ դրամի վերածել և գոյացած գումարի կեսը տալ Վրաց Պատմական և Ազգագրական Ընկերությանը ազգային թանգարան շինելու համար, մյուս կեսը հավասար բաժանել դարձյալ Վրաց Դրամատիկական Ընկերությանը և Վրաց մեջ Գրագիտություն Տարածող Ընկերությանը: Ասում են, որ Սարաջևի գործերն արժեն մոտ 2 1/2 միլիոն, հետևաբար այդ գումարից ևս թատրոնը կստանա ավելի քան 600,000 ռուբլի:

Աշխարհի սկզբից մինչև այսօր ոչ մի հայ բարեգործ հոգուտ ազգային թատրոնի, երաժշտության և արվեստների այդքան գումար տակավին չէ մվիրել կամ կտակել: Ավելին կասեմ. եթե վերցնենք բոլոր այն գումարները, որ տասնյակ հանգուցյալ և կենդանի հայեր տվել են հայ թատրոնին, չեն հավասարվի այն գումարին, որ թողնում է մի վրացի վաճառականի այրին հոգուտ իր ազգային թատրոնի:

Որքան ինձ, իբրև մեր հարևան ազգի քաղաքակրթության ջերմ բարեկամի, ուրախացնում է տիկ. Սարաջևայի կտակը, նույնքան նա տխուր մտածողություններ է հղացնում իմ մեջ հայ բարեգործների և հայ կտակարարների անսահման նեղ աշխարհահայեցողության և սահմանափակ հոգեկան թռիչքների վերաբերմամբ: Եկեղեցի և դպրոց, դպրոց և ուսանողներ — ահա այն կախարդական նեղ շրջանը, որտեղից դենը չի կարողանում անցնել հայ հարստի երևակայությունը: Նրա համար գոյություն չունեն ոչ արվեստներ, ոչ գիտություն, ոչ թատրոն և ոչ գրականություն: Նա կարծում է, որ իր ազգի բարոյական փրկությունը ամփոփված է միայն և միմիայն եկեղեցու և ուսումնարանի պատերի, նաև անխտիր համալսարանականների թիվը բազմացնելու մեջ:

Ավելի համառ և սահմանափակ աշխարհահայացք երևակայել դժվար է: Ինչո՞վ բացատրել այս անմխիթար երևույթը: Արդյոք հայ մարդու աղքատ հոգեբանությա՞մբ, թե՞ համարել այն ժամանակավոր և անցողիկ: Ինձ համար, հարկավ, հաճելի է երկրորդ բացատրությունը, սակայն, դժբախտաբար, ժամանակավորն ու անցողիկն արդեն չափազանց երկար է տևում, և ես վախենում եմ, որ նա վերջ ի վերջո դառնա ազգային անբուժելի ախտ:

Այսպես թե այնպես երևույթը տխուր է և համեմայն դեպս ոչ մխիթարական մեր ազգային ինքնաճանաչության համար:

Նայեցեք և համեմատեցեք: Սրանից 3 - 4 տարի առաջ այրվեց վրաց թատրոնը: Ամմիջապես վրացիների մեջ խնդիր հարուցվեց նոր թատրոն շինելու մասին: Չէ անցել չորս տարի, և ահա մեր դարավոր հարևանների ազնիվ ցանկությունը մոտ է իրագործվելուն:

Միայն տիկին Սարաջևան չէ, որ իր մահվան անկողնում հիշում է իր ազգային թատրոնը: Սրանից մի քանի ամիս առաջ վախճանվեց մի հասարակ դեղավաճառ՝ Շիխինով անունով և հոգուտ վրաց թատրոնի կտակեց մի գետին 40,000 ռուբլու արժողությամբ:

Կես դարից ավելի է՝ ապաբախտ հայ բեմը թափառում է դռնից դուռն, և ոչ մի տեղ նա մշտական ապաստան չի գտնում: Եվ հայը, որ գիտե տեղի ու անտեղի պարծենալ իր բարեսրտությամբ ու առատաձեռնու-

թյամբ, չի հուզվում՝ տեսնելով իր ազգային արվեստը, իր բարոյական գլխավոր գանձերից մեկը այդ ողորմելի և թշվառ վիճակում:

Օրինակ վերցրեք վրացի կնոջ վերին աստիճանի գեղեցիկ և խելացի կտակը դուք, ով հայ բարերարներ և կտակարարներ, եթե ուզում եք, որ ձեր նվերը կամ կտակը ծառայե ձեր ազգի քաղաքակրթությանը: Հասկացեք, վերջապես, որ առանց արվեստների, առանց թատրոնի, առանց գրականության այդ քաղաքակրթությունը չէ կարող լինել ոչ իսկական և ոչ առողջ:

Տվեք դպրոցին ևս, բազմացրեք բարձրագույն դպրոցավարտների թիվն ևս, բայց գիտցեք, վերջապես, որ դրանք չեն միայն, որ մեր բարոյական գոյությունը պիտի ապահովեն վտանգից, որ առանց թատրոնի, առանց գրականության և առանց արվեստների ոչինչ արժեք չունեն ոչ տարրական և ոչ բարձրագույն ուսումը:

«Մշակ», 28. VIII. 1916:

ՊԱՏՎԻ ԽՆԴԻՐ Է

✓ Բուսական և ողորմելի է այն ժողովրդի գոյությունը, որ չունի մտավոր և հոգեկան հարստություն:

Ազգերի բարոյական հասունությունը, նաև ազնվությունը, չափվում են նրանց խելքի և սրտի արտադրություններով, որոնք են գիտություն, գրականություն, թատրոն, երաժշտություն, արձանագործություն, նկարչություն և ճարտարապետություն:

Ազգ չէ այն ազգը, որ չունի այդ անգնահատելի գանձերը: ✓

Մի քանի տարի սրանից առաջ, երբ Ալբանիայի անկախության խնդիրն էր քաղաքական ասպարեզի վրա, կուլտուրական Եվրոպան հետաքրքրվեց իմանալ, արդյոք ի՞նչ բարոյական հարստություն ունեն ալբանացիք: Եվ երբ պարզվեց, որ նրանք ոչինչ չունեն, չքացավ մտածող Եվրոպայի համակրանքը դեպի ալբանական ժողովուրդը և նրա տեղը բռնեց սոսկ մարդկային կարեկցությունը, այն կարեկցությունը, որ մենք ունենք դեպի անբան կենդանիները:

✓ Ինչո՞ւ մենք այնքան վշտանում ենք Բելգիայի այժմյան ֆիզիկական թշվառ կացությամբ: Որովհետև բելգիացիք մեկն են այն ազգերից, որոնք մարդկության զարդն են կազմում իրանց բարոյական գանձերով, իրանց

բարձր քաղաքակրթությամբ, գիտություններով ու արվեստներով: ✓

✓ Ինչո՞ւ մենք միայն չենք ցավում այլև ուրախանում ենք, որ մեր և չքերի առջև օր օրի վրա կործանվում է մի ժամանակվա ամենահզոր օսմանյան պետությունը: Որովհետև թուրք ժողովուրդը ոչ միայն քաղաքակիրթ չէ, այլև անընդունակ է քաղաքակրթվելու: Որովհետև ավելի քան հինգ դար գրաված լինելով Եվրոպայի լավագույն անկյունը, չփվելով ամենալուսավոր ազգերի հետ, չկարողացավ նրանց շարքն անցնել ոչ գիտություններով, ոչ գրականությամբ և արվեստներով: Որովհետև բարբարոս ու վայրենի էր, այդպես էլ մնաց մինչև այսօր: ✓

Այո, միայն այն ազգերն են արժանի պատկառանքի և հարգանքի, որոնք ունեն բարոյական հարստություն և ընդունակ են ունենալու:

Սակայն բավական չէ ունենալ այդ բարոյական հարստությունը, այլև պետք է գիտենալ ունեցածը պահել ու պաշտպանել: Չի կարող ուրիշների հարգանքին արժանանալ այն ազգը, որ չգիտե ինքն իրան հարգել: Իսկ հարգում է ինքն իրան այն ազգը միայն, որ գիտե գնահատել ու պաշտպանել իր բարոյական գանձերը:

✓ Ահա այդ տեսակետից մենք հայերս արժանի ենք խորին կշտամբանքի և օտարների զարմացմանը, գուցե և արհամարհանքին: ✕

Թող իմ այս դարձվածը չհամարվի սոսկ հռեղեստություն: Փաստեր կան աղաղակիչ, որոնք խորհող և զգայուն հայի սիրտ են մորմոքում ու հոգին տակն ու վրա անում: Մենք ունենք հին ու նոր բարոյական գանձեր, բայց չգիտենք նրանց պաշտպանել: ✓

Մեր հին ճարտարապետությունը վաղուց է արժանացել օտարների հիացմանը, իսկ մեր հարուստները բարվոք են համարում չինել ժամանակակից ճարտարապետների այլանդակ քմահաճույքով և մենք սառնարյուն ականատեսն ենք, թե ինչպես օր օրի վրա կործանվում են մեր սքանչելի վանքերը:

Մենք ունենք ժողովրդական հարուստ երաժշտություն, որ նույնպես արժանացել է օտարների հիացմանը, և մենք չկարողացանք մի հայր Կոմիտաս պահել մեր մեջ և թույլ տվեցինք մեր հակազդարվեստ հոգևորականությանը զրեթե դուրս վռնդել նրան էջմիածնի պատերից:

Մենք ունենք միջնադարյան շքեղ բանաստեղծություն և հարկավոր էր մի օտարազգի Բրյուսով, որպեսզի լսեինք նրա մասին և հետո նորից մոռանայինք:

Իսկ մեր նորագույն գանձե՞րը: Նայեցեք ինչ ողորմելի վիճակում են նրանք: Ավելի քան 100 տարի է մենք սկսել ենք իբր թե խաղաղ կուլտուրական կյանքով ապրել և մինչև այսօր չսովորեցինք վարվել

ինչպես կիսով չափ քաղաքակիրթ ժողովուրդ: Մեր գրականությունը նյութականի կողմից նույն վիճակումն է, ինչ որ կես դար սրանից առաջ: Եվ այսօր երբ մերք ընդ մերք ծայներ են բարձրանում գրական ֆոնդ հիմնելու մասին, գտնվում են մարդիկ, որ մամուլի մեջ բողոքում են դրա դեմ և ամեն կերպ աշխատում են խեղդել դեռ չծնված մանուկը, նույնիսկ այն ժամանակ, երբ ինքը՝ հասարակությունը, ցանկանում է, որ ծնվի այդ մանուկը:

Մեր լավագույն արվեստագետները, երաժիշտները, նկարիչները, արձանագործները փախել են ու փախչում են օտար երկիրներ, իրանց հայրենիքում զնահատում չգտնելով: Իսկ նրանք, որոնք քաջություն ունեն մնալու, պարիսպների կյանք են վարում: Ամոթ է ասել, որ երեք ամիս շարունակ մեր նկարիչները Թիֆլիսում արյուն-քրտինք էին թափում մի անկյուն գտնելու իրանց ցուցահանդեսի համար: Եվ հարյուրավոր հայապատկան պալատներ ունեցող Թիֆլիսում չգտնվեց մեկը, որ իր տունը մի ամսով առաջարկեր թափառականներին:

Իսկ մեր թատրոնը: Գնացեք, տեսեք, թե ինչ մթին և խոնավ փոսերի մեջ են մեր դերասաններն իրանց փորձերն անում և ինչ ծաղրի ու անելդոտների նյութ են տալիս օտարազգի դերասաններին՝ այն քաղաքում, ուր լավագույն թատրոնը հայի դրամով է շինված և հային է պատկանում:

Ոչ, այլևս բավական է, ժամանակ է, վերջապես, զգալու, որ ամոթալի է այս կացությունը: Ամոթալի է, որովհետև խնդիրը վերաբերում է մեր ազգային պատվասիրությանը, նույնիսկ յուրաքանչյուրիս անձնասիրությանը:

«Մշակ», 16. II. 1917:

ԴԵՌ ՄՊԱՍԵՆՔ

Ազատություն կոչված բանն երկսայրի մի սուր է, որի գործածումն այնքան էլ դյուրին չէ, որքան կարծվում է: Ազատությունը գոեհիկ ամբոխի ձեռքում նույնն է, ինչ որ սուր դանակը երեխայի ձեռքում:

Մի որոշ աստիճանի քաղաքական հասունություն, մտավոր կրթություն և հոգեկան նրբություն են հարկավոր ազատության գաղափարը ճիշտ ըմբռնելու և նրա բարիքներով օգտվելու համար:

Կյանքի մեծագույն հարստությունն ազատությունն է՝ սա ճիշտ է: Բայց ճիշտ է և՛ այն, որ հարուստ լինել՝ դեռ չի նշանակում հարստությունը խելացի և օգտակար գործադրելու ընդունակություն ունենալ: Ստրկության մեջ ծնված և բռնության ներքո ու խավարի մեջ դարերով սնված մի ժողովուրդ չի կարող մի օրվա մեջ ջնջել իր մեջ ստրկության ոգին և դառնալ ազատության արժանավոր դրոշակակիր: Նա որ շարունակ ճնշվել է, հալածվել, ամարգվել, ծեծվել, անգիտակցաբար ինքն էլ տոգորվել է ճնշելու, հալածելու, ամարգելու ու ծեծելու փափագով: Ստրկի և զոհիկի տեսակետով լինել ազատ քաղաքացի՝ կնշանակել լինել անպատասխանատու, լինել բռնակալ, լինել սանձարձակ գազան: Ինչո՞ւ: Որովհետև նա չգիտե և չի զգում, որ սեփական ազատությունը սիրողը պարտավոր է հարգել և ուրիշների ազատությունը: Չգիտե, որ ազատությունը նախքան անհատական բարիք լինելը համայնքի սեփականություն է, որ ազատությունը համայնական հարստություն է, այնպես՝ ինչպես օդը, ջուրը, երկինքը, արեգակն ու լուսինը, այլ ոչ այս կամ <այն> անհատի, դասակարգի կամ կուսակցության սեփականություն:

Չկա ազատություն առանց այս տարրական գիտակցության և չի կարող ազատ քաղաքացի համարվել նա, ով չգիտե հարգել ուրիշի ազատությունը:

Ձարմանալի չէ, որ այժմյան կազմալուծված և քառսային Ռուսիայում կատարվում են այդքան բռնություններ մարդկային անձնավորության և սեփականության դեմ և գործադրվում են այդքան փոխադարձ անարդարություններ ու ճնշումներ դասակարգերի ու կուսակցությունների մեջ: Ձարմանալի չէ, քանի որ այդ բոլորը պարզ է, բնական և հասկանալի:

Մի ժողովուրդ, որ դարեր շարունակ կրելով բռնակալության լուծն այնքան է ընտելացել այդ լծին, որքան գրաստն իր բեռանը, չի կարող մի օրվա մեջ կախարդական գավազանի մի հարվածով հոգեպես ազատվել բռնության կապանքներից:

Ասում են՝ հոգեպես, վասնզի մարմնավոր ազատությունը դեռ լիակատար ազատություն չէ և հոգու ստրկությունն ավելի դժվարահաղթ է, քան մարմնավոր ստրկությունը: Կարելի է ազատ երկրում ևս մնալ հոգեպես ստրուկ և, ընդհակառակը, բռնակալ պետության մեջ ևս լինում են հոգեպես ազատ քաղաքացիներ:

Այն ազատությունը, որ այժմ ձեռք է բերել ռուս ժողովուրդը, սոսկ մարմնավոր է: Բռնության լուծը նրա ուսերից է միայն ընկել, իսկ հոգին տակավին հեծում է նրա տակ և դեռ երկար ժամանակ պիտի հեծն, մինչև

որ նրա ճնշված ու կաշկանդված ասիական միտքը պարզվի և պայծառանա, մինչև որ նրա՝ դարավոր խավարին սովոր աչքերն ընտելանան արեգակի շողերին:

Իսկ այդ կլինի այն ժամանակ միայն, երբ նա ցույց կտա, որ բացի քանդելուց գիտե և շինել:

Դեռ սպասենք:

«Մշակ», 3. VI. 1917:

ԻՄ ԱՌԱՋԻՆ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆԸ*

Անցել են շատ տարիներ այն անմոռանալի օրից, երբ ես առաջին անգամ հանդիպեցի նրան:

Ես նոր էի Բաքվից տեղափոխվել Թիֆլիս, դրականապես վճռած լինելով նվիրվել գրականության:

Հայ գրական - հասարակական ասպարեզում այդ ժամանակ ինձ համար երկու հեղինակավոր անուններ կային, երկուսն էլ գրեթե նվիրական — Գրիգոր Արծրունի և Րաֆֆի: Առաջինը իբրև հրապարակախոս, երկրորդը իբրև վիպասան:

Եվ թվում էր իմ դեռահաս ու միամիտ հոգուն, որ հայի ոչ անցյալն է տվել այդպիսի խոշոր մեծություններ և ոչ ապագան պիտի տա: Ես պատրաստ էի մոլեռանդ երկրպագուի կատաղությամբ հարծակվել յուրաքանչյուրի վրա, որ կհանդգներ դիպչել այդ անուններին առանց հարգանքի: Արդեն ես շատ շատերի հետ էի կռվել նրանց վերաբերմամբ:

Պարզ էր, որ Թիֆլիս գալով, ամենից առաջ պիտի փափագեի նրանց տեսնել:

Այդ ժամանակ Գրիգոր Արծրունին դեռ չէր զրկվել իր հայրական հարստությունից, բայց մոտ էր զրկվելուն. խոսվում էր, որ նրա խոշոր կալվածքը շուտով պիտի դուրս գա նրա ծեռից ծանր պարտքերի համար: Այդ էր պատճառն այն շփոթ, մռայլ և հուզյալ վիճակի, որի մեջ ես գտա Արծրունուն և որն ինձ վրա գործեց շատ անախորժ տպավորություն:

«Մշակի» խմբագրությունը, հայ երիտասարդության այդ ժամանակվա սրբություն սրբոցը, գտնվում էր Արծրունու քարվանսարայի արտաքին շինության վերին հարկում, երկու, թե երեք փոքրիկ սենյակներում: Ինքն Արծրունին իր ընկերուհու հետ բնակվում էր կալվածքի ներքին մասում,

այգում: Այնտեղ, ուր այժմ վրաց կլուբն է:

Առաջին սենյակում ես հանդիպեցի երկու նիհար և կիտրոնի պես դեղին դեմքերի — մեկը երիտասարդի, մյուսն օրիորդի: Մեկը «Մշակի» քարտուղար ու թարգմանիչ Հովհաննես Տեր-Մարկոսյանն էր, որ սիրալիկ ժպտաց, մյուսը՝ գրասենյակի կառավարիչ օր. Ս.-ն էր, որ չժպտաց, որովհետև չգիտեր ժպտալ:

Արծրունու սենյակը մտնելիս մոտովս անցավ միջահասակ երկայն ու ճերմակ մազերով ու մորուսով և ցասկոտ դեմքով մի ծերունի, որ, կարծես, պատրաստ էր ամենքի հետ կռվելու: Հետո իմացա, որ դա բժ. Շիշմանյանն է, կեղծանուն Ծերենցը, մի քանի պատմական վեպերի հեղինակը, որոնց ես կարդացել էի եթե ոչ ոգևորությամբ, գոնե հետաքրքրությամբ:

Արծրունին մենակ չէր: Նրա մոտ կային ինչ-որ ինձ անծանոթ պարոններ, որոնցից ոչ ոքին չեմ հիշում: Արծրունին վիճում էր նրանց հետ չեմ մտաբերում ինչի մասին: Եվ վիճում էր հուզված, կատաղի, որովհետև այդ մարդը չգիտեր հանգիստ վիճել, ինչպես և չգիտեր հանգիստ գրել ու բանակռվել:

Իմ այցելությունը չէր կարող երկար տևել: Արծրունին զբաղված էր: Ես չուզեցի մի քանի րոպեից ավելի խլել նրա ժամանակը:

— Շատ ուրախ եմ, որ Թիֆլիս եք տեղափոխվել, - ասաց նա հրաժեշտիս վայրկյանին իր խրոխտ առնական և դուրեկան բարիտոնով. — վաղն եկեք ինձ մոտ ճաշի, կխոսենք:

Մյուս օրը որոշյալ ժամին մտա նրա սքանչելի այգին: Ասում եմ սքանչելի, որովհետև այն ժամանակ այդ հրաշալի անկյունը այն չէր, ինչ որ այժմյան չոր ու անհրապույր զբոսարանը վրաց կլուբի:

Ճաշի միջոցին ես հիշեցի Րաֆֆիի անունը, որից Արծրունին խուսափում էր: Հիշեցի դիտմամբ, որպեսզի բանամ նրանց ընդհարման և բաժանման պատճառը: Արծրունին տխուր ժպտաց: Հետո նրա խոշոր գծերով արտահայտիչ դեմքը այլալվեց: Պարզ էր, որ այդ բաժանումը անչափ զգալի ու ծանր է նրա համար:

Զէ՞ որ Րաֆֆին «Մշակի» աջ թևն էր և նրա ժողովրդականության գլխավոր հեղինակը: Հայտնվեց, որ երկու բարեկամների բաժանման պատճառը նյութականն է: Րաֆֆին իրան լավ վարձատրված չէր համարում, իսկ «Մշակը» չուներ միջոց ավելի լավ վարձատրելու:

— Բայց ես հուսով եմ, որ ձեր բարեկամությունը խզված է առժամանակ, — ասացի ես, — Րաֆֆին նորից կվերադառնա «Մշակին» և դուք ուրախությամբ կընդունեք նրան:

— Երբեք, — գոչեց Արծրունու ընկերուհին կատաղելով, — երբեք.

«Մշակի» դռները հավիտյան փակված են Ռաֆֆիի համար:

Այս խոսքերն ինձ վրա գործեցին անախորժ տպավորություն:

— Դուք ինձ այն ասացեք, — ընդհատեց Արծրունին իր բարեկամուհու կատաղությունը. — կարո՞ղ եք մինչև տարվա վերջն ինձ մի պատմվածք տալ:

— Կարող եմ:

Արծրունին ուրախացավ:

Մի ամիս չանցած ես Արծրունուն հանձնեցի «Գործակատարի հիշատակարանը», իմ երկրորդ վիպական երկը, որ և տպվեց «Մշակում»:

Դա 1883 թվի վերջն էր:

«Մշակ», 19. XII. 1917:

ԲԱՎԱԿԱՆ Է

— Ձգույշ, զգույշ պետք է վարվել, եթե ոչ կկործանվի հայ ազգը, — ասում է մատը բարձրացնելով հայ վաճառականը և գնում է իր խանութը գործակատարներին հրամայելու, որ այսօր ևս ապրանքների գինը բարձրացնեն 25 %:

— Ձգույշ, եթե ուզում եք, որ չկորչեմք, — կրկնում է փիլիսոփայորեն հայ արհեստավորը և մի զույգ կոշիկներ, որ իրան արժեն 80 ռ., վաճառում է 350 ռուբլով:

— Ազգային հորհուրդը լավ չէ տանում գործը, — բարբառում է հայ իրավաբանը և գնում է կլուբ մինչև լույս թուրթ խաղալու:

— Մարդիկ չունենք, հրապարակ են մտել թերուսներն ու պատանիները, — հեգնորեն ժպտում է հայ բժիշկը և նստելով գրասեղանի թով, գրում է նամակ Ազգային հորհուրդին, թե ինքը հիվանդ է, թե չէ կարող «դժբախտաբար» հայ զորքին ծառայել:

— Մենք պետք է լարենք մեր բոլոր ուժերը և գործենք բացառիկ եռանդով, այլապես կորած ենք, — ոչ միայն խոսում, այլև գրում է հայ ուսուցիչը լրագիրներում և ամեն միջոց գործ է դնում զինվորությունից ազատվելու:

— Ձգուշություն, խոհեմություն, տակտ է հարկավոր, — խորախորհուրդ դնեքով արտասանում է նախկին հաշվապահ, այժմ դրամատեր «քաղաքագետն», ամեն օր որոշ ժամերին զբոսնելով վաշխառու բարեկամների հետ բուլվարում:

Այս այն մարդն է, որ իր կյանքում մատը մատին չի զարկել ժողովրդի համար և կոպեկ չէ նվիրել անգին:

Եվ այսպես, ամենքը քարոզում են, ամենքը խրատում, ամենքը քննադատում և յուրաքանչյուրն աշխատում է իր անձը ապահովել, իր գրպանը լցնել և ամուր փակել:

Այս պատկերն է ներկայացնում այժմ հայ հասարակությունը, գոնե թիֆլիսում:

Թող մի անգամ առմիշտ Ազգային Խորհուրդը երես դարձնե այդ հասարակությունից: Թող արհամարհե և ծաղրի մատնե նրա խորհուրդներն էլ, նրա բողոքներն էլ, նրա քննադատությունն էլ: Եվ գործե այնպես, ինչպես իր խելքն ու զգացումներն են թելադրում: Թող մեր քաղերի սրբազան բանակը մոռանա այդ հասարակությունը և մի անգամ առմիշտ զգա, որ նրա համար չէ պատրաստվել իր կյանքը զոհելու: Ոչ, այդ հասարակությունը բազմաչարչար, բայց ոչ թշվառ. օ՛, հազար անգամ ոչ, հայ ազգի խոցն է: Եվ որքան հայ ժողովուրդը շուտ պոկե իր առողջ մարմնից ու դեն չպրտե այդ խոցն, այնքան շուտ կբախտավորվի նա:

Բավական է, որքան նա թունավորեց հայի եռանդը, ուժը, հույսերը և հավատը դեպի իր ապագան:

«Մշակ», 1. II. 1918:

ԿԱՄ ԳՈՐԾ, ԿԱՄ ԼՈՒԻԹՅՈՒՆ

Մեր այժմյան վիճակը սպառնալի է, ճիշտ է. մեր գոյությունը բացառիկ վտանգների տակ է, գիտե այս յուրաքանչյուր մանուկ, բայց մի՞թե արցունքն ու հառաչանքներն են, որ պիտի փրկեն մեզ մեր գլխին շողշողող սրից: Մի՞թե այդ անսահման և հաճախ անիմաստ հուսահատությունն է, որ պիտի ղեկավարի մեր հոգին և ուղղություն տա մեր ձեռներին:

Ո՞վ կարող է մարգարեանալ, թե վաղն ի՞նչ է պատահելու: Եվ ինչու՞ միշտ վատն ու վատթարը գուշակել: Այլ է հեռատեսությունն և զգուշությունը, այլ է երկյուղն ու հուսահատությունը և չկա ավելի կորստաբեր ախտ, քան հոռետեսությունը: Սառնասրտությունն է, որ հաճախ փրկում է անհատներին ու ազգերին:

Դեռու լավկանությունից: Նրա տեղը մեռելների աշխարհն է: Արցունքը թույն է, որ քայքայում է հոգին և մեղկացնում սիրտը: Դա նշան է ոչ միայն

երկչոտության, այլև տխմարության:

Որքան շատ է լալիս մի ժողովուրդ, այնքան նա քիչ է գործում: Միայն նա կարող է և ունե իրավունք ապրելու, ով իր կյանքի ամենակորստաբեր պահուն գիտե ժպտալ: Որքան շատ վախենա մահից, այնքան նա ավելի կսիրե քեզ:

Վատ է այն մայրը, որ արցունքներով է ճանապարհ դնում իր զավակին կռվի դաշտը. նա խլում է իր որդու քաջության մի մասը և թուլացնում նրա ուժերը: Նա (բառը անընթեռնելի է. — *ԱՄ. Ջ.*) է, որովհետև չի ճանաչում մարտիկի հոգեբանությունը:

Այս խոսքերը ես ուղղում եմ այն հայերին, որոնք շարունակ լալիս են և միմիայն լալիս: Ձագրելին այն է, որ լալիս են ոչ միայն ծերերը, որոնց աչքերի ներվերը թուլացել են, այլև երիտասարդները: Այն երիտասարդները, որոնք կարող էին շատ բան անել և չեն անում: Չեն անում, որովհետև չկա ավելի էժանագին հայրենասիրություն, քան ողբը:

Դա մի տարր է, ավելի վտանգավոր, քան արտաքին թշնամին: Մի հիվանդոտ մարմին, որ իր ախտով սպառնում է վարակել և առողջ մասը մեր ժողովրդի: Եվ որքան հաճելի է տեսնել հայ զինվորի այդ զվարթ ու ժպտուն դեմքը, լսել նրա կրակոտ հայրենասիրական երգերը, նույնքան ատելի է նայել այդ լալկամների թթված կերպարանքին և լսել նրանց գերեզման^անա>յին հառաչանքները:

Կամ գործ կամ լռություն՝ ահա ի՜նչ պիտի պահանջել այդ մարդկանցից:

«Մշակ», 8. II. 1918:

ՄԻ ԶԱԶՐԵԼԻ ՓԱՍՏ

Այն օրից, երբ հայտարարվեց Ազգային խորհրդի ընտրությունը և հայտնվեց, որ նրա ծեռքն է անցնում մեր ազգային գործերի ղեկավարությունը, պայթեց մի ընդհանուր ոգևորություն: Հայ հասարակության բոլոր խավերը և բոլոր դասակարգերը կազմեցին ժողովներ, դուրս բերեցին միաձայն որոշումներ, թե իրանց նյութական ու բարոյական ուժերը, նույնիսկ իրանց անձը դնում են Ազգային խորհրդի տրամադրության տակ:

Դա մի պատմական շարժում էր, մի բացառիկ գեղեցկություն, որ ինձ

և ոգևորեց: Ինձ, որ մեր կյանքի օբյեկտիվ և սառնասիրտ դիտողն եմ և սովոր չեմ շուտ հափշտակվել հայի հոգեկան ուժերով և միշտ քննողի կասկածելի աչքերով եմ նայել նրանց վրա:

Մի բան ինձ ուրախացրեց ամենից ավելի, մեր համալսարանականների, մեր, այսպես կոչված, ինտելիգենցիայի բուռն ցանկությունը՝ ազգին ծառայելու ներկա ճգնաժամին: «Վերջապես, ասացի ինքս ինձ, զարթնեցին հայ ժողովրդի ներվերը, որ այնպես թմրած էին մինչև օրս»: Թվաց ինձ մի պահ, որ այդ ներվերը այլևս չեն նրհիլ:

Երեկ ինձ հաղորդեցին մի փաստ, որ մինչև հոգուս խորքը վրդովեցրեց ինձ և կարծում եմ, որ պիտի վրդովեցնե և իմ ընթերցողներին:

Ահա այդ փաստը:

Ներկայումս Թիֆլիսում գտնվում են հարյուրից ավելի հայ փաստաբաններ: Ես ճանաչում եմ գրեթե ամենքին: Նրանց մեծ մասը բաղկացած է 28-ից մինչև 40 տարեկան առողջ երիտասարդներից, որոնցից շատերը ամուրի են: Ընդհանուր ոգևորության միջոցին այդ մարդիկ ևս ժողով են գումարում և նույնպես որոշում միաձայն իրանց «բոլոր ուժերը դնել Ազգային խորհրդի տրամադրության տակ»: Ընտրում են պատգամավորություն և ուղարկում Ազգային խորհրդին այդ մասին հայտնելու: Հարկավ, խորհուրդը համալսարանական պարոնների պատրաստակամությունը՝ ազգին օգտակար լինելու՝ ընդունում է շնորհակալությամբ և հայտնում է, թե կարիքը գալիս նա կդիմե նրանց օգնությանը:

Կարիքը չի հապաղում գալու: Ազգային խորհուրդը այս օրերս դիմում է հայ փաստաբանների միությանը և խնդրում, որ նա իր միջից ընտրե 20 հոգի և դնե խորհրդի տրամադրության տակ: Հայտնում է նաև, որ այդ մարդիկ հարկավոր են ոչ զենք վերցնելու և ֆրոնտ գնալու, այլ թիկունքում գործելու համար: Միևնույն ժամանակ խորհուրդը ապահովում է յուրաքանչյուրի նյութականը այն չափով, որչափ նրանք վաստակում են իրանց արհեստից և ավելի:

Միությունը հրավիրում է բոլոր փաստաբաններին և խորհրդի առաջարկը հայտնում նրանց: Տիրում է ընդհանուր լուրջություն և շփոթություն: Ամենքը նայում են իրարու երեսին:

Եվ միայն մի երիտասարդ փաստաբան է գտնվում, որ փարատում է ամոթալի լուրջությունը: Միայն մեկն է հայտնում պատրաստակամություն իր բարոյական պարտքը կատարելու: Եվ այն էլ մի մարդ, որ ամենքից շատ է զբաղված, և որը չի պատկանում գիշերները մինչև լույս թուրթ

խաղացող հայ համալսարանականների շարքին:

Մյուսները մեկիկ-մեկիկ հրաժարվում են, մեկը հիվանդության, մյուսը ընտանիքի, մի երրորդը մի որևէ ուրիշ պատրվակով:

Ողորմելիներ: Դուք արժանի եք, որ քուրդի թուրը ամենից առաջ ձեր կոկորդի վրա շողշողա:

«Մշակ», 11. II. 1918:

ՄԻ ՀԱՆՑԱԼՔ

Հայն ունի մի մեծ ախտ:

Գուցե ամենավատը, ամենավտանգավորը, աչքի առջև ունենալով ներկա ճգնաժամը հայ ազգի:

Դանդաղկոտությունը: Հայի պատմական և հոգեբանական ցավը:

Տեսե՞լ եք երբևէ, որ հայն աշխատավորի վարձը տա իր ժամանակին, անմիջապես, իսկույն ևեթ: Ոչ, նա աշխատում է ամեն կերպ ձգձգել ու հետաձգել թեկուզ մի օր, մի ժամ, կես ժամ, անպատճառ հետաձգել՝ մինչև որ նրա հոգին համաձայնի բաժանվել այնքան սիրելի, այնքան պաշտելի դրամից:

Տեսե՞լ եք երբևէ, որ հայ ծառան անմիջապես ներկայանա տիրոջը, երբ սա կանչում է նրան: Ոչ, նա դեռ պիտի արտասանե «համմե», պիտի մի անգամ էլ լսե տիրոջ ձայնը՝ «եկ այստեղ»: Եվ դարձյալ իսկույն չի գա, կհապաղե, մինչև որ նրա թմրած կամքը շարժե նրա ոտները:

Անկեղծ լինենք. ո՞ր հայ բարեգործն է իր նվերն իսկույն ևեթ դուրս բերել գրպանից և հանձնել նպատակին, ո՞ր հայ կտակարարն է առանց տարիներ ու տասնյակ տարիներ տատանվելու, խորհելու ու խորհրդակցելու գրել իր կտակը: Ճանաչո՞ւմ եք մի վաճառական, որ չսակարկե, մի փաստաբան, որ չսակարկե, մի արհեստավոր, որ չսակարկե: Տեսե՞լ եք մի հայ խանութպան, որ իսկույն ևեթ տա ձեր պահանջած ապրանքը:

Ո՞րն է այն հայ ազգային հաստատությունը, որ իր այսօրվա անելիքը չի հետաձգում վաղվան. ո՞րն է, որ իր բարոյական պարտքը կատարում է ճիշտ իր ժամանակին, առանց հապաղելու, առանց քիչ թե շատ նիհեղու:

Բացատրեք այս ախտը ինչով կամենաք, պատմական հանգամանքներով, արևելյան կլիմայով, ասիական հոգեբանությամբ, ասացեք, որ

բոլոր արևելյան ազգերը դանդաղ են, բայց ես կպնդեմ, որ չկա ավելի դանդաղը, քան հայ ժողովուրդը: Մի համեմատեք մեզ պարսիկների, թուրքերի, վրացիների հետ: Կան մոմենտներ, երբ նույնիսկ նրանք անհամեմատ արագամիտ, արագաշարժ և կտրուկ են, քան մենք:

Այդ տեսակ մոմենտներից է մեր այժմյան կացությունը: Երբեք հայի դանդաղկոտությունն այնքան ակնհայտ, միևնույն ժամանակ այնքան հանցավոր չէ եղել, որքան այժմ:

Խոսքս Ազգային խորհրդի գործունեության մասին է:

Այո, ահա մի մարմին, որ հայտնվում է իբրև կատարյալ մարմնացում հայ ժողովրդի հոգեբանության: Նա ցույց է տվել անօրինակ դանդաղություն այնպիսի մի ժամանակ, երբ յուրաքանչյուր վայրկյանը մեր կյանքի՝ հավասար է հավիտենականության, և յուրաքանչյուր կորցրած մի վայրկյան կարող է մեզ կործանել հավիտյան:

Նա ամբողջ երկու ամիս ուշացրեց գորակոչը և դրանով գործեց մի հանցանք, որ մեր ապագա պատմության մեջ կբռնե մի տխուր էջ:

Եվ ոչ մի պատճառաբանություն, ոչ մի արդարացում չէ կարող փրկել նրան սերունդների նախատինքից:

«Մշակ», 14. II. 1918:

ՄԻ՞ԹԵ ԳԱՐՇԵԼԻ ԶԷ

Վա՛յ այն ազգին, որ իր գոյության ահեղ ճգնաժամին ընդունակ չէ գեթ մի պահ բաժանվել իր ցեղական գեշ սովորություններից: Վա՛յ այն ազգին, որ դարերի ընթացքում գեթ մի վայրկյան չգիտե հրահրվել և ցույց տալ հոգու ուժգին թափ: Եթե անխուսափելի չէ նրա ֆիզիկական ոչնչացումը, համեմայն դեպս նա կորած է իբրև բարոյական ամբողջականություն ազգերի պատմության մեջ:

Կատաղում ենք, երբ օտարներն ասում են, թե հայը դրամապաշտ է և ժլատ, հերոսական ջանքեր ենք գործ դնում խոսքով ու գրչով մեր ճակատից ջնջելու «չարչիություն» կոչված ամոթալի դրոշմը:

Բայց երբ գործը գալիս է դրամին, դրոշմն իսկույն փայլում է մեր ճակատին: Ոչ, օտարները շատ էլ անիրավ չեն այս դեպքում մեր վերաբերմամբ: Նրանց վիրավորական կարծիքը մեր մասին ունի ամուր, շատ ամուր հիմքեր: Եկեք պարզապես խոստովանենք, որ ունեն: Եկեք

համաձայնվեց, որ մենք նման ենք այն ֆիզիկական ախտավորին, որ ինքն էլ գիտե, թե ինչ գարշելի ախտով է վարակված, բայց երբ ուրիշներն են խոսում իր հիվանդության մասին, կատաղում է:

Ի՞նչ է այն սակարկությունը, որ այսօր կատարվում է Ազգային Խորհրդի շուրջը, եթե ոչ չարչիություն: Եվ ամենավատ տեսակի չարչիություն:

— Շատ եք պահանջում ինձնից, կարողությունիցս վեր է, — լալիս է մի առևտրական, որ պատերազմի ընթացքում ժողովրդի արյունն է քամել և այսպիսով դարձել միլիոնատեր:

Երբ նրան հայտնում են, որ իր առևտրական մատյանների գաղտնիքը բացված է, որ, ընդհակառակը, իրանից պահանջվում է տասն անգամ պակաս, քան կարող է տալ, չարչին կարմրում <է> իր ստից և շարունակում է.

— Պահանջեցեք իմ հարևանից նույնքան, այն ժամանակ ես էլ կտամ:

Եթե նրան ասում են, թե յուրաքանչյուրը իր կամքի տերն է և պետք է վճարե ուրիշներից անկախ, նա դարձյալ սակարկում է՝ մինչև որ կարողանում է կրճատել ազգային պարտավորական տուրքը: Կրճատել ամորալի, խայտառակ լալկանությամբ: Եվ այդպես անում են ոչ միայն նրանք, որ մինչև այժմ վայրկյան անգամ չեն մտածել իրանց հասարակական և ազգային պարտականությունների մասին, այլև նրանք, որ մի տարօրինակ թյուրիմացությամբ ազգային «առատածեռն» բարերարների հռչակն են վայելում: Եվ այդպես անում են ոչ միայն նախկին գռեհիկ խանութպանները, այլև «ինտելիգենտի» անուն կրող ունևորներն ու միլիոնատերերը:

Անում են այն ժամանակ, երբ ամենքը, ամենքն անխտիր գիտեն, զգուն են և փրփուրը բերաններին ապացուցանում, որ իրանց ողորմելի տուրքը մի անմատչելի, վերացական գաղափարի համար չէ, այլ հենց իրանց ընտանիքների, իրանց հարազատ զավակների և իրանց անձի փրկության համար:

Սի՞թե գարշելի չէ այն հայրը, որ իր որդու մահճակալի քով սակարկում է նրա բժիշկի հետ:

ՀԱՐԳԵՆՔ ՀԻՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

f

Ուժը միության մեջ է. հին է այս ճշմարտությունը, բայց հավիտենական, անդրդվելի, անապական: Եվ չկա մի ուրիշ ճշմարտություն, որ իր ամրությամբ հավասարվի նրան, ուր մնաց որ կարողանա փոխարինել նրան իր զորությամբ:

Մենք ապրում ենք այնպիսի մի ժամանակաշրջան, որի յուրաքանչյուր վայրկյանը վառվռուն ապացույց է այդ հին ճշմարտության: Ազգեր են փրկվում միության շնորհով և ազգեր կործանվում պառակտման շնորհով:

Փոքրիկ Բելգիան փրկեց իր պատիվը իր զավակների միաբանությամբ, հեռու չէ նաև նրա գոյության փրկությունը: Վիթխարի Ռուսիան ապականեց իր բարոյական հռչակն իր զավակների երկպառակության շնորհով, և մենք այսօր տեսնում ենք, թե ինչպես է նա հոշոտվում ժամ ժամի վրա՝ գետնին թավալված:

Ո՞վ է այն խելառը, որ կփորձե ապացուցանել, թե հայ ազգի ներկա ահեղ ճգնաժամի՝ կուսակցական նույնիսկ ամենամաքուր, ամենաազնիվ պայքարը կարող է որևէ կերպ նպաստել մեր դատին: Երբեք երկպառակությունն այնքան վտանգավոր չէ եղել մեր անցյալում, որքան կարող է լինել ներկայումս: Ես ձանձրանում էի անցյալ աշնանը կայացած Ազգային Համագումարում, լսելով հայ կուսակցությունների պարագլուխ հռետորների անվերջ ճառերը, վասնզի նրանք խոսում էին բրոշյուրներից և արտահայտում թեև նոր, բայց արդեն հնացած, արդեն մաշված մտքեր: Շատ վիճելի ճշմարտություններ, շատ շինծու թեորիաներ: Սակայն իմ ձանձրույթը քարացվում էր, իմ զգացումները վառվում էին այն պահերին, երբ խոսք էր լինում իմ ազգի այժմյան կացության մասին: Այստեղ ինքը կյանքն էր խոսում իր հուժկու, հրամայողական ծայրով: Այստեղ անվերջ միապաղաղ դատողությունները կանգ էին առնում. այստեղ էժանագին բրոշյուրների ծայրը լռում էր հին ճշմարտության առջև — ուժը միության մեջ է, ուրեմն և ժողովրդի փրկությունը: Եվ ես կարեկցությամբ դիտում էի թեորիաների երկրպագու մարդկանց հոգեկան ապիկարությունը, տեսնում էի, թե ինչպես էժանարժեք գրքերից քաղած գունատ մտքերն ու գաղափարները շոգիանում էին բռնակալ կյանքի հովից: Եվ հրճվում էի, դիտելով, թե ինչպես հակառակ ծայրերը միանում էին և մի օղակ հյուստում: Եվ ասում էի ինքս ինձ. «Ոչ, հայը դեռ կորած չէ, քանի որ կուսակցական մոլեռանդությունը (որ այնքան հակակրեղի է բանաստեղծի

հոգուն) տեղի է տալիս հին ճշմարտությանը — ուժը միության մեջ է»:

Ինչ փույթ, որ այդ համագումարում Ազգային խորհրդի ընտրությունները չխուսափեցին կուսակցական ոգուց: Ինչ փույթ, որ այս իսկ պատճառով խորհրդի կազմն եղավ ոչ այնքան զորեղ, որքան պահանջում է մոմենտի լրջությունը: Այնուամենայնիվ հաղթողը հին ճշմարտությունն է եղավ և բանալ դարձած կուսակցական լոգունները առժամանակ լռեցին համազգային վտանգի առջև:

Այսպես թե այնպես, այժմ Հայ Ազգային խորհուրդը հայ ժողովրդի գավակն է, հին ճշմարտությունն է նրան մկրտել: Այդպես պետք է ընդունենք նրան և լինելով հանդերձ խստապահանջ, ճանաչենք նրա իրավասությունը իբրև միակ հեղինակություն: Հավատացեք, յուրաքանչյուր ժողովուրդ արժանի է այն կառավարությանը, որ ունի: Թող ունենա Ազգային խորհուրդը բոլոր թերություններ, բայց նա միակն է: Չպիտի լինի նրանից դուրս կամ նրա կամքի հակառակ գործողություն, այլպես կխափանվի հազիվ հազ ստեղծված մեքենայի ընթացքը:

Ես կհամարեմ դավաճան այն հային, որ կփորձե անջատ գործել: Ես կհամարեմ ապարդյուն օդ շնչող և այն հային, որ իր ուժերի չափ չի օգնի մեր ազգային մեքենային, լինելով թեկուզ նրա ամենաչնչին բևեռը:

Օգնենք — այս է պահանջում հին սրբազան ճշմարտությունը: Հարգենք այդ ճշմարտությունը, եթե չենք ուզում կործանվել:

«Մշակ», 24. II. 1918:

ԳԵԹ ԱՅԺՄ

Հայ ազգի թշվառության հիմնական պատճառները պետք է որոնել նրա հոգեբանության մեջ: Այնտեղ, նրա ներքին աշխարհումն է թաքնված նրա դարավոր ողբերգության արմատը:

Դժվար է գտնել աշխարհի երեսին մի ազգ, որի բնածին հակումներն այնքան հակասեին նրա միջավայրին: Ապագա սոցիոլոգը կպարզաբանե, թե ինչ անորմալ հանգամանքներում է վարել իր գոյությունը հայ ազգը: Սակայն ձգեցեք մի թափանցիկ հայացք նրա անցյալի ու ներկայի վրա, և դուք ևս կտեսնեք հետևյալը:

Ահա մի հեզ ու խաղաղասեր ժողովուրդ, որ ճակատագրի դաժան քնահաճույքով ստիպված է եղել և է այսօր իսկ կից առ կից ապրել

այնպիսի ազգերի ու ցեղերի հետ, որոնց միակ պաշտամունքը զենքն է։ Ահա մի ժողովուրդ, որի մեղմ, ներողամիտ և արդարասեր հոգին միշտ գարշել է արյունահեղությունից և սակայն միշտ արյան մեջ է ապրել։ Մինչ նա սիրել է գութանը, գրիչը, գիրքը, խանութը, նրա հարևանները պաշտել են սուրը և չեն բաժանվել նրանից երբեք, նույնիսկ այն ժամանակ, երբ նրա գործածության կարիքը չի եղել։

Ամեն անգամ, երբ հայ ազգը զենք է բարձրացրել, բարձրացրել է ակամա, անհաղթելի հանգամանքներից հարկադրված։ Եվ ամեն անգամ առաջինն ինքն է ողբացել այն արյունը, որ ստիպել են նրան թափել, թշնամու արյունը։ Ոչ մեկը նրա հարևան ազգերից ու ցեղերից, այնքան չի սիրել համերաշխություն ու ազգերի բարեկամություն կոչված մարդկային սրբազան պարտականությունը, որքան նա, և ոչ ոքի նա թույլ չի տվել առաջինը բարձրացնել հաշտության սպիտակ դրոշմը։ Երբեք նա չի եղել առաջին պատճառը կռվի կամ պատերազմի և երբեք ազգերի փոխադարձ թշնամության սոսկալի թույնը չի կրել իր սրտում, թեև շարունակ աշխատել են պատվաստել նրան այդ թույնը։

Շատ են վիրավորել հայ ազգի ռազմական ինքնասիրությունը նրա թշնամիները, ասելով, որ նա չգիտե զենք գործածել, թե նա երկչոտ է։ Նա մարդասիրական համբերությամբ տարել է այդ վիրավորանքները լուռ, անտրտուն։ Բայց երբ հարկը պահանջել է զենքի դիմել, թշնամիները ամոթահար են եղել, տեսնելով, թե որքան սխալված են։ Ամեն անգամ նրանք համոզվել են, որ այն ձեռքը, որ սովոր է գութան բռնել, բնավ չի կոշտացել զենք գործածելու համար։ Եվ հայը, գործ է ածել նրան ոչ պակաս ճարպկությամբ, քան իր հարևանները, հաճախ ավելի։

Բայց ահա դժբախտությունը. հենց որ զենք գործածելու կարիքն անցել է, հայն անմիջապես դեն է ձգել նրան մի զարմանալի ատելությամբ։ Ասում են դժբախտություն, վասնզի չէ՞ որ անզենի լեզուն միշտ տկար է զինվածների մոտ և չէ՞ որ հայի լռությունը համարում են ապիկարություն նրանք, որ չեն ճանաչում նրա հոգեբանությունը։

Այսօր նորեն հեզահամբույր հային ստիպում են զենքի դիմել, և ես համոզված եմ, որ նորեն նրա թշնամիները կլինեն ամոթահար։ Բայց ես կփափագեի, որ գեթ այսուհետև նա չբաժանվե զենքից։

Գեթ այժմ։

ԱՄԵՆԱԽԻՍՏ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Էրզրունն ընկավ: Այն առաջնակարգ բերդը, որ Անդրկովկասի ամենագլխավոր պատվարն էր: Ընկավ անակնկալ, առանց երկարատև կռվի, գրեթե առանց կռվի, մի քանի ժամվա մեջ:

Ո՞վ էր սպասում այդ սոսկալի հարվածը: Ո՞ր ռազմագետը, ո՞ր զինվորականը: Այն ամրոցները, որոնց գրավման համար տարիներ են գործ դրել ռուսական զորքերը և տասնյակ հազարավոր զոհեր տվել, հանձնվեցին ետ թշնամուն այնպես, ինչպես մի սովորական, մի աննշան խրամատ:

Ինչպե՞ս, ո՞ւմ շնորհով, որի՞ սխալով կամ ապիկարությամբ, դեռ մեզ հայտնի չէ: Ստացված հեռագիրները տակավին չեն հաղորդում կատաստրոֆայի մանրամասները: Ասում են միայն, թե Էրզրունում եղած զորքերի մի մասը առավոտյան թողել է բերդը ու հեռացել: Առաջին հայկական գունդը: Ինչպե՞ս թե թողել-հեռացել է, առանց նույնիսկ մի թույլ դիմադրության: Այդ ի՞նչ է նշանակում, ամոթալի փախու՛տ: Եթե այդպես է, ինչո՞ւ չհաղորդել իսկությունը, որքան ևս ամոթալի լինի նա: Չէ՞ որ վերջիվերջո պարզվելու է ամեն ինչ, մանավանդ որ ասում են, թե խուճապ է եղել: Մյուս մասը զորքերի կռվել է հերոսաբար և պարտվել, թողնելով կռվի դաշտում 200 դիակ և անհայտ կորցնելով 20 օֆիցեր:

Այսպես թե այնպես, ահա չորրորդ օրն է՝ մղձավանջի մեջ ենք: Հասարակության խիղճը հուզվել է ու բորբոքվել: Նրան պաշարել է անասելի հուսահատություն: Եթե մի զորք չկարողացավ գեթ մի քանի ամիս պահել Էրզրունի պես մի անառիկ բերդ, հապա ինչպե՞ս կարող է նա դիմադրել թուրքերին այսուհետև: Եթե մենք այդչափ ապիկար ենք, ինչո՞ւ զենք բարձրացրինք և ո՞ւմ ու ինչի՞ վրա պիտի հենվենք մենք: Ո՞վ է մեղավորն այդ ապիկարության: Բերդապահ զո՞րքը, կոմենդա՞նտը բերդի, գլխավոր հրամանատա՞րը, թե՞ կորպուսի հրամանատարը:

Ահա հարցեր, որ անցնում են բերանն բերան և գրգռում ամենքին, մեծ ու փոքրին, զինվորական ու ոչ զինվորականին: Եվ ես, իբրև թարգման համայն հայ հասարակության վրդովված խղճի, ասպարեզ եմ ձգում հարցերը և պահանջում նրանց մանրամասն ու անքող բացատրությունն ու պատասխանը պատասխանատու մարմինների: Ովքե՞ր են այդ մարմինները, միևնույնն է հասարակության համար: Թող լինի դա բերդապահ զորքը, նրա հրամանատարը, զինվորական խորհուրդը,

այսպես կոչված զինվորական «մինիստրը», թեկուզ ինքը Ազգային հորհուրդը, – մեզ համար միևնույնն է: Ոչ ոքի ռեմոմեն և մինչև իսկ գոյությունը մեզ համար այնքան արժեք չունի, որքան մեթ երկրի ապահովությունը և ազգաբնակչության կյանքը: Մենք առանց վերապահության տալիս ենք մեր թանկագին զավակների կյանքը, մեր բոլոր բարոյական ու նյութական միջոցները, մեր հոգու անդորրությունը ոչ նրա համար, <որ> մեր պատասխանատու մարմինները իրանց անփորձության, անզգուշության կամ մտավոր ու բարոյական ապիկարության զոհ դարձնեն նրանց՝ հանուն իրանց դիրքերի ու պաշտոնների: Ոչ, թող լավ գիտնանք, որ զորք ասված բանը ոչխարների հոտ չէ, որ պիտի առանց երկար խորհելու ուղարկել սպանդանոց: Յուրաքանչյուր մի մարդկային կյանք մի-մի ժանր պատասխանատվություն է ձգում մեր ճակատագրի դեկը վարողների վրա: Մայրերն են, որոնց պիտի հաշիվ տալ:

Երբ հարցերը կպարզվեն, երբ սոսկալի եղելության հանցավորները կգտնվեն, բավական չէ նրանց գամել անարգության սյունին, այլև պիտի ենթարկել ամենախիստ պատժի: Միևնույն ժամանակ ասպարեզից պիտի հեռանան և այն անձինք ու մարմինները, որոնք արդեն զգում են իրանց ապիկարությունը:

Պատերազմը ազգերի կյանքի ու մահվան խնդիրն է լուծում: Հետևաբար նա չի կարող լինել դիլետանտների գործը: Հեղափոխական գաղափարները չեն, որ մեզ պիտի փրկեն կորստից, այլ դրական գործը: Ոչ մասնագետին չպիտի հանձնվի ոչ մի մասնագիտական գործ, թեկուզ նա լինի տիպար բարոյականության: Թող կորչեն միտինգային բանախոսությունները, ծակ փիլիսոփաները, անկոչ դիպլոմատները, վառողի հոտից սարսափող ռազմական ղեկավարները. մեզ հարկավոր են հմտություն, փորձառություն: Մեզ հարկավոր են գործին տեղյակ մարդիկ: Բավական է, որքան դիլետանտիզմն ու փառամոլությունը թշվառացրին մեզ, թող չքանան նրանք ասպարեզից:

Ազգի ճակատագիրն է որոշվում և ազգը պահանջում է, որ իր գործերի գլուխն անցնեն զորեղ կամքի և զորեղ խելքի տեր մարդիկ: Ժամանակը չէ, որ միջակություններն ու տափակ խելքերը առաջին շարքերում մնան: Յուրաքանչյուրը թող չափե իր ուժերը և այնպես ասպարեզ ելն:

Քննություն և ամենախիստ քննություն. – ահա ինչ են պահանջում առայժմ:

ԶԷ՞ ՈՐ ՎԻՐԱՎՈՐԱԿԱՆ Է

Ինձ ծանր, անհաղթելի մտատանջություն է պատճառում վերին աստիճանի մի տխուր փաստ, որ քանի գնում՝ այնքան ավելի բարձրանում է աղաղակում:

Մենք չունենք կամ գրեթե չունենք քաղաքական գործիչներ: Չունենք մարդիկ, որոնց մտավոր ուժին, հեռատեսությանը և դիպլոմատիական տակտին կարողանայինք հանձնել մեր ճակատագիրը անվերապահ հավատով և լի հույսերով: Չունենք մեր ազգային վշտերի ու իղձերի կատարյալ թարգմաններ օտարների առջև:

Այս փաստը շոշափելի դարձավ ներկա պատերազմի առաջին իսկ օրերից: Ովքե՞ր էին մեր այսպես կոչված ազգային պատգամավորները: Լավ եմ ուսումնասիրել նրանց, շատ լավ: Մարդիկ, որ ոչ կենսական փորձառություն, ոչ մտավոր պատրաստություն և ոչ բարոյական բավականաչափ ուժ ունեին մեր գործերի դեկլ վարելու՝ այնպիսի մի աղվես քաղաքագետի մոտ, որպիսին էր հանգուցյալ Վորոնցով-Դաշկովը: Ես դիտել եմ այդ մարդկանց գործունեությունը «ազգային» կոչված Բյուրոյում, լսել եմ նրանց զեկուցումները ամեն անգամ, երբ նրանք գալիս էին փոխարքայի մոտից: Եվ չեմ թաքցնում, ամեն անգամ ինքս ինձ ասել եմ. «Մի՞թե դրանք պիտի փրկեն մեզ»:

Լավ մարդիկ էին, բարեսիրտ, քաղաքակիրթ, հասուն և ազնիվ, եթե կամենաք, նույնիսկ շնորհալի, բայց ոչ ավելի:

Տակտի լիակատար սնանկություն: Քաղաքագիտական տաղանդի կատարյալ բացակայություն: Յուրաքանչյուրն իբրև միջակ քաղաքացի արժանի իր կոչմանը՝ մեկն իբրև հոգևորական, մյուսն իբրև փաստաբան, երրորդն իբրև քաղաքագլուխ և այլն, և այլն: Սովորական կյանքի համար շատ պիտանի, շատ օգտակար ուժեր, բայց այսքանն և ոչ ավելին: Ավելին, որ կարևորն էր ու անհրաժեշտը, նրանք պիտի սովորեին՝ ժամանակի ընթացքում իրանց համար անսովոր մի դպրոցում: Սակայն թե նրանց տարիքը և թե բնական ծիրքերի տկարությունը թույլ չտվեցին նրանց կարելույն չափ կարճ միջոցում կարելույն չափ շատը սովորելու և յուրացնելու: Միջակության ողբալի վիճակում մնացին մինչև վերջը:

Ահա ինչու գործվեցին այնքան խոշոր, այնքան աններելի սխալներ Վորոնցով-Դաշկովի օրերով: Եվ այդ սխալների դառը պտուղներն են մասամբ, որ այսօր մենք դժբախտություն ունենք ճաշակելու:

Վրա հասավ հեղափոխությունը: Բացվեցին համարացած լեզուները, արծակվեցին կաշկանդված ձեռները, ասպարեզ եկան թաքնված ուժեր, ընդարձակվեց քաղաքական ազատ գործունեության շրջանը: Մի պահ ինձ թվաց, որ այժմ, վերջապես, հայ ժողովրդի քաղաքագիտական բնական ընդունակությունը կարտահայտվի այն չափով, որչափով նրա մյուս ձիրքերն են արտահայտվել ուրիշ ասպարեզներում: Բայց ահա ավելի քան մի տարի է անցել հեղափոխության օրից, և նոր, ավելի կսկծալի հիասթափում դիտողի համար:

Առանց որևէ մեկին վշտացնելու մտքի, ես համարձակ ասում եմ, որ մեր առաջին շարքերում չկա ոչ մի զորեղ անձնավորություն, ոչ մի քիչ թե շատ շնորհալի քաղաքական գործիչ, որ կատարյալ հույս ու հավատ ներշնչեր: Այո, այս փաստ է:

Դիտեցեք օբյեկտիվ քննադատի աչքերով ասպարեզը, և դուք կտեսնեք, որ իմ ասածը հոռետեսի չափազանցություն չէ: Բավական է արդեն մի թեթև հայացք ձգել թեկուզ Անդրկովկասյան սեյմի վրա, և դուք ևս կհիասթափվեք, եթե, հարկավ, երբևէ հիացել եք հայի քաղաքագիտական ընդունակություններով: Ամենաթույլ, ամենաանընդունակ տարրն այդ սեյմում հայերն են կազմում: Անուններ ունեն այնտեղ վրացիները, ունեն ուժեր նույնիսկ թուրքերը, իսկ մենք, որ հավակնություն ունենք Անդրկովկասի ամենաքաղաքակիրթ տարրը համարելու մեզ, չունենք և ոչ մի պատկառելի ուժ, որ արժանի լիներ երկու միլիոնավոր մի ժողովրդի կատարյալ ներկայացուցիչը կոչվելու: Արդյոք չի՞ վիրավորվում ձեր ազգային ինքնասիրությունը, տեսնելով մեր բարոյական այս տկարությունը Անդրկովկասի միջազգային կյանքում: Արդյոք չէ՞ վշտանում դառնագին ձեր սիրտը, հետևելով մեր այսպես կոչված ազգային ներկայացուցիչների այն անորոշ, տարտամ, ինքնավստահությունից զուրկ և նույնիսկ երկչոտ գործունեությանը: Չէ՞ որ այդ մարդիկ խոսելու ընդունակություն անգամ չունեն: Չունեն լեզու, որ կարողանար բավականաչափ ներգործել օտարների վրա: Ես չեմ խոսում անձնական հեղինակության և անհատական հրապույրի մասին: Գուցե այդպիսի մի հեղինակություն և այդպիսի մի հրապույր կարողանային փոխարինել քաղաքագիտական ընդունակությունները: Դժբախտաբար այդ էլ չկա. սեյմի հայ անդամների անունները, բացի մի երկուսից, անծանոթ հնչյուններ են ոչ միայն օտարների, այլև մեզ՝ հայերիս համար: Ողորմելի և խղճալի միջակություններ:

Մի՞թե դա վիրավորական չէ մի ժողովրդի համար, որ ուրիշ ասպարեզներում տվել է այնքան տաղանդավոր և այնքան ընդունակ

մարդիկ: Գոնե ես խղճում եմ նրանց, որովհետև գիտեմ, որ յուրաքանչյուրը նրանցից լի է իր ազգին օգտավետ լինելու բուռն ու անկեղծ փափագով, բայց անգոր է: Դա է միջակությունների ճակատագիրը, բայց չէ՞ որ վիրավորական է մեզ համար:

«Մշակ», 15. III. 1918:

ՀՈՒՍՈՎ ԵՄ

Ես նորից դառնում եմ մեր լալկաններին և կրկնում. «Բավական է»: Դադարեցեք ողբալ հայ ազգի ճակատագիրը տներում, հանդեսներում, կլուբներում ու փողոցներում:

Նորից շեշտում եմ, որ մեր ներկա վիճակում դուք անգիտակցաբար կատարում եք մի շատ տխուր, շատ վտանգավոր դեր հասարակության մեջ: Ասում եմ «անգիտակցաբար», վասնզի համոզված եմ, որ եթե դուք կարողանայիք ըմբռնել մի ժողովրդի հոգեբանությունը նրա գոյության տագնապալի ժամերին, երբեք չիք թույլ տա ձեզ անելու այն, ինչ որ անում եք այսօր: Զե՞ որ դուք ձեր ազգի թշնամիները չեք, այնինչ թշնամիներից ավելի վտանգավոր եք: Անգիտակցաբար: Դուք վարակում եք ձեր միջավայրը հուսահատության, անգործության և լքման սոսկալի թույնով:

Դուք ինքներդ ոտքից մինչև գլուխ կոճկված զազրելի էգոիզմի մեջ՝ փախչում եք ասպարեզից և շատ անգամ ցինիկաբար մերժում եք ձեր նույնիսկ ողորմելի նյութական աշակցությունը ազգային գործին: Արեք, բայց մի արդարացրեք ձեր ստրկական երկշտությունը և ձեր գարշելի ժլատությունը հուսահատական աղաղակներով: Տարեք ձեր դիզած ոսկիները ձեզ հետ գերեզման, բայց ձեր կեղծ արցունքներով մի փորեք վաղաժամ ազգի գերեզմանը: Նա դեռ կենդանի է և կենդանի է մնալու, հակառակ ձեր չար մարգարեության:

Շատ լավ եմ ճանաչում ձեզ: Դուք խոսքերով ջերմ հայրենասիրական զգացումներ եք արտահայտում, աչքերով դեպի Զարավ ու Զյուսիս փակված ճանապարհներն եք դիտում, մտածելով, թե ե՞րբ պիտի բացվի մեկն ու մեկը նրանցից, որպեսզի մի կերպ կարողանաք փախչել «այս դժոխքից» և ազատվել գալիք չարիքներից: Բայց դուք շատ կարճատես եք: Դուք չգիտեք, որ չեք կարող ոչ մի կերպ ազատվել համազգային թշվառությունից, եթե արդարև նա անխուսափելի է: Չեք կարող, ասում

եմ, որքան ևս արագ սլանան ձեր ավտոմոբիլները: Եթե ազգը կործանվելու է, անխուսափելիորեն կործանվելու եք և դուք: Աշխարհի որ անկյունում ևս գտնվեք՝ ազգի վրիժառությունը բռնելու է ձեր օձիքից, ասելով. «Եթե ես մեռնում եմ, թող չմնան իմ վատագույնը մոռանալը»:

Ես մինչև այսօր չկարողացա իմանալ, թե դուք ի՞նչ ծրագիրներ ունեք ձեր գլխում ազգի փրկության համար:

— Զգուշություն, զգուշություն, զգուշություն, — կրկնում եք դուք անընդհատ և ամենուրեք:

Շատ լավ, զգուշություն: Դետո՞: Ուրիշ ասելիք չունեք: Զի՞ կարելի, արդյոք, գիտնալ, որն է ձեր փափագած զգուշությունը, ինչու՞մ է կայանում նա:

Էրզրումի անկումը մի մոր եռանդ է տվել ձեր քննադատող, ծաղրող ու ծաղակոծող լեզուներին: Միանգամայն համաձայն եմ, որ եղելությունը անոթալի է, անպատվաբեր մեր ազգի բարոյական հռչակի համար: Ես ևս լցված եմ խորին վշտով, նաև անզուսպ ատելությամբ դեպի այն մարդիկ, որոնք պատրաստեցին այդ անոթալի անկումը:

Բայց հետո՞: Ի՞նչ պիտի անել այսուհետև, այս ասացեք: Ինչո՞ւ եք պապանձվում, երբ այս հարցը տալիս եմ ձեզ: Միսա՞լ է կազմված ազգի ապահովության ծրագիրը, կորստաբե՞ր է նա. թող այսպես լինի, բայց դուք ի՞նչ ծրագիր ունեք: Բերեք մեջտեղ, ազգը կընդունե նրան խորին շնորհակալությամբ և ձեր անունները կանմահացնե պատմության մեջ:

Բայց դուք ոչինչ չունեք, ոչինչ ձեր մտավոր պահեստում: Դուք միայն գիտեք լալ և ողբալ և ավելի ու ավելի ամուր փակել ձեր գրպանները և ավելի ու ավելի եռանդուն մտածել ձեր անձերի փրկության մասին: Փախուստ «այս դժոխքից», ահա ձեր միակ ծրագիրը և միակ փափագը: Ազգը չէ ձեր հոգսը, այլ միայն և միայն ձեր անձերը:

— Ինչո՞ւ եք զինվում, ինչո՞ւ եք կռվում, պետք է հանգիստ նստեիք, — անդում եք դուք շարունակ:

Փարիսեցիներ եք դուք, ահա ինչ:

Դուք շատ լավ գիտեք, որ հայն այսօր զինվում է ակամա և կռվում է հակառակ իր ջերմ ցանկության: Դուք շատ լավ գիտեք, որ չկա աշխարհի երեսին մի ուրիշ ազգ, որ լիներ այնքան խաղաղասեր, այնքան հեզ, այնքան համբերատար, որքան հայ ազգը, և եթե այսօր նա զենքի է դիմում, ստիպված է դիմում: Ուրիշ ի՞նչ կարող է անել նա, երբ թշնամու սուրն արդեն շողշողում է նրա գլխին:

Ստրկական երկշոտությունն այնքան մթնեցրել է ձեր ուղեղը, որ այժմ դուք չեք ամաչում ասել՝

— Պետք է աղերսել թշնամուն, որ նա խնայե մեզ:

Այստեղ ևս ստում եք: Ո՞ր թշնամուն պիտի աղերսել: Թուրքին ու քուրդի՞ն: Ես գիտեմ, որ դուք չեք լռելու, որ անվերջ ողբալու եք: Բայց հուսով եմ, որ հեռու չէ այն օրը, երբ ինքներդ պիտի ամաչեք ձեր լալկանությունից: Հուսով եմ:

«Մշակ», 17. III. 1918:

ՀԱՅ ԶԻՆՎՈՐՆԵՐԻՆ

Ձեզ եմ դիմում, հայ զինվորներ:

Ձեզ, որ այժմ հայ ազգի միակ հույսն ու միակ հավատն եք:

Ձեզ, որ գնում եք պատերազմի դաշտը հայ ժողովրդին վերջնական կործանումից ազատելու համար:

Լսեցեք. մենք հայերս ոչ ոքի պատերազմ չենք հայտարարել և ոչ ոքի հետ չենք ուզում կռվել:

Մենք չունենք նպատակ ոչ օտար երկիրներ գրավելու, ոչ օտարի գույքը հափշտակելու և ոչ որևէ ժողովուրդ ոչնչացնելու:

Հավատացեք, չկա աշխարհի երեսին մի ուրիշ ժողովուրդ այնքան խաղաղասեր, այնքան հեզ, այնքան մարդասեր, որքան մենք՝ հայերս: Մենք պատրաստ ենք ընկերաբար և եղբայրաբար ապրել բոլոր ազգերի, բոլոր ցեղերի, բոլոր կրոնների հետ:

Մենք քրիստոնեական հաշտարար վարդապետության հավատարիմ աշակերտներն ենք: Չկա մեր պատմության մեջ մի էջ, որ ցույց տար, թե երբևէ մենք մեր սուրը պատյանից դուրս ենք բերել մեր թշնամուց առաջ: Ոչ, առաջ թշնամին է դուրս բերել, հետո միայն մենք: Առաջ նա է զարկել մեզ, հետո միայն մենք նրան:

Նույն բանն է կատարվում և՛ այսօր:

Մենք չենք ուզում կոտորել ոչ թուրքերին, ոչ քուրդերին և ոչ մանավանդ մեր դարավոր հարևան թուրքերին: Մենք ուրախ կլինենք նրանց հետ մնալ բարեկամներ, ապրել եղբայրաբար: Կյանքն առանց պատերազմների էլ լի է դառնություններով ու վշտերով: Մարդիկ առանց այդ էլ շատ կարճ են վայելում աշխարհի բարիքները, ինչո՞ւ նրանք ավելի ևս պիտի դառնացնեն այն կյանքը և ավելի կրճատեն նրան:

Ո՛չ, մենք հայերս այդ չենք կամենում. թող այս լավ իմանա աշխարհը:

Բայց մենք ստիպված ենք զենք բարձրացնել. և ահա այսօր բարձրացնում ենք: Մենք ստիպված ենք մեր լավագույն զավակներին, մեր ծաղիկ երիտասարդությունն ուղարկել կռվի դաշտը. և ահա՝ մենք ուղարկում ենք:

Ինչո՞ւ: Որովհետև եթե այդ չանենք, թշնամին դրսից ներս կխուժե, տակն ու վրա կանեն մեր գեղեցիկ երկիրը, կմտնեն մեր տները, կհափշտակեն մեր գույքը, կկոտորեն մեր երեխաներին, կանապատվեն մեր մայրերին, քույրերին ու մեր կանանց:

Ահա թե ի՞նչ դրության մեջ ենք մենք այսօր: Մեր կռիվը կյանքի ու մահվան կռիվ է:

Երանի թուրքիան անկեղծորեն ասեր մեզ. «Եկեք խնայենք իրարու արյունը, հաշտվենք և բարեկամանանք»: Երանի նա այդ ասեր և իր ասածն երաշխավորեր հաստատ գրավակա՞նով:

Գիտե՞ք ինչ կպատասխանեինք նրան: Մենք կասեինք. «Շատ բարի. համաձայն ենք: Դու կոտորեցիր քո հպատակ հայ ժողովրդի կեսից ավելին անհաշիվ, անխոհեմ: Տերը քեզ հետ, թող քո դատն անեն մեծ պետությունները և պատմությունը: Մենք հաշտվում ենք»:

Եվ մենք դեն կծգեինք մեր հոգուն ատելի զենքն ու կհաշտվեինք:

Բայց թուրքիան առայժմ այդ չի ասում: Նա աչք է տնկել մեր գեղեցիկ երկրի վրա, ուզում է գրավել նրան: Եվ ոչ միայն այս, ոչ, ավելին է ուզում նա: Նա վճռել է մեզ, ռուսահայերիս ևս կոտորել այնպես, ինչպես կոտորեց իր հպատակ հայերին: Այս է նրա վերջնական դիվային նպատակը:

Ասացեք, ուրեմն, ի՞նչ անենք, որ զենք չվերցնենք: Ասացեք, ուրիշ ի՞նչ կերպ պաշտպանենք մեր գոյությունը:

Ձենքով և միայն ու միմիայն զենքով: Ուրիշ միջոց չունենք:

Հայ զինվորներ, ես գրչի մարդ եմ:

Ամբողջ կյանքումս քարոզել եմ հաշտություն, եղբայրություն, սեր և հավասարություն:

Ինձ համար չկա ազգերի և կրոնների խտրություն: Ես սիրում եմ իմ ազգը, բայց նրանից ավելի ես սիրում եմ մարդը: Ձենքը խորթ է իմ մտքին ու հոգուն: Ես սարսափում եմ մարդկային արյունից: Պատերազմն ու կռիվը զազաններին են վայել և ոչ մարդկանց:

Բայց ի՞նչ արած: Մենք այսօր միայն զենքով կարող ենք պաշտպանել մեր կյանքը: Եվ ահա այսօր ականա, միանգամայն հակառակ իմ հոգուն, ես զենք եմ քարոզում: Որովհետև ուրիշ օգնություն, ուրիշ պաշտպանություն մենք չունենք, չունենք և չունենք:

Գնացեք կռվի դաշտը: Թող օրինվի այն ճանապարհը, որով գնում

եք: Նա սուրբ է, վասնզի ձեր եղբայրների, ձեր հայրերի ու զավակների կյանքն և ձեր մայրերի, քույրերի ու կանանց պատիվն է նրա վրա:

Գիտեմ, ձեր շարքերն են մտել մի խումբ մարդիկ, որ աշխատում են ձեզ մոլորեցնել: Նրանք ասում են. մի գնացեք պատերազմի դաշտը, այդ պատերազմը մեծամեծների ու հարուստների համար է:

Մի հավատաք այդ մարդկանց:

Նրանք սուտ են ասում: Նրանք կամ հիմարներ են կամ ձեր թշնամիներից կաշառված դավաճաններ: Հալածեցեք այդպիսիներին անխնա և վռնդեցեք ձեր շարքերից: Նրանք վտանգավոր սողուններ են:

Վտանգավոր են և նրանք, որոնք ձեզ քարոզում են անիշխանություն, ասելով. «Մի լսեք ձեր մեծերի հրամանները, մի հպատակվեք նրանց»:

Լավ լսեցեք. առանց մեծերի հրամանները կատարելու դուք չունեք փրկություն: Դուք ոչինչ և ոչինչ չեք կարող անել առանց կարգապահության, առանց դիսցիպլինայի: Ամենահավատարիմ, ամենաանկեղծ բարեկամը զինվորի օֆիցերն է: Դուք միևնույն լուծն եք կրում հավասար, դուք ամենքդ թանկ եք մեզ համար հավասար, տարբերությունը ձեր անունների մեջ է: Կատարեցեք անտրտունջ ձեր օֆիցերների հրամանները և միայն այն ժամանակ դուք կարող եք համարվել հայ ազգի պարծանքն ու հպարտությունը. այլապես կորած եք և՛ դուք, և՛ մենք:

Հետո, կան ձեր շարքերում և այնպիսի կարճամիտներ, որոնք ասում են. «Ինչո՞ւ պետք է գնալ կռվի հեռավոր դաշտը, քանի որ իմ գյուղը վտանգի մեջ է, ավելի լավ է գնամ և իմ ընտանիքը պաշտպանեմ»:

Ոչ, այդպես չէ: Առանց մեր երկրի սահմանները պաշտպանելու, անկարելի է պաշտպանել երկիրը: Եթե խորտակվի սահմանը, խորտակվելու է և երկիրը: Եթե կործանվի քո հարևան գյուղը, կործանվելու է և քո գյուղը: Չպիտի թույլ տալ թշնամուն, որ նա դռներից ներս մտնե: Երբ նա ներս մտնե, կործանվելու ենք ամենքս: Առանձին-առանձին ինքնապաշտպանությունը ամենավտանգավորն է: Միայն ընդհանուր ինքնապաշտպանության մեջ է մեր փրկությունը:

Այնուհետև թույլ տվեք մի բան ևս ասել ձեզ, մեր թանկագին եղբայրներ, և իմ ասելիքը կվերջանա:

Խնայեցեք թշնամու խաղաղ ազգաբնակությանը: Մի՛ կողոպտեք, մի՛ կոտորեք, մի՛ անպատվեք նրան: Դա անպատվաբեր է մեր ազգի անվան համար: Թող չասեն մեր թշնամիները, որ մենք վայրենիներ ենք: Թող լուսավոր ու քաղաքակիրթ ազգերը գիտնան, որ մեր թուրը անգեղների և անպաշտպանների համար չենք սրել, որ մենք ևս գիտենք հարգել մարդկային սրբազան իրավունքները: Խաղաղ ազգաբնակության կյանքն

ու գույքը պիտի լինեն սրբություններ ձեզ համար: Հարկավ, մինչև այն ժամանակ, երբ այդ ազգաբնակությունը ինքը խաղաղ է ձեր վերաբերմամբ: Պատժեցեք միայն նրանց, որոնք զենքով են դիմադրում ձեզ և որոնք ձգտում են փակել ձեր ճանապարհը դեպի ինքնապաշտպանության սրբազան ասպարեզը:

«Մշակ», 20. III. 1918:

ՀԵՌԱՑԵՔ ԱՍՊԱՐԵԶԻՑ, ԵԹԵ ՉԵՔ ՀԱՎԱՏՈՒՄ

Հոսահատությունը սոսկալի վտանգ է ազգերի կյանքում: Առանց հավատի դեպի սեփական ուժերը չէ կարող ապրել ոչ մի ազգ: Եվ որքան մեծ է ազգի կործանման սպառնալիքը, այնքան զորեղ պիտի լինի նրա հավատը:

Չկա ոչ մի օրենք, ոչ մի ավանդություն այնքան սուրբ, որքան հավատը: Չկա ոչ մի ուժ, ոչ մի զենք այնքան զորավոր, որքան հավատը: Անչափելի է հավատի զորությունը:

Խլեցեք մի ժողովրդից ապրելու հավատը և նա կկործանվի ավելի արագ և ավելի դյուրությամբ, քան թշնամու զենքից: Թող նա համոզվի, որ ինքը մեռնելու է, և արդեն մեռած է կամ կենդանի դիակ:

Ընդհակառակը, ներշնչեցեք նրան ջերմ հավատ դեպի իր ուժերը, և նա հրաշքներ կգործե՝ որքան ևս փոքրիկ, որքան ևս տկար լինի:

Բարոյական հանցանք են գործում այն ամենքը, որքան հայության ներկա ճգնաժամին աշխատում են հավատի վերջին նշույլը ջնջել նրա հոգում:

Ավելի մեծ հանցանք է հոսահատությունը այն մարդկանց համար, որոնք հանգամանքների բերմամբ մեր ազգային գործերի ղեկն ունեն իրանց ձեռքում: Վատ է այն նավապետը, ով առաջինն է սարսափում փոթորկից: Վատ է այն զորավարը, ով իր բանակը պատերազմ է քշում արտասուքը աչքերին: Վատ է այն գործիչը, ով հավատ չունի դեպի իր գործը: Ավելի վատ է նա, երբ հոսահատությունը հոգում, այնուամենայնիվ շարունակում է վարել իրան հանձնված գործը: Այդպիսին բյուր անգամ ավելի վտանգավոր է, քան բուն թշնամին:

Հայ ազգն իր կյանքի ու մահվան պայքարն է մղում: Վայրկյանը հավատին ու ինքնավստահությանն է պատկանում: Թող կորչեն

թերահավատությունը, հոռետեսությունը: Ասպարեզում ունեն իրավունք մնալու միայն նրանք, որոնք հավատում են հայ ժողովրդի ուժերին, և որոնք վստահ են իրանց ուժերին, և որոնք ընդունակ են ազգային դատը օտարների մոտ իրավատիրոջ և ոչ մուրացկանի լեզվով պաշտպանելու:

Իսկ դուք, թերահավատներ, դուք, հոռետեսներ, հեռացեք ասպարեզից, քանի որ ինքներդ արդեն զգում եք ձեր ապիկարությունը, միևնույնն է գորավարներ եք, թե քաղաքական գործիչներ:

Մեզ հարկավոր են գորեղ հոգիներ, կտրուկ լեզուներ և դեպի ազգի և դեպի իրանց ուժերը խորին հավատով ներշնչված անհատներ:

«Մշակ», 21. III. 1918:

ՄԵՐ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ ՄԵՐ ՁԵՌՔՈՒՄՆ Է

Ձուր են ձեր տխուր հառաչանքները, փոքրոգիներ: Ամոթալի են ձեր հուսահատական գոչյունները, թուլամորթներ: Գարշելի են ձեր արցունքները, երկչոտներ:

Հայ ազգին վիճակված չէ կործանում:

Ես մարգարե չեմ, բայց մի աստվածային ձայն իմ հոգու խորքում գիշեր-ցերեկ թելադրում է ինձ՝ «Ասա քո ազգին, որ նա ապրելու է, և նրա ապագան լինելու է բյուր անգամ բախտավոր, քան անցյալը»:

Ներկա ճգնաժամը անցողիկ է: Առաջին անգամը չէ, որ հայ ազգը կրում է այսպիսի ճգնաժամ: Նրան չեն կարողացել ոչնչացնել՝ ոչ Լենկթեմուրները, ոչ Չինգիզխանները, ոչ Շահ-Աբբասները: Նրան չի կարող կործանել ոչ թուրքը, ոչ քուրդը և ոչ մանավանդ թաթարը:

Երբեք հայ ազգը չէ եղել իր ճակատագրի տերն ու տիրականն այնպես, ինչպես այսօր: Երբեք նրանից չէ կախված եղել իր վիճակն այն չափով, որչափով այժմ: Թող լավ իմանա այս յուրաքանչյուր հայ և յուրաքանչյուրը ճանաչե իր պարտքը:

Սարսափելին մեզ համար թշնամին չէ, այլ մեր փոքրոգությունը, մեր անպարտաճանաչությունը: Սարսափելին ծուլյերն են, պիղերգները, երկչոտները, հեգնողները, ծաղրողները: Նրանք, որոնք փախչում են ասպարեզից և անկյուններում սուտ սգավորների արցունքներ թափում:

Սարսափելին այն ահագին լեգեոնն է, որ անգործ թափված է փողոցներում, կաֆեներում, այգիներում ու կլուբներում: Այլասերված

միրուքավորներն ու անմորուսները: Ոչ միայն ազգային, այլև անձնական պատվասիրություն չունեցողները: Նրանք, որ չգիտեն, թե իրանց անձի փրկությունը ազգի փրկության հետ է շաղկապված:

Ինքը սրբազան ճշմարտությունն էր բարբառում Ահարոնյանցի բերնով, երբ նա այնպես պերճախոս և այնքան վշտացած՝ երգումի անկումը վերագրում էր մեզ, թուլամորթներին, որ թիկունք ենք կոչվում: Եվ մի՞թե բանաստեղծ — հայրենասերի տառապող հոգու արդարացումն այժմ ևս պիտի անցնե ապարդյուն: Եվ մի՞թե նրա կրակոտ խոսքերը չպիտի հրահրեն հայ երիտասարդության հոգին:

Ո՛չ, այդ անհավատալի է, անկարելի: Ես այդչափ ապականված չեմ համարում հայ երիտասարդությանը:

Աշխարհի բոլոր վայրերից, ուր կան մի բուռն հայեր, անվերջ գալիս են կամավորների խմբեր զինված և անզեն: Գալիս են հավատացյալ ուխտավորների հավատով ու հուսով: Չկորզենք նրանցից այդ հավատն ու հույսը: Դառնանք նրանց թևն ու թիկունքը, ոգևորենք նրանց ոչ խոսքերով, այլ գործով: Վարակվենք նրանց ոգով և միանանք նրանց՝ հոգով ու մտքով:

Նրանցից, այսինքն մեզնից է կախված մեր փրկությունը:

Մեր ճակատագիրը մեր ձեռքումն է:

«Մշակ», 28. III. 1918:

ՊՍԱԿԻ ՓՈԽԱՐԵՆ*

Միշտ բարեհամբույր, միշտ կարեկցող, միշտ պատրաստ լուռ ու անտրտունը մերձավորներին ծառայելու և հեռավորներին օգնելու:

Քաղաքակիրթ էր նա և սիրալիր գրեթե բուն եվրոպացու չափ, մոռացկոտ էր իր նյութական շահերի վերաբերմամբ, հիշաչար և վրիժառու հասարակական շահերի համար:

Գիտեր հարգել մեծերի պատիվը և ճանաչել փոքրերի իրավունքը: Ավանդապահ էր բառիս լավագույն իմաստով: Հանգիստ, անվրդով, հաճախ նույնիսկ ֆլեգմատիկ:

Ուներ մշտական մի լայն ու մեղմ ժպիտ, որ նրա սպանիչ զենքն էր բարեկամների սուր կատակների և թշնամիների անվայել հեգնանքի ու բիրտ ու կոպիտ ծաղրի ու հայիոյանքների դեմ:

Սիրում էր վիճաբանել թեև կուսակցական ոգով, բայց միշտ գաղափարական հողի վրա: Համառ ու կամակոր չէր իր կարծիքների մեջ, որովհետև կարծամիտներն են միայն իրանց համարում անսխալական: Վիճում էր կատաղի կրքով, բայց այնքան խելոք էր, որ գիտեր անմիջապես հաշտվել հակառակորդի հետ, երբ զգում էր իր սխալը: Երբեք անձնական ակնարկներով չէր վշտացնում իր հակառակորդներին, և երբ իր անձնավորությունն էին վիրավորում — պատասխանը դարձյալ նույն լայն, մեղմ ու հեզմական ժպիտն էր:

Այսպես են ես ճանաչել Համբարձում Առաքելյանին, իբրև անհատի, ընկերական և մասնավոր կյանքում: Իսկ ճանաչել են ես նրան շատ վաղուց: Եվ կարծում են, թե չեն սխալվել, քանի որ իմ ու նրա մեջ եղած ընդհարումների ամենակատաղի միջոցներին իսկ չեն զգացել դեպի նա ատելություն:

Տարբեր էր նա մի փոքր իբրև գրչի մարդ: Ճշմարտասեր էր նա անսահման, բայց վերին աստիճանի սուբյեկտիվ, արդարամիտ, բայց ինքնամոռացության չափ ծայրահեղ, միշտ գաղափարական, բայց և միշտ անհավասարակշիռ: Նրա հասարակական ատելությունը դեպի հասարակական ախտավորները չափ չուներ: Նրա թույնն անսպառ էր, երբ հարկավոր էր խայթել: Նա չգիտեր խնայել, երբ կար անհրաժեշտություն կործանելու: Անհաշտ էր իբրև մարտնչող, դաժան որպես դատավոր:

Այս տեսակետից Համբարձում Առաքելյանը Գրիգոր Արծրունու իսկական աշակերտն էր և միակ հաջորդը, նրա չափ կրակոտ, նրա չափ տաղանդավոր:

Այո, հենց այդ ծայրահեղության, այդ կրքոտության և այդ դաժանության մեջ էին կայանում Համբարձում Առաքելյանի և՛ բարձր արժանավորությունը, և փոքրիկ թերությունը, և իբրև հրապարակախոսի: Դա էր, որ նրան դարձրեց այնքան վտանգավոր, այնքան ատելի և, միևնույն ժամանակ, այնքան ահռելի իր բազմաթիվ հակառակորդների աչքում: Հակառակորդների, որոնք, սակայն, չէին կարողանում դիմանալ նրա սոսկալի խարազանի հարվածներին, ուստի և ամեն մի բանակռիվ վերջացնում էր ապիկարների սովորական զենքով — ծաղրով, հայիոյանքներով ու զրպարտություններով: Մի զենք, որ երբեք չէր փրկում նրանց կողմնակի և օբյեկտիվ դիտողի արհամարհանքից, և միայն ծառայում էր աներկյուղ հրապարակախոսի ժողովրդականությանը, օր օրի վրա բարձրացնելով նրան իր հակառակորդների գլխից վեր:

Բայց մի բան, որ առանձնապես զարմացնում էր ինձ, Համբարձում Առաքելյանի մեջ — նրա ֆենոմենալ եռանդն էր, նրա գերբնական աշխատասիրությունը: Այդ մարդը չգիտեր հոգնել ոչ ֆիզիկապես և ոչ

մանավանդ մտավորապես: Կարծես, նրա ներվերը պողպատից էին, ուղեղը բրոնզից:

Անշուշտ գաղափարն էր, որ նրան ներշնչում էր այդքան ուժ, եռանդ և ոգևորություն: Իր ապաքախտ ազգի երջանկության գաղափարը, որի համար նա աշխատեց ամբողջ կես դար և որի իրագործումը, սակայն, բախտ չունեցավ տեսնելու:

«Մշակ», 14. VII. 1918:

ԵՐԵՎԱՆԻ ԻՆՔՐ ՊԵՏՔ Է ՅՈԳԱ

Վերջապես, Ազգային խորհուրդն և հայ կառավարության անդամներն իրանց տեղից շարժվեցին: Գնացին այնտեղ, ուր վաղուց պիտի գնային, այսպես կոչված Հայկական Հանրապետության մայրաքաղաքը — Երևան:

Ասում են վերջապես, որովհետև չափից դուրս ծանր եղավ դանդաղությունը, և արդեն շատ երկար տևեցին համլետյան տատանումները:

Ինչ վերաբերում է հատկապես Ազգային խորհրդին, ուղիղն ասած, ես բնավ հույս չունեի, թե նա երբևէ կարթնանա իր լեթարգիական միրիկից:

Ազգային խորհուրդն իր այժմյան անփոփոխ կազմով պարալիչ եղած մի մարմին է, անդամալույծ, բառիս իսկական իմաստով: Թող նրա հարգելի անդամները չվշտանան իմ խիստ համեմատությունից: Յուրաքանչյուրը նրանցից պատկառելի և արժանավոր մի անհատ է իմ աչքում, և ես բացի անկեղծ հարգանքից ոչինչ չունեմ նրանց վերաբերմամբ: Բայց այլ են անհատներն, և այլ է նրանցից բաղկացած ամբողջությունը իբրև ղեկավար մարմին: Մեքենան այն ժամանակ է միայն լավ, թե վատ մեքենա, երբ նրա յուրաքանչյուր մասնիկն իր տեղումն է: Սկզբից ևեթ Ազգային խորհրդի անդամներից և ոչ մեկը չի եղել իր համապատասխան տեղում:

Բացատրելն ավելորդ են համարում. այդ արդեն ապացուցված փաստ է:

Ես մեկն եմ եղել նրանցից, որոնք Ազգային խորհուրդը պաշտպանել են զանազան հարձակումներից: Բայց ես պաշտպանել եմ այն գաղտնի հույսով, որ, վերջապես, մի օր նա ինքը կզգա իր կազմի՝ ակնհայտ թուլությունը և կաշխատե հետզհետե ամրացնել իրան կողմնակի ուժերով:

Դժբախտաբար, նա այդ չզգաց: Եվ ոչ միայն այս. նա չունեցավ քաղաքացիական տարրական քաջություն իր ապիկարությունը

հրապարակորեն խոստովանելու նույնիսկ այն ժամանակ, երբ արդեն զգում էր այդ ապիկարությունը և չէր թաքցնում բարեկամ շրջաններից:

Չկա ավելի խոշոր բարոյական թուլություն, քան *անպատճառ* իշխելու փափագը: Եվ չկա ավելի մեծ բարոյական հանցանք, քան երբ մի մարմին ինքն զգալով իր ապիկարությունը՝ այնուամենայնիվ շարունակում է իշխել:

Ազգային խորհուրդը իր այժմյան կազմով մինչև ոսկորների ուղեղը վարակված է իշխելու փափագով: Նա չի կամենում ապաքախտ ժողովրդի ապաքախտ գործերի դեկը ձեռքից բաց թողնել: Եվ դրանով նա գործում է մի այնպիսի հանցանք, որի համար նա մեծ պատասխանատվության է ենթարկվելու հայ ազգի ապագա պատմության մեջ:

Այժմ Ազգային խորհուրդը գնում է Երևան՝ այնտեղ շարունակելու իր գործը: Եթե նա այնտեղ ևս գործելու է այն ուժերով, որոնցով գործում էր մինչև այժմ Թիֆլիսում, ապա, առանց մարգարե լինելու, ես գուշակում եմ Երևանցիների կատարյալ հուսախաբությունը: Այլ բան է, եթե նա Երևանում ենթարկվի արմատական փոփոխությունների, այլ բան է՝ եթե այդ քայքայված, հյուժված մարմնի մեջ մտնեն նոր ուժեր: Ուժեր, որ գոնե կարողանան հայ ժողովրդի փրկության կորած հույսը վերականգնել: Որքան ինձ հայտնի է, Ազգային խորհրդի այժմյան կազմն այդ հույսն էլ չունի:

Երևանը ինքը պիտի հոգա երկրի մասին:

«Աշակ», 20. VII. 1918:

ԽՆԱՅԵՆՔ ՄԵՐ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ*

Ինքնաքննադատությունը քաղաքակրթության նշան է, բայց երբ նա անցնում է որոշ սահմանից, դառնում է ինքնաապտակում:

Որքան ատելի է ինքնահավանությունը, նույնքան զագրելի է ինքնաստորացումը: Կա մի անգին զգացում, որ կոչվում է հպարտություն. ոչ գոռոզություն, այլ հպարտություն: Նա նույնքան սրբազան է մի ազգի, որքան և մի անհատի համար: Այն ազգը, որ զուրկ է այդ զգացումից, չի կարող վայելել օտարների ոչ համակրանքը, ոչ հարգանքը: Շատ -շատ նրան կխղճան, իսկ դուք գիտեք, թե որքան վիրավորական է մարդկային պատվասիրության համար կարեկցությունը: Չէ՞ որ խղճում են տկարին,

ապիկարին, կույրին, անդամալուծին, բարոյական ու մարմնավոր ուժերից զրկվածին:

Մեծ է հայ ազգի այժմյան թշվառությունը, ամսահման են նրա տառապանքները, այո, բայց մի՞թե բավական չէ որքան ինքներս մեզ ապտակեցինք: Մի՞թե բավական չէ, որքան մի ձեռով շարունակ կուրծք ծեծելով, մյուսով մեր թշվառության իսկական պատճառներն իրարու վրա շարտեցինք:

Արդեն մեր փոխադարձ մեղադրանքներն անցան ոչ միայն ազգային հպարտության, այլև տարրական անձնասիրության սահմանից: Արդեն մենք սկսում ենք նմանվել այն մուրացիկի ընտանիքին, որի անդամներն իրարու հայիոյելով ու իրարու գլխին բամփելով են ողորմություն մուրում անցորդներից:

Կան երկու ճշմարտություններ մեր ճակատագրի ներկա ծախսորդության մեջ. մեկը փոքր, մյուսը մեծ, մեկը մակերևութային, մյուսը արմատական: Փոքր ճշմարտությունն այն է, որ մենք հայերս ունենք մասը մեր թշվառության պատճառների մեջ: Թող դա լինի մեր քաղաքական անհեռատեսությունը, որ մեր տարապայման պատմության հետևանքն է: Մեծ ճշմարտությունն այն է, որ եթե լինեինք նույնիսկ շատ հեռատես, այնուամենայնիվ անզոր էինք կատարված ողբերգության առաջն առնելու, վասնզի նրա արմատական պատճառները մեզնից դուրս են: Եվ ահա փոքր ճշմարտությամբ կուրացած, մենք մոռանում ենք մեծը: Հեղեղն եկել է ու մեր խրճիթը կլանել, և մենք այսօր ասում ենք՝ եթե դռները փակեինք, խրճիթը կփրկվեր:

Զուլենալով քաջություն օտարներին ասելու այն, ինչ որ հարկավոր է ասել, իրարու օձիքն ենք պատռում: Դա փոքրոգություն է:

Այսօր գերմանացիները, որ մեր երկրի ժամանակավոր տերերն են, մեզ դատապարտում են, որ պատերազմի սկզբից մենք բռնել ենք իբր թե հակագերմանական դիրք: Իրանց տեսակետից նրանք միանգամայն արդարացի են, բայց ինչու՞ նրանց չասել մի ուրիշ ճշմարտություն: Այն, որ մենք ոչ միջոց, ոչ իրավունք և ոչ էլ որևէ պատճառ ունեինք մեր դարավոր ոսոխի պաշտպանի ու հովանավորի գիրկն ընկնելու:

Մի՞թե դժվար է ապացուցանել, որ մենք չարիքներից փոքրագույնն ենք ընտրել, զոհն մեր հայեցողությամբ: Մի՞թե դժվար է ապացուցանել, որ ատելով Գերմանիայի բարեկամին, մենք բնավ ատելություն չենք ցույց տվել դեպի Գերմանիան:

Ինչու՞ չասել նաև, որ ոչ միայն մենք, այլև ոչ ոք ու ոչ ոք չէր կարող

նախատեսել այն բոլորը, ինչ որ կատարվեց: Ու՞ր է այն մարգարեն, որ գուշակեց իզոր Ռուսաստանի անկումն այն պահին, երբ նրա հաղթական զորաբանակը Թուրքիայի կուրծքն էր պատռել: Վերջապես, եթե մեզ նման անքաղաքագետ ժողովրդից պահանջում եք այդքան հեռատեսություն, ցույց տվեք մեզ այն հանճարեղ հեռատեսին թեկուզ գերմանացիների մեջ, որ մեզ ասե, թե ինչեր են կատարվելու մոտիկ ապագայում:

Շատ դյուրին է ընկնողին խրատներ տալն ու զարկելը, բայց ընկնողն ինքը չպիտի հարվածե իրան:

Զգիտեմ դուք ինչպես, բայց ես ամեն անգամ, երբ մեր այս ու այնտեղ գնացող պատգամավորներից լսում եմ՝ «մեզ լավ ընդունեցին», վրդովվում եմ մինչև հոգուս խորքը: Իմ ազգային պատվասիրությունը վիրավորվում է մինչև կսկիծ:

«Մեզ լավ ընդունեցին» — ահա մի ողորմելի դարձված, որի մեջ ես կարդում եմ ասիական մի ժողովրդի ստրկական հոգեբանությունը: Կարծես, դեռ թուք ու մուրով պիտի ընդունեն մեզ այն բոլորից հետո, ինչ որ կրել ենք և կրում ենք: Կարծես, մարդիկ չգիտեն, որ հասարակ քաղաքավարությունը պարտավորական է դիպլոմատիական աշխարհում:

Բավական է որքան ստորացրինք մեզ: Կրենք մեր թշվառությունը հպարտությամբ և խնայենք մեր ազգային արժանապատվությունը: Նա ավելի է հարկավոր մեզ այժմ, քան երբևէ:

«Մշակ», 24. VII. 1918:

ԼՈՆՑԵՔ, ԲՈՐԵՆԻՆԵՐ

Երբ մեր ազգային ու հասարակական գործերն ու գործիչներին քննում ու քննադատում են մարդիկ, որոնք ըստ կոչման պարտավոր են այդ անել, դա հասկանալի է: Ասում ենք, այդ մարդկանց քննադատությունը և՛ անհրաժեշտ է, և՛ գնահատելի:

Հարկավ, այն չափով, որչափ նրանք անկեղծ են և չեն ղեկավարվում անձնական միտումներով: Ասում ենք, թող նրանք սխալվեն, բայց իրանց սխալների մեջ ևս լինեն անշահասեր: Իսկ երբ դատավորի ու պարսավորի դերում ասպարեզ են գալիս մարդիկ, որոնց միակ արժանավորությունը անձնամոլությունն է, ստացվում է մի այլանդակ պատկեր, որ պետք է

համարել հասարակական ախտ:

Խոսքս այն մարդկանց մասին է, որոնք այն օրից, երբ սկսվել է հայ ժողովրդի տառապանքները, ոչ միայն որևէ իրավական օգնություն չեն մատուցել նրան, այլև խղճի ամենայն անդորրությամբ դիտել ու դիտում են տառապանքները, կրկնելով.

— Մե՛զ ինչ, մեղքը մերը չէ:

Կան նույնիսկ այնպիսի քննադատող ու պարսավողներ, որոնց միակ գործունեությունն է մարդկային թշվառություններից իրանց համար անձնական երջանկություն հյուսելը: Ուզու՞մ եք պարզն ասեմ. այժմյան սպեկուլյանտները, կաշառատու կապալառուները, գայլախորժակ խանութպանները, այն ամենքը, որ պատերազմի առաջին օրից հասարակության արյունն են ծծել ու ծծում են: Ասում են հասարակության, այլ ոչ ժողովրդի, որովհետև հենց ժողովրդի միջից են դուրս եկել այդ ժամանակակից բորենիները և այսօր ժողովուրդն է, որ հարստահարում է մեզ:

Անցեք Երևանյան հրապարակով, Գոլովինսկի պրոսպեկտով, մտեք այդ բազմաթիվ խանութները, որ մեծ մասամբ հայերին են պատկանում, մտեք այդ կեղտոտ ու կեղեքիչ կաֆեներն ու կլուբները, ամենուրեք կհանդիպեք այդ մարդկանց: Դրանք մեր նորագույն տիպերն են: Նրանց վտիտ դեմքերը նոր են կշտացել, այտերը նոր են կարմրել, պարանոցները նոր են հաստացել: Նրանց կեղտոտ օձիքը շապկի՝ նոր է մաքրվել, հաստ կրունկները նոր են փոխվել փայլուն կոշիկների: Առաջ նրանք հեզ էին, համեստ, նույնիսկ երկչոտ և իրանց հետին թաթերի վրա էին պտույտ-պտույտ անում հարուստների առջև: Այժմ տեսեք որքան նրանք հանդգնացել են, ի՞նչ լեզու են գործածում, ի՞նչ ապլոմբով են խոսում. փույթ չէ, որ նրանք ոչ մի մարդկային լեզվով կանոնավոր խոսել չգիտեն, բայց խոսում են, այն էլ, իհարկե, ռուսերեն: Փույթ չէ, որ նրանք հայ ազգի նույնիսկ նորագույն պատմության այբուբենին անծանոթ են, բայց խոսում են ու վիճաբանում նախանծելի հեղինակությամբ: Նրանք ավարտել են իրանց օրվա մութ ու կասկածելի գործերը, և ահա զբաղված են հոգեշահ գրույցներով, որոնց ուղն ու ծուծը անվերապահ պարսավումներն են ու հարծակումները: Նրանք դատապարտում են ու պախարակում ամեն ինչ ու ամենքին, որ այս կամ այն կերպ կապված են ազգային գործերի հետ. և՛ հայ մամուլը, և՛ Ազգային խորհուրդը, և՛ հայ կամավորներին, և հայ զորքերին, նրանց հրամանատարին ու օֆիցերներին: Նրանց համար վատ է ամեն ինչ, որ հայկական է, նույնիսկ այն, ինչ որ անձեռնմխելի է ու սուրբ – հայ հերոսների անապական հիշատակը:

Նրանք օտարների երկչոտությունը համարում են հեռատեսություն, հիմարությունը՝ տակտիկա, խաբեբայությունը՝ դիպլոմատիա, դավաճանությունը՝ խելք, իսկ մեր նահատակված քաջերի հերոսությունը տիմարություն, մեր ապացուցված ազնվությունը հիմարություն, մեր վկայված հավատարմությունը անհեռատեսություն:

Չկա ոչ մի միջոց այդ մարդկանց անգուսպ հանդգնության առաջն առնելու: Նրանք ունեն միայն մի զենք, որ իրանց տեսակետից ամենազորավորն ու ամենահամոզիչն է: Այդ զենք <ն> է. «Ես իմ գործերը լավ եմ տանում, ուրեմն ամենքից խելոքն ես եմ»:

Մնում է մեզ միայն ասել.

— Լռեցեք, բորենիներ, եթե հայ ազգն ունի բարոյական արատներ, ամենամեծ արատը դուք ինքներդ եք:

«Աշակ», 27. VII. 1918:

ԴԻՄԵՆԵ ՆՐԱ ՄԻՋԱՍՏՈՒԹՅԱՆԸ

Ոչ մի բանում դիլետանտիզմն այնքան վտանգավոր չէ, որքան երկիր կառավարելու և ժողովուրդ ղեկավարելու գործում: Ողորմելի է վիճակն այն ազգի, որի ճակատագիրը գտնվում է անփորձության ու քաղաքական տհասության ձեռքում: Այդպիսին մատնված է կործանարար պատահարների, նման այն երկաթուղային գնացքին, որի մեքենավարը տակավին չի տվել իր արհեստի քննությունը:

Հայտնի է, թե որքան դիլետանտիզմը ծիծաղելի է արվեստի մեջ և որքան խղճալի՝ արհեստի մեջ. երկիր կառավարելու գործում նա թե ծիծաղելի է և թե խղճալի, վասնզի այդ գործն և արվեստ է, և արհեստ:

Մոտ տարիուկես է, որ համայն Ռուսիան իր բոլոր մասերով ու ազգություններով գտնվում է դիլետանտների ձեռքում, և մենք այսօր տեսնում ենք, թե ինչեր արին նրանք և ինչեր են անում: Հսկայական պետության պառակտման և այժմյան կործանման սկիզբը դրին իրանց անհեթեթ վճիռներով ու կարգադրություններով այսպես կոչված կադետներն ու հոկտեմբերականները, շարունակեցին սոց. - դեմ. փոքրամասնականները և փառահեղ կերպով ավարտեցին մեծամասնականները: Ինչո՞ւ: Որովհետև ոչ մեկն այդ կուսակցություններից չուներ երկիր կառավարելու և ժողովուրդ ղեկավարելու թե ծիրք և թե

փորձառություն: Որովհետև բոլորն էլ պատահական դիլետանտներ էին:

Ես հիշում եմ, ռուսական հեղափոխությունից մի քանի ամիս առաջ հայտնի լեհական գործիչ արքեպիսկոպոս բարոն Ռոդբի ինձ ասած խոսքերը, թե «Ռուսիայում հեղափոխություն կլինի. այս անկասկած է, բայց թե այդ հեղափոխությունը կկործանե նրան, այդ էլ անկասկած է»:

— Ինչո՞ւ, — հարցրի ես:

— Որովհետև Ռուսիան չունի քաղաքականապես ընդունակ և պատրաստի ոչ մի ժողովրդական ուժ: Այս տեսակետից ապիկար են նրա բոլոր կուսակցությունները հավասար: Մոմարխիային կփոխարինե անարխիան, և դա կլինի Ռուսիայի վերջը իբրև մեծ պետություն:

Ինձ թվում է, որ նույն նախազգացումն ունեցել են այն ամենքը, որ ղեկավարվում են ոչ թեորիաներով, այլ կյանքի տվյալներով:

Դեռ անցյալ տարի ես իմ կասկածներն արտահայտեցի ռուս դեմոկրատիայի ընդունակությունների մասին: Հայտնեցի ճիշտ այն ժամանակ, երբ մեր ինտելիգենտ ամբոխը հափշտակված էր այդ դեմոկրատիայով, և շատերը նույնիսկ մի-մի համճար էին համարում նրա ղեկավարներին: Իմ կասկածները, հարկավ, դուր չեկան մեր տնածին Դանտոններին ու Մորաբոներին, և նրանք սանձարձակ հարձակվեցին ինձ վրա:

Այսօր դուք տեսնում եք, թե որքան իրավացի էր թե՛ իմ և թե շատ շատերի հոռետեսությունը:

Նույն հոռետեսությունն ունեն ես և անդրկովկասյան երեք հանրապետությունների վերաբերմամբ: Ես համոզված եմ — և այս համոզմունքը չի կարող խախտել իմ մեջ ոչ մի տրամաբանություն — որ այդ երեք հանրապետություններից ոչ մեկը չի կարող իր երկիրը կառավարել սեփական ուժերով: Մենք չունենք ոչ պատրաստություն և ոչ փորձառություն երկիր կառավարելու, իսկ մեր բնածին ընդունակությունները դեռ ապացուցված չեն: Այդ ես ասում եմ առանձին համոզմունքով հայերի և թուրքերի վերաբերմամբ: Գալով վրացիներին, այս երկու ամսվա փորձը տակավին չի արտադրել նրանց ընդունակություններն ընդգծող մի որևէ խոշոր փաստ: Ընդհակառակը կան մի շարք փաստեր, որ չափազանց կասկածելի են դարձնում նրանց վարչական ծիրքերը: Բավական է վերցնել պարենավորման խնդիրը, որ ամենից անհետաձգելին է և առաջին տեղն է բռնում ժողովրդի կյանքում: Երկու ամսվա ընթացքում վրաց հանրապետությունը այդ խնդրում չկարողացավ դրական քայլեր անել: Ընդհակառակը, ինչ որ էլ արել է ու անում է, ավելի բարդացնում է խնդիրը: Ապաբախտ ազգաբնակչությունը քանի գնում, այնքան ավելի ու

ավելի է հեծում սոսկալի թանկության ներքո, և չկա ոչ մի հուսատու փաստ, թե երբևէ նա կազատվի կիսաստվի մղձավանջից:

Դեն ձգենք ինչպես անպետք մի լաթ տխմարության հատուկ ամբարտավանությունը: Խոստովանենք հրապարակորեն մեր ապիկարությունը: Ասենք անկեղծորեն, որ մեր տխուր անցյալը մեր մեջ ժամանակավորապես թմբեցրել է մեր բոլոր վարչական ընդունակությունները: Մի՞թե չենք զգում, որ երկար ժամանակ խավարի մեջ մնալուց հետո՝ այսօրվա ազատության հանկարծահաս լույսը անսովոր է մեզ համար, ուստի և մենք տակավին խարխափում ենք ինչպես կույրն առանց ցուլի:

Երկիր կառավարելու և ժողովուրդը ղեկավարելու գործում մեր ընտրյալները շատ-շատ կարող են լինել աշակերտներ: Բնավ ամոթալի չէ աշակերտելը, ցավալի կլինի միայն, եթե աշակերտները դուրս գան անշնորհք: Այս դեպքում վճռական խոսքը պատկանում է ուսուցչին:

Եվ ո՞վ կարող է մեզ համար ավելի լավ ուսուցիչ լինել, քան Եվրոպան: Բախտավորապես, այստեղ է նրա հզոր ներկայացուցիչներից մեկը՝ գերմանացին: Թողնենք մեր ամբարտավանությունը և դիմենք նրա օգնությանը: Թող նա ուսուցանե մեզ մեր երկիրը կառավարելու և ժողովուրդը ղեկավարելու ձևը: Նա այդ կարող է անել, եթե մենք լինենք քիչ թե շատ ընդունակ աշակերտներ: Թվում է ինձ, որ ոչ հայը, ոչ վրացին և ոչ թուրքը զուրկ չեն աշակերտելու և շատ բաներ սովորելու ընդունակությունից:

Բայց կա մի հանգամանք ևս, որ ավելի կարևոր է դարձնում գերմանացու միջամտությունը մեր գործերում: Դա երեք հանրապետությունների, ուրեմն և՛ երեք ժողովուրդների փոխադարձ բարեկամությունն է, որ վաղ, թե ուշ պետք է հաստատվի Անդրկովկասի ամբողջության սկզբունքի վրա: Մի բարեկամություն, առանց որի չի կարող լինել և ոչ մեկն այդ երեք ժողովուրդներից ոչ միայն երջանիկ, այլև քիչ թե շատ ապահով:

Ներկա հանգամանքներում երեք ժողովուրդներին միացնող օղակը կարող է լինել դարձյալ գերմանացին:

Դիմենք նրա միջամտությանը:

ՄԵՐ ԲՈԼՈՐ ՈՒԺԵՐՈՎ

Սոսկալի է գռեհկությունն ու զագրելի: Ագահ է նա, դաժան, արյունարբու:

Գռեհկության միակ առաջնորդը բնագղն է, միակ ղեկավարը ստամոքսը: Տվեք գռեհկությանը ազատություն, անմիջապես գազանը կբարձրացնե իր գլուխն ու ցույց կտա սուր ժանիքները: Չկա գռեհկության համար ուրիշ սանձ, բացի ուժից: Ոչ բարոյական, ոչ հոգեկան և ոչ նույնիսկ կրոնական, այլ նյութական ու ֆիզիկական ուժից:

Գռեհկությունը հեզ է, խոնարհ, շողոքորթ, ընկճված, քծնող, երբ նրա գլխին դամոկլյան թուրի պես կախված է մտրակը: Նա հանդուգն է, անպատկառ, խստապահանջ, քարասիրտ, երբ չկա այդ մտրակը:

Այս բանն ամենափայլուն կերպով ապացուցեց ռուսական հեղափոխությունը: Նա ամբողջովին մերկացրեց գռեհկության գարշելի հոգեբանությունը, և այսօր նրա պաշտպանները չգիտեն ամոթից ուր թաքցնեն իրանց գլուխները: Ամեն ինչ, որ հակամարդկային է և հակաաստվածային, արավ գռեհկությունը: Սպանություններ, կոդոպուտներ, բռնություններ, լլկումներ, հրդեհներ, դավաճանություն, մատնություն, ամեն տեսակի ապականություններ: Նա ապականեց բոլոր սրբությունները, սկսած գիտություններից ու գրականությունից մինչև կրոնն ու եկեղեցին: Նա կործանեց դպրոցը, ուսմատակ արավ արվեստները: Նա թատրոնները դարձրեց ախոռատուն, թանգարանները ավերակներ, պալատները գինետներ:

Գռեհկությունը և՛ քաջ է անսահման, և՛ երկչոտ սողունի չափ: Քաջ՝ թույլերի ու անզենների դեմ, երկչոտ՝ ուժի առջև: Նա գաղափարի դահիճն է և բռնցքի երկրպագուն: Եվ որպիսի՝ զագիր դահիճ: Նա մի թունավոր սողուն է, որ իր գոհին խայթում է նրա քնած միջոցին: Նա մի գազան է, որ կրակից՝ սարսափում է և ծծկերներին հոշոտում:

Սուտ է, թե գռեհկությունն ունի որևէ իդեալ, բացի ստամոքսի կշտությունից և անասնական կրքերի հագումից: Նրա հոգին որովայնումն է և միայն այնտեղ:

Կեղծում են այն ամենքը, որոնք որևէ բարձր արժանավորություն են գտնում գռեհկության մեջ: Բացառությունները օրենք չեն: Օրենքը մեծամասնությունն է: Գազանը գազան է, բայց և այնպես նա չար է, երբ քաղցած է: Գռեհկությունը չար է նույնիսկ կուշտ ժամանակ:

Երբեք գռեհկությունն այնքան հանդուգն, այնքան անամոթ և այնքան դաժան չի եղել, որքան այժմ: Երբեք նրա պահանջներն այնքան խիստ և ախորժակն այնքան մեծ չի եղել, որքան այսօր: Դուք այդ տեսնում եք և զգում ամեն օր խանութներում, արհեստանոցներում, գռեհկության բոլոր վայրերում: Իսկ թե ինչեր են կատարվում գավառներում ու գյուղերում, այս արդեն աննկարագրելի է:

— Ես չեմ կարող նկարագրել այն հրեշտությունները, որ տեսա իմ աչքերով հայ ժողովրդի մեջ, — ասաց նորերս Հովհաննես Թումանյանը իր մի զեկուցման միջոցին:

Տեսնո՞ւմ եք. բուն ժողովրդի հարազատ զավակն և նրա ցավերով շնչող բանաստեղծի երևակայությունն անգամ, որ այնպես գիտեթափանցել բարվո և չարի խորքերը, հրաժարվում է տալ մեզ գռեհկության սոսկալի նկարագիրը:

Այն բոլոր թշվառությունների մեջ, որ կրել ու կրում է հայ ազգը, ոչինչ ինձ այնքան չի վշտացնում, որքան հայ ժողովրդի գռեհկությունը: Նա է մեր ամենամեծ թշնամին և նրա դեմ է, որ մենք պիտի կռվենք մեր բոլոր ուժերով: Այո, մեր բոլոր ուժերով:

«Մշակ», 31. VII. 1918:

ՆԱԽ ՄԵՐ ՈՒՆԵՐԻՄ ԹՇՆԱՄԻՆ

Կա մի միջոց արյունաբերու խանութպանների ու արհեստավորների օր օրի վրա ավելի ու ավելի զարգացող ագահությունը գեթ մի աստիճան մեղմացնելու համար:

Դա բոյկոտն է: Այն միջոցը, որին սովորաբար դիմում են Եվրոպայում և մանավանդ Ամերիկայում:

Եթե մենք որոշենք զոնե մի շաբաթ մրգեղեն չուտել, եթե դադարենք գործածել խմիչքներ, ծխախոտ, միս, եթե հրաժարվենք այն բոլորից, առանց որի կարող ենք ապրել, բավական է: Մեր տգրուկները կզգան մեր ուժը և ստիպված կլինեն չափավորել իրանց զազանային ախորժակը:

Բայց մենք այդ չենք անում և չեմ էլ կարծում, թե երբևէ կարողանանք անել: Ինչո՞ւ: Կան երկու գլխավոր պատճառներ: Առաջին պատճառն այն է, որ մեր քաղաքակրթությունը տակավին չի հասել այն աստիճանին, որ ունենայինք հանրային կյանքի գիտակցությունն ու ընկերական շահերի

հարգանքը: Մեզնից յուրաքանչյուրը ապրում է առանձնակի կյանքով և հոգում է միայն և միմիայն իր մասին: Մենք չենք զգում, որ մեզնից ոչ մեկի կյանքը հասարակությունից ու միջավայրից արմատապես կտրված ու առանձնացած չէ, որ մենք ուզենք չուզենք ամուր շղթաներով կապված ենք հանրային կյանքի հետ: Չգիտենք նաև, որ մարդկային էգոիզմի բացասական հետևանքներն ընկնում են նախ և առաջ էգոիստի վրա, որքան ևս նա հիմարաբար ապահով ու հանգիստ համարե իրան:

Երկրորդ պատճառն այն է, որ գոեհկությունը կուլշտ է: Ի՞նչ փուլթ խանութպանին, արհեստավորին, բանվորին, որ մի ուրիշ խանութպան, արհեստավոր կամ բանվոր հարստահարում է իրան. նա ինքն էլ հարստահարում է: Եվ հարստահարում է կրկնակի չափով: Ես երևակայում եմ, թե ինչ կլինեն, եթե գոեհկությունը գտնվեր նյութական այն ամասելի վիճակում, որի մեջ ներկայումս գտնվում է ոչ գոեհկությունը, այսինքն ինտելիգենցիան: Նրա կիսաքաղցած ստամոքսն անմիջապես կխավարցներ նրա առանց այն ևս խավար ուղեղը, և դուք կտեսնեիք, ինչ գազանային միջոցների է դիմում իր ստամոքսին, այսինքն իր առաջին Աստծուն, հագուրդ տալու համար: Դուք կլինեիք վկա առնվազն այնպիսի եղկելի տեսարանի, որին ես եղա վկա: Այն է, երբ թերապուլների իդեալ դեմոկրատիան ամենայն լրբությամբ կողոպտում էր Միլյանների խանութը: Դուք կտեսնեիք ավելին. ընդհանուր ապստամբություն, կողոպուտ, հրդեհներ, մարդասպանություններ ու ավազակություններ:

Ահա թե որքան մեծ է տարբերությունը գոեհկության և ոչ գոեհկության միջև:

Ես կրկնում եմ այն, ինչ որ ասացի անցյալ հոդվածումս*: Մարդկության, հետևաբար ուրեմն և հայության, ամենագլխավոր թշնամին գոեհկությունն է:

Եվ նրա դեմ է, որ կրթությունը, մամուլը, դպրոցը, գրականությունը, թատրոնը և ինտելիգենցիան-պիտի կռվեն իրանց բոլոր ուժերով: Զանի որ այդ արյունարբու գազանը հաղթված կամ զսպված չէ, մեր դրությունը լինելու է աննախաձեռն:

Ես ոչնչից այնքան չեմ զգվում ու վախենում, որքան գոեհկությունից: Նա է մեր ոխերիմ թշնամին:

ՊԻՏԻ ԱՐՅԱՄԱՐՅԱԵՆ

Ես ասել եմ և կրկնում եմ, որ հասարակական կամ ազգային գործերը քննելու ու քննադատելու համար պետք է ունենալ որոշ բարոյական իրավունք, որ քննադատի միակ օրինական հավատարմագիրն է:

Մարդիկ, որոնք մի զարմանալի հետևողականությամբ շարունակ հեռու են եղել հանրային կյանքից և ընկերական շահերից, մարդիկ, որոնց խղճուկ գոյության միակ ղեկավարն եղել է անհատական գարշելի էգոիզմը, մարդիկ, որոնք իրանց անձնական ողորմելի աշխարհը միշտ գերադասել են բոլոր բարոյական պահանջներից ու քաղաքացիական պարտականություններից, այդ տեսակ մարդիկ միանգամայն զրկված պիտի լինեն քննելու ու քննադատելու իրավունքից: Զրկված պիտի լինեն այդ իրավունքից մանավանդ նրանք, որոնց բարոյական պաշարը հրապարակված է սնանկ այս կամ այն հակահասարակական կամ հակազգային գործողության պատճառով:

Ես ասում եմ՝ քննադատի արհեստը բարձր է ու սրբազան, հետևաբար այդ բարձր ու սրբազան գործը կատարելու համար անհատը պետք է լինի բարձր բոլոր բարոյական կշտամբանքներից. մաքուր գործը պետք է կատարվի մաքուր ձեռքով, այլապես նա կապականվի այնչափ, որչափ ապականված է գործող ձեռքը: Զինվորը, որ թշնամու հարձակման ժամանակ առաջինն է հրացանը ձգել ու փախել կռվի դաշտից, չունե իրավունք իր ոչ մի ընկերոջը մեղադրելու երկչոտության մեջ: Քաղաքացին, որ խուճապի միջոցին առաջինն է թողել իր մերձավորներին վտանգի վայրում ու փախել տմարդաբար, չունե ոչ մի իրավունք մեղադրելու փախչողներին: Կուսակցականը, որ իր այս - այն տոգեղ արարքի համար վռնդված է կուսակցության շարքերից, չունե ոչ մի իրավունք իր նախկին կուսակցությունը քննադատելու: Կեղծ սնանկացած վաճառականը չունե իրավունք դատապարտելու իր արհեստակցի իսկական սնանկությունը:

Այս բոլորն այնքան պարզ է, որքան ամենատարրական ու ամենահասարակ ճշմարտությունը նման արեգակի լուսին, կրակի ջերմությամբ, ծյունի ցրտությամբ:

Պարզ է բոլոր ազգերի, բոլոր հասարակությունների և միայն ու միմիայն ոչ հայ ազգի ու ոչ հայ հասարակության համար: Այլապես ինչպես բացատրել այն, որ մեզնում դպրոցը քննադատում է թերապուշ

ուսուցիչը, գրականությունը անշնորհք մրոտողը, թատրոնը բեմից վճռված դերասանը: Այլապես ինչպես բացատրել, որ մեր հասարակությունը լսում է թեկուզ մի ականջով ու մեր մամուլը համբերում է թեկուզ գաղտնի զգվանքով այն անզուսպ «քննադատությունները» ու բերանացի կամ գրավոր հարձակումները, որ թույլ են տալիս իրանց բարոյական բոլոր իրավունքներից զրկված անհատներ:

Հարգելի ու պաշտելի է այն քննադատությունը, որ բխում է անկեղծ անշահասեր հոգուց: Հարգելի են այն քննադատները, որոնք գործով ցույց են տվել իրանց անձնուրաց հավատարմությունը հասարակական կամ ազգային շահերին: Իսկ նրանք, որոնց բարոյական սնանկությունը վաղուց է վկայված, որոնք ոչ մի ծառայություն չեն մատուցել հայ ազգի կամ հասարակության քաղաքակրթությանը, որոնց միակ հետաքրքրական աշխարհը եղել է իրանց ողորմելի անձը և միակ պաշտելին իրանց անձնական ապահովությունը, իրանց նյութական շահը, անասնական էգոիզմը, այդպիսիները և նրանց քննադատությունը արհամարհելի են և պիտի արհամարհվեն հասարակությունից, եթե միայն այդ հասարակությունը քիչ թե շատ քաղաքակիրթ է:

«Մշակ», 3. VIII. 1918:

ՀԱՐԳԵՆՔ ՄԻՄՅԱՆՑ ԻՐԱՎՈՒՆԵՆԵՐԸ

Երեկ լրագիրներում կարդացի, որ Երևանում որոշված է Հայոց Ազգային Խորհրդի կազմի մեջ ընդունել պատգամավորներ մուսուլմաններից, ռուսներից և եզդիներից: Այլ խոսքով, ճանաչվում ու հարգվում է ազգաբնակության փոքրամասնությունների իրավունքը՝ մասնակցելու երկրի կառավարության մեջ:

Այդպիսով հայկական հանրապետությունն իր գործունեությունն սկսում է մի ժեստով, որ որքան գեղեցիկ է, նույնքան և խելացի:

Ես չեմ ուզում կրկնել այն բանալ դարձած միտքը, թե որքան մեծ է փոքրամասնության իրավունքների ճանաչման և հարգման արժեքը քաղաքական տեսակետից: Դա ինքնըստինքյան հասկանալի է: Ինձ համար Հայ Ազգային Խորհրդի այդ առաջին քայլն ավելի արժեքավոր է բարոյական տեսակետից: Եթե կամենաք, դա մի տեսակ ապացույց է հայ ազգի որոշ քաղաքակրթության, առաջին վկայականը նրա մտավոր ու

բարոյական համեմատական հասունությամբ:

Ազգերի հոգեկան կարողության աստիճանը որոշելի է այն չափով, որով որոշվում է անհատի բարոյական հարստությունը: Տկարամիտ և վատ ուղղությամբ կրթված անհատն իր անիմաստ գոռոզության և ամբարտավանության մեջ փքված՝ ատում է իր ինքնագոհ կամքին, նույնիսկ կարծիքին հակադիր յուրաքանչյուր մի փորձ: Տվեք ինքն իր անծով հափշտակված և իր խելքի վրա սիրահարված թերամտին որևէ իշխանություն կամ իրավունք, և ահա հենց առաջին քայլից նա կսկսե ի չարը գործ դնել իր դիրքը *parvenu*-ին հատուկ կոպտությամբ ու անտակտությամբ: Այդպիսին դիրք ու իրավունք ասված բաները ուրիշ կերպ չի ըմբռնում, եթե ոչ իբրև բռնություն: Եվ բնորոշն այն է, որ որքան փոքր է տկարամիտ անհատի իշխանությունը, այնքան մեծ է նրա բարոյական ու մտավոր հավակնությունը, այսինքն այնքան գոռոզ է նա ու ամբարտավան:

Նույնն է ճիշտ և ազգերի վերաբերմամբ, մեծ են նրանք թե փոքր — միևնույն է: Ռուսիայի ներկա քայքայման գլխավոր պատճառներից մեկն եղավ նրա գոռոզությունն ու ամբարտավանությունը, որոնց ամենառեւիժ արտահայտությունն էր օտար ազգերին ու ազգություններին տմարդի կերպով հալածելը:

Անտարակույս Հայոց Ազգային խորհրդի և կառավարության համակրելի որոշումը կունենա որոշ դրական հետևանքներ բարոյական տեսակետից: Դա մանուկ հանրապետության կողմից մարդակեր շովինիզմի երեսին չպարտված մի արհամարհանք է: Դա մի հրապարակական ապտակ է ազգամոլությանն ու ազգատեցությանը, որ այնքան թունավորում և ապականում են մեր գոյությունը:

Հալածանքը մարդկության վայրենական դարերի գարշելի ժառանգություններից մեկն է: Նա բարբարոսության հրճվանքն է և մարդակերների միակ սկզբունքը: Երբեք չի կարող կուլտուրական կյանքին ընդունակ համարվել այն ազգը կամ ժողովուրդը, որ իր բախտը ձգտում է հաստատել ուրիշների դժբախտության վրա: Նա, որ սիրում է հալածել, վաղ թե ուշ հալածվելու է և՛ ինքը: Հալածանքն երկսայրի մի սուր է, որի մի ծայրը միշտ ուղղված է դեպի հալածողի կուրծքը:

Ես ավելի քան համոզված եմ, որ հայկական հանրապետության որոշումը միակը չի լինի Անդրկովկասի սահմաններում: Համոզված եմ, որ մյուս երկու հանրապետություններն էլ շուտով կճանաչեն և կհարգեն իրանց սահմաններում գտնվող փոքրամասնությունների իրավունքները: Առանց այդ ոչ մեկը երեք պետություններից չի կարող լինել հանգիստ ու

ապահով: Առանց այդ նրանց գոյությունը սկզբից ևեթ կհանդիպի վտանգավոր անախորժությունների: Համենայն դեպս քաղաքակիրթ մարդկության կողմից մենք չենք ճանաչվի որպես անկախության արժանի և քաղաքակրթության ընդունակ ժողովուրդներ:

Մեր ամենքի փրկությունը փոխադարձ հարգանքի մեջ է:

Հարգենք միմյանց իրավունքները:

«Մշակ», 4. VIII. 1918:

ՊԱՐՏԱՎՈՐ Է ՏՄԼ

Հայ գրողների ընկերության վերջին ընդհանուր ժողովը որոշել է Թիֆլիսում բանալ կոոպերատիվ խանութ իր անդամների համար:

Համակրելի և կենսական որոշում, որի շուտափույթ իրագործումն անհրաժեշտ է, քանի որ նա առանց այդ ևս շատ է ուշացել: Սակայն կա մի ուրիշ խնդիր, որի մասին վատ չէր լինի, եթե ընկերությունը մտածեր: Բանն այն է, որ ժժան, թե թանկ գնով անհրաժեշտ ուտելիք կամ հագնելիք գնելու համար պետք է ունենալ դրամ: Արդ, հայ գրողները ներկայումս դրամ բոլորովին չունեն: Ասում են բոլորովին, և դուք հավատացեք, որ դա գրչի չափազանցությունն է:

Խոսքս, իհարկե, այն գրականագետների մասին չէ, որոնց համար գրականությունը, եթե կամենաք, մի միջանկյալ զբաղմունք է և որոնք ունեն ուրիշ արհեստ կամ պաշտոն, ուրեմն և որևէ նյութական վաստակ: Խոսքս իսկական գրողների մասին է, որոնց համար իրանց կոչումը սրբությունն սրբոց է և որոնց ապրուստի միակ միջոցն է: Ահա այդ պրոֆեսիոնալ գրողներն են, որ ներկայումս գտնվում են նյութական ամենամեծ կարիքի մեջ:

Թող ինձ ներվի, որ ինքս, գրող լինելով, թույլ եմ տալիս ինձ այդ մասին խոսելու: Խնդիրը հասարակական է, հետևաբար ես չունեմ իրավունք նրան հրապարակ չձգելու: Վերջապես ես կատարում եմ իմ արվեստակիցներից մի քանիսի պահանջը:

Երբեք հայ գրողի նյութականը նախանձելի չի եղել, բայց այն վիճակը, որ ունի նա ներկայումս, արդեն չափազանց տագնապալի է: Դուք չեք կարող այդ վիճակը մի կշեռքի վրա դնել ոչ արհեստավորի, ոչ բանվորի, ոչ նույնիսկ ուսուցչի կամ դերասանի նյութական վիճակի հետ: Պատճառը

պարզեմ ձեզ համար: Գրեթե բոլոր հայ գրողների տպագրված երկերը սպառված են, ուրեմն նրանք շուկա դուրս բերելու «ապրանք» այլևս չունեն: Նոր գրքեր տպել նույնպես չեն կարող՝ սոսկալի թանկության պատճառով: Երևակայեցեք, տպարանական աշխատանքի վարձը բարձրացել է տասն անգամ, իսկ տպագրական թղթի արժեքը քսան անգամ: Եթե հայ գրողը դիսկ անե մի նոր երկ տպելու, պետք է միայն իր ծախքերը գեթ մոտավորապես ծածկելու համար սովորական ժամանակ մի ռուբլով վաճառվող գրքի գինը նշանակի առնվազն 10-15 ռ.: Բնական է, որ մտքի մշակը այդ չի կարող անել և եթե անե, դուք չարաչար կդատապարտեք նրան, իսկ ձեզնից առաջ ես կդատապարտեմ: Վերջապես գիրքը հաց չէ, որ գնողը ստիպված լինի գնել ինչ գնով ևս լինի: Ի՞նչ է սրտի և ուղեղի պահանջը ամենագոր ստամոքսի առջև:

Եվ ահա հայ գրողը ստիպված է իր տպագրության համար պատրաստ երկերը առժամանակ թողնել գրասեղանի մեջ այն հույսով, որ, վերջապես, մի օր կփոխվեն հանգամանքները: Զգիտեմ կփոխվեն այդ հանգամանքները երբեք, թե չէ, գիտեմ միայն, որ այն վիճակը, որի մեջ ներկայումս գտնվում է հայ գրողը, միանգամայն վիրավորական է մեր ազգի բարոյական վարկի համար: Այո, ոչ գրողի, այլ ազգի, վասնզի յուրաքանչյուր ազգի քաղաքակրթության աստիճանը որոշվում է իր մտավոր հարստության գնահատության չափով: Մի պատկեր:

Նորերս հանդիպում եմ մի շնորհալի վիպագրողի, որ երեսուն տարվա ընթացքում պատմվածքների ահագին հատորներ է լույս ընծայել:

— Գնում եմ, — դառնում է նա ինձ:

— Ո՞ւր:

— Վաղդիկավկազ:

— Ինչո՞ւ:

— Ստիպված եմ: Ընտանեկան գործեր ունեմ:

— Կառքով եք գնո՞ւմ, թե՞ ավտոմոբիլով, — հարցնում եմ ես:

Մի ոչ դառը հեգնական ժպիտ է սահում խոսակցիս գունատ դեմքով: Ստոիկյան հանդարտությամբ նա արտասանում է.

— Գնում եմ ոտքով:

Երկու հարյուր վերստ ոտքով, 55 տարեկան հասակում:

Գնա, հայ գրող, դա քո երեսնամյա տառապանքներով լի գործունեության վարձն է: Փույթ չէ, վաղը կմեռնես, և քեզ կթաղեն փառավոր կերպով:

Մի ուրիշ պատկեր:

Հանդիպում եմ կաֆեներից մեկում մի ուրիշ գրողի: Կաթ է խմում, վասնզի հիվանդ է: Մարդը 40 տարեկան չկա, բայց արդեն հոգեպես

հոգնել և հիասթափվել է կյանքից ու ծերացել:

— Գնում եմ, — ասում է նա:

— Ո՞ր:

— Ամառանոց, — պատասխանում է նա և ծիծաղում:

Ես ուրախություն եմ հայտնում, որ հայ բանաստեղծի քայքայված կուրծքը և մերկացած ներվերը գեթ մի փոքր կհանգստանան ազատ բնության մեջ: Բայց նա ինձ հիասթափեցնում է:

— Ես ինձ համար չեմ գնում: Տանում եմ հիվանդ ամուսնուս ու հիվանդ զավակիս, որ փրկեմ նրանց մահից:

Բայց ո՞ր է տանում. թիֆլիսի շրջակա մի կիսաամայի վայր... Նույն-պես ոտքով...

Գնա, հայ բանաստեղծ, դու էլ կմեռնես ու քեզ էլ կթաղեն շուքով ու դամբանականներով:

Դուք ինձ կհարցնեք, թե արդյոք ի՞նչ եմ անում համանման հանգամանքներում ուրիշ ազգերը իրանց մտավոր մշակների, իրանց ազգային պարծանքի համար:

Այս անգամ ես ձեզ Եվրոպա չեմ տանի և օրինակներ ցույց չեմ տա ֆրանսիացիների, անգլիացիների կամ գերմանացիների կյանքից: Կարիք չկա այդքան հեռու գնալ: Ես ձեզ կհրավիրեմ մեր աստիճանի քաղաքակրթություն ունեցող և մեզ հավասար մի փոքրիկ ազգի մոտ:

Խոսքս վրացիների մասին է: Չե՞ք կարդացել կամ լսել: Ասեմ ձեզ. կազմվել է վրաց ազգային խորհրդի և կառավարության զորեղ աջակցությամբ մի հրատարակչական ընկերություն՝ հինգ միլիոն ռուբլի կապիտալով: Ընկերության նպատակն է ապահովել վրացի գրողների, բանաստեղծների ու գիտնականների նյութականը, հրատարակելով նրանց երկերը, հարկավ, առատ վարձատրությամբ:

Այսպես եմ անում այն ազգերը, որ գիտեն հարգելի դարձնել իրանց բարոյական վարկը քաղաքակիրթ մարդկության աչքում: Եվ մի՞թե մենք չենք կարող նույնն անել: Կարող ենք և ավելի դյուրությամբ, քան վրացիները:

Դուք կարող եք ասել, թե ժամանակն անհարմար է, կյանքի ապահովություն չկա, գաղթականական կարիքներ և այլն: Միանգամայն համաձայն եմ: Քանի որ չկա կյանքի ապահովություն, չի էլ կարող լինել որևէ խոշոր ձեռնարկություն մտքի ապահովության համար: Բայց իմ խոսքն էլ հենց մարդկային կյանքի ապահովության մասին է: Գրողների կյանքի:

Խոշոր ձեռնարկությունների կարիք առայժմ չկա գրականության

համար: Չկա նաև որևէ պահանջ հայ հասարակությունից: Ազգային գործերի վերաբերմամբ հայն այնքան էլ ժլատ չէ, որքան կարծում են ոմանք: Նա միշտ զոհել է, զոհում է մանավանդ այժմ:

Հերթը պատկանում է Ազգային խորհրդին: Նա է, որ պարտավոր է տագնապալի վիճակից ազատել գրականության մշակներին: Միլիոններ հարկավոր չեն դրա համար: Հայ գրողների թիվը երեք տասնյակի էլ չի հասնում: Եվ եթե լավ խախալենք, կեսն էլ չի մնա: Վերջապես, պահանջը ժամանակավոր է և միանվագ:

Ազգային խորհուրդը պարտավոր է տալ այդ միանվագ նպաստը Հայ գրողների ընկերությանը, և ընկերությունը պարտավոր է առանց հետաձգելու դիմել նրան:

«Մշակ», 6. VIII. 1918:

ՄԵՐ ՎԱՄՊԻՐՆԵՐԸ

Դուք մեղադրում եք հասարակ խանութպանին, որ օր օրի վրա ավելի ու ավելի անգթությամբ է քերթում ձեր կաշին:

Տվեք իրավունք: Համաձայն եմ, որ դա մի զագրելի անասուն է, ազահ, անհոգի, անաստված: Ես ևս ձեր չափ նողկանք եմ զգում ամեն անգամ, երբ հարկադրված եմ նրա լկտիացած կերպարանքը տեսնել և նրա հանդուգն պատասխանները լսել:

Բայց կան ավելի գարշելի, ավելի նողկալի արարածներ, քան մի նպարավաճառ, մրգավաճառ կամ մսավաճառ: Նայեցեք ձեր շուրջը մի փոքր ուշադիր, և դուք նրանց կտեսնեք ամենուրեք կաֆեներում, կլուբներում, կինեմոներում, նույնիսկ թատրոններում: Սպեկուլյանտ է նրանց հավաքական անունը:

Գիտե՞ք ինչ ասել է սպեկուլյանտ: Մարդկային թուլությունները, հիմարությունը, ապիկարությունը, նաև անել վիճակը շահագործող մի մարդ անասուն: Մի էակ, որի միակ աստվածն իր գրպանն է, միակ հավատամքը՝ ոսկին: Նա գնում է էժան, վաճառում է թանկ, ուրիշ ոչինչ: Սովորական մի արհեստ, եթե կամենաք աննշող մի վաճառականություն: Բայց այնտեղ է ձեր քունը, հանգստությունը, ձեր զավակների օրվա պարենը: Այնտեղ է չունևորների արցունքը, ունևորների հայիոյանքը: Այնտեղ է նաև պատերազմի դաշտում ընկած զինվորների արյունը:

Սպեկուլյացիան կանոնավոր վաճառականություն չէ, այլ վաճառականության փտած մարմնից ծնված մի տգրուկ, որ ծծում է հասարակության արյունը:

Մարդկային կյանքի կանոնավոր ընթացքը խանգարվելիս, սպեկուլյացիան է, որ ամենից առաջ ցույց է տալիս իր ակռաները: Լինում են ժամանակներ, երբ նա դառնում է մի տեսակ համատարած ախտ և սկսում է վարակել հասարակության բոլոր դասակարգերը:

Ճիշտ այդ ժամանակներից մեկն ենք ապրում մենք այսօր: Չկա այժմ մի դասակարգ, գոնե հայերիս մեջ, որ կարողանա ասել, թե այս կամ այն չափով վարակված չէ այդ զագրելի ախտով: Ինժեներ, բժիշկ, իրավաբան, թերուս, համալսարանական, երաժիշտ, դերասան, գինվորական, կամավոր, հոգևորական, բոլորը, բոլորն ունեն իրանց ներկայացուցիչները սպեկուլյացիայի աշխարհում: Այնտեղ դուք կարող եք տեսնել անգամ պատանի գիմնազիստներ, սեմինարիստներ, երիտասարդ կանայք և օրիորդներ:

— Վաճառեցի՞ր:

— Իհարկե:

— Որքա՞ն վաստակեցիր:

— Դատարկ բան:

— Գնեցի՞ր:

— Վերջապես:

— Էժա՞ն:

— Բավականին:

— Վաճառիր ինձ, քսան հազար կավելացնեմ:

— Յիմա՞ր եմ ինչ է: Մի ամիս կպահեմ, կրկնակի շահով կվաճառեմ:

Ահա մեկ օրվա խոսակցության նյութերից: Եվ ամենազխալորը, ամենահուզիչը, վասնզի պետք է դիտել, թե ազահության ինչ անասելի հուր է վառվում խոսողների աչքերի մեջ, երբ նրանք իրանց օրվա շահն են ճաշակում:

Եվ որքան փոքր են վամպիրները, այնքան ավելի զագրելի են:

Դեռ երեկ ես վկա եղա՝ հետևյալ տեսարանին:

Նստած էի Չայկական կոչված Ակումբի այգում մենակ: Չարևան նստարանի վրա նստած են մի տիկին և երեք օրիորդներ ծերմակ զգեստներով: Մոտենում է նրանց հազիվ քսան տարեկան մի պատանի՝ գինվորականի կարմիր գլխարկը կոնատակին: Չամբուրում է տիկնոջ ձեռքը, ոտը ոտին զարկելով, և բարևում է օրիորդներին: Ըստ երևույթին նախկին գիմնազիստ է կամ գուցե ուսանող:

— Ո՞րտեղ եք, չեք երևում, — հարցնում է մեկը օրիորդներից, հարկավ ռուսերեն, քանի որ Ակունքը «հայկական» է:

— Ձբաղված եմ:

— Ինչո՞վ:

— Առևտրով: Ահա:

Եվ գրպանից դուրս բերելով մի թղթի կապոց, ցույց է տալիս օրիորդներին:

— Այլո՞ւր:

— Այո: Շաքար էլ ունեմ, յուղ էլ, եթե կամենաք:

— Ի՞նչն է ձեզ ստիպում դրանցով զբաղվել:

— Ուզում եմ հարստանալ, — պատասխանում է պատանին առանց տատանվելու:

Ես գովում եմ նրա անկեղծությունը: Բայց, ավաղ, շուտով ոսկու սերը նրա մեջ կսպանե և՛ այդ պատանեկական անկեղծությունը: Եվ փոքրիկ վանպիրը հասակն առնելով՝ կասե.

— Ես ուզում եմ հարստանալ ազգիս օգնելու համար:

Այս խոսքերով եմ արդարացնում չափահաս և ինտելիգենտ սպեկուլյանտները իրանց գարշելի զբաղմունքն, երբ նեղն ես գգում նրանց: Բայց իրանց մասին մի ուրիշ անգամ:

«Մշակ», 14. VIII. 1918:

ՊԵՏՔ Ե ԶԵՉՈՔԱՑՆԵԼ

Վատ է այն գորավարը, որ պատերազմը չսկսված հուսահատվում է և հուսահատեցնում իր զորքերին: Այդպիսի հրամանատարի տրամադրությունը հավասար է դավաճանության:

Տխմար է այն նեգոցիանտը, որ մի գործ սկսելով, չի հավատում իր ձեռնարկության աջողությանը: Այդպիսին ինքն իրան օր առաջ սնանկ է հայտարարում:

Լողորդը, որ ջուրը մտնելիս համոզված չէ, թե կարող է լողալ մինչև մյուս ափը գետի, արդեն կործանված է:

Հուսահատությունը մի թույն է, որ կենսունակության արմատն է սղոցում:

Հավատն է, որ փրկում է մարդկանց:

Չավատն է, որ պահպանում է ազգերին: Եթե ֆրանսիական զորքերը չհավատային ժաննա դ'Արկի աստվածային կոչմանը, նրանց հայրենիքը կորած էր: Եթե նույն ֆրանսիացիները 1914 թ. կորցնեին իրանց հավատը դեպի իրանց ուժերը, ոչ մի զորք, ոչ մի Բելգիա, ոչ մի Ռուսաստան չէր կարող Փարիզն ազատել գերմանացիների գրավումից:

Վիրավորը, որ սարսափում է իր արյունից, աղերսալի հայացքը բևեռելով վիրաբույժի երեսին, մի վերք ևս ինքն է ավելացնում իր վերքերին: Եվ ամենավտանգավոր վերքը: Դո՛ղում է ձեռքը և սպանում վիրավորին այն վիրաբույժը, որ հույս չունի իր դանակի զորության վրա:

Մեր ազգն այսօր բազմաթիվ վերքերով ծածկված մի մարմին է, արյունաքամ, ուժասպառ: Եթե հույս ունի բժշկվելու ու կազդուրվելու՝ փրկվելու է, իսկ եթե չունի՝ կորած է:

Ես խորապես համոզված եմ, — և դրա համար ունեմ զորավոր փաստեր, — որ կա այդ հույսը հայ ազգի մեջ: Մի ժողովուրդ, որ տեսել է Չինգիզ խանի, Լենկ-Թեմուրի և Շահ Աբբասի օրերը, չի կարող վերջապես լքվել այժմյան թեկուզ անծայր հալածանքներից:

Բայց կան տարրեր, որ անգիտակցաբար աշխատում են սպանել հայ ազգի մեջ այդ հույսը: Ասում եմ՝ անգիտակցաբար, որովհետև եթե այդ տարրերն զգային իրանց հուսահատության չար հետևանքները, կդադարեին լալ և կուրծք ծեծել: Դրանք այն մարդիկն են, որոնց առողջ բանականությունն առժամանակ մթագնել է ժամանակի անցողիկ թշվառություններից:

Ես չգիտեմ ինչ տրամադրություն է տիրում Երևանում մեր Ազգային խորհրդարանը բացվելիս և ինչ զգացումներով է սկսել իր գործունեությունը մեր նորածին կառավարությունը. ինձ հասած հատուկտոր տեղեկություններից երևում է միայն, որ թե խորհրդարանի և թե կառավարության մեջ կա երկու հոգեբանություն — մեկը զվարթ և հուսավառ, մյուսը մռայլ և հուսամեռ: Իսկ ծայրահեղ դոքսիշտությունը չքացել է: Եթե այդ ճիշտ է, ապա դրվատելի են նրանք, որ հույս ունեն, և պարսավելի նրանք, որ հույս չունեն:

Այն մարդիկ, որ չեն հավատում գործին և իրանց գործունեությանը, այժմ իսկ պետք է հրաժարվեն գործելուց: Այսպես է պահանջում անկեղծ սերը դեպի ազգը: Այսպես է պահանջում ազնվությունը: Իսկ եթե չեն կամենա հեռանալ, նրանց հուսահատությունն ու հոռետեսությունը պետք է չեզոքացնել:

ՕՐԿԱ ՀԵՐՈՍԸ

Պատերազմից առաջ նա փաստաբան էր: Իհարկե, կարող էր լինել և՛ ինժեներ, և՛ բժիշկ, և՛ ճարտարապետ, միևնույնն է: Բայց թող այս անգամ լինի իրավաբան: Դա իմ գրչի կապրիզն է:

Երիտասարդ էր, սիրում էր շքեղ ապրել և կանանց հրապուրել, բայց միջոցները թույլ չէին տալիս, ուստի հարուստներին հայիոյում էր: Իբրև փաստաբան անտաղանդ էր, սովորական միջակություն: Մերթ ընդ մերթ ազգականների ու բարեկամների միջոցով գտնում էր փոքրիկ գործեր և պաշտպանում էր երբեմն աջող:

Ձեռքը դրամ ընկնելիս երեկոները վազում էր կլուբ թուղթ խաղալու և ընթերլու: Դեռ գիմնազիստ հասակից թղթախաղի սիրահար էր: Երազում էր խոշոր խաղեր, բակարա, մակառ, բայց որովհետև միջոց չունեիր, բավականանում էր ուրիշների ազարտը դիտելով:

Արտաքինը վատ չէր, հագուստը նույնպես, միայն ծայրն անդուրեկան էր: Ուներ երկու տեսակի ժպիտ. մեկը սիրալիր ու փափուկ՝ զորավորների համար, մյուսը կնճռոտ ու արհամարհական՝ նրանց համար, որոնցից ոչինչ չէր ակնկալում:

Հայիոյելով հարուստներին, նա ասում էր.

— Աստված գիտե, թե այդ մարդիկ ինչ միջոցներով են ձեռք բերել իրանց միլիոնները:

Եվ իր արհամարհանքը շեշտելու համար, ավելացնում էր.

— Ե՛ղկ:

Սակայն երբ որևէ մեկը նրա առջև գրպանից դուրս էր բերում խոշոր թղթադրամներով լի փողաման, նրա դեմքը մռայլվում էր և ճակատը հոնքերի միջև կնճռվում: Կրծող նախանձն էր, որ այդ պահին փոթորկում էր նրա ուղեղը:

Երբ պատերազմ հայտարարվեց, և նա ենթարկվեց զորակոչի, սարսափեց: Ի՞նչ, ուրեմն նա պիտի գնա կռվի դաշտը նահատակվելու: Ինչո՞ւ, ո՞ւմ համար: Նա իր համոզմունքներով, իր գաղափարներով, իր ամբողջ էությանը անտիմիլիտարիստ է: Բայց ոչինչ, կռվել կարող են գյուղացիներն ու բանվորները, իսկ նա ուսում ունի: Մի համալսարանական բյուր անգամ ավելի օգտակար կարող է լինել թիկունքում, քան կռվի դաշտում:

— Այնպես չէ՞, — հարցնում էր նա իր ընկերներին:

Որովհետև ընկերներից յուրաքանչյուրն աշխատում էր խույս տալ գորակոչից, ուստի ամենքը պատասխանում էին.

— Իհարկե:

Եվ դարձյալ ազգականների ու բարեկամների միջոցով գտավ պաշտոն «Կարմիր Խաչի» ընկերության մեջ ու մնաց քաղաքում: Նրան տվեցին մի կլորիկ գումար զգեստը փոխելու համար և նշանակեցին իր համար զգալի մի ամսական: Այդ օրից նա պատերազմը սիրեց և ցանկացավ, որ նա երկար տևե, որովհետև այժմ նա միջոց ուներ ավելի հաճախ մոտենալու թղթախաղի սեղանին:

Եկավ հեղափոխությունը և մեր հերոսի կյանքը տակն ու վրա արավ: Հանկարծ նա մտաբերեց, որ ինքն էլ հեղափոխական է եղել, այսինքն սոցիալ-դեմոկրատ, և կարդացել է Կառուցկիի բրոշյուրները: Կուսակցությունը փաստեր չպահանջեց. ո՞վ ուներ ախորժակ նրա անցյալը քրքրելու:

— Գործ տվեք ինձ, գործ, — գոռում էր նա, — ես այրվում եմ գործելու փափագից:

Նրան առաջարկեցին գնալ ինչ-որ գյուղաքաղաք կոմիսարի պաշտոնով: Նա վիրավորվեց ու հրաժարվեց: Մարդը հույս ուներ առնվազն մինիստրի օգնականի պաշտոն ստանալու: Բայց այդ տեսակ պաշտոններ տեղական պարագլուխներն արդեն բաժանել էին իրանց մեջ:

Ձորքերը թողեցին պատերազմի դաշտը թշնամու հաճույքին ու հեռացան, որովհետև ազատություն էր: Պատերազմն ինքնըստինքյան դադարեց, և թշնամին եկավ երկիրը տիրեց, որովհետև ազատություն էր: Թիկունքը նույնպես դադարեց գործել և «Կարմիր Խաչի» պաշտոնյաները սկսեցին ազատորեն վաճառել իրանց գրպանի օգտին վիրավորյալների դեղկապներն ու ճերմակեղենը, որովհետև ազատություն էր:

Մեր հերոսը նույնպես կամեցավ ազատությունից օգտվել, բայց, ավաղ, նրա իշխանության տակ բան չկար, որ վաճառեր, ուստի սկսեց ամեն տեղ հայիոյել գող պաշտոնյաներին: Եվ այս պատճառով նրան ժամանակից մի քանի ամիս առաջ արձակեցին պաշտոնից, տալով նրան մի աննշան գումար:

Ի՞նչ էր մնում անել: Վերադառնալ փաստաբանական արհեստին: Դյուրին էր ասել: Ազատությունը դատարանական գործերի թիվը պակսեցրել էր մինչև մինիմում, որովհետև գողերն ու մարդասպաններն ազատություն էին ստացել իրանց արհեստն այսուհետև աներկյուղ և անպատիժ շարունակելու:

Ահա այդ պահին էր, որ երկինքը լուսավորեց մեր հերոսի ուղեղը, և

նա գտավ կյանքի իսկական ուղին: Նա գուշակեց, որ կենսական մթերքների ու պարենի թանկությունը քանի գնա, այնքան բարձրանալու է, ուստի վճռեց պարապել սպեկուլյացիայով: Նա ուներ մի քանի հեռավոր ծանոթներ, որ վաղուց պարապում էին այդ շահավետ գործով և արդեն դեսուդեն էին վազում օթոմոբիլներով: Շոյեց նրանց, քծնեց ու բարեկամացավ: Նրան համծնեցին միջնորդի պաշտոն իրանց ու «Կարմիր հաչի», «Քաղաքների Միության», «Երկրային Միության» պաշտոնյաների միջև: Եվ նա կարողացավ մի քանի անգամ իր վրա դրված հույսերն արդարացնել, ու վաստակեց մի շոշափելի գումար: Մարդու աչքերը բացվեցին և նա տեսավ, որ շատ հիմար է եղել, որ փաստաբանի ողորմելի արհեստն է ընտրել:

Այժմ նա պարապում է ծխախոտի սպեկուլյացիայով: Նրա նախկին բարակ վիզն արդեն բավական հաստացել է, գունատ դեմքը գիրացել ու կարմրել: Այլևս չի հայիոյում վաճառականներին ու միլիոնատերերին և խաղում է բակարա ու մակաո:

Բայց և այնպես խանութպաններին չի սիրում և ասում է.

— Խիղճ չունեն:

«Մշակ», 17. VIII. 1918:

ԱՅՍ Է ՑԱՎԱԼԻՆ

Ինձ հաղորդեցին մի լուր, որին դժվարանում եմ հավատալ. այնքան նա զայրացուցիչ է և այնքան արատավոր մի ամբողջ դասակարգի համար:

Իբր թե մի երիտասարդ համալսարանական, որ ազգային ու հասարակական գործերով դեսուդեն է վազում, չգիտեմ ինչպես, ամերիկացիներից ստացել է մի խոշոր գումար գաղթականների անունով ու անհայտացել:

Անկեղծ կցանկանայի, որ այդ լուրը լիներ չար լեզուների հերյուրանք, և երիտասարդ համալսարանականը, որի անունն այժմ բերանե բերան ծաղրվում է, ասպարեզ գար ու իրան արդարացներ: Ամենից առաջ ես կխնդրեի նրանից ներողություն:

Ինձ հաղորդեցին մի ուրիշ ոչ պակաս տխուր և ոչ պակաս արատավորիչ լուր:

Իբր թե դարձյալ բարձրագույն ուսում ստացած մի երիտասարդ հայ, աշխատելով մի հասարակական բնույթ ունեցող հաստատության համար, շահագործել է այդ հաստատության անունը իր գրպանի օգտին: Այլ խոսքով ասած, պարապել է սպեկուլյացիայով, օգտվելով իր պաշտոնից: Եվ այս պատճառով մի տաքարյուն երիտասարդից նա ստացել է հրապարակային վիրավորանք:

Անկեղծ կցանկանալի, որ այդ լուրն էլ սուտ լիներ և բարձրագույն դպրոցի նշանը կրծքի վրա կրող երիտասարդը նույնպես ասպարեզ զար և իր բարի անունը մաքրեր: Ես առաջինը կսեղմեի նրա ձեռքը:

Ինձ հաղորդեցին դարձյալ մի շարք համանման լուրեր: Բայց ես նրանցով չեմ զբաղեցնի իմ ընթերցողներին: Կասեմ միայն, որ այդ լուրերն էլ վերաբերվում են այսպես կոչված բարձրագույն ուսում ստացած հայ երիտասարդների:

Ի՞նչ եք կարծում, ի՞նչ եզրակացություն կարելի է դուրս բերել այդ բոլորից, եթե լուրերից գեթ մեկն անգամ ճիշտ լինի: Ինձ վրա նրանք ճնշող տպավորություն են գործում մի տեսակետից: Գործողությունը չէ ցավալին, այլ գործող անձինք:

Պատերազմը ծնեց թանկություն: Թանկության ապօրինի զավակն եղավ մարդկային ախորժակի ծայր աստիճան գրգռումը՝ այնպես, ինչպես չքավորության ապօրինի զավակն է ազահությունը: Մեկը մյուսին հետևելով, ապականեց միջավայրը, թունավորեց մթնոլորտը, տակն ու վրա արավ լավագույն ավանդությունները: Եվ այժմ մեր վարք ու բարքերի գերագույն իշխանն է ազահությունը: Թող նա թագավորե գռեհիկ շրջաններում. դա այնքան էլ զազրելի չէ: Գողությունը, որ ազահության հավատարիմ ուղեկիցն է, այսօր անցել է մեր կյանքի նորմալ պայմանների շարքը: Մեր ներվերն արդեն այնքան են բթացել, որ այլևս չեն զգում նրա սուր խայթոցը մեր բարոյականությանը:

Սակայն կա մի սրբություն, որ չափտի վարակվեր ժամանակի ախտով: Նա ափտի զրահի հագներ պաշտպանելու համար իր հոգու մաքրությունը և ուղեղի առողջությունը:

Դա այն փոքրիկ քաղաքակրթությունն է, որ ձեռք ենք բերել վերջին հարյուր տարվա ընթացքում սիզիֆյան աշխատանքով:

Խոսքս հայ ինտելիգենցիայի մասին է:

Մի՞թե հայ ծնողները նրա համար են գրավ դնում իրանց հոգին և ուսում տալիս զավակներին, որ վերադառնալով հայրենիք աշակերտեն ու հետևեն չարչիներին, վաշխառուներին ու գողերին: Այլևս ո՞ւր է տարբերությունը քաղաքակրթության ու գռեհկության, գիտակցության

ու անգիտակցության միջև: Մի՞թե հագուստի և միմիայն հագուստի մեջ:

Երբ փափախն ու տրեխներն են զրկում, գողանում, կողոպտում, ասում ենք՝ դա տգիտությունն է: Բայց ի՞նչ անուն տանք այն համալսարանականին, որ խղճի ամենայն հանգստությամբ, իր դիպլոմն է չպրտում աղբակույտի մեջ: Ի՞նչ անուն տանք նրան, երբ մանավանդ իր ծեռներով կորզում է որբերից նրանց մի կտոր հացը:

Դուք կարող եք ասել. բացառությունները օրենք չեն, ախտավոր կրթվածներ կան և մեզնից շատ ու շատ բարձր քաղաքակրթություն ունեցող ազգերի մեջ, հետևաբար չպիտի առանձին նշանակություն տալ նրանց:

Համաձայն եմ: Սակայն բարի եղեք ինձ ցույց տալու այն սահմանը, որից դեռ բացառությունները օրենք չեն: Հայ կյանքում դուք չեք կարող դնել այդ սահմանը: Ընդհակառակը, օտար հասարակությունների բացառություններն են, որ այսօր դարձել են մեր կյանքի օրենքը:

Այս է ցավալին ու ամոթալին:

«Մշակ», 21. VIII. 1918:

ԱՅՍ Է ՊԱՏՃԱՈՐ

Այն օրից, երբ հեղափոխությունը տապալեց միապետական բռնակալությունը և խորտակեց Ռուսաստանի դարավոր շղթաները, այն օրից, երբ հայտարարվեց դեմոկրատիայի գերիշխանությունը, դեմոկրատիզմը դարձավ մի տեսակ մոդայիկ զգեստ: Չմնաց ոչ մի ազգ ու ազգություն, հասարակության ոչ մի խավ ու ոչ մի դասակարգ, որ չշտապեր հագնել այդ զգեստը: Մարդիկ, իրարու հրելով ու բռնելով և իրարու առաջելով վազեցին Դեմոնի տաճարը երկրպագություն մատուցանելու նրան, որ դեռ մի օր առաջ այնքան հալածված ու արհամարհված էր:

Հիշում եմ այն օրերը, երբ կարմիր ժապավենը զարդարում էր նույնիսկ երեկվա ոստիկանի միապետական մունդիրի ժանգոտ կոճակը, և երբ երեկվա ժանդարմը, պրովակատորն ու լրտեսը կոկորդ պատռելով գոռում էին.

– Կեցցե՜ ազատությունը, կեցցե՜ ռանկավարական հանրապետությունը:

Հիշում եմ այն անթիվ բուերին ու ագռավներին, որոնք արծիվների երզն էին յուրացրել.

– Պետք է ազատությունը պաշտպանել մինչև արյան վերջին կաթիլը, պետք է հեղափոխությունը խորացնել և այլն, և այլն...

Հիշում եմ երեկվա «դեմաշիկների» առջև իրանց ակեզարդ գլուխները խոնարհեցնող ժեներալներին և իրանց դռնապաններին ու խոհարարներին «ընկերական» ժպիտներ շնորհող բուրժուաներին: Ինչպե՞ս մոռանալ այն ազնվականներին ու կալվածատերերին, որոնք բաժակ բաժակի էին զարկում իրանց երեկվա ճորտերի հետ հանուն «ազատության» և գեղեցիկ ժեստերով ճգնում էին գրավել նրանց սերը:

Դա մի չտեսնված ու չսկսված խրախճանք էր: Մարդ չգիտեր՝ որտեղ է սկսվում բարեկամությունը և որտեղ է վերջանում ամիկօշոնությունը: Զգիտեր նաև որտեղ է վերջանում կոմեդիան և որտեղ է սկսվում տրագեդիան:

Սի բան պարզ էր: Այն, որ կյանքի ու գույքի ապահովության անիծյալ խնդիրն այնքան էր արբեցրել մարդկանց, որ նրանք իսպառ մոռացել էին դասակարգային արժանապատվությունը և իսպառ մեռցրել իրանց մեջ անձնասիրության զգացումը: Վեհ տեսարանը, որ միայն մի վայրկյան մնաց վեհ, դարձել էր մի այնպիսի այլանդակ պատկեր, որ կողմնակի դիտողին նողկանք էր ներշնչում:

Եվ Դեմոսը, տեսնելով այդ բոլորը, գինովցավ, կորցրեց իր անտաշ մտքի հավասարակշռությունը: Նրա կոպիտ սիրտը սկսեց ուժգին բաբախել երջանկությունից և նա իրան երևակայեց ոչ միայն երկրի, այլև տիեզերքի տեր ու իշխան: Նա մոռացավ բոլոր մարդկային ու աստվածային օրենքները, բոլոր ավանդությունները, բոլոր սրբությունները: Եվ սկսեց կործանել տաճարները, պղծել աղոթարանները, խորտակել թանգարանները, ապականել մօնիւմանները: Նա իր կոպիտ կրունկներով ոտնատակ արավ գիտությունները, արվեստները, գրականություն, դպրոց, թատրոն: Ամեն ինչ, որով միայն կարող է պարծենալ մարդկությունը: Գողություն, կողոպուտ, մարդասպանություն, մատնություն, դավաճանություն, բռնաբարություն և այն բոլորը, ինչ որ անիծված է աստվածային ու մարդկային օրենքներից, դարձավ նրա կուռքը: Դարերով կառուցվածն ու դարերով սրբագործվածը նա կործանեց ու սրբապղծեց մի քանի ամիսներում:

Ահա այդ ժամանակ էր, որ պիտի ասպարեզ ելներ և համարձակ, աներկյուղ, իր կյանքի ապահովության իսկ գնով արտասաներ իր խոսքը.

— Կանգ առ, թշվառ, այդ չէ ազատության ճամփան:

Բոլոր ազգերի ու ազգությունների մտավոր ուժը: Բայց ռուս ինտելիգենցիան ու նրա հետ միասին բոլոր ինտելիգենցիաները այդ հուժկու

խոսքն ասելու ու պաշտպանելու չափ բարոյական ուժ չունեցան: Ահն ու սարսափը կաշկանդել էին նրանց հոգին: Նրանց լավագույն մասը հեռացել էր ասպարեզից, անհայտացել: Կարծես, երբեք նա գոյություն չէր ունեցել: Այդ հեղինակավոր պրոֆեսորները, անվանի գիտնականները, գրողները, բանաստեղծները, երաժիշտները, նկարիչները: Մյուս մասը խոսում էր կիսածայն, դողդողալով: Նա սարսափում էր այն մտքից, որ ինքը կարող է հռչակվել «հակահեղափոխական» և ենթարկվել հեղափոխությունն ապականող գոեհկության արյունոտ հալածանքներին:

Մնացել էր ասպարեզի վրա այն տարրը, որի համար Դեմոսն եղել է սրբությունների սրբություն: Ի՞նչ կարող էր անել այդ մասը, եթե ոչ շարունակել իր վաղուց բռնած ընթացքը. վազել ու շարունակել վազել իր կուռքի ետևից, շոյել նրան, շողոքորթել, լռորեն կամ ոչ լռորեն հավանություն տալով նրա ավերումներին ու նրա գազանային բնազդներին:

Նա պետք է այդպես աներ, ստիպված էր, որովհետև բարոյապես ապիկար էր, որովհետև զգում էր, որ եթե չանե, գոեհկությունը կվանե նրան ասպարեզից: Նրա համար չկար ավելի սոսկալի բան, քան զրկվել Դեմոսի համակրանքից, և ավելի ամոթալի բան, քան կույր ամբոխի աչքում վայելել «հակահեղափոխական» անունը: Բացի այդ, չէ՞ որ նա հազիվ հազ ձեռք էր բերել իշխանություն: Չէ՞ որ նա, որ իր կյանքում մի հավաքուն չէր կառավարել այժմ տեր ու կառավարիչ էր մի վիթխարի պետության: Ինչպե՞ս կամավոր հրաժարվել մի այդպիսի չերազված երջանկությունից: Ինչպե՞ս իջնել կայսերական ավտոմոբիլից և նորեն քայլել հետիոտն ու այդքան տառապանքներից հետո նորեն հազնել ցնցոտիներ:

Սակայն, մոռանալով իր այնքան հերոսական անցյալը, նա մոռացավ և այն, որ իսկական գաղափարականը հենց ցնցոտիների մեջ է մաքուր, որ Հիսուսը Քրիստոս չէր լինի, եթե մեռներ Պիղատոսի պալատում: Մոռացավ նաև, որ այն չէ ճշմարիտ դեմոկրատիզմը, որ համբուրում է գոեհկության փեշերը, այլ այն, որ մաքուր ձեռներով այդ փեշերը բռնած գաղափարի հաղթական ուժով քաշում-տանում է մոլորված Դեմոսին դեպի ուղիղ ճանապարհ:

Ռուս ինտելիգենցիան ղեկավարելու փոխարեն ղեկավարվեց գոեհկության բնազդներից:

Այս է, եթե կամենաք, իսկական պատճառը, որ այսօր նա վայելում է եվրոպական ինտելիգենցիայի և ճշմարիտ դեմոկրատիզմի հեզմական ժպիտը...

ԱՌԱՅԺՄ ԼՈՌԻՄ ԵՍ

Ես հրապարակախոս չեմ և երբեք էլ հավակնություն չեմ ունեցել հրապարակախոս դառնալու: Ես գրում եմ իմ անցողիկ տպավորություններն ընթացիկ կյանքից, այն, ինչ որ ունի առօրյա արժեք: Դա մի տեսակ ժամանց է գրողի համար, այսպես ասած, գրչի հանգստություն նրա ծանր աշխատություններից հետո:

Բայց այն օրից, երբ սկսել եմ իմ լրագրական հոդվածների շարքը, ակամա ճաշակում եմ հրապարակախոսի դրությունը: Չի կարելի ասել, որ այդ դրությունը նախանձեղիներից է: Ժամանակ ու մեծ համբերություն է հարկավոր հրապարակախոսին կամ լրագրողին լսելու այն անթիվ դիմումները, որոնցով ռմբակոծում են նրան ամեն կողմից: Այնինչ՝ հասարակ քաղաքավարությունը պահանջում է լսել:

Ուրախալի է, իհարկե, որ մամուլի ձայնը ճանաչվում է ու հարգվում: Ուրախալի է, որ հասարակությունը դիմում է նրա բարոյական աջակցությանը: Սակայն կա մի հանգամանք, որ պետք է չմոռանան դիմողները, այն է, որ ամեն մի մասնավոր երևույթ չէ կարող դառնալ մամուլի համար զբաղմունքի առարկա, նաև այն, որ հրապարակախոսը չունի բարոյական իրավունք ուրիշների անհատական վեճերի մեջ միջնորդի կամ դատավորի դեր կատարելու: Մամուլը պարտավոր է քննել, քննադատել միայն այն, ինչ որ ունի այս կամ այն աստիճանի հասարակական նշանակություն:

Առանձնապես ինձ համար ծանծրալի է ու անախորժ այն անհատների դիմումը, որոնք խնդրում են կոչ անել հասարակությանն իրանց նյութապես օգնելու: Այսինչ ընտանիքը կարիքի մեջ է, այդինչ երիտասարդը փափագում է գնալ Մոսկվա դրամատիկական կուրսերը մտնելու, միջոց չունի, այնինչ պատանին ուսումնավարձ չունի և այլն, և այլն: Այս բոլորը, հարկավ, ցավալի է, բայց մամուլի պարտականություններից դուրս է:

Այլ խնդիր է, երբ մամուլի օգնությանն են դիմում այս կամ այն հասարակական վատ երևույթը լուսաբանելու և խարազանելու: Այսպիսի դեպքերում հրապարակախոսը չունի իրավունք մերժելու իր ձայնը: Եվ ահավասիկ ես պարտավոր եմ, լսելով շատ շատերի գանգատը, հասարակության ուշադրությունը դարձնել մի շատ տխուր երևույթի վրա:

Խոսքս Թիֆլիսում պատսպարված հայ գաղթականների սարսափելի վիճակի մասին է: Ասում եմ սարսափելի, աչքի առջև ունենալով այն

դեպքերը, որոնց մասին ես լսում եմ զանազան աղբյուրներից: Ես չունեմ ժամանակ և միջոց անձամբ վերստուգելու այդ դեպքերը, բայց թվում է ինձ, որ նկարագրության մեջ կարող եմ լինել չափազանցություններ, իսկ եղելություններն ընդհանրապես ճիշտ են հաղորդվում ինձ, քանի որ աղբյուրները տարբեր են, բացի դրանից, հաղորդողներն անձինք են, որ չունեն ոչ անձնական շահ և ոչ չար դիտավորություն ստեղծելու կամ փաստեր աղավաղելու: Հավանական է, որ նրանք հափշտակվում են գաղթականների անասելի կացության հանցանքն ամբողջովին վերագրելով գաղթականական գործերը վարող հաստատություններին ու անձանց: Հավանական է, որ շատ դեպքերում դրանք չեն մեղավոր, այլ արտաքին հանգամանքները, բայց որ այդ հաստատություններն ու այդ անձինք անպարտաճանաչ են մեծ չափով, դա ինձ համար պարզ է:

Առանձնապես մռայլ գույներով են նկարագրում պատմողները որբանոցների վիճակը: Հաղորդում են թշվառ որբերի կացությունից փաստեր, որ ընդունակ են զգայուն մարդու արյունը սառեցնել երակների մեջ, դեպքեր, որ անհավատալի են թվում նույնիսկ մեր այս արկածալի ժամանակներում:

Թույլ տվեք ինձ խնայել ձեր ներվերի համգստությունը և չնկարագրել և ոչ մեկն այդ դեպքերից: Ես չի կամենա, որ դուք ևս զգաք այն սարսափն ու այն նողկանքը, որ ես եմ զգում այժմ, երբ գրում եմ ներկա տողերը: Բավական է ասել, որ ամենագոեհիկ մարդիկ անասուններին անգամ այնպես չեն վերաբերվում, ինչպես վերաբերվում են որբերին Թիֆլիսում:

Թույլ տվեք նաև առժամանակ հրապարակ չնետել անպարտաճանաչ կամ հանցավոր հաստատությունների ու անհատների անունները: Ասում եմ առժամանակ ոչ այն միտումով, որ խնայեմ այդ հաստատությունների ու անձերի վարկը: Ասում եմ, որովհետև համարձակվում եմ հուսալ, որ նրանք, կարդալով ներկա տողերը, կզգան խղճի խայթ, կսթափվեն, կճանաչեն իրանց բարոյական պարտականություններն և կաշխատեն ուղղել իրանց հանցավոր սխալները: Եթե այդ չի լինի, եթե մամուլի նախազգուշացումը կանցնի անուշադիր, այն ժամանակ հանցավորների դատը կհանձնվի հասարակությանը և յուրաքանչյուրի անունը ասպարեզ կգա: Եվ ես վստահ եմ, որ հայ հասարակական կարծիքն այնքան էլ ապիկար չէ, որ չկարողանա դատապարտել դատապարտելին և անիծել անիծելին:

Իսկ առայժմ լռում եմ:

ՄԻ ԱՆԵԿԴՈՏ

Մի երկհարկանի բնակարանում կենում էին երկու երիտասարդ մարդիկ, մեկը վերին հարկի մի սենյակում, մյուսն ուղիղ այդ սենյակի տակ, ներքին հարկում:

Նա, որ կենում էր վերին սենյակում, մի երջանիկ մարդ էր, վերին աստիճանի կենսախինդ, զվարճասեր: Գիշերները տուն էր վերադառնում ուշ, մերթ արթած, մերթ արթուն, բայց միշտ աղմուկով:

Ընդհակառակը, վարի սենյակում կենողը մի հիվանդոտ մարդ էր, ներվային, սիրում էր անդորրություն և յուրաքանչյուր ամենաթեթև աղմուկ կամ ծայն զրկում էր նրան հանգստությունից: Ամեն գիշեր, երբ վերին հարկանը տուն էր վերադառնում աղմուկով, նա անմիջապես զարթնում էր և անհանգստանում, մինչև որ վերևում կդադարեր աղմուկը: Առանձնապես նրան ներվայնացնում էր այն, որ վերի կենողը իր կոշիկները հանելով, ձգում էր նրանց հատակի վրա դղրդոցով:

Վերջապես, մի օր նա այլևս չկարողանալով համբերել և դարձավ բնակարանի տիրոջը.

— Պարոն, մի շատ մեծ խնդիր ունեմ:

— Ասացեք, պատրաստ եմ կատարելու:

— Զի՞ կարելի, արդյոք, որ իմ սենյակի վերևում կենող շառլատանին ասեք, որ գիշերներն իր կոշիկները հանելիս կամացուկ դնե նրանց հատակի վրա: Ես տանջվեցի նրա անիծյալ կոշիկներից: Օգնեցեք ինձ ի սեր Աստուծու:

— Շատ բարի, — համաձայնեց բնակարանի տերը և նույն օրն ևեթ կատարեց հիվանդոտ մարդու խնդիրը:

— Ա՛խ, — ասաց կենսախինդ մարդը, — վարում կենող պարոնն ուզում է, որ ես կոշիկներս կամացուկ դնեմ հատակի վրա: Ուրախությամբ, ասացեք որ այդպես կանեմ ամեն գիշեր:

Եվ, իրավ, այդպես էլ արավ ամբողջ մի շաբաթ: Վարի կենողը հանգստացավ:

Սակայն մի գիշեր վերի կենողը տուն վերադարձավ արթած: Մոռանալով իր խոստումը բնակարանի տիրոջը, հանեց կոշիկը և ուժգին նետեց հատակի վրա: Նույն վայրկյանին նա հանկարծ հիշեց վարի կենողին և իր խոստումը: Նա երկորորդ կոշիկը դրեց հատակի վրա կամացուկ ու պառկեց քնելու:

Առավոտյան լույսը չբացված՝ հանկարծ դղողացին նրա սենյակի դռները: Շենքի վրա երևաց վարի կենողը գիշերային հագուստով, աչքերն արյուն կոխած, մազերը գզգզված, գունատ, դողալով:

— Ի՞նչ եք կամենում, պարոն, — հարցրեց վերի կենողը սարսափած:

— Ես եկել եմ իմանալու, վերջապես, ե՞րբ պետք է դուք համեք ձեր երկրորդ կոշիկը և ձգեք հատակի վրա:

Խեղճ մարդը մինչև լույս չէր քնել, սպասելով երկրորդ կոշիկին:

Կատարյալ նույն վիճակումն ենք մենք հայերս: •

Առակն անխոտելի է, անեկդոտը չի սիրում բացատրություններ:

Թող յուրաքանչյուր ընթերցող բացատրե ինչպես գիտե...

«Մշակ», 30. VIII. 1918:

ԻՄ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ես առիթ ունեցա մի քանի անգամ ներկա լինելու Հայ Ժողովրդական Կուսակցության ներկայացուցչական Ժողովի նիստերին:

Որպես կուսակցություններից հեռու մի մարդ ես հետաքրքրվում էի մի հարցով. ի՞նչ է խոստանում և ի՞նչ կարող է տալ այդ նորակազմ կուսակցությունը: Լրագրական հոդվածներն ու թռուցիկներն անկարող են տալ այն, ինչ որ կենդանի զրույցները:

Հարկավ, մի կուսակցության հոգեկան պատկերն ու կարողությունը ուսումնասիրելու համար բավական չեն մի քանի նիստեր, բայց և այնպես այն, ինչ որ տեսա ու լսեցի, տալիս է ինձ իրավունք մի քանի խոսք ասելու:

Նկատեմ նախ և առաջ, որ կուսակցության հիմնադիրներն ու ղեկավարները թե՛ Թիֆլիսում և թե՛ գավառներում վաղուց հայտնի հասարակական գործիչներ են այս կամ այն չափով, այնպես որ նրանց երևալը հայ քաղաքական կյանքի ասպարեզում մի նորություն չէ: Անուններ են, որոնցից յուրաքանչյուրն ունի տասնյակ տարիների անցյալ, հմտություն ու փորձառություն: Մարդիկ, որոնք, երկար ժամանակ գործելով հասարակական կյանքում, որոշ չափով ուսումնասիրել են ժողովրդին, գիտեն նրա կարիքները, ապրել են նրա ցավերով և ուրախություններով: Հայ ազգը մինչև այսօր հանձնել է նրանց շատ պատասխանատու գործեր, հավատալով նրանց խելքին, տակտին ու քաղաքագիտության: Եթե մինչև այժմ նա չի սխալվել ու հուսախաբվել,

ապա դա ինքնըստինքյան մի գրավական է, որ այսուհետև էլ չի սխալվի, հանձնելով նրանց ավելի պատասխանատու և ավելի բարդ քաղաքական գործեր:

Ես ավելորդ եմ համարում իմ ընթերցողներին բացատրել ժողովրդական Կուսակցության ծրագիրը: Առհասարակ ծրագիրներն ինձ շատ էլ մեծ հավատ չեն ներշնչում: Արժեքավորը թղթի վրա գրածը չէ, այլ նրա գործադրության եղանակը և նրա իրագործումը: Չկա ոչ մի կուսակցական ծրագիր, լինի նա ծայրահեղ աջակողմյան, թե ծայրահեղ ձախակողմյան, որ այս կամ այն կերպ չխոստանա ազգի կամ ժողովրդի բարօրությունը: Տարբերությունը տեսակետների և հայացքների մեջ է և ոչ վերջնական նպատակների մեջ: Տկարամտություն չէ՞, օրինակ, ասել, թե այս կամ այն կուսակցության ծրագիրը կազմված է ժողովուրդը կործանելու նպատակով: Եվ երեխայական կռիվ չէ՞, երբ կուսակցությունները բանակռվելիս ճգնում են իրարու վերջնական նպատակը արատավորել կամ կասկածի ենթարկել իրարու շիտակությունն ու անկեղծությունը: Ազնիվ կամ անազնիվ, կեղծ կամ անկեղծ կարող է լինել կուսակցականը, այլ ոչ կուսակցությունը: Եվ նրանք, որոնք անհատների սխալները կամ արատները վերագրում են իրանց հակառակ կուսակցությանը, բարոյապես դատապարտելի են:

Ես այս ասում եմ առանձնապես հայ կուսակցությունների վերաբերմամբ, որոնք իրարու հետ բանակռվելիս հաճախ դիմում են ծայրահեղությունների:

Համբերողամտությունը քաղաքակրթության բարիքներից մեկն է: Գռեհկությունն է միայն, որ հակառակորդի գոյությունը ջնջում է, բոլոր մարդկային արժանավորությունները և մտավոր ու բարոյական կարողությունները միայն ու միմիայն իրան սեփականացնելով:

Ահա այս տեսակետից՝ Հայ ժողովրդական Կուսակցությունը կարող է դիմանալ քննադատության, դատելով զոհն իմ տեսած ու լսածներից:

Այն բացասական վերաբերմունքը դեպի հայկական տիրող քաղաքականությունը, որ կուսակցության կազմվելու գլխավոր շարժառիթներից մեկն է, ուրիշ ոչինչ է, եթե ոչ տանջված հայրենասիրության և վիրավորված մարդասիրության ծնունդ: Մարդիկ չժխտելով առհասարակ հակառակ կուսակցությունների արժանավորությունները և դրական ծառայությունները ժողովրդին՝ սրտի անհուն դառնությամբ էին շեշտում կատարված գիտակցական և անգիտակցական սխալները:

Առանձին ուշադրության արժանի էին այս կողմից գավառներից եկած փոքրաթիվ ներկայացուցիչների համառոտ և գործնական զեկուցումները:

Փաստերը նկարագրվում էին ամենայն անաչառությամբ և առանց որևէ հավելումների: Մարդիկ չէին հարձակվում, չէին հափշտակվում թշնամական կամ բարեկամական տրամադրությամբ, չէին կատաղում ու թույն ու մաղձ արտադրում, այլ միայն տալիս էին՝ կատարված ու կատարվող իրողությունների լուսանկարը: Այս էր, որ առանձնապես ազդում էր կողմնակի հանդիսականի վրա, և նա կամա-ակամա գոչում էր.

— Մի՞թե այդ բոլորը ճիշտ է:

Թվում էր, որ լուսանկարը ճիշտ է և այդ փաստերը հանդգիչ, որովհետև զեկուցանողները մարդիկ էին, որոնց կարելի է հավատալ և որոնց ոչ հասակը, ոչ հասարակական դիրքը, ոչ կրթությունը և ոչ բարոյական հռչակը թույլ չէին տա ստել կամ կեղծել:

Եվ թե՛ զեկուցանողների ու թե՛ ունկնդիրների տրամադրությունը մի էր — տխուր, մռայլ, տրագիկական:

Սակայն ոչ հուսահատական, ոչ լալկան: Երևում էր, որ այդ մարդկանց մեջ հավատը դեպի հայ ժողովրդի փրկությունը տակավին չի մեռել: Երևում էր, որ ամենքը իրանց հոգու խորքում համոզված են, որ վաղ թե ուշ կատարվելու է այդ ժողովրդի վերածնությունը և հավիտենական ֆենիքսը նորեն վերակենդանանալու է: Բայց այն չէ՝ հայ ազգի վերածնության ուղին, որով մինչև այսօր առաջնորդել են նրան կոչեցյալ և ոչ կոչեցյալ, խելոք և ոչ խելոք քաղաքական ղեկավարները:

Կգտնե՞, արդյոք, ժողովրդական Կուսակցությունը փրկության մոտ ուղիներ, առայժմ, հարկավ, դժվար է ասել: Հայ կյանքի այժմյան մառախուղը չափազանց թանձր է, որպեսզի կարելի լինի նրա մեջ նշմարել ոչ միայն հեռավոր, այլև մերձավոր ապագան: Համենայն դեպս իմ տպավորություններն ինձ ներշնչում են հավատ դեպի նորակազմ կուսակցության բարոյական կարողությունը՝ փնտրելու և գտնելու. և ես բարոյական պարտականություն եմ համարում առայժմ այսքանն ասելու:

Սակայն մի դիտողություն: Ժողովրդական Կուսակցությունը չունի իր մեջ երիտասարդ ուժեր, եթե չհաշվենք երկու - երեք երիտասարդների: Կան պատկառելի հասակավորներ և ծերունիներ, կա նաև պատանի աշակերտների մի խումբ: Այնպես որ՝ կուսակցությունը հիշեցնում է — թող ներվի ինձ այս բանալ համեմատությունն անելու — մի զորաբանակ, բաղկացած սոսկ զորավարներից և ռեկրուտներից, իսկ զորք չկա:

Դա թեև տեխնիկական է, բայց խոշոր թերություն է: Դաշնակցությունը զորեղ է հենց իր երիտասարդ անդամների բազմությամբ:

Պետք է հուսալ, որ հայ երիտասարդությունը կլրացնե Հայ ժողովրդական Կուսակցության այդ խոշոր թերին: Ցանկալի է միայն, որ

գորավարները եռանդով աշխատեն զորք կազմելու:

Այսպես թե այնպես, ընդհանուր առմամբ, իմ տպավորությունը ավելի քան մխիթարական է:

«Աշակ», 31. VIII. 1918:

ԵՍ ՈՂՋՈՒՆՈՒՄ ԵՄ

«Տեսնո՞ւմ ես հորիզոնի վրա ալևոր Մասիսը: Ծագող արեգակն արդեն սփռում է նրա վրա իր առաջին շողերն ու ոսկեզօծում նրա սրբազան գագաթը: Քանի՞ քանի անգամ է ծերունու ճակատը մռայլվել մթին ամպերից, բայց նորեն լուսավորվել է, նորեն պայծառացել և նորեն ալևորը սկսել է ներողամտաբար ժպտալ դաժան աշխարհին, որ միշտ տառապանքներ է նյութել նրա համար: Հեռու՝ հուսահատություն ու լքում, հեռու՝ թերահավատություն ու կասկած: Դեպի գործ, դարձյալ դեպի գործ... Ջարթեցրու ժողովրդին»...

Այս խոսքերն է ասում «Արհավիրքի օրերի» հերոսն իր հուսահատված, ընկճված և ինքնասպանություն խորհող ընկերոջը լուսածագին, երբ հարկավոր է զարթեցնել փախստականների քարավանը և առաջնորդել նրան դեպի անհայտություն:

Ես, կփափագեի, որ այս խոսքերը լինեին Հայ ժողովրդական Կուսակցության նշանաբանը: Կփափագեի, որ նրա գործունեությունը ընթանար լի հույսով և լի հավատով դեպի հայ ժողովրդի ապագան: Եվ ոչ միայն դեպի հեռավոր ապագան, այլև դեպի վերջավոր փրկությունը:

Ազգեր են ծնվել և ազգեր կործանվել, և յուրաքանչյուրը նրանցից ապրել է այն ժամանակ, երբ հավատացել է ինքն յուր ուժերին և մեռել է այն ժամանակ, երբ մեռել է նրա մեջ հավատը:

Ես գիտեմ, որ հայ կյանքի այժմյան դաժան պայմանները շատ թույլ հենարան են հուսո և հավատի համար: Գիտեմ, որ հայ ազգի տագնապը չափազանց բարդ է, որպեսզի չխախտվի հավատը գործիչ տարրերի: Բայց չէ՞ որ այդ ազգը մի սֆինքս է, որի բազմադարյան պատմությունը լի է առեղծվածներով: Չէ՞ որ այդ պատմության մեջ էջեր կան, որոնք չադախված են ավելի թանձր արյունով: Եվ սակայն յուր գոյության ամենասարսափելի պահերին է, որ նա գործել է ու ստեղծագործել անհուն եռանդով: Գիշտ այդ պահերին է նա յուր միջից արտադրել լավագույն

տարրերը, որոնք նրան առաջնորդել են դեպի փրկություն և դեպի վերածնունդ: Առաջնորդել են անվերապահ հավատով նրա կենսական անսպառ ուժերին և հենվելով նրա բնական հարուստ ծիրքերի վրա:

Ի՞նչ մեծ բարոյական կորով է հարկավոր գործելու և Ետեղծագործելու համար այն ժամանակ, երբ երկինքը պայծառ է և երկիրը զարդարված վարդերով: Այն ուղին է տանում դեպի փրկություն, որ լի է տատասկներով: Այն զինվորն է զինվոր, որ չի շփոթվում թնդանոթի որոտից և չի կորցնում յուր սառնասրտությունը կռվի փոթորկին: Բացառիկ թշվառությունների միջոցին հավատն էլ պիտի լինի բացառիկ, հույսն էլ, եռանդն էլ:

Արյունաքամ, ուժասպառ, ցիրուցան հայ ժողովուրդը բնական է, որ հուսահատվի և դադարի հավատալ յուր ապագային, վասնզի փլել է նրա դարավոր խրճիթը: Բայց, հավատացեք, ժամանակավոր է այդ հուսահատությունը, որքան ևս նա թվա ձեզ ծայրահեղ: Կանցնե այս սոսկալի մրրիկն էլ, կպարզվի խավար մթնոլորտը, կերևան այս ու այնտեղ խորտակված խրճիթի բեկորները: Այն ժամանակ շինարար ձեռները կժողովեն նրանց և կկառուցանեն մի նոր, ավելի ամուր և ավելի կայուն խրճիթ:

Թող Հայ ժողովրդական Կուսակցությունը դառնա այդ շինարար ձեռքը:

Ես ողջունում եմ նրա գալուստը:

«Ժողովրդի ծայն», 1. IX. 1918:

ԿՓԱՓԱԳԵԻ

Մի վիրավորական և ողորմելի վիճակ է ստեղծվել Պոլիս գնացած մեր պատգամավորների համար: Խոստովանում եմ, չէի կամենա այդ վիճակը բաժանողներից լինել: Մոտ երկու ու կես ամիս է, որ այդ մարդիկ գտնվում են Թուրքիայի մայրաքաղաքում, և մինչև այժմ դեռ չգիտենք, թե երբ պիտի, վերջապես, սկսվի այն չարաբախտ կոնֆերենցիան, որի համար նրանք գնացել են:

Կարելի է կարծել, որ կատարվում է մի խորհրդավոր գործ, որի էությունը ոչ միայն մեզ, այլ նույնիսկ կոնֆերենցիայի անդամների համար գաղտնիք է: Գոնե նրանց մեծամասնության համար: Այնինչ՝ կովկասյան երեք այսպես կոչված կառավարությունների ներկա վիճակը այնպես է, որ յուրաքանչյուր անորոշություն լի է անակնկալներով:

Ասում են, որ կոնֆերենցիայի կայացման ժամանակը մասամբ կախված է Բաքվում կատարվող դեպքերի հետևանքից: Իբրև թե սպասվում է, որ նավթաքաղաքի վիճակը պարզվի և հետո որոշվի երեք կառավարությունների վիճակը: Եթե այդ ճիշտ է, հասկանալի է թուրք գործերի աճապարումը Բաքուն վերջապես գրավելու:

Սեզ համար, հարկավ, առանձնապես հետաքրքրական է հայ պատգամավորների տրամադրությունն ու դրությունը Պոլսում: Մի բան մինչև այսօր հայտնի է մեզ: Այն, որ նրանք ընդունվել են այնտեղ «սիրալիր»: Չէ՞ որ իրանք է, որ այդ մասին շտապել են անմիջապես հեռագրով հայտնել ի գիտություն հայության: Բայց շարունակվում է այդ «սիրալիրությունը» այնպես, ինչպես սկսվել է, թե՛ հյուրընկալ ժպտին այժմ փոխարինել է ծանծրացած տանտիրոջ դժկամականությունը:

Այսպես թե այնպես, առայժմ մեր պատգամավորները զբաղված են Պոլսի թուրք և հայ լրագիրների թղթակիցներին «ինտերվյուներ» տալով:

Ես դեպք ունեցա կարդալու մեկն այդ «ինտերվյուներից»: Կարդացի և աչքերիս չհավատացի. այնքան նա անսպասելի էր ու այնքան զարմանալի: Խոսքս Ալեքսանդր Խատիսյանի՝ մի թուրք լրագրի թղթակցի հարցերին տված պատասխանների մասին է:

Դուք, իհարկե, ճանաչում եք մեր հայտնի հռետորին և ծանոթ եք նրա պերճախոսությամբ: Եվ ահա այդ քաղցրախոս և երբեմն նույնիսկ սրախոս գործիչը այս անգամ խոսել է այնպես, որ նրա յուրաքանչյուր դարձվածք մի զարմանալի թյուրիմացություն է: Դուրս է գալիս նրա ասածներից, որ հայ ազգի ներկա թշվառության եթե ոչ միակ, գոնե գլխավոր պատճառը ռուսների տիրապետությունն է Կովկասին: Եթե Ռուսիան չգար, մենք կլինեինք երջանիկ՝ Պարսկաստանի ձեռքում. բայց ոչինչ, գոհություն Աստծու, այժմ ռուսները հեռացել են մեր երկրից, եկել են թուրքերը, և մենք կարող ենք հանգիստ հոգով սպասել մեր մոտալուտ երջանկությանը:

Ես կրկնում եմ այն, ինչ որ ասել է Խատիսյանը, լրագիրների խոսքով: Երկուսից մեկը. կամ ստում են լրագիրները կամ Խատիսյանը իր «ինտերվյու» տալիս նորմալ վիճակի մեջ չի եղել: Ես ուրախ կլինեի, որ արդարանար իմ առաջին ենթադրությունը: Այն ժամանակ, հարկավ, Խատիսյանին կարելի է պատասխանատու գործեր ու պաշտոններ հանձնել. իսկ եթե ոչ, եթե իրավ նա ասել է վերոհիշյալ խոսքերը, այն ժամանակ ես չգիտեմ՝ նա ինչ երեսով պիտի վերադառնա Կովկաս և ինչպես պիտի նայի այն տարրերի երեսին, որոնց դեռ երեկ այնքան կոմպլիմաններ էր շռայլում և որ այսօր խղճի ամենայն հանգստությամբ ոտնատակ է անում:

Ներկա տողերիս գրելու նպատակը հետևյալն է: Հայ ազգը կամ հայ կառավարությունը պետք է շատ զգույշ լինի դիպլոմատիական հանձնարարությամբ պատգամավորներ ընտրելիս, վասնզի ամենակարևոր և ամենապատասխանատու պաշտոններից մեկը դիպլոմատի պաշտոնն է. նախ և առաջ դիպլոմատի լեզուն պիտի լիներ ավելի կարճ, քան խելքը: Շատ խորհել և քիչ արտահայտվել — այս պիտի լինի նրա նշանաբանը: Այնուհետև նա պետք է հասկանա, որ լրսագրական ինտերվյուները մի լարժուն ուղի են դիպլոմատի համար, ուր նա շատ ճարպիկ պիտի լինի, որպեսզի չսայթաքի: Մի անզգույշ դարձված, մի ավելորդ բառ կարող է նրան ձգել թակարդի մեջ և կործանել այն գործը, որ հանձնարարված է նրան:

Կփափագեի, որ հայ ազգը կամ հայ կառավարությունը այս դեպքում լինե՞ր վերին աստիճանի զգույշ իր ընտրությունների մեջ:

«Մշակ», 3. IX. 1918:

ՀԻՍԱՐՈՒԹՅՈՒՆ

Թիֆլիսը ցնորվել է: Այն քաղաքը, ուր կյանքն այնքան հանգիստ էր, այնքան խաղաղ և այնքան տաղտկալի, դարձել է տոնավաճառանոց: Փողբիկ գավառական քաղաքը ընդունել է մի տեսակ մայրաքաղաքի կերպարանք: Ոչ իր ներքինով, այլ իր արտաքինով: Ոչ իր համալսարաններով, թանգարաններով, թատրոններով, գրական, քաղաքական, գեղարվեստական ակումբներով, այլ իր ճաշարաններով, թեյատներով, կինեմոներով, օպերետներով, գինետներով և զեխության ու շոայլության այլևայլ տեսակի հիմնարկություններով:

Կարծես, որքան բարձրանում է թանկությունը, այնքան ավելի է զարգանում մարդկանց ուտել-խմելու ախորժակը, որքան ընկնում է դրամի արժեքը, այնքան բարձրանում է կյանքի, այսինքն բուսական կյանքի, արժեքը: Հագիվ թե մարդկային ստամոքսն երբևէ այնպես գործած լինի, որպես այժմ, հագիվ թե մարդիկ այնքան ոգելից ըմպելիքներ լինեն գործածած Թիֆլիսում, որ ինքնըստինքյան եղել է միշտ գինու տիկ, որքան այժմ...

Կառավարությունը վառելիքը խնայելու նպատակով հրամայում է էլեկտրական լույսը կրճատել. մարդիկ ուտում ու խմում են մոմերի լույսով:

Հանգցնել են տալիս մոմերը, մարդիկ ուտում ու խմում են կլուբների մութ ծառուղիներում: Փակում են մի գվարճատուն, բացվում է մյուսը. մի տեղ արգելում են արբել, մարդիկ վագում են մի ուրիշ տեղ, և սկսում են արբել ավելի մեծ եռանդով, քան առաջ:

Եվ ո՞վ է ուտողը, խմողը, գվարճացողը: Կարծում եք բուրժուազիա՞ն, կապիտալիստնե՞րը, միլիոնատերե՞րը: Քավ լիցի: Նրանք հեռացել են ասպարեզից, քաշվել են իրանց տները, այլևս նրանց կառքերն ու օթոմոբիլները չեն սլանում փողոցներում: Գուցե ինտելիգենցիա՞ն: Ամենահին: Նա նույնպես չի երևում ժամանակի հրապարակի վրա: Նրա օսլայած օձիքը ճխլվել է, գլխարկը գունատվել, կոշիկները պատառոտվել են: Նա ամաչում է երևալ: Ամաչում է երեկվա իր դերձակից, գավթապահից, դռնապանից, խոհարարից ու աղախնից: Նա նույնպես քաշվել է մի անկյուն և իբրև վկա դիտում է կյանքը... բուսական և անասնական կյանքը: Իսկ ասպարեզը մնացել է մրգավաճառներին, մսագործներին, կառապաններին, շոֆերներին, պանրավաճառներին, յուղավաճառներին, կոշկակարներին, նույնիսկ կոշիկ սրբողներին, նաև մեծ ու փոքր սպեկուլյանտներին: Դրանք են, որ այսօր հագեցնում են հրեշային թանկության հրեշային ախորժակը, իրանք ևս ունենալով նույնչափ հրեշային ախորժակ: Դրանք են, որ չեն սակարկում, գնում են, ինչ գնով էլ որ լինի, անտրտունջ և անբողոք. ինչո՞ւ: Որովհետև իրանք էլ թշնամի են տրտնջողներին և բողոքողներին:

Թիֆլիսը ցնորվել է: Նրա գլուխը կորել է, անհայտացել, մնացել է մարմինը իր բոլոր բնական ու հակաբնական ներելի և ոչ ներելի պահանջներով, իր ախտերով:

Ի՞նչ կարելի է սպասել մարդկանցից կյանքի այդ այլանդակ հանգամանքներում:

Միայն մի բան:

Հիմարություն:

«Մշակ», 5. IX. 1918:

4

ՌԻՐԻՇ ՈՉԻՆՉ

— Այսօր իմ աչքերի առջև Թիֆլիսի ամենաբազմամարդ փողոցում մի գաղթական կնոջ գրկում մեռավ երեք տարեկան մի երեխա սովից: Ոչ

ոք կանգ չառավ դժբախտ կնոջ մոտ՝ մի վայրկյան՝ լսելու նրա հեծկլտանքը:

Այս խոսքերով դիմավորեց ինձ անցյալ օրն իմ զգայանիստ ծանոթներից մեկը:

Ոչ ոք կանգ չառավ դժբախտ կնոջ հեկեկանքը լսելու:

Հարկավ: Այդ հանգամանքն ինձ ամենևին չի զարմացնում:

Պատերազմ, ապա հեղափոխություն — ահա երկու սոսկալի փոթորիկներ, որ եկան օդը ցնդեցին ոսկե փոշու այն նոսր շերտը, որ ծածկել էր մեր դաժան հոգիները քաղաքակրթություն անունով:

Դուք ինձ խորին կշտամբանքով կհարցնեք. ինչո՞ւ ես վիրավորում եմ ազատարար հեղափոխությունը, դնելով նրան անբարոյական պատերազմի քով:

Չեմ վախենում այդ տեսակ կշտամբանքից և չեմ շփոթվում: Մեկը մյուսի զավակն է և երկուսն էլ գործիք են միևնույն բանի — արյունահեղության: Իսկ այնտեղ, ուր կա արյունահեղություն, չի կարող լինել մարդկային զգացումների մեղմություն, այսինքն՝ բարոյականություն: Այնտեղ, ուր խոսում է սուրը, լռում է հոգին: Այնտեղ, ուր հոսում է արյունը, չի կարող լինել սիրտ:

Եթե այդ երեխան բազմամարդ փողոցում մեռներ պատերազմից առաջ, անցորդները կարտասվեին: Եթե նա մեռներ պատերազմի ժամանակ, անցորդները կանգ կառնեին՝ գեթ մի վայրկյան լսելու նրա թշվառ մոր հեկեկանքը: Բայց այն օրից, երբ արյունահեղությունը պատերազմի դաշտից անցավ փողոցները, վանեց այնտեղից մարդկային և սիրտը, և՛ հոգին:

Ի՞նչ արժեք ունի մի ինչ-որ երեխայի մահը փողոցում կամ նրա մոր հեծկլտանքը, երբ ամեն օր հոսում է սալահատակների վրա հարյուրավոր ու հազարավոր անմեղների արյունը: Ի՞նչ արժեք մեր քարացած զգացումների, մեր սառած ներվերի, մեր արյունալի աչքերի համար: Մարդկային սիրտը, ասում է Վիկտոր Յուլզոն, մի սպունգ է: Երբ նա ծծում է վշտի որոշ քանակություն ու լիանում, այնուհետև վշտերի օվկիանոսներ կարող են անցնել նրա վրայով, այլևս ոչինչ չի ընդունի:

— Մի դառնացրեք ձեր հոգին, — ասացի ես խորապես զգացված ծանոթիս, — պատերազմը խորտակեց մեր երջանկությունը, հեղափոխությունը կվերականգնե նրան:

— Ասու՜մ եմ, — արտասանեց ծանոթս դառը հեզմանքով և գլուխը կասկածալի երերեց, — բայց ես առայժմ տեսնում եմ միայն և միմիայն մարդկային թշվառությունների անհուն մի ծով:

ես կամեցա հարցնել.

— Ուրիշ ոչի՞նչ:

Բայց նա արդեն հեռացել էր:

«Ժողովրդի ծայն», 6. IX. 1918:

ՄԻ ՎԵՐՔ ԵՎՍ

Հյուսիսային Կովկասից և Ղրիմի կողմերից հատ-հատ եկողները ուրախալի լուրեր չեն բերում մեզ համար այնտեղի հայերի դրության մասին:

Պատմում են, ի միջի այլոց, որ տեղական ոչ հայ ազգաբնակչությունները չափազանց գրգռված են նրանց դեմ, մանավանդ գաղթական հայերի դեմ:

Պատճառը հետևյալն է: Ուր որ կան հայեր, այնտեղ տիրում է կենսական մթերքների թանկություն: Ուր որ չկան հայեր, այնտեղ էժանություն է. բայց հենց որ գալիս են հայ գաղթականները, անմիջապես սկսվում է թանկությունը: Ոչ այն պատճառով, որ մթերքների պահանջն ավելանում է, այլ որովհետև հայերն անբարոյականացնում են նրանց առջն ու վաճառքը: Նորեկ հայերն ամենուրեք գրեթե առանց բացառության պարապում են վաճառականությամբ, և նրանց շնորհիվ է, որ սպեկուլյացիան ստացել է հրեշավոր չափեր: Գաղթական հայերը վաղ առավոտյան դուրս են գալիս քաղաքներից, դիմավորելով մթերքներ բերող գյուղացիներին, գնում են ամեն ինչ թանկ գներով: Հետո բերում են քաղաք և եռակի, քառակի, նույնիսկ հնգյակ գներով վաճառում, կանխապես իրարու հետ համաձայնելով, որ պակասով չվաճառեն: Եվ այսպիսով նրանք մի օրվա մեջ շահում են 300, 400, 500 տոկոս:

Այս բանը չեն անում ռուսները, չեն անում թուրքերը, ինգուլները, չեչենները. անում են միայն հայերն ու հրեաները...

Կատաղությունն այնտեղն է հասել, որ ռուսներն առանց քաշվելու ասում են.

— Մենք մի օր լավ հայկական ջարդ կսարքենք և կխրատենք նրանց էլ հրեաների պես:

Եվ պատմողները պնդում են, որ շատ հավանական է, որ այդ ջարդը մի օր տեղի ունենա: Ավելացնում են, որ եթե նա մի որևէ տեղ սկսվի, անմիջապես տարածվելու է ամենուրեք:

Շատ կարելի է, որ պատմողները գույները խտացնում են, որ միայն հայերն ու հրեաները չեն թանկության պատճառը, որ իրանք ռուսներն էլ անմեղ չեն: Բայց խնդիրն այս չէ: Եականն այն է, որ դարձյալ հայի անունն է ընկնում խայտառակության հրապարակը և դարձյալ նրան է սպառնում վտանգը: Եվ պատճառն ուրիշ ոչ ոք է ու ոչինչ, եթե ոչ ինքը, միայն և միմիայն ինքը՝ հայը:

Հարկավ, մի աններելի հանցանք չէ, որ հայն օտար երկնքի տակ, օտար ազգաբնակության մեջ պարապում է այս կամ այն առևտրով: Մարդ պետք է մի գործով զբաղվի ապրելու համար: Հայի ամենասիրելի գործը վաճառականությունն է և բնական է, որ ուր էլ նա գնա, այդ գործով <պետք է> զբաղվի: Բայց կա մի շատ կարևոր հանգամանք, որ յուրաքանչյուր անհատ, մանավանդ այն անհատները, որ շփվում են օտարների հետ, պարտավոր է միշտ աչքի առաջ ունենալ: Դա այն է, որ ազգերի բարոյական վարկը օտարների աչքում կախված է անհատների բարոյական վարկից: Օտարները չեն քննում, թե այսինչ կամ այնինչ ազգի որ տարրն է իրանց մեջ մուտք գործել: Նրանց համար բոլոր հայերը հայեր են, բոլոր հրեաները հրեաներ: Վաշխառուներ կամ չարչիներ են այս կամ այն քաղաքի հայերը՝ ուրեմն ամբողջ ազգը բաղկացած է վաշխառուներից կամ չարչիներից: Այսպես է մտածում օտարը: Եվ նա ունի իրավունք այդպես մտածելու: Նա ուրիշ կերպ էլ չի կարող գաղափար կազմել մի ազգի մասին: Հազար անգամ նրան ասեք, թե հայ ժողովրդի 80 %-ը իր երկրում պարապում է երկրագործությամբ, թե հայ ազգն ունի շատ բարոյական գանձեր, դպրոց, գրականություն, երաժշտություն, թատրոն: Նա շարունակ պնդելու է.

— Ոչ, հայ ազգը բաղկացած է միմիայն վաշխառուներից ու չարչիներից:

Մի ժամանակ հայ ազգի անունը Ռուսիայում ապակացում էր մեր վաճառականության այն վատառողջ մասը, որ պարապում է խաբեբայությամբ: Այն մասը, որ գնում էր Նիժնի Նովգորոդ կամ Մոսկվա, բերում էր մեծ քանակությամբ ապրանք ապառիկ և տարին չլրացած իրան հայտարարում էր սնանկ ու ռուբլու փոխարեն պարտատերերին վճարում էր 20-25 կոպեկ:

Այդ տարրը ծերացել է, կարծես, մինչև անգամ մեռել է: Համենայն դեպս նա առաջվա պես չի աղաղակում իր մասին: Բայց նրա տված վնասներն այսօր էլ աչքի են զարնում: Այսօր էլ կան Մոսկվայում ռուսներ, որ ասում են.

— Не надеешь, не будешь армянином.

Այժմ այդ վնասակար տարրին փոխարինել է մի ուրիշ, ավելի մոդեռն,

ավելի ճարպիկ, ավելի նուրբ տարր, որ կոչվում է սպեկուլյացիա:

Չի կարելի ասել, որ այդ տարրը պատերազմի ծնունդն է: Ոչ, նա կար և պատերազմից առաջ, միայն աչքի չէր ընկնում, համեստ էր: Պատերազմը զարգացրեց նրա ախորժակը, տալով նրան գործունեության ընդարձակ ասպարեզ... Եվ մենք այսօր տեսնում ենք, թե որքան է նա հանդգնացել:

Ֆրանսիական զորաբանակի հրամանատար մարշալ Ժոֆռը պատերազմի սկզբում իսկ հրամայեց կախաղան բարձրացնել Փարիզի նշանավոր նպարավաճառ, հարյուրավոր հսկայական խանութների տեր Պոտենին: Ինչո՞ւ նա արավ այդ: Մի՞թե խելագար էր կամ թշնամի վաճառականության. ոչ, նա այդ դաժան միջոցին դիմեց հանուն հայրենասիրության՝ զսպելու համար արյունարբու վամպիրների ախորժակը: Նա մեկին զոհեց միլիոնավոր ժողովրդին փրկելու համար այն սոսկալի գազանի ճիրաններից, որ կոչվում է սպեկուլյացիա...

Մեր երկրի նախկին կառավարությունը ոչ պատերազմի սկզբում, ոչ հետո չունեցավ քաջություն սպեկուլյացիայի վերաբերմամբ կտրուկ միջոցների դիմելու: Նրա աչքերի առջև ամեն օր կատարվում էր եղեռնագործություն և նա չէր պատժում եղեռնագործներին: Չէ՞ր ուզում: Ոչ, չէր կարող, որովհետև առաջին և ամենագլխավոր եղեռնագործը ինքը կառավարությունն էր բոլոր մեծ ու փոքր գործակալներով, սկսած մինիստր Սուխոմլինովից մինչև վերջին ինտենդանտը: Ամենից առաջ նա ինքն էր արժանի կախաղանի: Ինչպե՞ս կկամենայիք, որ ավագակը դավաճաներ իր զինակիցներին:

Բայց կար մի տարր, որ կարող էր եթե ոչ պատժել սպեկուլյանտներին, գոնե սահմանափակել նրանց օր օրի վրա գազանացող ախորժակը: Դա հասարակությունն էր կամ գոնե նրա գիտակից մասը: Բայց ի՞նչ տեսանք մենք և ի՞նչ ենք տեսնում այսօր իսկ, գոնե մեր հասարակության մեջ: Եղեռնագործությունը ոչ միայն չի պատժվում մեր մեջ, այլև հարգվում է: Խոշորագույն վամպիրներն են, որ այսօր արժանանում են մեր պատկառանքին: Նրանց առջև է, որ անուշ ժպիտն երեսին, մեջքը թեքելով, խոնարհվում են և մեծը, և փոքրը, և անկիրթը, և կրթվածը, և ածխավաճառը, և համալսարանականը: Մի՞ կարծեք, որ իմ ասածը չափազանցություն է կամ հոռետեսություն: Դիտեցեք ձեր շուրջն ուշադիր, մտածեցեք և կտեսնեք, որ իմ ասածը զուտ ճշմարտություն է:

Հյուսիսային Կովկասի և Ղրիմի մանր-մունր սպեկուլյանտները ոչնչություններ են իսկական վամպիրների համեմատությամբ: Բայց նրանք ինձ զայրացնում են ու վշտացնում մի տեսակետից: Եթե մի օր,

Տերը մի՛ արասցե, պայթե գռեհիկ ռուս ազգաբնակչության կատաղի բնազդը, որ մենք հրեական ջարդերից արդեն գիտենք ինչ է, ո՞վ է լինելու տուժողը: Կարծում եք իսկական մեղավորը: Ոչ: Ասում են՝ նավը խորտակվելիս ամենից առաջ ազատվում են մկները, որ տարիներ շարունակ կրծոտել են նավը: Ոչ մի ազգի մեջ այս առածն այնքան չի իրականանում, որքան հայերի մեջ: Մեր մկների ոտները չափազանց ճարպիկ և արագաշարժ են փախչելու: Ապացույցներ ձեզ՝ Կարսի, Ալեքսանդրապոլի, Ախալքալաքի փախուստներն այդ մկների: Ապացույց ձեզ փախուստներից ամենախայտառակը — Թիֆլիսիներ:

Կփախչեն Հյուսիսային Կովկասի ու Ղրիմի սահմաններից ևս մեր ազգի անունն ու վարկը կրծոտողները, դրանց փոխարեն կտուժե տեղական անմեղ հայ ազգաբնակչությունը: Այն ազգաբնակչությունը, որ մի ամբողջ դար վայելել է բարեսիրտ ռուս ժողովրդի հյուրընկալությունը, հարգելով ու սիրվելով նրանից:

Եվ մի վերք ևս կավելանա բազմավերք հայ ազգի վրա:

«Մշակ», 15. IX. 1918:

ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱ

Հայ մամուլը տարիներից ի վեր սովոր է ինտելիգենցիա անվան ցեղը ճանաչել մի որոշ դասակարգ, որ բաղկացած է այսպես կոչված «բարձրագույն կրթություն» ստացած անհատներից: Ճշմարիտ է, երբեմն նա իբրև առանձին շնորհի բարեհաճում է ինտելիգենտ կոչմանն արժանացնել և բացառիկ ընդունակությունների տեր կամ տաղանդավոր անձանց, որոնք չունեն համալսարանական դիպլոմ, բայց և այնպես արժանավորագույնն այդ անվան համարում է դիպլոմավորներին:

Ես կարծում եմ, որ դա մի խոշոր թյուրիմացություն է, որ տասնյակ տարիներ կրկնվում է և որ այսօր ժամանակ է վերացնել:

Երկուսից մեկը. կամ մենք պիտի լուրջ իմաստ տանք «ինտելիգենցիա» բառին, կամ ընդունենք նրան որպես մի անմիտ, անիմաստ հնչյուն: Անտարակույս, երբ հայ մամուլը գործ է ածում «ինտելիգենցիա» և «ինտելիգենտ» բառերը, աչքի առջև ունի լուրջ պահանջներ այդ անունը կրողներից: Եթե այդպես է, միանգամայն անընդունելի է անխտիր բոլոր դիպլոմավորներին ինտելիգենտ համարելը: Օրինակ, ինչ բարոյական

իրավունքով դուք ինտելիգենտ եք անվանում դիցուք մի բժշկի, որ գիտե միայն դեղատոմսեր գրել, մի իրավաբանի, որ գիտե միայն բողոքագիր շարադրել, կամ մի ինժեների, որ գիտե շինել կամուրջներ: Ի՞նչ բարոյական իրավունքով, եթե այդ բժիշկը, այդ իրավաբանը, այդ ինժեները չունի ուրիշ ոչ մի մտավոր պաշար, բացի իր արհեստից: Ես դիտմամբ եմ կրկնում «բարոյական» բառը, որովհետև իմ հարցն էլ բարոյական իմաստով է և ոչ իրավական:

Մի դիպլոմավոր, որի մտավոր պաշարը ամփոփված է իր արհեստի մեջ, ուրիշ ոչինչ է՝ եթե ոչ սոսկ մի արհեստավոր, ոչ բարձր քան մի կոշկակար, մի դերձակ, մի ատաղծագործ, որոնց մեք ինտելիգենտներ չենք համարում: Ես ավելիմ կասեմ. մի հասարակ խանութպան, որ իր ազատ ժամերը նվիրում է ընթերցանության, ավելի ինտելիգենտ է, քան այն համալսարանականը, որ իր դիպլոմը ստանալու օրից դադարել է զարգացնել իր ուղեղն ու կրթել հոգին:

Մեզնում լեզեոն է այն դիպլոմավորների թիվը, որոնց մտավոր կրթությունը իրանց գրպանում պահած մի թերթ թղթից դենը չի անցնում: Դա մի մեծ ամբոխ է, որի ալֆան և օմեգան իր բուսական կյանքն է: Եվ որպիսի՝ անծայր հավակնության ենք հանդիպում այդ ամբոխի կողմից, երբ ուսումնասիրում ենք նրան: Հավակնություն, որ սնուցել է նրա մեջ համալսարանական դիպլոմը: Հարկավ, ես բացառություններն աչքի առջև չունեմ: Կան մեզնում բավական թվով դիպլոմավորներ, որոնք ամենայն իրավամբ արժանի են ինտելիգենտ անվանը: Խոսքս ահագին մեծամասնության մասին է:

Բնորոշն այն է, որ հենց այդ մասսան է, որ, մի զարմանալի հեղինակությամբ, քննում, քննադատում ու պարսավում է, անպայման պարսավում ամեն ինչ, որ կապ ունի հայ անվան հետ: Նրան ոչ մի բան չի գոհացնում հայ կյանքում, նույնիսկ այն բաները, որ վաղուց արժանացել են օտարների հիացմանը: Փույթ չէ, որ նա ծայրահեղ տգետ է այդ կյանքի վերաբերմամբ, բայց քննադատում է և իրավունք համարում մեծամտաբար ծաղրելու պարսավել միայն այն հիման վրա, որ գրպանում ունի մի քանի պրոֆեսորների ստորագրություն: Նա մինչև անգամ չի էլ ամաչում կամ զղջում, որ չգիտե իր մայրենի լեզուն: Ընդհակառակը, երբեմն մի տեսակ պարծանքով է խոստովանում այդ, թեև միշտ փարիսեցիաբար ավելացնում է՝ *к сожалению*.

Կարելի է ենթադրել, որ այդ դիպլոմավոր ամբոխի արհամարհանքը դեպի ազգայինը նրա մտավոր բարձր զարգացման հետևանք է: Կարելի է կարծել, որ նա խստապահանջ է, որովհետև ունի իրավունք այդպես

լինելու: Բայց ուսումնասիրեցեք նրան մի փոքր, և դուք կտեսնեք, թե որքան ողորմելի է նրա մտավոր և բազածը: Նա, որ սովոր է միշտ բարբառել հանուն եվրոպական քաղաքակրթության, նույնքան տոգտ է այդ քաղաքակրթության վերաբերմամբ, որքան խստապահանջ իր ազգի վերաբերմամբ: Արհամարհելով, օրինակ, հայ գիրքը, նա անտեղյակ է և օտար գրքերին: Չհետաքրքրվելով իր ազգի կյանքով, նա չի հետաքրքրվում և ուրիշ ազգերի կյանքով: Նա մի անպտղաբեր ծառ է, որ ինչ հողի վրա ևս տնկվեր՝ մնալու էր անպտղաբեր: Նա ստում ու կեղծում է իր ազգային անպտղաբերությունը բացատրելով կոսմոպոլիտիզմով: Նա չգիտե, որ ինքը կոսմոպոլիտիզմը մի անպտղաբեր ծառ է:

Ես, իհարկե, չունեմ հավակնություն իմ ասածները նորություն համարելու: Մեր այսպես ասած պաշտոնական «ինտելիգենցիայի» մեծամասնության մտավոր ու հոգեկան ապիկարությունը նկատել են և ուրիշները: Դա մի ճշմարտություն է, բավականաչափ ապացուցված: Բայց ինձ այսօր դրդում է այդ ճշմարտությունը կրկնել մի հանգամանք: Այն է, որ հայ մամուլն ու հայ հասարակությունը դեռ շարունակում են անխտիր բոլոր դիպլոմավորներին դնել ինտելիգենցիա անվան տակ և լինել խստապահանջ ամենքի վերաբերմամբ: Ժամանակ է ընդունել, որ այլ է բժիշկ, իրավաբան, ինժեներ, ճարտարապետ և այլն, և այլն դիպլոմավորներ և այլ է ինտելիգենտ: Պետք է «ինտելիգենցիա» բառը գործածել զգուշաբար և մեծ վերապահությամբ:

Ավելի արդարացի և ճշգրիտ կլիներ ինտելիգենտ անունը տալ միայն այն անձանց, որոնց զբաղմունքը մտավոր է: Սակայն սա իմ անհատական կարծիքն է, որ կարող է ընդունվել կամ մերժվել:

«Մշակ», 21. IX. 1918:

ԱՄՈՌԱԼԻ ՉԷ

Պարտվելն ամոթալի չէ, ամոթալի է պարտվելուց հետո թե՛ հոխորտալն ու սպառնալը և թե՛ ողբալն ու հեկեկալը: Եվ երկուսն էլ հավասար ծիծաղելի են:

Մենք արհմբ այն, ինչ որ կարող էինք անել, ոչ ավելի, ոչ պակաս: Մենք լարեցինք մեր նվաստ ուժերը մեզ պաշտպանելու համար, և պաշտպանվեցինք մեր կարողացածի չափ: Մի տեղ աջող, մյուս տեղ

անաջող, այստեղ հերոսաբար, այնտեղ վատթար վախկոտությամբ:

Ազգերը բացառապես հերոսներից կամ բացառապես ոչնչություններից չեն բաղկացած: Այն էլ կա, այս էլ, և ամեն ինչ համեմատական է:

Պատերազմն ու հեղափոխությունը մեզ համար դաժան քննություններ էին, այնքան վեր մեր ուժերից, որ չէինք կարող աջող թվանշան ստանալ՝ որքան ևս ճգնեինք: Միանգամայն ճիշտ է և անհերքելի, որ այդ քննությունները հրապարակ ձգեցին մեր ազգային բոլոր հոգեկան ու բարոյական թաքնված ախտերը: Սակայն ասել, որ այդ ախտերի հետ չերևացին և լուսավոր ու մխիթարական գծեր, կնշանակե կարդալ հայ ազգի մահվան դատավճիռը: Մի դատավճիռ, որ թե դաժան է և թե անարդար:

Երկու իրարու հակառակ հոգեկան տրամադրություններ են նշմարում ես մեր հասարակության մեջ: Մեկը ծայրահեղ հուսահատական, մյուսը վերին աստիճանի տղայական: Աջ են նայում՝ տեսնում են արտասվող աչքեր, ձախ են նայում՝ տեսնում են օդում ճոճվող նիզակներ: Այնտեղ հեկեկում են ու կուրծք> ծեծում, այստեղ աջ ու ձախ սպառնալիքներ են որոտում: Որքան ողորմելի ու եղկելի է մեկը, նույնքան ծիծաղելի ու ծաղրելի է մյուսը:

Արտասուքը ամենահզոր զենքն է հիվանդին մահից փրկելու համար, իսկ սպառնալիքը և նիզակներ ճոճելը միայն մի արդյունք կարող են ունենալ — ծաղր ու արհամարհանք: Արտասվում են նրանք, որոնք ընդունակ չեն ոչ մի գործի և գիտեն միայն քննադատել: Նիզակներ են ճոճում նրանք, որոնց գործունեությունը սկզբից ևեթ եղել է միմիայն դոնքիշոտությունը ... Եվ այն է նողկալին, որ այդ նիզակներ ճոճեցնող հերոսները քաջ են միայն իրանց տանը, իսկ դրսում ... թողնենք:

Ինձ թվում է, որ ժամանակ է, վերջապես, ջնջել այդ հոգեբանական տրագիկոմեդիան: Թվում է, որ ժամանակ է հրաժարվել երկու իրարու տրամագծորեն հակառակ տրամադրություններից, թե՛ ուղղություններից, ինչպես կամենաք: Չպիտի ոչ երկչոտաբար հուսահատվել և ոչ մանավանդ տղայաբար սպառնալ: Չպիտի ոչ ողբալ և ոչ ռազմական փող փչել:

Կա մի միջոց, որ կոչվում է քաղաքականություն: Գիտե՞ք ինչ է դա: Մի սնդիկ, որի ելևէջը կախված է օդի ջերմությունից: Տաք է օդը, նա բարձրանում է, սառն է՝ իջնում է: Հարատև փոփոխական է նա: Այդպես է քաղաքականությունը և այդպես էլ պետք է լինի, այլապես ազգերը չեն կարող գոյություն ունենալ: Մանավանդ այն ազգերը, որոնք չունեն ուրիշ ոչ մի զենք, բացի քաղաքականությունից:

Մենք պետք է մտածենք, թե ով կարող է մեզ այսօր օգնել, և նրան

պիտի դիմենք: Թող դա լինի երեկվա, նույնիսկ այսօրվա մեր թշնամին: Եթե մեր վիճակը նրանիցն է կախված, պետք է խոնարհվենք նրա առջև: Ոչ ստորանանք, այլ խոնարհվենք, խոստովանելով մեր տկարությունը և պարտությունը:

Պարտվածը պարտավոր է զիջել հաղթողին և դրա մեջ չկա ամոթալի ոչինչ:

Ամոթալին թե՛ արտասվելն է և թե սպառնալը:

Մի՛ մոռանաք, որ մեր պատգամավորությունը Կ.Պոլիս գնացել է հենց մեր պարտությունը խոստովանելու և զիջումներ խնդրելու համար: Ուրեմն որքա՞ն ծիծաղելի են դարձնում մեզ նրանք, որ տանը նստած հոխորտում են:

Պակաս ծիծաղելի չեն դարձնում մեզ և այն մարդիկ, որ մի զարմանալի անժամանակ և անտակտ կռիվ են սկսել վրաց կառավարության դեմ: Այն ժամանակ, երբ Վրաստանը միակ անկյունն է, ուր հայերը քիչ թե շատ ապահով են, այդ կռիվն ուրիշ ոչինչ է, եթե ոչ ինքնասպանություն: Հարցնող լինի, թե ի՞նչ են ուզում այդ մարդիկ: Խրատե՞լ վրացիներին: Կարծես, մենք այնքան խելոք եղանք մեր գործողությունների մեջ, որ կարող ենք դեռ ուրիշներին էլ սովորեցնել: Կարծես, հենց այդ խրատողներն ու նրանց համախոհները չեն, որ գործել են և դեռ շարունակում են գործել այնքան աններելի սխալներ:

Մեր փրկությունն այժմ հաշտության մեջ է: Մենք ոչ միայն կռվելու, այլև վիճելու ու սակարկելու անգամ ուժ ու կարողություն չունենք: Այս դեռ բոլորը չէ. մենք բարեկամներ չունենք: Մենք չունենք պաշտպաններ, հետևաբար ամենաթույլ բարեկամությունն և ամենափոքր պաշտպանությունն անգամ պիտի ընդունենք գրկաբաց: Իսկ դրա համար պետք է լինենք չափավոր ու զիջող, որպես պարտվածներ:

Կրկնում են, դա ամոթալի չէ:

«Մշակ», 28. IX. 1918:

ՆԱԽ ՎԵՐԱՑՐԵՔ*

Հայ ժողովրդական Կուսակցության օրգան «Ժողովրդի Ձայն» լրագիրը մի առաջնորդողում**, խոսելով հայ-թուրքական հարաբերությունների մասին, առաջարկում է հրաժարվելով վրեժխնդրության

զգացումից հաշտվել թուրքերի հետ և վերջ տալ եղբայրասպան կռիվներին: Միևնույն ժամանակ, լրագիրն ասում է, թե այդ հաշտությունը պիտի կայանա առանց օտարների միջամտության և թե ժամանակ է առհասարակ դադարելու հույսեր դնել օտարների վրա:

Առաջարկը գեղեցիկ է ու գովելի, թեև նոր չէ, այլ ընդհակառակն այնքան հին, որքան հայ-թուրքական հարաբերությունները: Սակայն «Ժողովրդի Ձայնը» չի ասում, թե ինչ միջոցներով կարելի է նրան իրագործել: Նա միայն հանձնարարում է հայ ինտելիգենցիային՝ «զաղափարը տարածել մասսաների մեջ» և «սերտ կապեր հաստատել» թուրք գործիչների հետ:

Ինձ թվում է, որ «Ժողովրդի Ձայնը» մի թեթև թյուրիմացության մեջ է: Հանձնել հայ-թուրքական հարաբերությունների շտկումը կամ երկու հարևան ազգաբնակչությունների հաշտության գործը մեր այժմյան ինտելիգենցիային, այսինքն՝ այն ինտելիգենտին, որ ներկայումս ակտիվ դեր է կատարում, կնշանակե կանխավ թաղել նրան: Այդ ինտելիգենցիան իր տրամադրության, իր գործնական ուղղության, վերջապես, իր ավանդությունների, բնույթի ու սովորության շնորհիվ անընդունակ է մեզ հաշտեցնելու թուրքերի հետ: Խոսքս, հարկավ, առանձին անհատների մասին չէ: Կամ ինտելիգենտ գործիչներ, որոնք կարող են օգտակար լինել ներկա դեպքում: Խոսքս մեծամասնության մասին է:

Կա մի դառն ճշմարտություն, որ վաղ թե ուշ պետք է ասվեր, և ես հանձն եմ առնում ասելու. թուրք գործիչները չեն հավատում մեր ինտելիգենցիայի անկեղծությանը: Իրավացի են նրանք, թե ոչ, դա այլ խնդիր է, բայց չեն հավատում, ինչպես և հայ ինտելիգենցիան չի հավատում թուրք գործիչների անկեղծությանը:

Արդ՝ քանի որ մի տեղ չկա փոխադարձ հավատ, ի՞նչպես կարող է կայանալ հաշտություն: Կժողովվեն, կխոսեն, կզան որոշ համաձայնության և հետո՞... հետո կբաժանվեն յուրաքանչյուրն իր սեղմած բռունցքը գրպանում պահած: Իսկ սալը կմնա միևնույն տեղում, այսինքն տիղմի մեջ:

Երկու ամիս առաջ հայ-թուրքական կոտորածներից, որ սկսվեցին Բաքվում, ես գտնվում էի այդ քաղաքում, այն է 1904 թվականի նոյեմբերին: Մի բոլորովին պատահական աղբյուրից ես տեղեկացա, որ շուտով պետք է տեղի ունենան մասսայական ընդհարումներ հայերի ու թուրքերի միջև: Այս մասին ես բարոյական պարտք համարեցի նախազգուշացնել տեղական հայ ինտելիգենցիային: Ամենից առաջ խոսեցի նրա պարագլուխներից մեկի հետ, որ այժմ հանգուցյալ է, և որի անունը դեռ կարիք չկա հիշելու: Իմ նախազգուշացումն արժանացավ մի այնպիսի

երեխայական ընդունելության, որ ես բարվոք համարեցի իսկույն և եթ ընդհատել խոսակցությունը: Դիմեցի ուրիշներին: Դիմեցի թուրք ինտելիգենցիայի ներկայացուցիչներին, որոնց թվում և հայտնի գործիչներ Ալի Մարդան բեգ Թոփչիբաշևին և Ահմեդ բեգ Աղաևին: Թուրք ինտելիգենցիան ավելի լուրջ և ավելի ուշադիր վերաբերվեց դեպի իմ նախազգուշացումը, քան հայ ինտելիգենցիան, որ այդ ժամանակ այնքան խորն զբաղված էր իր անծնական գործերով: Երկար ջանքերից հետո ինձ աջողվեց կազմել հայ-թուրքական ինտելիգենցիաների խորհրդակցություն: Սկզբում ոչ ոք չէր կամենում կամ չէր կարողանում շոշափել ցավալի խնդիրը հայերի ու թուրքերի ակնհայտ ու ծայրահեղ թշնամության, բայց երբ Աղաևն և ես առանց տատանումների մեր մատը դրեցինք վերջի վրա, մարդիկ սթափվեցին: Խոսեցին, վիճեցին և վերջը որոշվեց հրավիրել մի ավելի մեծ ժողով: Մի քանի օր անցած ես ստիպված էի հեռանալ Բաքվից և հեռացա այն տխուր տպավորության տակ, որ չկա փոխադարձ վստահություն Բաքվի հայ և թուրք ինտելիգենցիաների միջև, ուրեմն և ոչինչ չեն կարող անել նրանք:

Այդպես էլ եղավ: Երկու ամիս չանցած սկսվեցին Բաքվում հայ-թուրքական կոտորածները, որ հետո, ինչպես գիտեք, տարածվեցին ամենուրեք:

Ես անցյալի այս տխուր փաստն առաջ բերեցի կրկնելու համար, որ նույն փոխադարձ անվստահությունը կա այսօր հայ ու թուրք ինտելիգենցիաների միջև:

Կարո՞ղ եք վերացնել այդ փոխադարձ անվստահությունը, կկարողանաք և գործ կատարել: Չե՞ք կարող, ապա բոլոր խոսակցություններն ապարդյուն են:

«Մշակ», 3. X. 1918:

«ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՆ» ՀԱՅՅՈՅԱՆԲ ԶԷ

Մի առավոտ փողոցով անցնելիս հանդիպեցի հետևյալ տեսարանին: Երկու հարևան տների գավթապահներ (дворник), փողոցն ավելելով, վիճում էին կատաղի: Միմյանց մի շարք կեղտոտ ածականներով զարդարելուց հետո, հանկարծ մեկը ծայրահեղ բորբոքվեց ու գոռաց.

— Կորի՛ր, բուրժուա:

Նա գոհ էր, որ, վերջապես, գտավ ամենավիրավորական և ամենակծու

հայիոյանքը:

— Դու ինքդ ես բուրժուա, — գոչեց մյուսը և, խորապես վիրավորված, հարձակվեց իր հակառակորդի վրա:

Անցորդները փորձեցին կատաղած գավթապահներին բաժանել իրարուց, չկարողացան: Մի սրամիտ պարոն ասաց.

— Հանգստացեք, բարեկամներս, ձեզնից ոչ մեկը բուրժուա չէ: Ահա բուրժուան ես եմ, իսկ դուք դվորնիկներ եք:

Գավթապահները բաց թողեցին իրարու օձիքը, բայց և շատ զարմացան, որ անցորդ պարոնն ինքն իրան այնպես անողորմ հայիոյեց: Անկասկած նրանք մտածեցին. «այդ մարդը խելագար է»:

Ճիշտ այդ գավթապահների պես են վարվում մեր այն գրեթե — հրապարակախոսները, որոնք ճգնում են իրարու բուրժուականությունն ապացուցանել: Նրանք նույնպես, ինչպես գավթապահները, բուրժուա բառը համարում են վիրավորական: Նրանք կամ չգիտեն, կամ գիտեն և քաջություն չունեն խոստովանել, որ բուրժուազիան մի դասակարգ է, որին ժամանակակից քաղաքակրթությունը շատ բաներ է պարտական: Նախ և առաջ նրան ենք մենք պարտական աշխարհի ամենագաղափարական, ամենամեծ և ամենահաջող հեղափոխությունը — ֆրանսիականը: Այնուհետև առևտուր, արդյունաբերություն, նավագնացություն, երկաթուղի, տեխնիկա և այլն — այս բոլորը դարձյալ բուրժուազիային ենք պարտ: Գիտություններ, արվեստներ, գրականություն, դպրոց, թատրոն — այս բոլորի մեջ բուրժուազիան է, որ միշտ ունեցել է, ունի և այժմ և պիտի դեռ շատ ու շատ երկար ժամանակ ունենա ամենախոշոր դերը: Թե ինչ կարող է անել պրոլետարիատը իբրև սոսկ այդպիսին — դա դեռ հարց է, բայց մինչև այսօր անողն եղել է բուրժուազիայի ինիցիատիվը: Մի բան կարելի է ասել դրականորեն, այն է, որ պրոլետարիատը այն օրից միայն կլինի ստեղծագործող ուժ, երբ ինքը կդառնա բուրժուազիա: Այլ խոսքով, նա բնականաբար կդառնա բուրժուազիա, երբ կսկսի ստեղծագործել:

Իհարկե, լրագրական մի հոդվածի փոքրիկ շրջանակը թույլ չի տալիս այս միտքն ապացուցանելու համար դիմել երկար բացատրությունների ու փաստերի և իմ նպատակն էլ այդ չէ: Ես կկամենայի միայն ասել, որ միանգամայն ծիծաղելի է ու ծաղրելի իրարու վզին փաթաթել բուրժուազիան իբրև մի անպետք լաթ: Մանավանդ ծիծաղելի է, որ բուրժուա բառից խորշում են ամենից ավելի հենց այն մարդիկ, որոնք իրենց թե մասնավոր և թե հասարակական կյանքի յուրաքանչյուր քայլում դիմում են նույն բուրժուազիային և առանց նրա օգնության ոչինչ չեն

կարողանում անել: Դա մի կեղծիք է, որից Տարտյուֆն անգամ գուցե խորշեր:

Հայ կյանքի այժմյան պայմաններում դասակարգային նախապաշարումները կատարում են շատ տխուր դեր: Չկա մի ազգի գոյության համար ավելի մեծ վտանգ, քան փոխադարձ թշնամությունը և կոիվը դասակարգերի մեջ այն ժամանակ, երբ ազգը արտաքին թշնամիների ձեռքով մղված է մինչև ծայրն անդմիդ:

Հայ բուրժուազիան նույնքան կարևոր մի տարր է մեզ համար, որքան մի որևէ ուրիշ դասակարգ: Հալածել նրան ներկա հանգամանքներում — կնշանակի կատարել մի վերին աստիճանի անխոհեմ ու պարսավելի գործ, մանավանդ որ հալածանքը չի կարող հասնել իր նպատակին:

Տողերիս հեղինակը չի կարող համարվել երկրպագու հայ բուրժուազիայի կամ նրա առաքինությունները դրվատող մեկը: Ընդհակառակը, նա ամենայն իրավամբ կարող է ասել, որ ոչ մի հայ գրող իր չափ անողոք չէ պատկերացրել այդ բուրժուազիայի իրական թերությունները: Բայց այլ է մի դասակարգի բացասական հատկանիշների խարազանելը, այլ է նրա անունը փողոցային հայիոյանք դարձնելը:

Ամենախոշոր թերությունը հայ բուրժուազիայի հենց այն է, որ նա բուրժուազիա չէ բառիս կատարյալ իմաստով: Նա նույնքան հետ է մնացել եվրոպական բուրժուազիայից, որքան մեր մյուս դասակարգերը եվրոպական համանուն դասակարգերից: Եթե հայ բուրժուազիան ունենար եվրոպական բուրժուազիայի մտավոր հասունությունը և բարոյական առավելությունները, այսօր մեր քաղաքակրթության մակերևույթը կլիներ անհամեմատ բարձր: Սակայն իր բոլոր թերություններով հանդերձ, հայ բուրժուազիան ունի և շատ արժանավորություններ, որոնք պակասում են նրա հալածողների մեծամասնությանը: Խոսքս, իհարկե, մտքով հասուն և հոգով անկեղծ դեմոկրատների մասին չէ: Ես մեկն եմ նրանց գաղափարները հարգողներից և նրանց անկեղծությունը ճանաչողներից: Եվ պետք է ասել, ի պատիվ նրանց, որ նրանք չեն «բուրժուազիա» բառը անարգության սինոնիմ դարձնողները: Ոչ, նրանք շատ լավ գիտեն, ինչ ասել է բուրժուազիա և ինչ ասել է դեմոկրատիա:

Խոսքս այն գրեթե — հրապարակախոսների մասին է, որոնք վերը հիշված կովարար գավթապահների պես իրարու վիրավորելու ամենախիստ զենքը համարում են «բուրժուազիա» բառը:

ԱՆՅՐԱԺԵՇՏ Է

Վերջապես ժամանակ է, որ մեր Ազգ <ային> Խորհուրդը հաշիվ տա ազգին իր միամյա գործունեության մասին: Լավ է եղել այդ գործունեությունը, թե վատ, օգտավետ, թե վնասակար — հաշիվն անհրաժեշտ է և պարտավորական, և Ազգային Խորհուրդը չի կարող նրանից խույս տալ:

Փաստորեն այդ Խորհրդի գործունեությունը վաղուց է վերջացել և նա ինքն էլ վաղուց գոյություն չունի: Բայց իբրև պատասխանատու և հաշվետու մարմին, նրա գոյությունը շարունակվում է, և հասարակությունն ունի կատարյալ իրավունք նրա անդամներից հաշիվ պահանջելու:

Ես գիտեմ, որ դյուրին չէ մի հասարակական մարմնի համար հրապարակելնել և իր տկարությունը խոստովանել ազգի ճակատագիրը ղեկավարելու գործում: Բայց չէ՞ որ կան շատ պատճառներ այդ տկարությունը մասամբ արդարացնելու համար: Թող այդ պատճառներն Ազգային Խորհրդին ծառայեն որպես վահան ինքնապաշտպանության: Հայ ազգը բազմահամբեր և անսահման ներողամիտ ազգ է: Նա շատ անգամ է ներել իր զավակների պատմական գիտակցական և անգիտակցական սխալները: Նա կներե և այս անգամ էլ: Նա ստիպված կլինի նույնիսկ ներել, քանի որ ինքն էլ պարզերես չէ իր առջև: Բայց հաշիվ տալ նրան պարտավոր են այն ամենքը, որոնք նրա վիճակը կարգադրելու համարձակությունն են ունեցել:

Եթե ասպարեզից հեռացած Ազգային Խորհուրդն իր միամյա գործունեության բարոյական մասի վերաբերմամբ, Տերը մի արասցե, ամոթահար լինի ազգի առջև, զոնե նյութական մասի վերաբերմամբ նա տեղիք չպիտի տա կասկածների: Մի տարվա ընթացքում նրա ձեռքով ծախսվել են ահագին հասարակական գումարներ: Նա պարտավոր է այդ գումարների հաշիվը հրապարակ դուրս բերել և յուրաքանչյուր մի ծախք ապացուցել արդարացուցիչ դոկումենտներով:

Անձամբ ճանաչելով Ազգային Խորհրդի բոլոր անդամներին, ես նույնիսկ նրանց սոսկ անունները համարում եմ արդարացուցիչ դոկումենտներ: Սակայն կա մեջտեղ մի խստապահանջ և դաժան դատավոր, որ կոչվում է հասարակություն: Եթե միայն ես լինեի նրա տերն ու ղեկավարը, առանց մի վայրկյան տատանվելու կերաշխավորեի Ազգային Խորհրդի ձեռքն անցած միլիոնների ապահովությունը: Բայց

հասարակություն և հասարակական կարծիք ասված բանը մի սպրուտ է, որի քառասուն ճանկերից յուրաքանչյուրն առանձին է գործում:

Ես բարոյական պարտականություն եմ համարում ասել ասպարեզից հեռացած Ազգային Խորհրդի անդամներին, որ այդ սպրուտն արդեն գործում է:

Եվ գործում է իր բոլոր ճանկերով:

Անհրաժեշտ է գոհացում տալ նրա հետաքրքրությանը, որ տոգորված է Ազգային Խորհրդի անդամների համար չափազանց վիրավորական կասկածներով:

Անհրաժեշտ է հենց այժմ իսկ տալ այդ հաշիվը, որովհետև չէ՞ որ հայկական կառավարությունը այսօր-վաղը կարիք է ունենալու նորեն ազգի նյութական օգնությանը դիմելու:

Թող տա գործից հեռացած Ազգային Խորհուրդը հաշիվ և ասե հասարակությանը. — Դու տեսնում ես, որ քո կասկածներն անիրավ էին, ուստի թող իմ լռությունը չծառայե քեզ պատրվակ քո պարտականությունները չկատարելու:

«Մշակ», 12. X. 1918:

ՊԵՏՔ Ե ԵՏ ԿԱՆՉԵԼ

Մեր դիպլոմատիական պատգամավորության ավելի քան երեք ամսվա ներկայությունը Կ.Պոլսում ոչ մի արդյունք չունեցավ, եթե չհաշվենք նրա անդամներից ոմանց անտակտ շատախոսությունը թուրքական մամուլի ներկայացուցիչների հետ:

Հետաքրքրական է գիտենալ՝ ինչո՞ւ է այդ բազմանդամ պատգամավորությունը նստել այնտեղ, ի՞նչ է անում և ի՞նչ է մտածում անելու: Դիպլոմատիական գաղտնիքները չեն ինձ հետաքրքրող, և չեն էլ կարծում, որ լինեն այդպիսի գաղտնիքներ, քանի որ մենք ազգովին անընդունակ ենք գաղտնիքներ պահելու. մեր բոլոր գաղտնիքները փողոցներում ու կաֆեներում են աղաղակում: Ինձ հետաքրքրող խնդրի բարոյական կողմն է: Արդյոք ժամանակը չէ՞ զգալու, որ յուրաքանչյուր հյուրընկալություն ունի իր որոշ ժամանակամիջոցը. ուզում եմ ասել՝ ժամանակը չէ՞, որ պատգամավորությունը մի փոքր խնայե թե՛ ազգի և թե իր ինքնասիրությունը: Երբ տամտերերը լռում են, այդ չէ նշանակում, որ հյուրերը պիտի

շարունակ նստեն նրանց տանը: Շատ անգամ լռությունն ասում է. «Արդյոք դեռ երկա՞ր ժամանակ պիտի ծանծրացնեք մեզ»:

Կարող եմ առարկել ինձ, որ անտակտություն կլինի մեր պատգամավորության կողմից թողնել Կ.Պոլիսն ու հեռանալ, քանի որ մյուս պատգամավորություններն էլ դեռ մնում են այնտեղ: Գուցե: Բայց կկամենայի իմանալ, թե արդյոք հայ պատգամավորությունը, որի դրությունը միանգամայն տարբեր է մյուս պատգամավորությունների դրությունից, փորձե՞լ է գիտնալու, թե ո՞րն է իսկական անտակտություն — մնալը, թե՞ հեռանալը: Եվ արդյոք ունի՞ նա այնքան քաղաքագիտական հոտառություն, որ կարողանա պարզել, թե հարգելի՞ է իր վիճակը օտարների աչքում, թե՞ ծիծաղելի:

Կոնֆերենցիան մինչև այժմ չկայացավ: Դեռ մի տասն օր սրանից առաջ Թիֆլիսում գտնվող գերմանական միսիայի անդամ պ. Ցուզմայերը տեղական լրագիրների ներկայացուցիչներին կասկած հայտնեց, թե հազիվ թե կայանա կոնֆերենցիան, քանի որ Կովկասին վերաբերյալ խնդիրները լուծվում են ինքնըստինքյան հենց Կովկասում:

Այժմ, երբ Գերմանիան, ընդունելով Վիլսոնի պայմանները համաձայնվում է սկսել բանակցություններ ընդհանուր հաշտության մասին, կարելի է դրականապես ասել, որ Կ. Պոլսի կոնֆերենցիան կհամարվի ավելորդ և չի կայանա:

Եվ ի՞նչ: Այսուհետ՞ տևել մեր պատգամավորությունը պիտի նստե օսմանյան մայրաքաղաքում: Խոսք չունեմ, Բոսֆորի ափերը չափազանց հրապուրիչ են, որպեսզի դյուրին լիներ նրանցից բաժանվելը. բայց ներելի չէ ազգի վշտերը դարձնել *partie de plaisir*...

Քանի որ մի անգամ արդեն արտասանեցի դարձվածքը, չեմ կարող չավելացնել, որ առհասարակ մեր բոլոր պատգամավորությունները մինչև այժմ, մի քանի բացառություններով, եղել են *partie de plaisir*-ներ: Այս տեսակետից մենք գուցե ամենաշռայլն ենք փոքր ազգերի մեջ: Օտարների շենքերը մաշելը դարձել է մեզ համար ազգային ավանդություն: Մեղավորը, հարկավ, մեր քաղաքական կացությունն է, բայց այն էլ պետք է ասել, որ շատ անգամ չենք մտածում, թե ու՞ն շենքն ենք մաշում և ինչո՞ւ: Բավական է, որ մեկն ասե. «Պետք է այսինչ կամ այնինչ տեղ ուղարկել պատգամավորություն». և ահա ուղարկեցինք: Եվ պատգամավոր գնացողների համար իրանց միսիան նախ և առաջ մի տեսակ գվարճություն է, ապա միայն գործ...

Հայ կառավարությունը, ինչպես լսեցի, վաղուց արդեն ետ է կանչել իր արտաքին գործերի մինիստր Ալ. Խատիսյանին: Այժմ նա պիտի ետ

կանչե ամբողջ պատգամավորությունը: Եթե նա անհրաժեշտ է համարում ունենալ Կ.Պոլսում ներկայացուցիչ, կարող է պատգամավորության անդամներից մեկին թողնել այնտեղ: Նա այնքան հարուստ չէ, որ ունենա իրավունք ավելորդ և անօգուտ ծախսեր անելու:

«Մշակ», 13. X. 1918:

ԱՌԱՆՑ ԱՂՄՈՒԿԻ

Վիշտը մարդկային վեհագույն զգացումն է: Նա սրբազան զգացում է, բարձր, քան բարության, քան մարդասիրության, քան նույնիսկ սիրո զգացումը: Նրա առջև է, որ խոնարհվում է և՛ բարին, և՛ չարը, և՛ առաքինությունը, և՛ հանցանքը: Նա է, որ մաքրում է մարդու հոգին, նրբացնում նրա սիրտը:

Արդ, վեհ զգացման արտահայտության ձևն ևս պիտի լինի վեհ, այլապես ողբերգականը կարող է դառնալ զավեշտական ու ծիծաղելի:

Մարդկանց հոգեկան զարգացման աստիճանը կարելի է որոշել նրանց վշտի արտահայտության եղանակով: Այլ է այդ արտահայտությունը քաղաքակիրթ անհատի մոտ, այլ է գռեհիկի ու անկիրթի մոտ: Որքան նուրբ է, բարդ ու խորը մարդու հոգին, նույնքան անաղմուկ է ու անձայն նրա վիշտը: Եվ, ընդհակառակը, որքան կոպիտ է հոգին, նույնքան աղմկալի է վիշտը:

Մետեռլինկը, այդ նուրբ հոգեբանը, խոսելով դրամայի մասին, գտնում է խորը տարբերություն միջնադարյան մարդու և այժմյան մարդու հոգեբանությունների մեջ: Առաջվա եվրոպացու հոգին նա նմանեցնում է սրընթաց գետակի, որ վազում է ահագին աղմուկով, տանելով հետը ժայռեր: Ուժ կա, բայց չկա խորություն, ուրեմն և լրջություն: Այժմյան եվրոպացու հոգին դաշտում հոսող ընդարձակ գետ է: Նա լուռ է, անձայն և, ըստ երևույթին, հանգիստ: Բայց որքա՞ն խորություն, որքա՞ն վեհություն: Որքա՞ն փոքր է նրա մոտ լեռնային գետակը:

Օգյուստ Ռոդենն որպես համձար ավելի առաջ է գնում և ավելի համարձակ միտք է արտահայտում: Մի միտք, որ հագիվ թե ըմբռնելի լինի ոչ նուրբ հոգիների համար: Նա ասում է՝ խորին վշտի մեջ կա մի բարձրագույն հոգեկան հաճույք, վասն զի նրա միջոցով մարդ ճանաչում է և ըմբռնում կյանքի իմաստությունը:

Որքան քաղաքակիրթ է մի ազգ, նույնքան մեղմ են նրա մեջ վշտի արտահայտության ձևերը: Աֆրիկայի խորքերում կան վայրենի ցեղեր, ուր վիշտն արտահայտվում է սոսկալի բարբարոսությամբ: Երբ մեռնում է այդ ցեղերից մեկի թագավորը, նրա կանայք պարտավոր են կենդանի թաղվել իրենց տիրոջ դիակի հետ:

Մի ժամանակ այդ տեսակ վայրենությունից շատ էլ չէին հեռացել և կովկասյան ժողովուրդները: Մանկությանս օրերից հիշում եմ մի սովորություն հայ ժողովրդի մեջ, որ այսօր էլ սոսկում է պատճառում ինձ: Մեռնում էր մեկը: Քառասուն օր շարունակ մեռյալի տանը տիրում էին վայրենի աղաղակներ ու ճիչեր: Քառասուն օր շարունակ ազգական և հարևան կանայք հանգուցյալի հագուստը սփռում էին հատակի վրա և, շրջապատելով նրան, ողբում: Կային մինչև անգամ առանձին լալկան կանայք, որոնց մասնագիտությունն էր բարձր ծայնով ու երգելով ողբալ հանգուցյալին ու նկարագրել նրա արժանավորությունները: Ողբերգուի յուրաքանչյուր մի դարձվածից հետո ժողոված կանայք միաձայն և բարձրաձայն կրկնում էին. «էյ, վա՛յ, էյ, վա՛յ...», իսկ հանգուցյալի մերձավորները, չբավականանալով վայրենի աղաղակներով, փետում էին իրենց մազերը, բռունցքներով ուժգին ծեծում էին գլուխները և եղունգներով ճանկռտում կոկորդները: Այժմ էլ իմ աչքերի առջև են այդ արյունաշաղախ կրծքերը՝ և ուռուցներով ծածկված դեմքերը:

Ես չգիտեմ, բայց ասում եմ, որ այդ վայրենի սովորությունն այժմ էլ կա մեր երկրի խուլ անկյուններում: Շատ հավանական է, քանի որ նրա նշանները տակավին երևում են նույնիսկ Կովկասի մայրաքաղաք Թիֆլիսի փողոցներում հուղարկավորությունների ժամանակ:

Եվրոպական ոչ մի երկրում դուք չեք տեսնիլ, որ հանգուցյալի մերձավորները դագաղն ուղեկցելիս այնքան գոռան ու աղաղակեն: Սգահանդեսն անցնում է լուռ, անձայն: Մերձավորների վիշտը բարձրաձայն չի գոռում, և արտասուքը հոսում է լուռ ու անձայն: Եվ ահա լռությունը ձեզ վրա ազդում է ավելի, քան անգուսպ աղաղակներն ու կուրծք ծեծելը:

Մասնավոր հանգուցյալների տներն ազատ են իրենց վիշտն արտահայտելու այնպես, ինչպես իրենք են կամենում: Խնդիրն անհատական է և ոչ ոք ունի բարոյական իրավունք ուրիշների վրա ճնշում գործելու: Բայց հասարակական վշտերը պետք է արտահայտվեն ոչ այնպես, ինչպես արտահայտվել են մինչև այժմ:

Հասարակական վշտերի մեր արտահայտությունը սնուցել է մի տեսակ շուկային բնավորություն: Մենք չգիտենք, որ որքան մեծ է և

խոր վիշտն, այնքան լուրջ պետք է լինի նրա արտահայտությունն և վեհ: Մեռնում է մի որևէ խոշոր հասարակական գործիչ, մենք նրա դիակը դարձնում ենք քաղաքական ցույցերի առարկա և գոռում - գոչյուններով փողոցն փողոց պտտեցնելով, անգիտաբար նսեմացնում ենք նրա հիշատակը և երբեմն ծաղրելի դարձնում օտարների աչքում: Տեղի է ունենում որևէ համազգային աղետ, դարձյալ ցուցամոլության ախտն է պաշարում մեզ: Եվ շատ անգամ գոռում - գոչյուններով հափշտակված, մոռանում ենք աղետն ու աղետյալներին:

Չդարձնենք գոնե այժմ մեր ծանր ազգային վիշտը ցույցերի նյութ, չծգենք նրանք պատանիների ու թեթևամիտների ծեռքով շուկա, չդառնանք ծաղրի առարկա, քանի որ շուկան մեզ չի կարող օգնել: Կրենք մեր թշվառությունը մի ազգի վայել արժանապատվությամբ: Միտինգներն ու ճառերը չեն, որ մեզ պիտի փրկեն: Բավական է որքան նրանց անմտությունը մեզ վնասեց: Արդեն մեր բոլոր թշվառությունների արմատն հենց այդ գոռում - գոչյունների մեջ է: Լուռ և լուրջ մտածենք իրական միջոցների մասին:

Առանց աղմուկի:

«Ժողովրդի ծայն», 16 . X. 1918:

ՁԵՁ ԵՔ ԱՊՏԱԿՈՒՄ

Եյ, կլուբների ու փողոցների ագռավներ, լռելո՞ւ եք, վերջապես, թե՞ չէ: Մի՞թե չգիտեք, որ ինքնաստորացումն ևս ունի չափ ու սահման: Մի՞թե չգիտեք, որ մարդկային համբերությունն էլ անսպառ չէ:

Բաքվի սոսկալի աղետը նորեն բաց է արել ձեր ժամանակավոր փակված բերանները և դուք դարձյալ սկսել եք ձեր զրպարտությունները թափել աչ ու ծախ, և՛ մեղավորների, և՛ անմեղների վրա: Փոխանակ ձեր մարդկային տարրական պարտականությունը կատարելու, աղետյալներին օգնության ծեռք մեկնելու, դարձյալ նրա՞նց եք մեղադրում:

— Մեղավոր են իրանք հայերը, ուրիշ ոչ ոք, — կրկնում եք դուք անամոթաբար, առանց խղճի խայթոցի:

Եվ ձեզ լսում են ձեզ նմաններն ու հավատում: Իսկ երբ ձեզնից փաստեր են պահանջում, դուք փախչում եք ասպարեզից վախկոտ նապաստակների պես: Գոնե խելոք եղեք քիչ թե շատ քողարկելու ձեր

գրպարտությունների իսկական նպատակը: Ո՞վ չգիտե այժմ, թե ի՞նչ է այդ նպատակը: Ո՞վ չգիտե, որ ձեր անձնական ապահովությունն և մանավանդ անձնական նյութական շահերն են ձեր միակ ղեկավարը, ձեր միակ հավատամքը:

Դուք շատ լավ գիտեք, թե մեր բոլոր աղետները, որոնց թվում և Բաքվինը, որտեղից են առաջացել և ով է նրանց հեղինակը: Բայց ձեր անձնական շահերի համար ձեռնտու է թշվառության մեղքը թշվառացյալների վրա ձգել: Դրանով դուք ուզում եք շոյել իսկական հանցավորներին՝ պահպանելու համար ձեր տները, ձեր կալվածները, ձեր անձնական ապահովությունը: Այո, սա այնքան ճիշտ է, որքան կեղծ են ձեր արցունքներն ազգի վիճակի մասին: Ուն-ուն, ինձ մոլորեցնել չեք կարող: Դժբախտաբար, ես շատ լավ եմ ուսումնասիրել ձեզ և ձեր հոգիներն ես կարդում եմ ամենայն դյուրությամբ: Ասում եմ, դժբախտաբար, որովհետև չկա ինձ համար ավելի զազրելի բան, քան ձեր և ձեզ նմանների գոյությունը հայ ազգի մեջ: Դուք այդ ազգի խոցն եք, նրա ժահիրը...

Բայց դուք սխալվում եք ձեր հաշիվների մեջ: Այն տարրերը, որոնց սիրտն ուզում եք շահել, չեն խաբվի ձեր կեղծավորությունից: Տեղն եկած ժամանակ դուք ևս կստանաք նրանց բռունցքի հարվածը: Հետաքրքրական է իմանալ՝ այն ժամանակ ո՞ւմ կմեղադրեք: Գուցե ինքներդ ձե՞զ...

Բաքվի սոսկալի աղետի պատկերը դեռ լուսաբանված չէ: Դեռ ժամանակը չէ դատաւճիռ կայացնել, աղետը տակավին շարունակվում է: Բայց մի բան պարզ է և այդ բանն է, որ դուք գիտակցաբար մոռանում եք: Այն, որ տներում մորթոսված երեխաներն ու ծովերները չէին կարող ունենալ քաղաքական որևէ հանցանք: Եվ ահա դուք, անաստվածներ, մեղադրելով հայերին, չգիտե՞ք, որ մեղադրում եք և այդ անմեղներին:

Ես չեմ պահանջում ձեզնից ազգային պատվասիրության զգացում: Այս տուրքը շատ ծանր կլինի ձեզ համար: Ունեցեք գոնե ինքնասիրություն: Զգացեք վերջապես, որ գրպարտելով ձեր հայրենակիցներին՝ նախ և առաջ ձեզ եք ապտակում:

ԱՅՍՕՐՎԱ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ

Այսօր, ամսիս 10-ին, Թիֆլիսում պիտի տեղի ունենա Վրաստանի կառավարության նախաձեռնությամբ հրավիրված կոնֆերանսը, բաղկացած անդրկովկասյան երեք հանրապետությունների և Յուլիսային Կովկասի լեռնականների ներկայացուցիչներից:

Կոնֆերանսի նպատակն է քննել մի քանի վիճելի խնդիրներ մեր երկրի վերաբերմամբ, գալ որոշ համաձայնության և գտնել մի ընդհանուր լեզու առաջիկա համաշխարհային կոնգրեսում խոսելու համար, եթե, հարկավ, մեր երկրին ևս վիճակվելու է որևէ մասնակցություն ունենալ այդ կոնգրեսում:

Որքան ևս թերի լինի Վրաստանի կառավարության հրավիրած կոնֆերանսի ծրագիրը, այնուամենայնիվ այն չորս կետերը, որոնցից բաղկացած է այդ ծրագիրը, իր ընդհանուր բովանդակությամբ շոշափում է կովկասյան ազգությունների գրեթե բոլոր շահերը: Անենագլխավորը խնդիրներից՝ երեք պետությունների փոխադարձ հարաբերությունն է, որից և գլխավորապես կախված է մեր երկրի մերձավոր և հեռավոր ապագան և երեք պետությունների գոյությունը:

Գաղտնիք չէ, որ ներկայումս այդ հարաբերությունները շատ և շատ հեռու են բարեկամական լինելուց: Նա նույնիսկ թշնամական է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության մեջ: Եվ իրերի այժմյան քառսային վիճակից տուժողը գլխավորապես հայերն են: Հետևաբար հայերի համար է, որ այսօրվա կոնֆերանսն ստացվում է առանձին նշանակություն:

Ես չգիտեմ՝ ինչ հրահանգով են ներկայանալու հայկական կառավարության պատգամավորներն այդ կոնֆերանսին: Գիտեմ միայն, որ, ինչ էլ որ լինի այդ հրահանգը, հայ պատգամավորները խորապես վշտացած հոգով և չարաչար վիրավորված զգացումներով են գնալու այնտեղ: Նրանք չեն կարող մոռանալ և չպիտի մոռանան ոչ Ադրբեջանի բարբարոսությունները Բաքվում և ոչ Վրաստանի կառավարության ոչ մարդասիրական վերաբերմունքը դեպի հայ գաղթականությունը Վրաստանի սահմաններում: Հասկանալի է, որ վշտացած հոգին և վիրավորված զգացումները չեն կարող գործածել հանգիստ լեզու, և հավանական է, որ այսօրվա կոնֆերանսին վիճակված է շատ դառը ճշմարտություններ լսել հայի բերանից: Արդ, կոնֆերանսի ոչ հայ անդամների համբերությունից ու տակտից է կախված այդ միջազգային

համագումարը չդարձնել նորանոր վեճերի և երկպառակությունների ասպարեզ: Նույն համբերությունն ու տակտը պիտի ունենան և հայ պատգամավորները, եթե նրանց ևս վիճակված է լսել դառն ճշմարտություններ:

Առհասարակ կոնֆերանսի անդամների փոխադարձ համբերողամտությունն է միայն, որ կարող է ծառայել իբրև ապահով հիմք կանոնավոր և խելացի խորհրդակցության: Լեզուները պարտավոր են խոսել այն, ինչ որ թաքնված է սրտերում: Կուտակված թույնը պետք է ելք գտնել և վշտացած սրտերը պետք է ստանան գեթ բարոյական բավարարություն: Այլապես կոնֆերանսը ոչ մի արժեք և ոչ մի արդյունք չի կարող ունենալ: Նա մի զվարճալի հանդիսարան չէ, ուր հրավիրվածները կոչված են իրարու հաճոյախոսություններ անելու: Նա մի տեսակ դատարան է, ուր պիտի քննվեն և վերլուծվեն բոլոր գծությունները, որ տեղի են ունեցել և ունեն այժմ իսկ երեք պետությունների, հետևաբար և երեք ազգերի մեջ:

Հայ պատգամավորները կկեղծեն ու կստեն, եթե չասեն ամենայն պարզությամբ, որ հայ ազգը իր հարևաններից վիրավորված է մինչև իր հոգու հատակը: Նրանք պիտի ասեն ամենայն անկեղծությամբ և առանց քաղաքագիտական էկիվոկների, որ հայ ժողովուրդը այն ժամանակ միայն կարող է հավատալ իր հարևաններին և անկեղծ բարեկամության ձեռք մեկնել նրանց, երբ ստանա հաստատ գրավական, որ այսուհետև նրան չեն վշտացնի ու չեն վիրավորի, ինչպես վշտացնում ու վիրավորում են այժմ: Նա չի կարող բարեկամաբար սեղմել այն ձեռքը, որ պատրաստ է ամեն վայրկյան հարմար դեպքում դաշույնը խրել իր մեջքը: Առանց այդ գրավականի՝ հայ ժողովրդի ճանապարհն անջատ է ու զատ:

Մի նյութ կա, որի մասին հայ պատգամավորները չպիտի համաձայնվեն, որ որևէ խոսակցություն կամ վիճաբանություն լինի կոնֆերանսում: Դա «Հայկական խնդիրն» է, մեր քառասնամյա տառապանքների արդյունքը և հարյուր հազարավոր զոհերի արնագինը: Այդ խնդիրը ոչ մի առնչություն և ոչ մի կապ չունի կովկասյան խնդիրների, հետևաբար և այսօրվա կոնֆերանսի հետ:

Հայկական խնդիրը միջազգային է և նրա այս կամ այն լուծումը կախված է միայն և միմիայն առաջիկա համաշխարհային կոնգրեսից:

ԵՐԿՈՒՄԻՑ ՄԵԿԸ

«Հաց տվեք հայ ժողովրդին, միայն հաց, առայժմ ոչինչ հարկավոր չէ նրան»:

Այս են ասում Հայաստանի կառավարության թիֆլիս եկող ներկայացուցիչները, երբ խոսում են նրանց հետ որևէ կուլտուրական ձեռնարկության մասին: Նույնն է կրկնում և՛ հայ մամուլը: Նույնն է կրկնում նաև հասարակությունը, գոնե նրա մեծագույն մասը:

Այդ համառ տրամադրությունը մարդկանց ինձ պատճառում է խորին վիշտ:

Անկասկած քաղցածին նախ և առաջ հաց է հարկավոր: Դա մի տարրական ճշմարտություն է, որի դեմ մի բառ անգամ չի կարելի արտասանել: Բայց ինձ թվում է, որ այդ ճշմարտությունն արտահայտելու մեջ կա մի զարհուրելի հոգեկան ապիկարություն: Թվում է ինձ, որ կեղծում են շատ-շատերը, որ շարունակ կրկնում են «հաց և միմիայն հաց»: Կեղծում է նախ և առաջ Հայաստանի կառավարությունը, ապա, որ ամենագլխավորն է, հայ հասարակությունը: Երկու թե երեք ամիս է թիֆլիսի հայ և հայասեր ռուս լրագիրները հանգանակություն են բաց արել սովյալների օգտին: Եվ ի՞նչ. մինչև այժմ երկու վագոն ալյուրի արժեքը չեն հանգանակել: Սոտ մի տարի է, որ Հայաստանի կառավարությունը աղաղակում է «հաց, հաց», և մինչև այժմ նա ոչինչ կամ գրեթե ոչինչ չի կարողացել անել, և այժմ հայ ժողովրդի պարենավորման գործն ամբողջովին ամերիկացիների ու անգլիացիների ձեռքումն է: Եվ գոհություն Աստծու, որ այդպես է, վասնզի նրանք և միմիայն նրանք կարող են այդ գործը կատարել, ու կատարում են:

Կեղծիքը պարզ է: «Հաց ու հաց» աղերսալի երգն ուրիշ ոչինչ է, եթե ոչ պատրվակ մյուս բոլոր ազգային պարտականություններից հրաժարվելու: Կեղծում են այդ տխուր երգի բոլոր սիրահարներն և ամենից ավելի, կրկնում են, Հայաստանի կառավարությունը: Կեղծում է այդ կառավարությունը, որպեսզի մենք չունենանք իրավունք նրանից որևէ կուլտուրական գործ պահանջելու: Կեղծում է, որպեսզի իրավունք ունենա մոռացության տալու ժողովրդի հոգեկան պահանջները: Եվ տալիս է մոռացության նույնիսկ այն պահանջները, որ պակաս անհետաձգելի և պակաս կարևոր չեն, քան ստամոքսի պահանջը: Փորձեցեք Հայաստանի կառավարության որ ներկայացուցչի հետ ևս կամենաք խոսել այս կամ

այն կուլտուրական ծեռնարկության մասին, և առաջին ձեր դարձվածը չարտասանած նրա դեմքի վրա կտեսնեք մի հեզնական ժպիտ, որ կարտահայտե. «Էէ, մենք ինչով ենք զբաղված, դուք ինչի մասին եք մտածում»: Փորձեցեք համոզել նրան, որ մի գործ բնավ մյուսին չի խանգարում, որ կարելի է միաժամանակ հոգալ ժողովրդի և՛ մարմնավոր, և՛ հոգեկան կարիքների մասին, նա միայն մի բառ ունի արտասանելու. «Հետո»:

Բնորոշ է այդ «հետոն»: Նա հայի հոգեբանության հատկանիշն է: Մի հատկանիշ, որ այնքան դանդաղեցնում է մեր քաղաքակրթության անիվը և այնքան չարիքներ է պատճառել հայ ազգին: Ամեն ինչ հետո և ոչ մի բան ժամանակից առաջ կամ իր ժամանակին: Եվ այժմ դպրոցը հետո, գիտությունները հետո, թանգարանները հետո, գրականությունը հետո, թատրոնը հետո, արվեստները հետո, կորստի ենթակա մեր ճարտարապետական հրաշալիքների փրկումը հետո: Ամեն ինչ հետո, միմիայն հաց...

Եվ հաց չեն մատակարարում, որովհետև չեն կարող մատակարարել:

Մի առարկություն ևս ունեն Չայաստանի կառավարության ներկայացուցիչները ամեն մի կուլտուրական գործ այդ կործանիչ «հետոյին» հանձնելու համար: «Կառավարությունը դրամ չունե», — ասում են նրանք և ասում են նույնիսկ այն ժամանակ, երբ մի որևէ շատ խոշոր և շատ կարևոր գործի համար հարկավոր է համեմատաբար մի շատ չնչին գումար: Համաձայնվում են մի վայրկյան: Այն ժամանակ թույլ տվեք հարցնել. ի՞նչ բարոյական իրավունքով նույն կառավարությունը մի անժամանակ և անիմաստ պատերազմ հայտարարեց Վրաստանին և տասնյակ միլիոններ ծախսեց ու միևնույն ժամանակ Լոռու հայ ժողովրդին հարյուր միլիոն վնաս հասցրեց: Այն ժամանակ ի՞նչ բարոյական իրավունքով է նա հարյուրավոր պաշտոնյաներ հրավիրում զանազան մինիստրությունների համար: Այն ժամանակ ի՞նչ բարոյական իրավունքով է նա գրեթե ամեն շաբաթ մի-մի ճամփորդություն կամ պատգամավորություն ստեղծում: Մի՞թե իր ներկայացուցիչների հաճույքի համար...

Ոչ, պարոններ, դուք անկեղծ չեք: Երկուսից մեկը. կամ դուք ընդունակ չեք և չեք սիրում կուլտուրական գործ կատարել, կամ չեք ուզում կատարել:

ԼԵՎՈՆ ԱԹԱԲԵԿՅԱՆԻՆ*

Ես քեզ տեսել եմ ընդամենը երկու, թե երեք անգամ, այն էլ հեռվից, ամբիոնի վրա, Հայոց Ազգային> Համագումարում 1917 թվականին: Նիհար էիր, գունատ, նյարդային: Որքա՜ն խելացի էին քո խորը թաղված սև աչքերը, որքա՜ն շարժուն էր քո դեմքը: Ներվեր էիր ոտքից մինչև գլուխ, վերին աստիճանի նուրբ ներվեր: Եվ լերկ, միանգամայն լերկ ներվեր, ենթակա մարդկային տառապանքների ամենաթեթև հովին անգամ: Եվ խելացի, մանավանդ խելացի: Խոսում էիր անկեղծ, թե իբրև մարդ և թե իբրև հայ: Հէիր աղավաղում քո ուղեղը և ոչ մանավանդ քո զգացմունքները դոգմաներով: Եվ դա էր, որ քեզ սիրելի դարձրեց իմ աչքում միանգամից՝ առանց քեզ ճանչնալու: Այո, դու ունեիր լոգիկա: Ապացույց, որ դու նման չէիր մեր ազգային և միջազգային թութակներին: Դու հայ էիր, մնալով իսկական մարդ և մարդ էիր, մնալով իսկական հայ:

Ահա ինչու համբուրում եմ քո շիրիմը:

«Մշակ», 1. IV. 1919:

Ռ՞Վ ՊԵՏՔ Է ՎԵՐԱՇԻՆԵ

Հայաստանի անկախության խնդիրն ասպարեզի վրա է: Այժմ այլևս կասկածից դուրս է, որ հայ ժողովուրդն ստանալու է իր վաղուց երազած ազատությունը: Եթե նույնիսկ Կիլիկիան չտրվի մեզ, վեց թուրքական վիլայեթների և նորակազմ Հայաստանի Հանրապետության սեփականությունը պետք է համարվի ապահովված:

Վեց վիլայեթներ՝ մի լայնատարած աշխարհ՝ մի համեմատաբար փոքրիկ ժողովրդի համար: Մի աշխարհ, որ, սակայն, ամայի է և կատարելապես ավերակ: Պետք է այդ ահագին տարածությունը լեցնել և վերաշինել: Ռ՞Վ պետք է լեցնեն և Ռ՞Վ պետք է վերաշինեն:

Ահա մի սուր խնդիր, որ ցգվում է մեր առջև:

Հայտնի է, որ այն ժողովուրդը, որ պիտի վերադառնա հայրենիք, ներկայումս բաղկացած է երկու տարրերից — փախստականներից և գաղթականներից: Առաջին տարրը հեռացել է հայրենիքից վերջին

պատերազմի աղետներից դրդված, երկրորդը — պատերազմից առաջ: Անկասկած փախստականները վերադառնալու են հայրենիք, և վաղը, մյուս օրը կսկսվի նրանց վերադարձը: Ռուսալ, որ այդ տարրը կարող է երկիրը վերաշինել — կնշանակե հրաշքներ երազել: Մի երկիր կարող է ծաղկել միայն այն ժամանակ, երբ նրա ազգաբնակչությունն ունի նախ և առաջ ֆիզիկական առողջություն: Դրանից են կախված նրա հոգեկան ուժը, բարոյական եռանդը և աշխատելու ընդունակությունը:

Թուրքահայ փախստական ժողովուրդը ներկայումս միանգամայն հյուծված, քայքայված մի տարր է՝ զուրկ ֆիզիկական և բարոյական կարողությունից: Դա մի փաստ է, որ միաբերան հաստատում են բոլոր բժիշկները: Չետևաբար նրա վտիտ ուսերը ամբողջումակ են իրանց վրա կրելու Չայաստանի վերաշինության ծանր բեռը:

Չարկավոր է ավելի առողջ, ավելի եռանդուն և տնտեսական ու բարոյական աշխատանքի ավելի ընդունակ և ավելի պատրաստի մի ուժ, որ կարողանա մի կողմից երկիրը մշակել, մյուս կողմից նոր շունչ և նոր ոգի ներշնչել ֆիզիկապես և բարոյապես ընկճված փախստականությանը:

Այդ ուժը կարող է լինել միայն քաղաքակիրթ երկրներում ապաստան գտած հայ գաղթականությունը, որի քանակությունը հասնում է մի քանի հարյուր հազարների: Այդ տարրն է, որի վերադարձը կարող է ապահովել Չայաստանի վերաշինությունը: Այդ տարրն է, որ կարող է երկիրը վերաշինել իր եռանդով և, որ գլխավորն է, քաղաքակիրթ երկրներում ձեռք բերած տնտեսական միջոցներով, իր արհեստներով, արվեստներով, իր գյուղատնտեսական, առևտրական և արդյունաբերական գիտություններով և հմտությամբ: Առանց այդ տարրի ցնորք է երևակայել Չայաստանը վերաշինված:

Մեզ հարկավոր է կենսունակ և առողջ Չայաստան, այլ ոչ տկար ու հիվանդոտ մի մարմին՝ կանխավ դատապարտված անխուսափելի կործանման: Ավելի լավ է չունենալ հայրենիք, քան ունենալ նրա մեռելային ստվերը:

Փախստականները հայրենիք վերադառնալու են ինքնըստինքյան, առանց որևէ արտաքին դրդման իսկ: Այս մասին կասկած անգամ չի կարող լինել, քանի որ նրանք ուրիշ անկյուն չունեն իրանց թշվառ գլուխը պատսպարելու համար: Բայց կվերադառնա՞ն, արդյոք, ինքնական գաղթականները, որոնց մեծամասնությունն արդեն ապահով դիրք է ստեղծել իր համար օտար երկրներում: Դա մի հարց է, որին պատասխանելն առայժմ ավելի քան դժվար է: Մի հարց, որ, սակայն, այժմյանից իսկ պիտի զբաղեցնե Չայաստանի վերաշինության նախանձախնդիր բոլոր

հաստատություններին և բոլոր անձանց: Իսկ ամենից առաջ Հայաստանի Հանրապետության կառավարությանը:

Սխալ և միանգամայն վտանգավոր է այն կարծիքը, թե քանի որ հայ ժողովուրդն այժմ սոված է, պետք է մեր բոլոր ուժերը նվիրենք նրա պարենավորման գործին: Սխալ և միանգամայն վտանգավոր է նաև այն կարծիքը, թե, քանի որ Հայաստանի սահմանները դեռ չեն որոշվել, վաղաժամ է հոգալ գաղթականների վերադարձի մասին և գործել: Բոլոր ազգային պարտականությունները պիտի կատարվեն միաժամանակ և ոչ մի գործ չի կարող խանգարել մյուսին — այսպես պիտի մտածե Հայաստանի կառավարությունը և այս ոգով գործե, այլ ոչ թե իր ամբողջ եռանդը կենտրոնացնե մի պարտականության վրա:

Ես այդ խնդրին կվերադառնամ նորեն*:

«Մշակ», 1. IV. 1919:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Ակամա երկտող»

* Տե՛ս «Մի խառնվեք» վերնագրով հոդվածը («Մշակ», 30.VII.1915):

2. «Судите, но не осуждайте (Письмо в редакцию < “Кавказского слова” >»

* Տե՛ս *Мин. Бер<берян>*. Заметки кстати. IV. Верный шаг. – “Кавказское слово”, 7.X.1915.

** Այս պարբերությունը հայերեն թարգմանվել է աղճատված և տպագրվել հետևյալ շարադրանքով. «Իսկ որտե՞ղ էին հայկական խմբերը 1895 թվականին, երբ Սուլթան Համիդի հրամանով 30 000 հայ կոտորվեց» (տե՛ս *Ալ. Շիրվանզադե*. Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1961, էջ 558):

3. «Ժամանակ է հասկացնելու»

* «Ալեքսանդր Շիրվանզադե (1858-1958): Բիբլիոգրաֆիա» (Երևան, 1959) գրքույկում (էջ 92) վերնագիրը սխալ է նշված՝ «Ժամանակ է հասնելու»: Ի դեպ, 1918 թ. տպագրված և երկերի ժողովածուի 9-րդ հատորում (էջ 569-570) տեղ գտած «Մի կտորիկ հաց» հոդվածի վերնագիրը «Բիբլիոգրաֆիա»-ում (էջ 98) գնացել է «Մի կտորուկ հարց»:

4. «Չարժե վրդովվել»

* Հոդվածը գրելու շարժառիթը եղել է “Кавказское слово” թերթում (18. VIII. 1916) Սագիստրանտի՝ Գ. Գ. Եվանգուլովի, “Будущее Турецкой Армении” հոդվածի տպագրությունը:

5. «Իմ առաջին ծանոթությունը»

* Նվիրել է Գրիգոր Արծրունու մահվան 25 - ամյակին:

6. «Պսակի փոխարեն»

* Հոդվածը գրել է «Մշակ» թերթի խմբագիր-հրատարակիչ, հասարակական հայտնի գործիչ և հրապարակախոս Համբարձում Առաքելյանի եղբրական մահվան կապակցությամբ. ինչպես նշվել է, սպանվել է 1918 թ. հուլիսի 6-ին իր բնակարանում՝ անհայտ ոճրագործների ձեռքով:

7. «Խնայենք մեր արժանապատվությունը»

* «Ալեքսանդր Շիրվանզադե (1858-1958): Բիբլիոգրաֆիա»-ում (էջ 96) վերնագիրը սխալ է նշված՝ «Խնայեցեք մեր արժանապատվությունը»:

8. «Նախ մեր ռխերիմ քշնամին»

* Տե՛ս նախորդ՝ «Մեր բոլոր ուժերով», հոդվածը:

9. «Նախ վերացրեք»

* «Ալեքսանդր Շիրվանզադե (1858 - 1958): Բիբլիոգրաֆիա»-ում (էջ 98) հոդվածի վերնագիրը սխալ է նշված՝ «Նախ վերապրեք», նաև, թե տպագրվել է «Մշակի» հոկտեմբերի 13-ի համարում:

** Խոսքը «Հայ – թուրքական հարաբերությունների առթիվ» խմբագրականի մասին է (տե՛ս «Ժողովրդի ծայն», 26.IX.1918):

10. «Լևոն Աթաբեկյանին»

* Հոդվածը գրել է Հայոց ազգային խորհրդի անդամ Լևոն Աթաբեկյանի հիշատակին (մահացել է 1918 թ. մարտի 20 - ին/ապրիլի 2-ին):

11. «Ո՞վ պետք է վերաշինե»

* Շիրվանզադեի հրապարակախոսական գործունեությունը և մասնավորապես այս հոդվածը խիստ քննադատության է ենթարկվել Հայ ժողովրդական կուսակցության օրգան «Ժողովրդի ծայն» թերթի 1919 թ. ապրիլի 2-ի՝ «Մոլորությունն ու հետևողները» վերնագրով խմբագրականում: Այստեղ մերժվում է «մեր տաղանդավոր վիպասան Շիրվանզադեի բռնած դիրքը», նշվում է, որ, ճիշտ է, նա նշանավոր վիպասան է, «բայց նրա հրապարակախոսական գործունեությանը մենք միանգամայն բացասաբար ենք վերաբերվում...»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ	5
ԳԼՈՒԽ I	
Հայ ժողովրդի վիճակի արտացոլումը Շիրվանզադեի հրապարակախոսական հոդվածներում	7
ԳԼՈՒԽ II	
«Պատերազմի վայրերում» ակնարկ-հուշագրությունը	29
ԱՄՓՈԹՈՒՄ (ռուս.)	73
ԱՄՓՈԹՈՒՄ (անգլ.)	74
ՇԻՐՎԱՆԶԱԴԵԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍԱԿԱՆ ՀՈՂՎԱԾՆԵՐԸ	
Ամենակարևորը	77
Նա արդեն հաղթվել է	79
Այլ կերպ վտանգավոր է	80
Դատավճիռն անքակտելի է	82
Ճշմարտության պատիժը	84
Պետք է տալ ավելի	86
Ասեմք մեր ասելիքը	87
Եղեք ավելի առատաձեռն	89
Վաղուց էր հարկավոր	91
Թող պարզեն	93
Ժամանակ է	94
Բարի ճանապարհ	96
Օրենքն անողոք է	97
Դուք ևս պարտավոր եք	99
Դա մի ախտ է	101
Պետք է զգույշ լինել	103
Ст. Эчмиадзин	104
Игдыр	107
Арцап	110

В Турции	113
С дороги	115
Ես չեմ զարմանում	117
Սնանկ քաղաքականություն	119
Ակամա երկտող	120
Судите, но не осуждайте (Письмо в редакцию «Кавказского слова»)	122
Ինչո՞ւ միայն մենք	124
Ժամանակ է հասկացնելու	126
Ե՞րբ պիտի լինի վերջ	128
Չարժե վրդովվել	130
Օրինակ վերցրեք	131
Պատվի խնդիր է	133
Դեռ սպասենք	135
Իմ առաջին ծանոթությունը	137
Բավական է	139
Կամ գործ, կամ լռություն	140
Մի զազրելի փաստ	141
Մի հանցանք	143
Մի՞թե գարշելի չէ	144
Չարգենք հին ճշմարտությունը	146
Գեթ այժմ	147
Ամենախիստ քննություն	149
Զ՞ե որ վիրավորական է	151
Հուսով եմ	153
Հայ զինվորներին	155
Հեռացեք ասպարեզից, եթե չեք հավատում	158
Մեր ճակատագիրը մեր ձեռքումն է	159
Պսակի փոխարեն	160
Երևանն ինքը պետք է հոգա	162
Խնայենք մեր արժանապատվությունը	163
Լռեցե՛ք, բորենիներ	165
Դիմենք նրա միջամտությանը	167
Մեր բոլոր ուժերով	170
Նախ մեր ոխերիմ թշնամին	171
Պիտի արհամարիվեն	173
Չարգենք միմյանց իրավունքները	174

Պարտավոր է տալ	176
Մեր վանպիրները	179
Պետք է չեզոքացնել	181
Օրվա հերոսը	183
Այս է ցավալին	185
Այս է պատճառը	187
Առայժմ լռում եմ	190
Մի անեկդոտ	192
Իմ տպավորությունը	193
Ես ողջունում եմ	196
Կփափագեի	197
Հիմարություն	199
Ուրիշ ոչի՞նչ	200
Մի վերք ևս	202
Ինտելիգենցիա	205
Ամոթալի չէ	207
Նախ վերացրեք	209
«Բուրժուազիան» հայիոյանք չէ	211
Անհրաժեշտ է	214
Պետք է ետ կանչել	215
Առանց աղմուկի	217
Ձեզ եք ապտակում	219
Այսօրվա կոնֆերանսը	221
Երկուսից մեկը	223
Լևոն Աթաբեկյանին	225
Ո՞վ պետք է վերաշինեմ	225
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	229

ԱՆՈՒՇԱԿԱՆ ՋԱՔԱՐՅԱՆ

ՇԻՐՎԱՆՁԱԴԵԻ
ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԻՑ
(1914 - 1919 թթ.)

Տպագրական 14.5 մամուլ: Չափսը 80x64 1/16:

Թուղթը՝ օֆսեթ № 1: Տպաքանակը՝ 500 օրինակ:

ՀՀ ԳԱԱ տպարան, Երևան, Մարշալ Բաղդասարյանի պող. 24:

[900m]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220091243



ԱՆՈՒՇԱԿԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

Ծնվել է 1954 թ. ս.
Գողթան գավառի Փանազա
գյուղում:

Ավարտել է Երևանի Խ.
Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական
ինստիտուտի բանասիրական
ֆակուլտետը:

Բանասիրական գիտութ-
յունների դոկտոր է: Գրակա-
նագետ, խմբագիր, հրատա-
րակիչ, լրագրող: Յոթ գրքի

և «Ռուս գրողները Անդրկովկասում և հայ գրական
կյանքը (1914-1920)» (1984 թ.), «Ռուս գրագետ-
ները և հայ իմականությունը» (XX դարի 10-ական
թվականներ)» (1994 թ., քուս.), «Ալեքսանդր Կու-
լեբյակինը և Հայաստանը» (2003 թ., ոռու.), «Հայ
ժողովրդի ողբերգությունը ռուս-գլխավոր գործիչ-
ների գնահատությամբ» (2003 թ., ոռու.), «Դուք
Լազարեսկին Հայաստանի և հայ կանանց մա-
սին» (2004 թ.), «Արտաշես Գեղամյան, Հողված-
ներ, հարցազրույցներ, ելույթներ» (2005 թ.) «Հայ
ժողովրդի կորուստները Առաջին աշխարհամար-
տի տարիներին («Համաշխարհային պատերազ-
մից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձ-
նաժողովի» փաստաթղթերի և նյութերի ժողովա-
ծու)» (2005 թ.) և ավելի քան հարյուր գիտական
հոդվածների, հրապարակումների հեղինակ ու
կազմող է:

ՀՀ ԱԺ աշխատակազմի հրատարակչական
բաժնի վարիչն է: Հայաստանի գիտությունների
ազգային ակադեմիայի «Պատմաբանասիրական
հանդեսի» խմբագրի տեղակալը: